

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՀ ԳԱԱ 2020 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



Երևան 2021

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ նախագահության  
03.03.2021թ. N 1 (1778) որոշմամբ

*Հաշվետվությունը պատրաստել է ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական վարչությունը՝  
ՀՀ ԳԱԱ գիտությունների բաժանմունքների, գիտական կազմակերպությունների և  
ստորաբաժանումների ներկայացրած նյութերի հիման վրա*

## ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

2020թ. Հայաստանի Հանրապետությունը կանգնեց ծայրահեղ ծանր երկու իրավիճակի դեմ հանդիման՝ COVID-19 համավարակը և Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը: Ահռելի կորուստներ կրեց երկրի տնտեսությունը, բնականաբար, խաթարվեց նաև ԳԱԱ համակարգի բնականոն գործունեությունը: Սակայն ի պատիվ ԳԱԱ համակարգի գիտական և գիտահետազոտական կազմակերպությունների՝ պահպանվեց պատշաճ մակարդակի գիտական արդյունք ստանալու ավանդույթը, կատարվեցին հիմնարար և կիրառական տարաբնույթ գիտական հետազոտություններ:

Համավարակի տարածման և նրա ազդեցության կանխարգելման 46 ծրագիր ներկայացվեց ՀՀ կառավարություն, դրանցից մի քանիսը կյանքի կոչվեցին: Կառավարության առաջադրանքով և ֆինանսական աջակցությամբ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը պատրաստեց և ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրեց 100 000 ախտորոշիչ թեստ: ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի արտադրած «Բիօքսիլ» ախտահանիչ նյութը մեծ կիրառություն գտավ հանրապետության տնտեսության բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ հայկական բանակում:

44-օրյա պատերազմի ընթացքում ակադեմիան և համակարգի ինստիտուտները բազմիցս կոչերով դիմեցին աշխարհի հայտնի գիտական կենտրոններին, անհատ գիտնականներին, ԳԱԱ արտասահմանյան անդամներին՝ դատապարտել թուրք-ադրբեջանական հայատյաց ագրեսիան: Եղան դիմում-կոչեր, աջակցության սրտացավ նամակներ:

ԳԱԱ համակարգի գիտնականներն անմիջական մասնակցություն են ունեցել նաև հանրապետության ռազմաարդյունաբերության համակարգի տարբեր օղակների աշխատանքներին:

2020թ. ակադեմիան ակտիվորեն մասնակցել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի քննարկմանը: Օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը քննարկվել է ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներում ու կազմակերպություններում, դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա կազմված եզրակացությունը ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն: Ակադեմիայի անդամները, գիտահետազոտական ինստիտուտների տնօրենները մամուլում և հեռուստատեսությամբ բարձրաձայնել են ակադեմիայի ձևավորված կարծիքն օրենքի նախագծի վերաբերյալ, սատարել ակադեմիայի ներկա կարգավիճակը պահպանելու որոշմանը՝ շեշտելով երկրի զարգացման ու առաջընթացի համար ակադեմիայի աներկբա դերն ու նշանակությունը:

2020թ. փետրվարին ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհրդի ժողովի միաձայն որոշմամբ ԳԱԱ գիտական կազմակերպություններում անց են կացվել գիտական անձնակազմերի ժողովներ, որտեղ պատասխանելով «Կողմ է ՀՀ ԳԱԱ համակարգի տվյալ կազմակերպությունը շարունակելու գործել ՀՀ ԳԱԱ համակարգում» հարցադրմանը՝ փակ (զաղտնի) քվեարկության արդյունքներով բոլորը ձայների ճնշող մեծամասնությամբ (98%) կողմ են արտահայտվել առաջադրված հարցադրմանը:

2020թ. մարտին հրավիրված ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ժողովը հավանություն է տվել ԳԱԱ գիտական կազմակերպությունների տնօրենների խորհրդի ներկայացրած «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի

նախագծի 26-րդ հոդվածի լրամշակված տարբերակին, այն ներկայացվել է ԿԳՄՍ նախարարություն:

2020թ. ընթացքում ԳԱԱ ինստիտուտները, հիմնականում առցանց, կազմակերպել և անց են կացրել 21 միջազգային և 27 հանրապետական գիտաժողովներ:

2020թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները իրականացրել են գիտական և գիտահետազոտական աշխատանքներ 5 նպատակային, 42 բազային, 152 թեմատիկ և 105 տնտեսական պայմանագրային ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 140 մենագրություն և ժողովածու (11-ն արտասահմանում), 15 ուսումնական ձեռնարկ և դասագիրք (2-ն արտասահմանում), 1893 հոդված (839-ն արտասահմանում), 155 թեզիս (92-ն արտասահմանում):

***ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ.Մ.Մարտիրոսյան***

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



# ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

## ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մաթեմատիկա.** Հետազոտվել են լոկալ վերջավոր չափով օժտված սեպարաբել լրիվ մետրիկական տարածությունների վրա սահմանված Գիբսյան պատահական կետային պրոցեսների կառուցման ու միակության հարցերը: Ձույգ պոտենցիալի վրա դնելով բավականին ընդհանուր սահմանափակումներ՝ կառուցվել է P սահմանային դաշտը, և այդ պրոցեսի կորելյացիոն ֆունկցիաների համար ստացվել է բացահայտ ներկայացում Ուրսելի կորիզի օգնությամբ: Պոտենցիալի վրա դնելով լրացուցիչ սահմանափակումներ՝ ապացուցվել է նաև, որ եթե գոյություն ունի պատահական պրոցես, որը Գիբսյան է Դոբրուշինի, Լանֆորդի և Ռյուելի իմաստով, ապա այն համընկնում է P-ի հետ: Արդյունքները ստացվել են կլաստերային վերլուծությունների և Կիրկվուդ-Չալցբուրգի կորելյացիոն հավասարումների մեթոդի կիրառման միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Մ.Պոդոյան):

**Մեխանիկա.** Ընդհանրացված ֆունկցիաների բարդ մաթեմատիկական ապարատի կիրառմամբ մշակվել է մասնիկներով ուժեղացված բաղադրյալ նյութերի մեզոմասշտաբ մոդել, որը թույլ է տալիս հետազոտել այդպիսի նյութերի լարվածադեֆորմացիոն վիճակը՝ մասնիկների բաշխումից ու նյութի հատկություններից բացահայտորեն կախված: Մշակված մոդելը կարելի է օգտագործել ըստ մասնիկների բաշխման և նյութի հատկությունների կառուցվածքի օպտիմալացման խնդիրներ լուծելիս, նաև նոր հատկություններով օժտված նյութերի նախագծման և նոր տեխնոլոգիաներով ադիտիվ մշակման ոլորտներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Խուրշուդյան):

Հակահարթ, հարթ և առանցքահամաչափ դեֆորմացիաների պայմաններում հետազոտվել են միջֆազային ճաքերի, միջֆազային ներդրակների, դրոշմների տիպի լարումների կենտրոնացուցիչների և համասեռ ու կտոր առ կտոր համասեռ առաձգական հարթության, կիսահարթության և տարածության տիպի դեֆորմացվող հոծ մարմինների փոխազդեցության էֆեկտները: Մեխանիկական հիմնական բնութագրիչների համար ստացվել են բավականաչափ պարզ կառուցվածքի անալիտիկ բանաձևեր, բացահայտվել են դրանց փոփոխման օրինաչափությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հակոբյան):

Հիդրոտուրբիններում առաջացող կավիտացիոն երևույթներն էռոզիոն մաշվածության են ենթարկում հիդրոտուրբինի աշխատանքային անիվը և շրջհոսելի մակերևույթները: Ուրպեսզի հիդրավիլիկ կայանքների աշխատանքային մասերում բացառվի էռոզիոն մաշվածությունը, համակարգը նախագծվում է այնպես, որ նրա բոլոր կետերում հեղուկի ճնշումն ավելի մեծ լինի, քան շոգեգոյացման ճնշումը: Կավիտացիոն երևույթները բացառելու, նրա առաջացման պատճառները վերացնելու նպատակով, ինչպես նաև հիդրոէլեկտրակայանների դերիվացիոն հատվածներում հարվածային ալիքներից խուսափելու համար մոտեցնող ճնշումային խողովակաշարի վրա տեղակայում են հավասարեցնող ռեզերվուարներ: Հակասառեցնող ռեզերվուարների անհրաժեշտությունը որոշվում է հիդրոէլեկտրակայանների կառուցվածքներում պարունակվող ջրային մասսայի իներցիայով: Այդ նպատակի համար փոքր հիդրոէլեկտրակայաններում հավասարեցնող ռեզերվուարներ տեղադրելը նպատակահարմար չէ մեծ չափերի պատճառով, քանի որ հաճախ հարկ է լինում այն տեղակայել հարթավայրերում աշտարակների ձևով: Առաջարկվող մեթոդն արմատապես վերացնում է ինչպես հիդրոդինամիկական, այնպես էլ ակուստիկական կավիտացիոն երևույթների առաջացումը հիդրոտուրբիններում: Դա իրականացվում է՝ օգտագործելով Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին ՓԲԸ-ում մշակված հեղուկի ճնշման և

ծախսի տատանումների կայունացուցիչները, որոնք արդյունավետ հարթեցնում են հեղուկի ճնշման և ծախսի բաբախումները (ղեկ.՝ տ.գ.թ. Գ.Ավետիսյան):

**Ինֆորմատիկա և ավտոմատացման պրոբլեմներ.** Կոդային բառերի կշռմամբ և ձևափոխված որոշման կայացման կանոններով ալգորիթմների ուսումնասիրման և կիրառման աշխատանքներում տրվել է լոկալ օպտիմալ երկատոմների փնտրման մոտեցում ըստ տարբեր քանակական հայտանիշների: Փորձարարական ուսումնասիրությունները հաստատում են առաջարկված մոտեցման առավելությունը ստանդարտ երկատման մոտեցումների նկատմամբ (ղեկ.՝ թղթ.անդ. Լ.Ասլանյան):

Զարգացվել են սկզբունքային նոր տեսական պատկերացումներ երեք մարմնի դասական և քվանտային խնդիրների հետազոտման համար: Այն կարող է հիմք հանդիսանալ նոր, բարձրարտադրողական ալգորիթմների ստեղծման համար՝ մոդելավորելու երկմուկուլային քիմիական փոխարկումները՝ ներառյալ հաշվի առնելով ընթացքների վրա արտաքին ազդեցությունները (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

**Աստղաֆիզիկա.** Ստեղծվել է ակտիվ գալակտիկական միջուկների (ԱԳՄ) համասեռ ընտրանք Hamburg-ROSAT և Byurakan-Hamburg-ROSAT կատալոգներից, որոնք իրենց հերթին ROSAT Bright Source և Faint Source կատալոգների աղբյուրների նույնացումներն են: Ընդամենն ընդգրկված է 4253 ռենտգենյան ԱԳՄ: Ներմուծվել են ենթադասեր քվազարների և նոր ենթադասեր նեղ գծերով Սեյֆերտների, ինչպես նաև բաղադրյալ սպեկտրներով ԱԳՄ-ների համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Միքայելյան):

Օգտագործելով պլանար մոտավորությունները՝ կատարվել է Գալակտիկայի մագնիսական դաշտի ինվերսիայի մոդելավորում: Ցույց է տրվել, որ հնարավոր է այնպիսի մագնիսական դաշտերի գեներացիա, որոնցում Գալակտիկայի կենտրոնից հեռանալիս կարող է դիտվել շրջանային մագնիսական դաշտի ուղղության ինչպես մեկանգամյա, այնպես էլ երկուանգամյա փոփոխություն: Ցույց է տրվել, որ գալակտիկաներում, որոնց կենտրոնական տիրույթներից առկա է իոնացած գազի արտահոսք, պտտվող միջավայրում գործում է Բիրմանի էֆեկտը, որի շնորհիվ միջավայրում զրոյից առաջանում է մագնիսական դաշտ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ. Անդրեասյան):

Մշակվել է ծրագիր՝ պարզ մեկ ջերմաստիճանային գորշ մարմնի մոդելի ճառագայթումը նկարագրող որոշ ֆիզիկական պարամետրեր որոշելու համար: Այն կիրառվել է մոլեկուլային ամպերի փոշու ջերմաստիճանների, ջրածնի սյունակային խտության և զանգվածների հաշվարկման համար մի շարք աստղառաջացման տիրույթներում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Հարությունյան):

Բացահայտվել է այն երևույթի պատճառը, թե ինչպես անփոփոխ բոլոմետրիկ լուսատվության և մակերևույթի ջերմաստիճանի պայմաններում աստղը կարող է փոխել իր սպեկտրային դասը: Պարզվել է, թե կախված իոնացման ջերմաստիճանից, ինչպես և ինչ չափով է ճառագայթման ցրումն անընդհատ սպեկտրում ազդում ջրածնային սպեկտրի ինտենսիվության թռիչքների վրա (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Նիկողոսյան):

Մարման հիմնական պատճառը միջուկային նյութի՝ էլեկտրոնի զավթումով պայմանավորված մածուցիկությունն է: Ցույց է տրվել, որ խտության և ջերմաստիճանի այն տիրույթներում, որտեղ բաբախումների մարման ժամանակը համեմատելի է աստղերի միաձուլման ժամանակի հետ, մածուցիկությունը կարող է էական ազդեցություն ունենալ միաձուլվող աստղերի դինամիկայում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Սեդրակյան):

HH 83 արտահոսքի մոտ հայտնաբերվել և նկարագրվել են անսովոր հիդրոդինամիկական երևույթներ: Փոփոխական V1318 Cyg S աստղը որակվել է որպես ոչ տիպիկ FUor օբյեկտ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Տ.Մադաքյան):

Աստղագիտական միջոցների կիրառությամբ փորձ է արվել ճշտելու հայկական «Վիշապ» կոչվող քարակոթողների տարիքը: Պարզվել է, որ մեզ հասած վիշապակոթողները



հարկ է բաժանել ձկնակերպ, ցլակերպ, խոյակերպ և արագիլների պատկերով խմբերի (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Բրուսյան):

Ուսումնասիրվել են մեծ հեռավորությամբ ( $z > 2,5$ ) բլազարների բազմահաճախային տիրույթում ճառագայթման մեխանիզմները՝ վերլուծելով Fermi LAT, Swift XRT և Swift UVOT դիտակներով գրանցված տվյալները: Ցույց է տրվել, որ  $\gamma$  տիրույթում այդ աղբյուրների ճառագայթման հոսքը փոփոխվում է  $4.84 \times 10^{-10}$ -ից  $1.50 \times 10^{-7}$  ֆոտոն  $\text{սմ}^2 \text{վրկ}^{-1}$  տիրույթում, իսկ լուսատվությունը՝  $(0.10-5.54) \times 10^{48}$  էրգ վրկ<sup>-1</sup>: Ուսումնասիրվել են այդ բլազարների շիթերից ճառագայթման մեխանիզմները, և ցույց է տրվել, որ էներգիայի սպեկտրալ բաշխվածությունը մոդելավորվում է մեկ տիրույթում սինքրոտրոնային և տորանման տիրույթի ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրմամբ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան):

**Ֆիզիկա.** Ի հայտ է բերվել ատոմական անցումների մի նոր տեսակի 180-700 Գս մագնիսական դաշտի տիրույթում «անշարժ» անցում, որի հաճախությունը գրեթե անփոփոխ է, մինչդեռ անցման հավանականությունը մեծ է: Նման «անշարժ» անցումները հետազոտվել են  $^{87}\text{Rb}$  D<sub>2</sub> գծի ( $|1,+1\rangle \rightarrow |1',+1'\rangle$ ) և  $\text{Cs}$  D<sub>2</sub> գծի ( $|3,-3\rangle \rightarrow |5',-4'\rangle$ ) դեպքում (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Դ.Սարգսյան):

Հետազոտվել է ատոմային կլանման ազդանշանի ժամանակային վարքն անընդհատ լազերային ճառագայթումով ռեզոնանսային զրգոման պայմաններում: Չափումներն արվել են  $^{85}\text{Rb}$ -ի D<sub>2</sub> գծի վրա  $\approx 1$  նվ ժամանակային լուծունակությամբ: Հայտնաբերվել է բացթողման ազդանշանի անկանոն տատանողական վարք, որը դառնում է խիստ ընդգծված լազերի հզորության մեծ արժեքներում և վերանում է, երբ լազերը դուրս է բերվում ռեզոնանսից: Ֆուրյեի արագ ձևափոխությամբ կատարված վերլուծությունն ի հայտ է բերել հզորությունից կախված պիկերի առկայությունը, որոնց դիրքը համապատասխանում է Ռաբիի հաճախությանը: Վերլուծվել է հայտնաբերված երևույթի կապն աղմուկի փուլ-լայնույթ փոխակերպման հետ՝ պայմանավորված լազերային դաշտի փուլային ֆլուկտուացիաներով (դեկ.՝ թղթ.անդ. Ա.Պապոյան):

Հետազոտվել են կրկնակի ակտիվացված  $\text{YAG:Er}^{3+}$  (1 ատ.%),  $\text{Ce}^{3+}$  (0.38 ատ.%),  $\text{YAG:Er}^{3+}$  (5 ատ.%),  $\text{Ce}^{3+}$  (0.25 ատ.%),  $\text{YAG:Er}^{3+}$  (13 ատ.%),  $\text{Ce}^{3+}$  (0.5 ատ.%) բյուրեղներում խառնուկային իոնների միջև էլեկտրոնային զրգոման փոխանցման երևույթները 20-10000 մկվ տևողությամբ իմպուլսներով 445 նմ և 405 նմ լազերների մղման դեպքում: Տեսականորեն ցույց է տրվել, որ  $\text{YAG:Er}^{3+}, \text{Ce}^{3+}$  բյուրեղներում  $\text{Ce}^{3+}$ -ից  $\text{Er}^{3+}$  զրգոման ոչ ճառագայթումային փոխանցման գործակիցները մոտ հինգ կարգով ավելի մեծ են, քան  $\text{YAG:Er}^{3+}$ -ում  $\text{Er}^{3+}$ -ից  $\text{Er}^{3+}$  փոխանցման դեպքում (դեկ.՝ ակ. Ռ.Կոստանյան):

Առաջին անգամ հետազոտվել են կվարցի միաբյուրեղներում ռեզոնանսային ուլտրա-ձայնային տատանումների առկայության պայմաններում դիֆրակցված սինքրոտրոնային ճառագայթման ինտենսիվության վերաբաշխման երևույթի ժամանակային բնութագրերը: Ցույց է տրվել, որ բյուրեղում հաստատուն լայնությամբ ակուստիկական ալիքների զրգոման համար անհրաժեշտ է որոշ ժամանակ՝  $\sim 1$  մվ. ինտենսիվության փոփոխման պրոցեսն այդ ընթացքում ունի բարդ բնութագիր, որից հետո այն կայունանում է: Այսինքն՝ նման օպտիկական էլեմենտների պարամետրերի վերակարգավորման համար անհրաժեշտ են ընդամենը մվ-ներ, այնինչ ժամանակակից սինքրոտրոններում օգտագործվող ռենտգենյան օպտիկայի էլեմենտների վերակարգավորումը տևում է բոլորեք, երբեմն էլ՝ ժամեր (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ. Քոչարյան):

Մշակվել է թոքերի արհեստական օդափոխման նոր տիպի համակարգ, որի գլխավոր յուրահատկությունը շնչառական պրոցեսի բնական հաճախականության համադրումն է ներշնչվող ու արտաշնչվող օդի բարձր հաճախությամբ տատանումների հետ: Նախագծվել և պատրաստվել է բազմահաճախային տատանումներ ստեղծող սարքավորման լաբորատոր

փորձանմուշ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Խաչատրյան):

Հետազոտվել է միկրոալիքային մագնիսական դաշտի փոխազդեցությունը կենսաբանական հյուսվածքների և իոնային ջրային լուծույթների հետ: Այդ նպատակով մշակվել է հատուկ ռեզոնանսային էլեկտրադինամիկական կառուցվածք, որն ապահովում է միկրոալիքային դաշտի մագնիսական և էլեկտրական բաղադրիչների տարածական խիստ տեղայնացումը: Կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է կենսաբանական հյուսվածքների և լուծույթների կողմից միկրոալիքային մագնիսական դաշտի խիստ կլանման երևույթ, որը կախված չէ արտաքին մագնիսական դաշտից և ունի էական ջերմաստիճանային կախվածություն: Հայտնաբերված երևույթը կարող է կիրառվել բժշկության մեջ՝ ոչ ինվազիվ հետազոտություններ կատարելու համար (ղեկ.՝ թղթ.անդ. Ա.Հախումյան):

Դիտարկվել է մեծ արագությամբ (50-300 մ/վ) շարժվող օբյեկտի արագ հայտնաբերման հնարավորությունը, երբ այն գտնվում է տեղորոշող համակարգին բավականաչափ մոտ (1-20մ) հեռավորության վրա: Առաջարկվել է որոշակի հեռավորության վրա գտնվելիս օբյեկտի արագ հայտնաբերման բավական պարզ՝ անկյունաչափական եղանակ, որը հիմնված է օբյեկտից (թիրախից) զոնդավորող ճառագայթի անդրադարձումը (ցրումը) ուղղակիորեն գրանցելու վրա: Որպես զոնդավորող ճառագայթման աղբյուր կարող է օգտագործվել կիսահաղորդչային լազեր կամ լուսադիոդ, որը, համալրվելով համապատասխան ոսպնյակով, ապահովում է ճառագայթման որոշակի անկյունային բացվածք: Ֆոտոդնդունիչ համակարգում որպես լուսազգայուն տարր կարող է օգտագործվել կիսահաղորդչային ֆոտոդիոդ, որի դիմաց որոշակի հեռավորության վրա տեղադրվում է ձեղքային դիաֆրագմա: Ընդունիչի տեսադաշտի անհրաժեշտ անկյունային բացվածքն ապահովվում է դիաֆրագմայի ձեղքի լայնության և երկարության ընտրությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Լազերային իմպուլսային փոշեցրման եղանակով ստացվել են  $\text{MoS}_2$  քվազիերկչափ բյուրեղներ՝ բաղկացած մեկ, երկու և ավելի ատոմական մենաշերտերից, ուսումնասիրվել են դրանց հատկությունները, կոմբինացիոն ցրման, էլեկտրոնային միկրոսկոպիայի, ռենտգենյան դիֆրակցիայի, ֆոտոլյումինեսցենցիայի և օպտիկական կլանման մեթոդներով (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Ուսումնասիրվել են բեկման ինդեքսի հատուկ պրոֆիլների լրացուցիչ համաչափությունները, որոնք օգտագործվում են կատարյալ պատկերապատման (perfect imaging) և թաքցնելու (cloaking) հայտնի երևույթների մեջ: Դիտարկված դեպքերում պահպանվում են փոխադրման գեներատորը և անկյունային մոմենտը: Ճառագայթների հետազոտվող պարամետրերն արտահայտվել են շարժման ինտեգրալների միջոցով, դիտվել է առավելագույն անկյունային մոմենտ ունեցող ֆոտոնային վիճակի առկայությունը, որը կարող է օգտագործվել որպես օպտիկական ռեզոնատոր (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Կենսաբանություն.** Ինվազիվ բուսատեսակների՝ Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հասցվող վտանգների գնահատման արդյունքում առանձնացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների, մասնավորապես արգելոցների և ազգային պարկերի, ինչպես նաև Հայաստանում ստեղծվող «Էմերալդ» էկոլոգիական ցանց տարածքների համար առավելագույն վտանգ հասցնող տեսակները: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա առաջարկություններ են ներկայացվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը, դրանք ընդգրկվել են նաև «Բույսեր նախահարձակներ. Հայաս-

տանի առավել կարևոր ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակները» մենագրությունում (ղեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ):

Ամփոփվել են ներմուծված ծառաբույսերի աճեցման և Հայաստանում գեղազարդ տնկարկների ստեղծման կիրառական ասպեկտներին նվիրված ծառագետ մասնագետների բազմամյա ուսումնասիրության արդյունքները: Պարզվել է, որ Հայաստանի տարբեր էկոտարածաշրջանների կանաչ տնկարկներում աճեցնելու հետաքրքրություն են ներկայացնում 534 տեսակի և պարտիզային ձևի ծառաբույսեր (144 ցեղ և 54 ընտանիք), այդ թվում՝ ասեղնատերևավորներ 6 ընտանիք 17 ցեղ և 70 տեսակ ու պարտիզային ձև: Այդ քանակության մոտ 18%-ը (78 տեսակ, 23 ցեղ) պատկանում է Վարդագգիների (*Rosaceae*) ընտանիքին: Հարուստ դենդրոկազմ ունեն Նոճագգիների (*Cupressaceae*) 24 տեսակ, Սոճագգիների (*Pinaceae*) 17, Բակլագգիների (*Fabaceae*) 28, Ցախակեռասագգիների (*Caprifoliaceae*) 24 և Ձիթենագգիների (*Oleaceae*) 20, ընտանիքները: Ասեղնատերև ծառաբույսերից հարուստ տաքսոնոմիական բազմազանությամբ աչքի են ընկնում Կենսածառ (*Biota*), Թույա (*Thuja*) և Գիհի (*Juniperus*) ցեղերը: Այդ տեսակաշարը ներկայացված է ըստ հանրապետության խոշոր դենդրոտարածաշրջանների կլիմայական պայմանների՝ հաշվի առնելով դրանց ուղղաձիգ բարձունքային գոտիականությունը, առանձին տեսակների պիտանիությունն ըստ կանաչապատման ֆունկցիոնալ նշանակության: Կարևորվել է ներմուծված (օտարածին) և աբորիգեն (տեղածին) ծառերի ու թփերի ներկայացվածությունը կանաչ տնկարկների դենդրոկազմում, դրանց օպտիմալ համամասնական հարաբերակցության անհրաժեշտությունը: Մշակվել են առկա կանաչ տնկարկների ու պուրակների վերակառուցման, նոր բարձր գեղազարդ տեսակներով և պարտիզային ձևերով համալրման, վեգետացիայի ընթացքում գեղազարդ բուսատեսակները խնամելու և ֆիտոտեխնիկական միջոցառումներ իրականացնելու գործնական առաջարկներ (ղեկ.՝ թղթ. անդ. Ժ.Վարդանյան):

Հասարակության առավել խոցելի խմբերից մեկի՝ երեխաների վրա շրջակա միջավայրի աղտոտման ազդեցությունը նվազեցնելու ժամանակակից լուծումների կիրառման շրջանակներում Երևան քաղաքի մոդելային մանկապարտեզներից մեկի տարածքում փողոցային փոշու քիմիական կազմի հետազոտությունները վեր են հանել առաջնային աղտոտիչներ (Cr, Zn, Cu, Pb, As) և դրանց ՍԹԽ գերազանցումներ (1.4-2.8 անգամ): Գրանցվել է այս տարրերի քանակություններով պայմանավորված երեխաների առողջությանն ուղղված ոչ քաղցկեղածին ռիսկ: Առաջին անգամ հետազոտվել է փողոցային փոշու մեխանիկական կազմը, բացահատվել է, որ մարդու առողջության համար վտանգավոր PM<sub>10</sub>-ը կազմում է 94%, իսկ PM<sub>2.5</sub>-ը՝ 19%: Նշված պարբերական հետազոտությունները հիմք են հանդիսանալու մանկապարտեզի տարածքում «կանաչ պատ» ժամանակակից լուծման հիմնավորման և արդյունավետության գնահատման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Սևանա լճի «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակման նպատակով իրականացվել է լճի ջրերի «ծաղկմանը» նպաստող հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական գործոնների բացահայտում, ավտոտրոֆ օղակի տեսակային կազմի որոշում և քանակական ցուցանիշների գնահատում: Կապտականաչ ջրիմուռներից Սևանա լճի ջրերի մաքրման նպատակով կատարվել է Հայաստանի ցեոլիտների օգտագործման մեթոդաբանության մշակում: Ցեոլիտների օգնությամբ կապտականաչներից ջրի մաքրման արդյունավետությունը գնահատվել է մանրէաբանական ցուցանիշների հիման վրա: Իրականացվել է նաև Սևանա լճի 3 դիտակետերից (Լիճք, Լճաշեն, Նորաշեն) վերցված ջրային նմուշների գենոտոքսիկության և կլաստոգենության մակարդակների բիոթեստավորում Տրադեսկանցիայի (կլոն 02) երկու թեստ-համակարգերի՝ առեջաթելերի մազիկների և միկրոկորիզային (Trad-SHM և Trad-MCN) կիրառմամբ: Հետազոտությունների արդյունքում նկատվել է «ծաղկման» շրջանում մուտացիաների, միկրոկորիզների թվի բարձրացում և այլ ցուցանիշների հավաս-

տի փոփոխություն, որի առավելագույն մակարդակը դիտվել է Լճաշենի դիտակետի ջրային նմուշներում (դեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Ցամաքային ողնաշարավոր կենդանիներից նշվել է 121 ինչպես լայն տարածված, այնպես էլ հազվագյուտ և անհետացող տեսակ, այդ թվում՝ երկենցաղների 5, սողունների 28, թռչունների 76, կաթնասունների 12: Նկատվել են կենդանիների նշված խմբերի և հատկապես թռչունների տեսակային կազմի և քանակական զգալի փոփոխություններ: Կազմվել են որոշ տեսակների տեղաբաշխման քարտեզներ (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Ղասաբյան):

Արքեոկենդանաբանական հետազոտությունների շրջանակներում նկարագրվել և չափվել են Սևանա լճի առափնյա մերկացումներից հայտնաբերված ոսկրաբանական նյութերը: Իրականացվել են ընտանի (ցուլեր, ոչխարներ, ձիեր) և վայրի (բիզոն, արջ, եղջերու) ձևերի գանգաչափական աշխատանքներ: Ուսումնասիրվել է Շիրակի մարզի հնագիտական հուշարձաններից պեղված վայրի և ընտանի տեսակների ավելի քան 4000 ոսկրային մնացորդ, որոշվել է ավելի քան 2000-ի տեսակը (դեկ.՝ կ.գ.դ. Ն.Մանասերյան):

Նշվել է կենդանիների մակաբույծների 27 տեսակ, այդ թվում՝ հելմինթների 16, նախակենդանիների 5, տզերի 6, հելմինթների միջանկյալ տեր հանդիսացող փափկամարմինների 7 տեսակ (դեկ.՝ ալ. Ս.Մովսեսյան):

Հայտնաբերվել է տարբեր կարգաբանական խմբերի պատկանող միջատների շուրջ 500 տեսակ: Գրանցվել են բզեզների և ֆիտոֆագ գալամակների նոր տեսակներ Հայաստանի ֆաունայի համար (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Քալաշյան):

ԴԼԹ-ի սեքվենավորման արդյունքների վերլուծության հիման վրա առաջին անգամ կառուցվել են ֆիլոգենետիկական ծառեր Հայկական լեռնաշխարհի *Carabus* ցեղի *Procerus* ենթացեղի ներկայացուցիչների և *Cetoniinae* ենթաընտանիքի որոշ խմբերի համար (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Կարազյան):

Առաջին անգամ Հայաստանի վայրի կաթնասունների մոտ գրանցվել է *Trichinella britovi* տեսակի մակաբույծը: Կրծողների և միջատակերների արյան նմուշներից անջատվել է գենոմային ԴԼԹ-ն և մի շարք ՊՇՌ-ների միջոցով հայտնաբերվել է *Toxoplasma gondii* տեսակին սպեցիֆիկ B1 գենի հատվածը (դեկ.՝ կ.գ.թ. Ս.Աղայան):

Առաջին անգամ Հայաստանի ֆաունայի համար գրանցվել է Tydeidae ընտանիքի բույսերի վնասատու տզերի 2 նոր տեսակ (դեկ.՝ կ.գ.դ. Ս.Դիլբարյան):

Ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեների էքսպրեսիոն կլոնավորման նպատակով *Pectobacterium carotovorum* subsp. *carotovorum* PC1-ի գենոմի ամբողջական սեքվենսի հիման վրա ստեղծվել է IIS տիպի BsaI ռեստրիկտազին հարմարեցված ռեստրիկցիոն տեղամասերով երկու զույգ պրայմեր: Golden Gate Assembly մեթոդով pET28 (GG\_CD-LacZ) պլազմիդում կլոնավորվել են *P. carotovorum* NN8690, 8694, 8726, 8727, 8756 և 8758 շտամերի ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեները (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

*Escherichia coli* HK շտամ-արտադրիչների ռեկոմբինանտ պլազմիդներում ցույց է տրվել *Geobacillus stearothermophilus* և *Thermotoga neapolitana* թերմոֆիլ մանրէների արգինինով արգելակման չենթարկվող օրնիթին ագետիլտրանսֆերազը կոդավորվող *argJ* գեների առկայությունը: Նշված պլազմիդների սեզրեզացիոն կամ կառուցվածքային անկայունության ստուգման արդյունքում դրանք ցուցաբերել են 100 % կայունություն: *argJ* գենը կրող *E. coli* HK ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների համար մշակվել են ցանքսային և ֆերմենտման միջավայրեր, որոնց շնորհիվ L-արգինինի կենսասինթեզի մակարդակը բարձրացել է 22%-ով (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Բացահայտվել են *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերին պատկանող մանրէների շտամեր, որոնք ցուցաբերում են բազմակի հակաբիոտիկների՝ ցեֆիքսիմի, ցեֆտրիաքսոնի, ցիպրոֆլոքսացինի և ազիտրոմիցինի նկատմամբ կայունություն (դեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Քիմիական մուտագենեզի և սելեկցիայի եղանակներով ստացվել է խորքային ֆերմենտման պայմաններում L-տրիպտոֆան սինթեզող *Brevibacterium flavum* 21 (p-FP-r) շտամի կայուն մուտանտ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Br. flavum LGS-6 շտամ-արտադրիչի կիրառմամբ մշակվել է L-հիստիդին ամինաթթվի ստացման արդյունավետ տեխնոլոգիա, որի ելքը 250 լիտրանոց կենսառեակտորում կազմում է 32 գ/լ (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղոչիկյան):

Մշակվել են հազվագյուտ և համեմատաբար քիչ ուսումնասիրված բույսերից (տանձատերև կլորավուն, լուծադեղ ճահճային, նուշ, սալորի կորիզամիջուկ) և կախասնկից կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատման արդյունավետ մեթոդներ (ելքը >85%): Ցույց է տրվել, որ առավելագույն հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված են տանձատերև կլորավունի սպիրտաջրային պատրաստուկները (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Մշակվել են նիկելի  $\alpha$ -տեղակալված պրոպարգիլգլիցինային կոմպլեքսի խաչաձև-համակցման ռեակցիայի (Գլայգերի ռեակցիա) օպտիմալ պայմաններ և իրականացվել է բացասական լիցքավորված քիրալային կոբալտային կոմպլեքսների սինթեզ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Ուսումնասիրվել են նիկելի ( $Ni^{2+}$ ) պրոպարգիլալանինի կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի ծայրային ակլինային խմբի Սոնոգաշիրայի խաչաձև-համակցման և ազիդ-ակլինային ցիկլոմիացման ռեակցիաները: Սինթեզվել է նախկինում չնկարագրված կոդմային ռադիկալում ացետիլենային և 1,2,3-տրիագոլային կամրջակով կապակցված տարբեր բնույթի տեղակալիչներով արիլային մնացորդներ պարունակող էնանտիոմերապես մաքուր թվով 10 ոչ սպիրտակուցային (S)- $\alpha$ -ամինաթթու: Ոչ սպիրտակուցային (S)- $\alpha$ -պրոպարգիլալանինի ամինաթթվի հենքի վրա ակտիվացված պեպտիդային էսթերների աստիճանական սինթեզի մեթոդով ստացվել են պոտենցիալ կենսաբանական ակտիվությամբ օժտված նոր դի- և տրիպեպտիդներ (ղեկ.՝ ք.գ.թ. Ջ.Մարդիյան):

Մշակվել, կատարելագործվել և արտոնագրվել է բուսական ու կենդանական ծագման հումքի թափոններից հարաբերականորեն բարձր ելքով (մոտ 20%) ու մաքրության (>98%) ջրալույծ մելանինի ստացման արդյունավետ եղանակ (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Ցույց է տրվել, որ կաթնաթթվային բակտերիաների մի շարք շտամերը և դրանց հիմքի վրա ստացված հակամանրէային պատրաստուկները տարբեր արդյունավետությամբ ճնշում են կաթնամթերքի նմուշներից մեկուսացված *E. coli* ենթատեսակների աճը: Ընտրվել են *Lactobacillus helveticus* KG5՝ և *L. acidophilus* 1991 շտամերը որպես կենսապաշտպանիչներ դրանց հետագա կիրառման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Զիտչյան):

Ադապտացված մանրէային կուլտուրաների կիրառումը թույլ է տալիս պղնձի կորզումը սուլֆիդային հանքաքարից ավելացնել մոտ 5 անգամ՝ հասցնելով այն 91-94% և 98%-ի՝ պուլպի խտության համապատասխանաբար 10% և 20%-ի դեպքում: Կենսածին երկաթի միջոցով տարրալուծման տեխնոլոգիայի ինտեգրումը մայրական պլատաների վերամշակման գործընթացում նպաստում է պղնձի և այլ մետաղների արդյունավետ կորզմանը երկրորդային հումքից (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

*E. coli*-ում ծիրանագույն ֆոտոսինթեզող *Rhodobacter azotoformans* բակտերիայի և նրա մուտանտ *E10*-ի 5-ամինալևուլինաթթվի (5-ԱԼԹ) կենսասինթեզին մասնակցող 5-ԱԼԹ-սինթետազ ֆերմենտի գեների հետերոլոգիական էքսպրեսիայի արդյունքում ստացվել է 5-ԱԼԹ-ի նոր ռեկոմբինանտ շտամ-արտադրիչ (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Կազմվել է Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված մի շարք վայրի լոբազգի բույսերից (*Astragalus*, *Onobrychis*, *Lotus*, *Lathyrus*, *Trigonella*, *Trifolium*, *Pisum*, *Vicia*, *Galega*, *Melilotus*, *Vavilovia*, *Amorpha*, *Styphnolobium*, *Caragana* ցեղեր) մեկուսացված պալարաբակտերիաների կատալոգ (72 շտամ): Առաջարկվել է պալարաբակտերիաների հալոտոլերանտ շտամերի

միջոցով աղակալված-սողակալված հողերի վերականգնման նոր մեթոդ (ղեկ.՝ Ս.Հարությունյան):

Շարունակվել են ավանդադրված մանրէների կուլտուրաների երկարաժամկետ պահպանման ապահովման, ինչպես նաև նոր շտամերի մեկուսացման, ուսումնասիրման և դասակարգման աշխատանքները: Հետազոտվել են արտադրական նշանակության որոշ կուլտուրաների հատկանիշները և ամփոփվել են դրանց անձնագրային տվյալները (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Զարգարյան):

Եռամյա գիտափորձերի արդյունքում կարելի է ենթադրել, որ Արարատյան դաշտի բնակլիմայական պայմանները բարենպաստ չեն պավոլնիայի ինքնաբազմացման համար: Դաշտում տնկված 3 տարեկան բույսերը, որոնց նկատմամբ չի իրականացվել խնամքի որևէ միջոցառում, բացի շաբաթական 2-անգամյա ջրումից, չեն ցուցաբերել ինտենսիվ աճ (առավելագույն բարձրությունը 45 սմ, արմատավզիկի հաստությունը 8 մմ) կամ արմատային բողբոջներից նոր ընձյուղների ձևավորում: Մինչդեռ հիդրոպոնիկայի պայմաններում, որտեղ բույսերը մշտապես ապահովված են օդաջրասնդային օպտիմալ պայմաններով, դիտվել է բույսերի աճ արմատային բողբոջներից, որոնց բարձրությունը մեկ վեգետացիոն շրջանում հասել է մինչև 3.3 մ՝ արմատավզիկի մինչև 7 սմ հաստությամբ: Բույսերը ձևավորել են նաև ծաղկաբողբոջներ, սակայն չեն հասցրել ծաղկել:

Ռադիոքիմիական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արարատյան դաշտում (Հայկական ԱԷԿ-ի տեխնածին ազդեցության 30 կմ շառավղով գոտի, ՀՊԻ-ի տարածք), անկախ աճեցման պայմաններից (հիդրոպոնիկա-դասական, ջրաշիթային, օրգանական և հող), դեղաբույսերի (մեդրախոտ, օշինդր միամյա, նարդոս նեղատերև, հազրեվարդ դեղատու, եղերդակ սովորական) և բանջարաբույսերի (եղերդակ սալաթային, կալե) բուսահումքը ռադիոէկոլոգիապես անվտանգ է: Ըստ գումարային  $\beta$ -ռադիոակտիվության՝ դեղաբույսերը կազմել են հետևյալ նվազող շարքը՝ մեդրախոտ>օշինդր միամյա>եղերդակ սովորական>հազրեվարդ դեղատու>նարդոս նեղատերև, իսկ բանջարաբույսերը՝ եղերդակ սալաթային>կալե: Արևելյան կենսածառի տերևները հիդրոպոնիկայում գումարային  $\beta$ -ռադիոակտիվությամբ գերազանցել են յուղատու մորինգայի, սոսու, գիհու, բրգաձև թույայի, կաղնու տերևներին համապատասխանաբար 1.2, 1.2, 1.3, 1.4, 2.0 անգամ:

Չինական կաղամբի հանքային սննդառության օպտիմալացման արդյունքում պարզվել է, որ բույսերը նախընտրում են մակրոտարրերի բարձր խտություն (1.0 և 1.25 Ն), որի դեպքում դրանց բերքատվությունը գերազանցել է հիդրոպոնիկ մյուս տարբերակներին և հողային ստուգիչին 1.3-2.9 անգամ: Փորձարկված տարբերակների դեպքում C վիտամինի բարձր պարունակություն (1.1-1.3 անգամ) և ել (1.1-3.8 անգամ) դիտվել է սննդալուծույթի 1.0 Ն կիրառման պայմաններում: Էքստրակտիվ նյութերի կենսասինթեզն ինտենսիվ է ընթացել 1.0 և 0.75 Ն խտության դեպքում, մինչդեռ ֆլավոնոիդների բարձր պարունակությամբ (1.3-2.0 անգամ) աչքի են ընկել հողային բույսերը (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

**Բժշկական կենսաբանություն.** Շարունակվել է գալարմինի և անալոգների կենսաբանական ակտիվության հետազոտումը: Հետազոտվել է գալարմինի փոխազդեցությունը թուլանման ռեցեպտորների հետ՝ (Human TLR1 (6nih), Human TLR2 (6nig), Human TLR3 (1ziw), Mouse TLR4 (5ijc), ZebrafishTLR5 (3v44), Monkey TLR7 (6if5), Human TLR8 (4qc0), Mouse TLR9 (3wpf): Ամենաուժեղ փոխազդեցությունը դիտվել է մկան TLR4 ռեցեպտորի դեպքում: Համեմատաբար թույլ փոխազդեցություն է դիտվել գերբաձկան TLR5 ռեցեպտորի դեպքում: TLR ռեցեպտորների հետ հետազոտվող գալարմինի դիտվող ուժեղ փոխազդեցությունները վկայում են բորբոքային պրոցեսներում այդ միացության հնարավոր բարձր կենսաբանական ակտիվության մասին (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Զախյան):

Հետազոտվել և գնահատվել է ադենոզինդեամինազ (ԱԴԱ), դիպեպտիդիլպեպտիդազ IV, գլուտամինազ և ԳԱԿԹ-տրանսամինազ ֆերմենտների ակտիվության կարգավորումը

առատոմիումնային հիվանդությունների դեպքում: Ռևմատոիդ արթրիտի դեպքում սինովիալ հեղուկում ԱԴԱ-ի բարձր ակտիվությունն ուղեկցվել է ցածրամոլեկուլային ադենոզին-դեամինազի (gԱԴԱ) ցիտրուլինացմամբ: Ցիտրուլինացումը խոչընդոտել է gԱԴԱ-ի փոխազդեցությանը ԴՊՊԿ-ի հետ և բարձրամոլեկուլային ադենոզինդեամինազի (բԱԴԱ) ձևավորմանը: Կուտակված ցիտրուլինացված ԱԴԱ-ի նկատմամբ առաջացել են առատոհակամարմիններ, որոնք կարող են սրացնել հիվանդությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Կառուցվածքային իզոֆերմենտային առանձնահատկությունները բացահայտելու նպատակով մարդու լյարդից և գլխուղեղից անջատվել և մաքրվել են ֆոսֆոռիբոզիլ պիրոֆոսֆատ սինթազ և քսանտին օքսիդոռեդուկտազ ֆերմենտները (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Դանիելյան):

Արյան պղինձ պարունակող սպիտակուց ցերուլոպլազմինը շիճուկային ալբումինի և հեմոգլոբինի հետ ֆոտոդինամիկ թերապիայում օգտագործվող կատիոնային պորֆիրինների փոխադրիչ է: Հետազոտվել է այս սպիտակուցի կոմպլեքսագոյացումը կատիոնային պորֆիրինների, մետաղապորֆիրինների հետ չեզոք և թթվային pH-ի տիրույթում, ինչպես նաև չեզոք միջավայրում նատրիումի քլորիդի 0.1-0.9% խտության դեպքում *in vitro* պայմաններում: Միջավայրի pH-ի չեզոքից թթվայինի փոփոխության դեպքում տեղի են ունենում ցերուլոպլազմինի զգալի կոնֆորմացիոն փոփոխություններ, որոնք բերում են կատիոնային պորֆիրինների/մետաղապորֆիրինների կապման ավելացմանը, մինչդեռ նատրիում քլորիդի խտության բարձրացումը մինչև 0.9%, ընդհակառակը, բերում է այդ ֆոտոսենսիբիլիզատորների կապման նվազմանը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանդանյան):

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտն իրականացրել է COVID-19 ախտորոշման իրական ժամանակում ՊՇՌ թեստերի արտադրություն: Բացի այդ, իրականացվել է ՊՇՌ մեթոդի օպտիմալացում, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել վիրուսի հայտնաբերումը նմուշում առանց նուկլեինաթթուների նախնական անջատման (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Առաքելյան):

Ինստիտուտը և Չինաստանի ԳԱԱ բուսաբանության ինստիտուտը համատեղ ավարտել են ՀՀ վայրի խաղողի 78 գենոտիպի և 95 սորտի 3K ռեսեքվենավորումը: Համաձայն նախնական տվյալների՝ վայրի խաղողի 2 նմուշի մոտ դիտարկվել է ազգակցական կապ «Խնդողնի» և «Սև խաղող» տեղածին սորտերի հետ: Դա կարող է վկայել, որ «Խնդողնի» և «Սև խաղողը» պատկանում են տեղածին և ամենաերկարատև էվոյուցիա անցած սորտերին, և նշյալ վայրի նմուշները կարող են լինել վայրիից մշակայինի անցման միջանկյալ ձևեր: Իրականացվել է նաև ՀՀ Խաղողի ազգային կոլեկցիոն այգում պահպանվող խաղողի գինեբեր 8 սորտի 12 վիրուսի հտ-քՊՇՌ մեթոդով մոլեկուլային հետազոտություն (ղեկ.՝ կ.գ.թ. Ք.Մարգարյան):

Հայաստանում առաջին անգամ իրականացվել է առավել տարածված սննդածին վարակիչ հիվանդությունների պատճառ հանդիսացող և դեղամիջոցների նկատմամբ բազմակայունությամբ օժտված բակտերիալ հարուցիչների ամբողջական գենոմի սեքվենավորում: Արդյունքում բացահայտվել են *Shigella*, *Pseudomonas*, *Klebsiella* և ոչ տիֆային *Salmonella* կլինիկական բազմադեղակայուն շտամերի վիրուլենտության և հակամանրէային դեղամիջոցների նկատմամբ կայունության գեները (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

Բացահայտվել են գլխուղեղի խոլիներգիկ պրոյեկցիաների անոմալ գործունեության էլեկտրաֆիզիոլոգիական ցուցանիշները, ինչպես նաև *Galantamine*-ի՝ կենտրոնական գործող ագետիլխոլինէստերազի արգելակչի բուժական արդյունավետությունը ֆրոկտոզով հարուցված 2-րդ տիպի շաքարային դիաբետի (T2DM) ժամանակ: Արդյունքները մատնանշում են խոլիներգիկ նեյրոնային շղթաների ներգրավվածությունը դիաբետիկ էնցեֆալոպաթիայի բազմագործոն պաթոգենեզում, ինչպես նաև T2DM-ի ժամանակ *Galantamine*-ի բարենպաստ ազդեցությունը խոլիներգիկ ցանցերի նեյրոնային պլաստիկության ցուցանիշների նկատմամբ (ղեկ.՝ կ.գ.դ. Վ.Չավուշյան-Պապյան):

Պարկինսոնի հիվանդության մոդելում մորֆոհիստոքիմիական տվյալների վերլուծության արդյունքում բացահայտվել են ուղեղի վրա միջինասիական կորբայի, հայկական իծի թույնների փոքր չափաբաժինների և գալարմինի նյարդապաշտպան ազդեցությունները: Պարկինսոնի հիվանդության համեմատ դիտվել են սև նյութի և դժգույն գնդի նյարդաբջջների կառուցվածքային հատկանիշների դրական փոփոխություններ, որոնք վնասվում են տվյալ նեյրոդեգեներատիվ հիվանդության ժամանակ: Առնետների գլխուղեղի բջջային կառույցներում տարբեր հետծննդյան շրջաններում պրոպիոնային թթվի ազդեցության ներքո ի հայտ են եկել տարբեր աստիճանի բջջային վնասվածքներ, որոնք դարձելի են: Նյարդաբջջների միջև նկատվել է ուժեղացված գլխալ ռեակցիա, որը նվազում է ուշ հետծննդյան շրջանում (ղեկ.՝ Բ.Գ.Պ. Տ.Ղևոնդյան):

Ուսումնասիրվել է առնետների և մկների տարբեր օրգանների սքաֆոլդների ստացումը, շարունակվել են հորթի սաղմի շիճուկի փոխարեն մարդու շիճուկն օգտագործելու հնարավորության ուսումնասիրությունները, որոնք կարևոր են վերականգնողական բժշկության համար: Արդյունքում ստացվել են առնետների, մկների լյարդի և մաշկի հատվածների սքաֆոլդներ, և տարբեր մեթոդների կիրառմամբ որոշվել է դրանց իմունոգենությունը (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Ձ.Կարաբեկյան):

## ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Քիմիա.**  $K_2CO_3$ /ԴՄՖԱ համակարգով ելային  $N^1$ -(4-մեթօքսի-3-նիտրոբենզիլ)-5-ֆտորուացիլի  $N^1$ -(4-մեթօքսի-3-նիտրոբենզիլ)-5-ֆտորուացիլի տեղակալված բենզիլ քլորիդներով ալկիլացմամբ սինթեզվել են ֆենիլային օդակում տեղակալված  $N^3$ -բենզիլ ածանցյալներ: Վերը նշված համակարգում ելային պիրիմիդինների ալկիլացմամբ սինթեզվել են նախկինում չնկարագրված ուրացիլի, 5-ֆտոր-, բրոմ- և յոդուրացիլների  $N^1$ - և  $N^1, N^3$ -բիսածանցյալներ՝ իբրև նուկլեինային հիմքերի կենսաբանորեն ակտիվ նմանակների տրանսպորտային (նախադեղային) ձևեր: Պիրիմիդինների հիման վրա նոր ակտիվ և քիչ թունավոր հակաուռուցքային պատրաստուկների փնտրտուքների ընթացքում առաջին անգամ ստացվել են տեղակալված պիրիմիդինների 5-ֆտորուացիլի և եռ- ու քառացիկլիկ կոնդենսացված պիրիմիդինների կոնյուգատներ, որոնցում հետերոցիկլիկ ֆրագմենտները կապված են իրար հետ ֆունկցիոնացված ֆենիլային կապերով: Սինթեզվել են նոր բիսթիադիազոլ և նրա ածանցյալները (ղեկ.՝ Բ.Գ.Պ. Ա.Հարությունյան):

Կենսաբանական թթվածնային համալիրի (YSI 5300A, ԱՄՆ) օգնությամբ ուսումնասիրվել և քանակապես բնութագրվել են վիտամին B12-ի բաղադրիչների՝ կոբալամինների (ցիանո-, հիդրօքսո-, մեթիլ-, ադենոզիլ-) հակաօքսիդիչ հատկությունները մոլեկուլային թթվածնով մեթիլլիոլեատի շրթայական պերօքսիդացման մոդելային ռեակցիայի միցելային համակարգում: Ցույց է տրվել, որ կոբալամինները հանդես են գալիս որպես լիպիդների բջջային թաղանթների հիմնական բաղադրիչներ՝ պերօքսիդացման ռեակցիայի հակաօքսիդիչ կարգավորիչներ, և առաջարկվել է կոբալամինների հակապերօքսիդադիկալային ազդեցության մեխանիզմ (ղեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Բացահայտվել է, որ  $MoO_3+3Mg$  և  $CuO+Mg$  խիստ էկզոթերմ ու պայթյունային փոխազդեցությունները համատեղելու դեպքում ( $MoO_3-CuO-4Mg$  համակարգ) ընթանում է թույլ ինքնատաքացմամբ դանդաղ փոխազդեցություն (դիսիներգիկ էֆեկտ)՝ պայմանավորված ռեակցիայի մեխանիզմի փոփոխությամբ. մագնեզիումով վերականգնման փուլին նախորդում է  $CuMoO_4$  աղի առաջացումը (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):



Զարգացվել են սկզբունքային նոր տեսական պատկերացումներ երեք մարմնի դասական և քվանտային խնդիրների հետազոտման համար, ինչը կարող է հիմք հանդիսանալ նոր, բարձր արտադրողական ալգորիթմների ստեղծման համար՝ մոդելավորելու երկմուլեկուլային քիմիական փոխարկումները՝ ներառյալ ընթացքների վրա արտաքին ազդեցությունները (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Մշակվել են գիշերային տեսողության սարքերի համար սպեկտրի ինֆրակարմիր տիրույթում (400-6000 նմ) բարձր թափանցելիությամբ ապակիների բաղադրություններ և տեխնոլոգիա: Ապակիների մշակման համար հետազոտվել են  $PbGeO_3(BaGeO_3)-Me_2O_3(Me-Al, Ga, Bi, Sb)-MeF_2/MeF_3$ ,  $(Me-Pb, Cd, Al, Y)$  համակարգերի ապակեզոյացումը, բյուրեղացման նկատմամբ կայունությունը, ապակիների թափանցելիությունը սպեկտրի լայն տիրույթում, բեկման ցուցիչը (n), դիսպերսիան(v) և ջերմաֆիզիկական հատկությունները (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Նորարարական եղանակով սերպենտինիտներից  $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$  ստացված քիմիապես ակտիվ հիդրոսիլիկաթելի կամ շերտային սիլիկահողի և ստրոնցիումի աղերի փոխազդեցությամբ և սիլիկատի կառուցվածքում ակտիվատորի, մասնավորապես եվրոպիումի իոնի ( $Eu^{3+}$ ) ներմուծմամբ իրականացվել է լյումինեսցենտային սիլիկատային միացությունների սինթեզ: Ուսումնասիրվել են դրանց լյումինեսցենտային հատկությունները՝ կախված մի շարք գործոններից՝ նստեցման պարամետրերից, շիկացման ջերմաստիճանից և ռեժիմից, ակտիվատորի ներմուծման եղանակից, ինչպես նաև ստացված արդյունքները համեմատվել են ավանդական եղանակներով ստացված համապատասխան միացությունների բնորոշ համանման տվյալների հետ (դեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

**Երկրի մասին գիտություններ.** Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի, Հրաբխագիտության լաբորատորիաների և Թայվանի ակադեմիայի Սինիկայի Երկրի մասին գիտությունների ինստիտուտի սեյսմիկ տոմոգրաֆիայի համատեղ հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Հայկական հրաբխային բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասի Արագածի (պլեյստոցենի հասակ) և Գեղամի (պլեյստոցեն-հոլոցենի հասակ) հրաբխային զանգվածների տարածքում մայրցամաքային կեղևի հզորությունը կազմում է ընդամենը 32-35 կմ, իսկ երկայնական և լայնական սեյսմիկ ալիքների արագությունների հարաբերությունը բնորոշվում է չափազանց բարձր արժեքով՝  $V_p/V_s = 1.90-2.15$ : Այս ցուցանիշները կտրուկ տարբերվում են հարևան տարածքների նմանատիպ արժեքներից և վկայում են Արագած-Գեղամի հրաբխային կլաստերում մանթիական կոնվեկցիայի հետևանքով լոկալ դելամինացիայի և լիթոսֆերայի հեռացման և ստորին կեղևում մանթիական ծագման մագմատիկ հալոցքի առկայության մասին (դեկ.՝ Է.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Պլանկտոն (PF), բենթոս ֆորամինիֆերների (LBF) և նանոբրածոների կորելյացիայի արդյունքում Ուրցաձոր կտրվածքի 350 մ հզորությամբ բարտոն-պրիաբոն հատվածը համապատասխանում է պլանկտոն ֆորամինիֆերների P12/E10-11 մինչև P15/E15, նանոբրածոների NP16-NP19, բենթոս ֆորամինիֆերների SBZ17-SBZ19 զոնաներին՝ SBF-Heterolepa eocaena-Cibicidoides landjaricum, Cibicidoides truncanus, Planulina costata: Այս կտրվածքի ուսումնասիրությունն ունի կարևոր համաշխարհային նշանակություն բարտոն-պրիաբոն սահմանի հստակեցման համար (դեկ.՝ Է.գ.թ. Լ.Սահակյան):

Արբանյակային, վերգետնյա մոնիթորինգի, դաշտային հետազոտությունների տվյալների համադրմամբ կատարվել է ՀՀ ջրային ռեսուրսների քանակական և որակական ցուցանիշների և դրանց փոփոխությունների դինամիկայի գնահատում ու կանխատեսում: Սևանա լճի ջրի էկոհամակարգի վիճակի գնահատման համար 2018-19թթ. տարբեր ամիսներին իրականացվել է Սևանա լճի ջրում քլորոֆիլ Ա-ի կոնցենտրացիայի փոփոխության գնահատում՝ Sentinel-2 արբանյակային տվյալների և C2RCC (Case 2 Regional Coast Colour) մեթոդի կիրառմամբ: Համեմատության համար օգտագործվել են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի World Water

Quality պորտալի (<http://sdg6-hydrology-tep.eu/>)՝ Սևանա լճի ջրում 2016թ. քլորոֆիլ Ա-ի պարունակության արբանյակային վերծանված տվյալները: Համաձայն ստացված արբանյակային տվյալների՝ 2018 և 2019թթ. լճի ջրում քլորոֆիլ Ա-ի պարունակությունը սկսել է ինտենսիվ բարձրանալ մայիսի վերջից և առավելագույնի է հասել հուլիս-օգոստոս ամիսներին: Քլորոֆիլ Ա-ի բարձր պարունակությունը վկայում է օրգանական աղտոտիչների՝ դեպի լիճ ներհոսքի աստիճանական աճի մասին (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Առաքելյան):

Կազմվել է Հարավային Կովկասի դևոն-ստորին կարբոնի նստվածքների տարածման սխեմատիկ երկրաբանական քարտեզ: Առաջին անգամ աշխարհում վերանայվել է *orbelianus* տեսակը, որը Պալեոտերիս ավազանի համար ունի կենսաշերտագրական սկզբունքային նշանակություն որպես ստորին Ֆամենի համար դեկավարոդ ձև: Տրվել է Հարավ-Հայկական բլոկի դևոն-ստորին կարբոնում հնաշխարհագրական տեղադիրքն ըստ *Aramazdospirifer orbelianus*: Նկարագրվել և ներկայացվել է ուստոանիների 7 տեսակ, որոնցից 6-ը պատկանում են Rhynchonellida կարգին (order), իսկ մեկը՝ Athyridida: Վերջինս նոր տեսակ է և առաջին անգամ ներկայացվել է մեր կողմից (դեկ.՝ ե.գ.թ. Ա.Գրիգորյան):

Բացահայտվել են բազմահարկ շենքերի ստորին և վերին հարկերում տատանումների ամպլիտուդների էպյուրների տարբեր օրինաչափություններ բնապայման փորձարկումների միջոցով (դեկ.՝ ե.գ.թ. Ջ.Կարապետյան):

Գնահատվել են Հյուսիսային Հայաստանի և հարակից շրջանների երկրակեղևի լարվածային դաշտի քանակական բնութագրիչները: Հարաբերական դեֆորմացիաների արագությունների ուղղահայաց բաղադրիչներով ստեղծվել է Հյուսիսային Հայաստանի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն դաշտի տարածաէներգետիկ բաշխվածության հիերարխիկ մոդելը, որի վերլուծությունը ցույց է տվել, որ անհամեմատ փոքր աշխարհագրական չափերով տարանջատված հարակից բլոկներում դիտվում են մեկ կամ երկու կարգով իրարից տարբերվող հարաբերական դեֆորմացիաների արժեքներ, որոնք փաստում են տվյալ բլոկների խիստ մասնատվածությունն ու բարձր սեյսմիկ ակտիվությունը (դեկ.՝ Բ.Մահալյան):

Հին և նոր շենքերի սպեկտրալ բաղադրակազմի վերլուծության արդյունքում բացահայտվել են նոր շենքերի սպեկտրալ բաղադրակազմում ավելի հստակ արտահայտված գերակշռող գազաթնակետերը (դեկ.՝ տ.գ.թ. Հ.Հայրապետյան):

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Պատմագիտություն.** «Հայոց պետականության հիմնախնդիրները հնագույն ժամանակներից մինչև 1918թ.» թեմայի շրջանակներում (դեկ.՝ ալ. Ա.Մելքոնյան) արխիվային վավերագրերի, վիճակագրական տվյալների, մամուլի և գիտական գրականության հիման վրա լուսաբանվել են Երևանի նահանգի վարչաժողովրդագրական նկարագրին, տնտեսական կյանքին վերաբերող խնդիրները:

«Հայաստանը և հայությունը նորագույն ժամանակաշրջանում: Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն» թեմայի շրջանակներում (դեկ.՝ պ.գ.դ. Կ.Խաչատրյան) հարուստ փաստական հիմքի վրա լուսաբանվել է 1920-30-ական թվականներին քեմալական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքների հիմնախնդիրը, որը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների ձևավորման ընթացքի վերաբերյալ: Այն հավասարապես կարևոր և արդիական նշանակություն ունի ինչպես պատմագիտական, այնպես էլ քաղաքագիտական տեսանկյունից:

Լուսաբանվել է հնագույն ժամանակներից Միջագետք(Իրաք)ի տարածքում բնակություն հաստատած հայերի գործունեությունը և նրանց գրաված դիրքը:

«Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Ռ.Նազարյան) քննարկվել են Արցախ և Ուտիք նահանգների, Բուն Աղվանքի չորս հիմնական հայկական իշխանատոհմերի ծագման, պատմության և ճյուղագրության հարցերը վաղ շրջանից մինչև զարգացած միջնադարի ժամանակաշրջանը: Հատուկ ուշադրության առարկա են դարձել քննարկված հիմնահարցերի գրավոր և վիմագիր սկզբնաղբյուրները, որոնց մեծ մասը հրատարակվել են գիտաքննական բնագրերով: Սա բազմաթիվ սկզբնաղբյուրների օգտագործմամբ Արցախի, Ուտիքի, Աղվանքի պատմության կարևոր հարցերի, ներկայիս Ադրբեջանի Հանրապետության տարածքում ապրող բնիկ ժողովուրդների պատմության հիմնահարցերի ճշտում է, որը հնարավորություն է տալիս ավելի հիմնավոր պատասխանել մեր ժողովրդի պատմության խեղաթյուրումներին:

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ակ. Ռ.Սաֆրաստյան) ուսումնասիրման առարկա են դարձել կարևոր արդիական նշանակություն ունեցող մի շարք հիմնախնդիրներ՝ Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի զարգացման միտումները, «Արդարություն և զարգացում» կուսակցության արտաքին քաղաքականության ձևավորման առանձնահատկությունները, կառավարման առաջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացված քաղաքականության շրջափուլերը, ԱԶԿ «հայկական» քաղաքականության դրսևորումները, ցյուրիխյան հայ-թուրքական արձանագրությունների գործընթացը և արդյունքները:

«Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ն.Հովհաննիսյան) Զինաստանի կողմից առաջ քաշված Մետաքսի ճանապարհի հայեցակարգի համակողմանի հետազոտումը հնարավորություն է տվել հիմնավորել այդ ծրագրի շրջանակներում Հայաստանի կարևոր դերակատարման մասին թեզը: Կարևոր են նաև աշխատանքները «Զինաստանի Նոր Մետաքսի ճանապարհի նախաձեռնության իրականացումը Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում» թեմայի ուսումնասիրման շրջանակում:

«Հայ հնագիտության, ազգագրության և բանագիտության արդի և հեռանկարային զարգացման խնդիրներ» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Պ.Ավետիսյան)

- Ավարտին է հասցվել «Արարատյան դաշտավայրի Ք.ա. VII-VI հազ. նեոլիթյան մշակույթը (ըստ Ակնաշեն բնակավայրի տվյալների)» թեման: Ուսումնասիրության ընթացքում կատարված լաբորատոր անալիզների, նյութերի համակարգված վերլուծությունների շնորհիվ բացառիկ տվյալներ են փաստագրվել Առաջավոր Ասիայում վաղ երկրագործական հասարակությունների ձևավորման պատմության հետազոտության համար: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ քաղաքակրթության կայացման ելակետային փուլում Արարատյան դաշտում բնակվել է սոցիալական բարդ կազմ ունեցող, զարգացած տնտեսությամբ ու մշակույթով հասարակություն: Շարադրվել, խմբագրվել և Archaeopress, Oxford հրատարակչությանն է հանձնվել «Ակնաշենի նեոլիթյան բնակավայրը (Արարատյան դաշտավայր, Հայաստան. 2005-2015թթ. պեղումներ)» ժողովածուն, որը հայ-ֆրանսիական արշավախմբի 15 տարվա համատեղ հետազոտությունների արդյունքներն ամփոփող ուսումնասիրություն է և էական նորություններ է պարունակում Հայկական լեռնաշխարհի վաղերկրագործական հասարակությունների վերաբերյալ (ղեկ.՝ պ.գ.դ. Ռ.Բադալյան):

- «Արցախի հնագիտության խումբը կարևոր արդյունքներ է գրանցել 2020թ. Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունների ընթացքում: Պեղումներն իրականացվել են հինգ տեղամասերում՝ Ամրացված թաղամասի արևելյան պարիսպ, Անտիկ երկրորդ թաղամաս, Վաղբրիստոնեական հրապարակ, Ցիցսարի եկեղեցի, Ժայռափոր ջրանցք: Անտիկ երկրորդ թաղամասում պեղումները երևան են բերել Տիգրանի և նրան հաջորդող ժամանակների քաղաքային թաղամասի կառույցները՝ իրականացված ճեղքած կրաքարով, կավով, հում աղյուսով և եզակի դեպքերում էլ՝ կրաշաղախով: Ցիցսարի գագաթին պեղվել են վաղբրիստոնեական փոքր եկեղեցու կամ մատուռի ավերակները: Խաչենագետի աջ ափին շարունակվել է քաղաքի ջրամատակարարման հիմնական հանգույցներից մեկի՝ ջրանցքի հետազոտությունը: Պեղումներն ընթացել են ջրանցքի ժայռափոր մասում, ուր դեռևս 2006թ. պեղվել է մոտ 300 մետրանոց մի հատված: Այս տարվա պեղումներով բացվել է ջրանցքի առաջին թունելը: Սա աննախադեպ փաստագրում է, քանի որ Արարատյան դաշտից այս կողմ չկա նման խոշոր ու բարդ հիդրոտեխնիկական կառույց (դեկ.՝ պ.գ.դ. Հ.Պետրոսյան):

«Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ-3» գիտական թեմայի (դեկ.՝ պ.գ.թ. Ա.Հայրապետյան) շրջանակներում

- Ջրափիի դամբարանադաշտերի փրկարարական պեղումները, չնայած փոքր ծավալին, նոր նյութեր են տվել Ախուրյանի ափամերձ տարածքներում վաղ երկաթի ժամանակաշրջանում բնակավայրերի տեղադրության ընդհանրության, բնակավայր-դամբարանադաշտ հարաբերակցության, բնակչության խտության, տնտեսական բարձր մակարդակի, Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձանների հետ թաղման ձևերի, ծեսի, նյութական ու հոգևոր մշակույթի ընդհանրության ուսումնասիրության համար:

- Լեռնակերտի պեղումներից ձեռք բերված կենդանաբանական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Ք.ա. III-I հազարամյակներում տարածաշրջանի տնտեսության զարգացած ճյուղերից մեկն անասնապահությունն էր: Հայտնաբերված նյութը տեղեկություններ է հաղորդում ինչպես Լեռնակերտի հին հանրույթների սննդային կազմի, այնպես էլ տվյալ ժամանակահատվածում տնտեսության տարբեր ճյուղերի (կաշեգործություն, մանածագործություն, կաթնամթերքի վերամշակում և այլն) զարգացվածության մասին:

- Կատարվել է թուրքական զորքերի դեմ 1918թ. մայիսին Արևելյան Շիրակի գյուղերում ծավալված դիմադրական պայքարի պատմության քննություն, լուսաբանվել է գոյապայքարի դերը Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ:

- 1918 և 1920թթ. թուրքական արշավանքների վերաբերյալ Շիրակի մարզի գյուղական բնակավայրերի և Գյումրու ազգաբնակչության շրջանում պահպանված բանավոր պատմությունների, արխիվային նյութերի, գիտական գրականության և այլ աղբյուրների համադրությամբ կազմվել է թուրքական արշավանքների հետևանքները ներկայացնող քարտեզ, որում առանձնացվել են բոլոր այն գյուղերը, որտեղ կազմակերպվել են ինքնապաշտպանական կռիվներ, այն գյուղերը, որտեղ թուրքերն ունեցել են հենակետեր և զորակայաններ, որտեղ մարդկանց այրել են մարագներում ու եկեղեցիներում, որտեղ կազմակերպվել են զանգվածային սպանություններ:

«Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը հրատարակել է «Հովհաննես Թումանյան» հանրագիտարանը (դեկ.՝ ք.գ.դ. Հ.Այվազյան):

**Բանասիրություն.** Զգալի արդյունքներ են ձեռք բերվել հայերենի բառապաշարի ուսումնասիրության ուղղությամբ: Հետազոտություններն ընդգրկել են ինչպես հնդեվրոպական բառաշերտը, հայերենի զարգացման տարբեր փուլերն ու դրսևորումները, այնպես էլ բառապաշարի ուսումնասիրման բոլոր դիտանկյունները:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակներում (դեկ.՝ ք.գ.թ. Գ.Մխիթարյան) վեր են հանվել և մեկնաբանվել գրաբարում չավանդված, բայց Ղարաբաղի բարբառում հնդեվրոպական ծագում ենթադրող բառերը, հնաբանությունները: Ազաթան-

գեղոսի «Հայոց պատմություն» երկի բառապաշարի դիտարկմամբ առանձնացվել են գրաբարյան օրինաչափություններից շեղվող, բարբառային կնիք ունեցող բառերն ու բառաձևերը, փաստվել է դրանց առնչությունը ժամանակի բարբառներին: Կատարվել է թարգմանական գրականության մեջ լատիներենի ազդեցության դիտարկում, վեր են հանվել նորաբանությունների ձևավորման սկզբունքները, կադապարները:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Սարգսյան) վեր են հանվել ու մեկնաբանվել օտարալեզու եզրույթների հայերեն թարգմանության սկզբունքները, դիտարկվել են տերմինաբանության հարցեր, բառերի թեմատիկ խմբեր: Հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են «Հայոց լեզվի պատմության հարցեր» ժողովածուում, հոդվածներում և զեկուցումներում:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Կատվալյան) պատրաստվել են ՀՀ Կոտայքի մարզի բնակավայրերի լեզվական բնութագրերը, որոշվել ու մեկնաբանվել է խոսվածքների բարբառային պատկանելությունը: Որոշվել են խառը տիպի խոսվածքների ձևավորման ուղիներն ու յուրահատկություններն ըստ Կոտայքի մարզի բարբառային միավորների: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 2. Կոտայքի մարզ» աշխատության մեջ, գիտական հոդվածներում և զեկուցումներում:

«Հայ գրականության պատմություն» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ.Դերիկյան) ամփոփվել և ի մի են բերվել XX դարասկզբի հայ, ռուս և անգլիական գրականությունների մի շարք գրողների երկերի փոխադարձաբար հայերենից ռուսերեն և անգլերեն, ռուսերենից անգլերեն և հայերեն, անգլերենից հայերեն և ռուսերեն թարգմանությունների սկզբունքները: Վեր են հանվել այն օրինաչափությունները, որոնք առկա են թարգմանվող լեզվում բառընտրությունների դեպքում, ինչպես նաև այն հարցը, թե թարգմանչի ստեղծագործական խառնվածքն ինչպես է ազդել և իր հեղինակային անհատականության կնիքը հաղորդել թարգմանվող ստեղծագործություններին:

Մխիթարյան միաբանության հետ համատեղ մշակվել են Ս. Ղազարի հայագետ հոգևորականների նամակների հրատարակության սկզբունքները, որոնք կիրառվել են Ղ.Ալիշանի եռահատոր նամականիի (2020թ. լույս է տեսել առաջին հատորը՝ 750 նամակ) շուրջ 2240 նամակների հրատարակության ժամանակ: Շնորհիվ Ալիշանի և Մխիթարյան մյուս հայրերի նամակների հրատարակության և վերջիններիս հանգամանալից ծանոթագրությունների՝ նամակների հասցեատերերի մասին տեղեկություններով և քննարկվող հարցերի մասին բացատրություններով ըստ էության կազմվել է Եվրոպայում XIX դ. երկրորդ կեսի հայագիտության պատմությունը:

**Տնտեսագիտություն.** «Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) արձանագրվել է, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո հարկային բեռն ավելացել է 2%-ով: Այս ցուցանիշի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ ԵԱՏՄ անդամ պետություններ արտահանված ապրանքների մատակարարման գործարքների նկատմամբ կիրառվել է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ: Հարկային նոր օրենսգրքի ընդունումից հետո հարկեր/ՀՆԱ ցուցանիշն էական փոփոխության չի ենթարկվել՝ մասնավորապես 2017թ. համեմատ 18.7%, 2019-ին այն աճել է ընդամենը 0.2%-ով, այսինքն՝ տարբերությունը կազմել է ընդամենը 0.2%, ինչի արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ սա անհետևողական քաղաքականության արդյունք է, որը չի տանում ստվերի կրճատման:

«Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Լ.Սարգսյան) բացահայտվել է տնտեսա-

կան աճի վրա արտահանման ազդեցության գիտական հետազոտությունները: Ըստ այդմ՝ արտահանման աճը նպաստում է մասշտաբի էֆեկտից տնտեսման, ինչպես նաև արտարժույթի ներհոսքին, որոնք էլ կարող են հանգեցնել ռեսուրսների առավել արդյունավետ բաշխման, ինչպես նաև անհրաժեշտ հումքի և նոր տեխնոլոգիաների ներմուծման: Արդյունքում հանգում ենք արտադրողականության աճի և ավելի բարձր ավելացված արժեքի ստեղծման, հետևաբար և՛ տնտեսական աճի: Էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ բացահայտվել է վերոնշյալ մեխանիզմի առանձին փուլերի տևողությունը ՀՀ-ում: Այսպես, արտահանման աճը մինչև 3 ամիս ժամանակահատվածում հանգեցնում է փոխարժեքի արժևորման, որն էլ նպաստում է ներմուծման աճին ընդհուպ մինչև 9 ամիս ժամանակահատվածում: Հումքի և մեքենասարքավորումների ներմուծման աճն էլ իր հերթին պատճառ է հանդիսանում տնտեսական աճի առաջիկա 3.5 տարվա համար:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) ՀՀ գյուղատնտեսության ոլորտի նորարարական ներուժի համակողմանի գնահատմամբ բացահայտվել են դրա ներդրման և նորարարությունների առևտրայնացման հիմնական ուղղությունները: Բացահայտվել են, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները հնացած հիմնական միջոցները և տեխնոլոգիաներն են, որոնց պատճառով ոլորտի նորարարական զարգացման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկա պայմաններում գրեթե բոլոր ռեսուրսները սահմանափակ են, և առաջանում է ռեսուրսախնայողություն: Ոլորտը շարունակում է զարգանալ մեծապես էքստենսիվ ճանապարհով: Ներկայումս ոլորտի ներդրումային ակտիվությունը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա, որը պայմանավորված է ինչպես ողջ տնտեսության, այնպես էլ առանձին մարզերի ցածր տնտեսական վիճակով:

**Փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, քաղաքագիտություն.** «Հայ իրականության պատմափիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և իրավագիտական ուսումնասիրություններ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ իր.գ.թ. Լ.Ղազանչյան) կատարվել են հետազոտություններ գիտական չորս ուղղություններով (փիլիսոփայություն, սոցիոլոգիա, իրավունք, քաղաքագիտություն):

Իրականացվել են ՀՀ-ում և տարածաշրջանում տիրող արդի հիմնախնդիրների խորքային վերլուծության միջգիտակարգային ծավալուն ուսումնասիրություններ, այդ թվում՝ հայոց քաղաքակրթական ինքնության բացահայտմանը, անձի օտարվածությանը, կրթության համակարգի բարեփոխմանը, միգրացիոն բարդ գործընթացներին, սահմանադրաիրավական բարեփոխումներին, իշխանության նկատմամբ հասարակական կարծիքի բացահայտմանը:

Լեզվափիլիսոփայության ենթատեքստում շարունակական համակարգված տեսական վերլուծության են ենթարկվել լեզվում և կյանքում «իմաստի» կառուցվածքային և գործառնության բազմազան դրսևորումները, ինչպես նաև սեմիոտիկայի համատեքստում մեկնաբանվել են «ինքնության» հիմնախնդիրները, հատկապես ռուսական ոչ ֆորմալ դիսկուրսում «կոլկասցու» խորհրդային այլությունից դեպի հետխորհրդային օտարվածություն կերպարափոխությունը:

Իրականացվել են պառլամենտարիզմի կայացման և զարգացման պատմափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրների միջգիտակարգային հետազոտություններ: Մասնավորապես բազմամյա գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքով գիտական հանրությանն է ներկայացվել «Արևմտաեվրոպական և հետխորհրդային պառլամենտարիզմը համեմատական հեռանկարում» մեծածավալ աշխատությունը, որտեղ հանգամանորեն քննարկվել և ներկայացվել են արևմտաեվրոպական և հետխորհրդային պառլամենտարիզմի փորձառության համեմատական վերլուծությունը և զարգացման հեռանկարը:

Իրականացվել են սոցիալ-իրավական, քաղաքագիտական տարաբնույթ վերլուծություններ՝ նվիրված հայ-ադրբեջանական պատերազմի պատմական, քաղաքական, սոցիալական պատճառների և հետևանքների բացահայտմանն ինչպես տեղական, այնպես էլ օտարալեզու հարթակներում:

**Արվեստագիտություն.** «Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում (դեկ.՝ թղթ. անդ. Ա.Աղասյան) շարունակվել են եգիպտահայ, իրանահայ և կանադահայ թատրոնների ուսումնասիրման աշխատանքները, արդյունքներն ի մի են բերվել «Հայ թատրոնը Եգիպտոսում» սովորածավալ մենագրության մեջ, որը «Ակնարկներ սփյուռքահայ արվեստի պատմության» մատենաշարի հերթական՝ երրորդ հատորն է: Աշխատությունը կարևոր քայլ է սփյուռքահայ թատրոնի ամբողջական պատմության շարադրման ճանապարհին, հանգամանորեն ներկայացվել են հետազոտվող շրջանի համապատկերը, եգիպտահայ թատրոնի կազմավորմանն ու առաջընթացին նպաստած նախադրյալներն ու պատմական միջավայրը:

## ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Կազմակերպությունը 2019թ. հրատարակում է «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականը, 2020թ. հրատարակվել են պարբերականի 3-րդ և 4-րդ համարները, որոնցում ներկայացվել է ինչպես միջազգային առաջավոր փորձը (ոլորտի առաջատար գիտնականների և մասնագետների հոդվածներով), այնպես էլ հնարավորություն է տրվել մեր երկրի դատափորձագիտական ոլորտի գիտական հանրությանը և պրակտիկ փորձագետներին ներկայացնել իրենց գիտական և գիտագործնական հետազոտությունների արդյունքները:

Կազմակերպությունը համալրվել է «UDT-RF PRO» ուլտրաձայնային բազմաֆունկցիոնալ հատուկ չափիչ սարքով, որն ունի մեծ պահանջարկ տարաբնույթ փորձաքննությունների ճշգրիտ արդյունքներ ստանալու համար, ժամանակակից գերզգայուն անալիտիկ սարքով, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել մարդու օրգանիզմի կենսաբանական միջավայրերի համապատասխան փորձագիտական հետազոտություններ, “Leica” ֆիրմայի արտադրության TS10 տախեոմետրով, որով կիրականացվեն նորագույն ուղղություններով գիտական հետազոտություններ: «Berla iVe» ապարատածրագրային համալիրը հնարավորություն կտա իրականացնել մի շարք գիտագործնական հետազոտություններ:

# ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

## ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Շերտավոր կառուցվածքով կավային գրունտե զանգվածի սահքի գագաթնակետային դիմադրության որոշ խնդիրների համար ցույց է տրվել, որ երբ սահքի լարումներն ազդում են շերտավորությանն ուղղահայաց, ապա զանգվածի ամրության սպառումը տեղի է ունենում սահքի ավելի փոքր լարումների դեպքում, քան դրա առանձին շերտերի՝ սահքի գագաթնակետային դիմադրությունների գումարային մեծությունն է (միտված է սողանքավտանգ լանջերի կայունության հաշվարկման բանաձևերի ճշգրտմանը) (դեկ.՝ Ե.գ.դ. Ս.Հայրոյան):

### ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կազմվել է համահարթեցման, ֆիլոգենիկ ծառի կառուցման և ժամանակային ասոցիատիվ կապերի հայտնաբերման ալգորիթմներից կազմված հարթակ, որն ի գործ է իրականացնել վիրուսային ամբողջական գենոմների պոպուլյացիաների վերլուծություն: Բացահայտվել են վիրուսների դասակարգման ճշգրտումներ, ինչը հնարավոր չէր անել սահմանափակ տվյալների մշակման պարագայում: Փորձարարական հաշվարկներն իրականացվել են ինչպես հայտնի համակարգչային կենտրոններում, այնպես էլ սեփական կլաստերային ռեսուրսների վրա: Կազմվել և օգտագործվել են Python լեզվով ծրագրային միջոցներ, ինչպես նաև արդյունաբերական համակարգեր, օրինակ՝ Clustal Omega, MEGAX, SDT v1.2 և ուրիշներ (դեկ.՝ թղթ. անդ. Լ.Ասլանյան):

Հետազոտվել և մշակվել է տարաբաշխված բազմաֆունկցիոնալ հարթակ՝ որպես տեսական ֆերանսների ծառայության զարգացում (MEET.ASNET.AM): Հետազոտվել է eduroam ծառայության իրականացման մոդելը, առաջարկվել է ավտոմատացված կարգավորումների լուծում՝ որպես multi-EAP eduroam Institutional Radius Server (IRS) մի քանի դոմենների համար: Մշակվել է eduroam տվյալների շտեմարանի կառավարման համակարգ: Ստեղծվել է LetsEncrypt SSL հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգի թարմացված տարբերակ: Բոլոր արդյունքները ներդրվել են ASNET-AM ցանցում (դեկ.՝ տ.գ.թ. Ա.Պետրոսյան):

Մշակվել և ծրագրային իրականացվել է բազմաօգտագործվող հարթակի գլխավոր կոմպոնենտը (սերվեր): Դինամիկ պրոցեսների հետազոտման ժամանակ նրա ընդգրկումը հնարավորություն կտա հաշվել տարբեր ինֆորմացիոն բնութագրիչներ՝ համատեղ կատարվող հետազոտական աշխատանքների միաժամանակյա դիտման, փոփոխությունների կատարման, մոդելներում վիճակների պահպանման, ստացման և ուղարկման համար (դեկ.՝ տ.գ.թ. Ս.Պողոսյան):

Մշակվել և փորձարկվել է անօդաչու թռչող սարքի նկարահանման արդյունքներով տախտակամածի թրթռոցների սպեկտրալ վերլուծության ծրագրային համակարգ (դեկ.՝ տ.գ.դ. Դ.Ասատրյան):

Ատոմաուժային միկրոսկոպից (AFM, ԱՄ) ստացված ազդանշանների ուսումնասիրման արդյունքում մշակվել և իրականացվել են ազդանշանի մշակման մի շարք ալգորիթմ-



ներ, որոնք մասնակցում են և հնարավորություն տալիս հաշվարկել անհայտ պարամետրերը: Հաշվարկվել են միկրոսխեմաների հարթակների որակական բնութագրիչների՝ Erosion և Dishing-ի պարամետրերը: Ստեղծվել է ծրագրային համակարգ, որն ավտոմատացնում է Erosion և Dishing պարամետրերի արժեքների հաշվարկը (ղեկ.՝ տ.գ.թ. Ս.Ալավերդյան):

Շարունակվել են ASNET-AM ցանցի վեբ-սերվերների անվտանգության բարձրացման աշխատանքները: Հայտնաբերվել են ASNET-AM ցանցում տեղակայված մի քանի կազմակերպությունների կայքերի ներքին կառուցվածքի մեջ ներթափանցման փորձեր, որոնց մասին տեղեկատվությունն ուղղվել է համապատասխան կայքերի պատասխանատուներին՝ ծրագրային բացթողումները շտկելու համար: Շարունակվել են viewmon.asnet.am և viewmon2.asnet.am վիճակագրական համակարգերի զարգացման, ընթացիկ պահպանության և թարմացման աշխատանքները, մասնավորապես ավելացվել է viewmon2.asnet.am համակարգի մուտքային տվյալների հավաքագրման հոսքերի քանակը՝ հասցնելով դրանք 5-ի (ղեկ.՝ տ.գ.թ. Գ.Պետրոսյան):

Հետազոտվել և մշակվել է ներքին դոմենային համակարգ՝ հիմնված X.500 ստանդարտների վրա: Որպես հիմք օգտագործվել է ժամանակակից Samba v.4 համակարգը, որի հիման վրա կառուցվել է կատալոգային դոմենային համակարգ և ֆայլային սերվեր: Հետազոտվել են ժամանակակից VPN համակարգերի աշխատանքային սկզբունքները և կիրառման հնարավորությունները: Մշակվել և ներդրվել է նոր պաշտպանված VPN համակարգ (ղեկ.՝ տ.գ.թ. Ռ.Թադևոսյան):

Ուսումնասիրվել են eBGP և iBGP պրոտոկոլները՝ համակարգչային ցանցի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով: Կատարվել է OSPF պրոտոկոլի նուրբ կարգավորում (IPv4, IPv6) բարդ ինֆրակառուցվածք ունեցող տրաֆիկի հոսքերի օպտիմալացման նպատակով (ղեկ.՝ տ.գ.թ. Ե.Պրոխորենկո):

Մշակվել է ծրագրային լուծում RDF ֆորմատով տվյալների ներբեռնման, բաշխված ֆայլային համակարգում պահման և ձևափոխության՝ Property Graph-ի: Այդ տվյալների հիման վրա հնարավոր է ուսումնասիրել հայտնի ալգորիթմների կիրառությունը (ղեկ.՝ տ.գ.թ. Տ.Շահինյան):

Openstack ամպային միջավայրի հենքի վրա մշակվել է ամբողջական երկու գոտուց ամպային հարթակ՝ բաղկացած հսկիչից և աշխատող հանգույցներից: Մշակվել են ներդրված IaaS լուծումներ՝ բաղկացած հարակից գործիքներից և փաթեթներից, այդ թվում՝ տվյալագիտություն և մեքենայական ուսուցում, եղանակի կանխատեսում և կենսաբանություն: Մշակված միջավայրը հնարավորություն է տալիս օգտագործողներին տեղակայել և գործարկել տարբեր վիրտուալ մեքենաներ, անհրաժեշտության դեպքում փոփոխել ռեսուրսները, ինչպիսիք են պրոցեսորը կամ օպերատիվ հիշողությունը: Մշակվել է ամպային ռեսուրսների մշտադիտարկման համակարգը, որը հնարավորություն է տալիս հավաքագրել պրոցեսորի, հիշողության, մուտքի և ելքի տվյալները և ներկայացնել գրաֆիկների միջոցով:

Մշակվել է ֆիզիկական պրոցեսների մոդելավորման մեքենայական ուսուցման մոդել Rb-ի ատոմական գոլորշու D2 գծի ֆլուորեսցենցիայի սպեկտրի ձևափոխման համար՝ փոխելով լազերային ճառագայթման հաճախականության գծային (եռանկյուն) սկանավորման ժամանակային արագությունը (ղեկ.՝ տ.գ.թ. Հ.Ասցատրյան):

## **«ՀԻՂՐՈՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՎԻԲՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԲԱԺԻՆ» ՓԲԸ**

Հետազոտվել է ալիքային և տատանողական երևույթների բացասական ազդեցությունը նավթի և նրա ֆրակցիաների հիդրոկրեկինգի կայանքների խողովակաշար համակարգերի ամրության և աշխատանքի հուսալիության վրա հիդրոկրեկինգի կայանքի հետևյալ պարա-

մետրերի ժամանակ՝ աշխատանքային միջավայրի ճնշումը  $5 \div 30$  ՄՊա, ջերմաստիճանը  $+330 \div +450^\circ\text{C}$ , ծավալային արագությունը  $0.3 \div 1.0$  ժամ<sup>-1</sup>: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա հիդրոկրեկինգի կայանքների խողովակաշարերում ճնշման պոլսացիաների և վիբրացիայի մակարդակի իջեցման համար մշակվել է երկֆազ միջավայրի բազմառեծիմ ճնշման տատանումների կայունացուցիչ (ղեկ.՝ Ա.Սիմոնյան):

## **Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎ. ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆ**

Հայ-ռուսական համատեղ կայանում 250 դիտողական գիշերների ընթացքում ընդհանուր առմամբ արվել է 550000 չափում և վերականգնվել 600 ուղեծիր արհեստական արբանյակների համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Հ. Հարությունյան):

## **ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Առաջարկվել է հոլոգրաֆիական միկրոկառուցվածքների չքայքայող օպտիկական թեստավորման նոր եղանակ արտաքին մագնիսական դաշտի առկայությամբ: Փորձն իրականացվել է բեսելյան լազերային փնջով  $\text{Fe:LiNbO}_3$  բյուրեղում գրառված ռեֆրակտիվ ցանցի համար: Չափվել է ցանցի դիֆրակցիոն էֆեկտիվության ժամանակային էվոլյուցիան, ի հայտ է բերվել ջնջման պրոցեսի դանդաղացումը մագնիսական դաշտում: Բացահայտվել է պոլյարոնների դերը հոլոգրաֆիական ցանցերի գրառման և ջնջման պրոցեսներում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ռ.Դրամիյան):

Էլեկտրոնային նստեցման եղանակով ստացվել են արծաթով (1.6%) լեգիրացված ցինկի օքսիդի (AZO) հաղորդիչ թաղանթներ՝ Ag և ֆտորով լեգիրացված անագի օքսիդի (FTO) էլեկտրոդներով: Բացահայտվել է  $\text{Ag/AZO/FTO}$  կառուցվածքի վոլտամպերային բնութագրի օհմական վարք, մինչդեռ ջերմամշակման արդյունքում գրանցվել է անցում դեպի Շոտկիի արգելապատնեշով դիոդային վարք: Որոշվել են իդեալականության գործակիցը, Շոտկիի արգելքի բարձրությունը և հաջորդական դիմադրությունը (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ռ.Հովսեփյան):

Բրիջմենի և Չոխրալսկու մեթոդներով աճեցվել են լազերային  $\text{YAlO}_3:\text{Yb}(1-10\%)$  բյուրեղներ: Ցույց է տրվել, որ գունավորման կենտրոններով պայմանավորված կլանումը զգալիորեն ցածր է Բրիջմենի մեթոդով ստացված բյուրեղներում: Չափվել են  $\text{Yb}^{3+}$  իոնների ճառագայթման կյանքի տևողությունները: Մշակված բյուրեղների հիման վրա ստեղծված լազերով ստացվել է 4 Վտ ելքային միջին հզորություն, իմպուլսների 140 ֆվ տևողություն և 16.3% օպտիկական արդյունավետություն (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Էներգաանկախ հիշողության համակարգերի (RRAM) և ռադիոակտիվ ճառագայթման տվիչների ստեղծման նպատակով ուսումնասիրվել են մետաղ-կիրահաղորդիչ-մետաղ և մետաղ-դիէլեկտրիկ-կիսահաղորդիչ կառուցվածքներ Li, Ga և Ag խառնուկներով ZnO և լանթանի օքսիդի ջրածնավորված մակերևույթով ( $\text{OH-La}_2\text{O}_3$ ) թաղանթների հիման վրա: Ստացված արդյունքները կիրառելի են կիսահաղորդչային էլեկտրոնիկայում՝ պոլյարոնային օպտիկական հաղորդականության և բացասական դիֆերենցիալ դիմադրության հիման վրա RRAM հիշողության համակարգերի ստեղծման համար (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ե.Կաֆադարյան):

Գրաֆիտային նանոբյուրեղներով կառուցված ածխածնային նանո- և միկրոգնդերի հիման վրա պատրաստվել են օրգանական պոլիմերային թաղանթներ: Ուսումնասիրվել են էլեկտրամագնիսական ալիքների կլանման հատկությունները միջին ԻԿ տիրույթում (2.5- 20 մկմ): Ածխածնային նանո- և միկրոգնդերը հարստացվել են Fe,  $\text{Fe}_3\text{O}_4$  և  $\text{Fe}_3\text{C}$  նանոմասնիկներով և ուսումնասիրվել է դրանց կլանման հատկությունները ԳԲՀ (8-10 ԳՀց) տիրույթում (ղեկ.՝ Ֆ.-մ.գ.թ. Ա.Մանուկյան):

«Փի Էս Այ» ՍՊԸ-ի և ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետ համատեղ կատարելագործվել է SFCO սենսորների հիման վրա աշխատող քառասենսոր «ստաբիլոգրաֆ» բժշկական սարքը: Լուծվել են սենսորների լիթոգրաֆիկ պատրաստման, էլեկտրոնային համակարգի և չափման արդյունքների համակարգչային ներկայացման հարցերը: Պատրաստվել է սարքի ցուցադրման նմուշը: Շարունակվել են SFCO սենսորի հիման վրա նոր մագնիսաչափի մշակման աշխատանքները: Գրանցվել է շուրջ 1000 պՏլ զգայունություն, որի բարձրացման համար կան նախադրյալներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս. Գևորգյան):

## **ՖԻԶԻԿԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Մշակվել և ստեղծվել են գերհաղորդիչների հիման վրա մինչև 100ՄԷՎ էներգիայի լիցքավորված մասնիկների օպտիկայի էլեմենտներ, ինֆրաձայնի ու ուլտրաձայնի կառավարվող բնութագրերով այլընտրանքային նոր աղբյուրներ և էլեկտրամագնիսական ալիքների նոր տիպի կառավարվող բնութագրերով աղբյուրներ (ղեկ.՝ թղթ. անդ. Ա. Մկրտչյան):

Բարդ տեսքով կոմպենսացիոն ֆիլտրերի օգտագործմամբ մշակվել է մեծ լուծողունակությամբ ռենտգենյան միկրոտոմոգրաֆիկ մեթոդ կենսաբանական և երկրաբանական նմուշների հետազոտման համար: Մշակվել և պատրաստվել է 0.1÷1 ՄՀց տիրույթի էլեկտրամագնիսական ազդանշանների ուժեղացուցիչ, որն ապահովում է 10÷700Վ ելքային լարում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Վ. Քոչարյան):

Մշակվել է թոքերի արհեստական օդափոխման նոր տիպի համակարգ, որի գլխավոր յուրահատկությունը շնչառական պրոցեսի բնական հաճախականության համադրումն է ներշնչվող ու արտաշնչվող օդի բարձր հաճախությամբ տատանումների հետ: Նախագծվել և պատրաստվել է բազմահաճախային տատանումներ ստեղծող սարքավորման լաբորատոր փորձանմուշ, որը հնարավորություն է տալիս ստանալ տարբեր պրոֆիլներով օդի ճնշման տատանումներ 0.1-15000 Հց հաճախությունների տիրույթում: Ստեղծվել է համակարգչային ծրագրային ապահովում փորձանմուշի աշխատանքը ղեկավարելու համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Խաչատրյան):

## **ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Հետազոտվել է միկրոալիքային մագնիսական դաշտի փոխազդեցությունը կենսաբանական հյուսվածքների և իոնային ջրային լուծույթների հետ: Այդ նպատակով մշակվել է հատուկ ռեզոնանսային էլեկտրադինամիկական կառուցվածք, որն ապահովում է միկրոալիքային դաշտի մագնիսական և էլեկտրական բաղադրիչների տարածական խիստ տեղայնացում: Կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է կենսաբանական հյուսվածքների և լուծույթների կողմից միկրոալիքային մագնիսական դաշտի խիստ կլանման երևույթ, որը կախված չէ արտաքին մագնիսական դաշտից և ունի էական ջերմաստիճանային կախվածություն: Հայտնաբերված երևույթը կարող է կիրառվել բժշկության մեջ՝ ոչ ինվազիվ հետազոտություններ կատարելիս (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Հախումյան):

Դիտարկվել է մեծ արագությամբ (50-300 մ/վ) շարժվող օբյեկտի արագ հայտնաբերման հնարավորությունը, երբ այն գտնվում է տեղորոշող համակարգին բավականաչափ մոտ (1-20 մ) հեռավորության վրա: Առաջարկվել է որոշակի հեռավորության վրա գտնվելիս օբյեկտի արագ հայտնաբերման բավական պարզ՝ անկյունաչափական եղանակ, որը հիմնված է օբյեկտից (թիրախից) զոնդավորող ճառագայթի անդրադարձումը (ցրումը) ուղղակիորեն գրանցելու վրա: Որպես զոնդավորող ճառագայթման աղբյուր կարող է օգտագործվել կիսահաղորդիչային լազեր կամ լուսադիոդ, որը, համալրվելով համապատասխան ոսպնյակով,

ապահովում է ճառագայթման որոշակի անկյունային բացվածք: Ֆոտոդեդուկտի համակարգում որպես լուսազգայուն տարր կարող է օգտագործվել կիսահաղորդիչային ֆոտոդիոդ, որի դիմաց որոշակի հեռավորության վրա տեղադրվում է ճեղքային դիաֆրագմա: Ընդունիչի տեսադաշտի անհրաժեշտ անկյունային բացվածքն ապահովվում է դիաֆրագմայի ճեղքի լայնության և երկարության ընտրությամբ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Կատարվել են լազերային աբլյացիայի մեթոդով ջրային լուծույթներում ստացված երկաթի (Fe) նանոմասնիկների խտության չափումներ օպտիմիզացված կրկնակի քառակուսային պրոֆիլով միկրոալիքային շերտավոր տվիչի օգնությամբ: S11 տվիչի միկրոալիքային անդրադարձման գործակիցը ռեզոնանսային հաճախության վրա փոփոխվում է ջրային լուծույթներում երկաթի խտությունից կախված: Հետազոտվել է տվիչի արձագանքը երկաթի նանոմասնիկների կոնցենտրացիաների 0÷20 մկգ/լ տիրույթում 1.75 ԳՀց աշխատանքային հաճախության վրա: Մինիմալ չափված ազդանշանը կազմել է 0.035 դԲ/մկգ/լ: Այդպիսի սիստեմների էլեկտրամագնիսական անդրադարձը բացատրվում է ջրային լուծույթներում Fe լազերային աբլյացիայի ժամանակ ջրի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ կառուցվածքի, ցածր ինքնարժեքի և մեծ ճշտության շնորհիվ այդպիսի սիստեմները կարող են օգտագործվել որպես ֆիզիկաքիմիական տվիչներ հեղուկ միջավայրերում ոչ ինվազիվ մեթոդով մետաղների նանոմասնիկների խտությունների մոնիթորինգի համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ. Խաչատրյան):

Շարունակվել է նանոլաբային անանցումային իոնազգայուն դաշտային տրանզիստորների հիման վրա բիոքիմիական տվիչի մոդելի մշակումը: Ուսումնասիրվել է տվիչի pH զգայնությունը: Ցույց է տրվել, որ առաջադրված անալիտիկ մոդելը թույլ է տալիս ճշգրտորեն հաշվարկել տվիչի զգայնության կախվածությունը նրա երկրաչափական և ֆիզիկական պարամետրերից (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Մինթեզվել են օրգանական  $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_{3-x}\text{Cl}_x$  կիսահաղորդիչների բազմաբյուրեղ թաղանթներ և չափվել են դրանց հիմնական օպտիկական բնութագրերը, որոնք են՝ բեկման ցուցիչը (800-1000 նմ տիրույթում) 3.15, արգելված գոտու լայնությունը, որը չափվել է ուղիղ անցման եղանակով՝ կազմելով 1.6 էՎ (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ COVID-19 համաճարակը բացասաբար է ազդել Երևանի բնակչության սննդակարգի վրա: Թեև սննդի առկայության հետ կապված խնդիրներ չեն եղել, սակայն սպառողների 42.5%-ը ստիպված է եղել իր նախընտրած սնունդը փոխարինել այլընտրանքայինով՝ ավելի մատչելի տարբերակով: Համալրվել է սննդամթերքի սպառման վերաբերյալ տվյալների հենքը՝ ՀՀ-ում քիմիական վտանգներով պայմանավորված առողջական ռիսկի գնահատման պարբերական աշխատանքների համար (դեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Մշակվել է ՀՀ-ում արտահանվող ապրանքներում (սննդամթերք, հանքային ջուր, շինարարական քարեր և այլն) բնական ռադիոնուկլիդների ակտիվության որոշման ծառայություն՝ ԵԱՏՄ երկրների միասնական ստանդարտների համաձայն: ՀՀ-ից արտահանվող ապրանքները համապատասխանում են ԵԱՏՄ ռադիոլոգիական ստանդարտներին (դեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյանա):

Լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգ ստեղծելուն

ընդառաջ Հայաստանում ստեղծվել է արբանյակային լուսանկարների հավաքագրման և մշակման բազմաչափ տեղեկատվական համակարգ (տեղեկատվական խորանարդ) (<http://datacube.sci.am>)՝ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և Ժնևի համալսարանի (Շվեյցարիա) համագործակցությամբ: Համակարգի շտեմարանը ներառում է Landsat և Sentinel արբանյակային լուսանկարները և պարբերաբար թարմացվում է: Համակարգում մշակվել է ջրային օբյեկտների տարբերակման և սահմանագծման ալգորիթմ Python ծրագրավորման լեզվի կիրառմամբ, որը նախատեսվում է դարձնել տեղեկատվական համակարգում արբանյակային լուսանկարներից ջրային օբյեկտների վերծանման գործիք (ղեկ՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

## **ԿԵՆՂԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂԴՈՒԿՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Իրականացվել են Սևանա լճի ձկան և խեցգետնի պաշարների գնահատման աշխատանքներ: Ցույց է տրվել, որ 2020թ. խեցգետնի ընդհանուր զանգվածը լճում մոտ 105 տ էր, պոպուլյացիայի վիճակը տարեցտարի վատանում է, արդյունագործական պաշարները խզված են, անկառավարելի որսի և հիվանդությունների հետևանքով տեսակը կանգնած է ոչնչացման եզրին: Լճի խեցգետնի արդյունավետությունը վերականգնելու նպատակով առաջարկվել է արգելել խեցգետնի որսը, վաճառքը երկրի ներսում և արտահանումը երկրի սահմաններից դուրս, ինչպես նաև պայքարել որսագողության դեմ: Դիտվել է նաև սիգի ընդհանուր պաշարների նվազում. 2020թ. սիգի արդյունագործական պաշարը կազմել է 586տ, նախորդ տարվա 667տ փոխարեն, իսկ ընդհանուր պաշարը՝ 2345տ, 2668տ փոխարեն (ղեկ՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

Ուսումնասիրվել է մակաբույծների տեսակային կազմը և դրանցով կենդանիների (խոշոր եղջերավոր կենդանիներ, ոչխարներ, ճագարներ, թռչուններ, ձկներ) ու բույսերի (պտղատու ծառատեսակներ, խաղողի այգիներ, խոտաբույսեր) վարակվածությունը (ղեկ՝ ալկ. Ս.Մովսեսյան):

Հայտնաբերվել և որոշվել է մակաբույծ և վիրուսակիր ֆիտոնեմատոդների 11 տեսակ, նշվել են առավել հաճախ հանդիպող, վնասակար և վիրուսակիր տեսակները, որոնցից են *X. index*-ը և *X. vuittenesi*-ը (ղեկ՝ կ.գ.թ. Հ.Մկրտչյան):

Իրականացվել են գյուղատնտեսական վնասատուների դեմ կենսաբանական պայքարում նոր մոտեցումների հետազոտման աշխատանքներ: Շարունակվել են նախկինում ստեղծված ցրտադիմացկուն ֆիտոսեիդ *Ph. persimilis* տիգի պահպանմանը, միջատատգասպան ազդեցությամբ նյութերի մշակման ուսումնասիրությունները: *P. harmala*, *A. tenuifolia* և *E. orientalis* բույսերից անջատված համակցված էքստրակտների փորձարկումը լվիճների վրա ցույց է տվել դրանց տարբեր մակարդակի միջատասպան ակտիվությունը. ամենաբարձրն արձանագրվել է *A. tenuifolia* բույսի համար (ղեկ՝ կ.գ.դ. Կ.Դիլբարյան):

Կատարվել է լճագորտի (*Pelophylax ridibundus*) և կանաչ դոդոշի (*Bufo variabilis*) ձևաբանական և բջջագենետիկ որոշ ցուցանիշների փոփոխության ուսումնասիրություն բնակության տարբեր պայմաններում: Արդյունքները կարող են կիրառվել որպես կենսացուցիչ ջրային ողնաշարավոր կենդանիների բնական միջավայի աղտոտման ախտորոշման և մոնիթորինգի պրակտիկայում (ղեկ՝ կ.գ.թ. Ի.Ստեփանյան):

## **Հ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԱՆՎ. ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Առնետների ստրեպտոգոտոցինով խթանված շաքարախտի դեպքում ենթաստամոքսային գեղձի, երիկամների և լյարդի կտրվածքների հիստոպաթոլոգիական հետազոտ-

մամբ բացահայտվել է հյուսվածքների կառուցվածքների բարելավում խաղողի և ավելուկի տերևների, ընկույզի միջուկի թաղանթի և վարդի թերթիկների էթանոլային թուրմերով կերակրման արդյունքում: Դիտվել է օքսիդատիվ սթրեսի կենսաբանական մարկեր մալոնային դիալդեհիդի բարձր մակարդակի նվազում: Օգտագործված բուսական թուրմերից առավել արդյունավետները կարելի է առաջարկել շաքարախտի կանխարգելման և բուժման ընթացքում դեղամիջոցների հետ համատեղ կիրառման համար: ՆՕՔ ինստիտուտում սինթեզված նոր երրորդային ամինալկոհոլային միացություն հելիոտրոպին խումբ պարունակող GGN 322\*HCl-ը *in vitro* ընկճում է ցուլի թոքերից մաքրված ցԱԴԱ-ն մրցակցային ձևով: Ընկճման արդյունավետությունը թույլ է տալիս առաջարկել GGN 322\*HCl-ը կլինիկայում որպես ադենոզինդեամինազի ակտիվության բարձրացմամբ զուգորդվող հիվանդությունները մեղմելու միջոց (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Անտոնյան):

Պոտենցիալ պաթոգեն սպիտակուցների հեռացման գործում հետազոտվել է բնական իմունոգլոբուլինների մասնակցությունը: Արյան պլազմայից անջատվել են աթերոսկլերոզի պաթոգենեզի ժամանակ կարևոր նշանակություն ունեցող ցածր խտության լիպոպրոտեիններ, որոնք տարբեր ճանապարհներով ենթարկվել են օքսիդացման: Օքսիդացած լիպոպրոտեինների հետ IgG փոխազդեցության արդյունքում պարզվել է, որ բնական հակամարմիններն ունակ են կապվել և չեզոքացնել օքսիդացած լիպոպրոտեինները, որը նորովի է ներկայացնում իմունային համակարգի դերը սրտանոթային հիվանդությունների (աթերոսկլերոզի) զարգացման գործում:

Շարունակվել են լեկտին սենսիբիլիզացված արծաթի նանոմասնիկներով սնկերի քանակական որոշման աշխատանքները: Լեկտինները հանդես են եկել որպես սնկերի շաքարապատ պատի ճանաչող սպիտակուցներ (սենսորի ճանաչող մաս), իսկ արծաթի նանոմասնիկները՝ օպտիկական ազդակ ապահովող մաս: Այս եղանակով հնարավոր է բարձր զգայունությամբ և սպեցիֆիկությամբ որոշել խմորասնկերի քանակությունը:

Որոշ ֆերմենտների ակտիվությունը շատ զգայուն է ծանր մետաղների չնչին քանակների նկատմամբ, որը կարելի է օգտագործել այդ մետաղների որոշման համար: Որպես այդպիսի ֆերմենտ կիրառվել է սոյայից անջատած ուրեազը: Որպես ֆլուորեսցենտային սենսոր օգտագործվել են CdSe քվանտային կետերը: Գնահատվել է այս ֆերմենտի ներուժը տարբեր մետաղների սկրինինգային որոշման համար:

Սինթեզվել են արծաթի նոր տիպի նանոկոմպոզիտներ, որոնք օգտագործվում են տարբեր ֆոսֆորզանական թունաքիմիկատների զգայուն քանակական որոշման համար: Ի տարբերություն մինչ այժմ օգտագործվող մոտեցումների, որտեղ օգտագործվում է ագեստիլիտլինէսթերազ ֆերմենտը, այն ունի ֆերմենտի ակտիվության հետ կապված որոշակի սահմանափակումներ, նրա ռեկոմբինանտ ձևի ստացման այս եղանակը զգայունությամբ չի զիջում ֆերմենտային մեթոդին և զուրկ է այն թերություններից, որոնք բնորոշ են ֆերմենտային եղանակին (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Գասպարյան):

## «ՀԱՅԿԵՆՍՍՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շարունակվել է մի շարք օպտիկապես ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների արտադրությունը և իրացումը եվրոպական շուկայում, որոնք ունեն կարևոր բժշկական, դեղագործական և ախտորոշիչ նշանակություն (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան):

Շարունակվել է *L. acidophilus* ՄԱԿ 9602 կաթնաթթվային բակտերիայի կիրառմամբ «Նարինե» կաթնաթթվային մթերքի արտադրությունը մրգային և ըմպելի բնական օշորակների (ծիրան, դեղձ, սև թուր և բալ) կիրառմամբ: Շարունակվել է լիոֆիլիզացված «Նարինե»-ի (դեղափոշի) արտադրությունը, միաժամանակ կազմակերպվել է դրա ար-

տադրությունն աղիներում լուծվող պինդ ժելատինային պատիճներում: Այս արտադրանքներն իրացվում են Երևանի առաջատար դեղատներում և սուպերմարկետներում (դեկ.՝ Ռ.Հայրապետյան):

Շարունակվել է գյուղատնտեսության համար անհրաժեշտ համալիր կենսապարար-տանյութերի՝ «Էկոբիոֆիդ»-ի և «Էկոբիոֆիդ+»-ի արտադրությունը: Արտադրվել է շուրջ 3 տ. կենսապարարտանյութ, որն իրացվել է հանրապետության տարբեր ֆերմաներում (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Շարունակվել է Հայաստանի դեղագործական շուկայում պահանջարկ ունեցող պատ-րաստուկների (3% և 30% ջրածնի պերօքսիդ, բորաթթու, մագնեզիումի սուլֆատ, կալիումի պերմանգանատ, ամոնիումի ջրային լուծույթ, գերչակի յուղ, գլիցերին, 5% յոդի լուծույթ) արտադրությունը: Պայմանագրային հիմունքներով վերոհիշյալ պատրաստուկներն իրաց-վում են հետևյալ մեծածախ ցանցերում՝ «Նատալի-Ֆարմ», «Վագա-Ֆարմ», «Ֆարմ-Դոմ», «Յունիֆարմ», «Սանուս», «Արմֆարմացիա», «Ալտա» և այլն (դեկ.՝ ք.գ.թ. Գ. Հովսեփյան):

Շարունակվել է սառը մամլման եղանակով չիչխանի, կտավատի, պուտավոր կաթնա-փուշի, նշի, սև և սպիտակ քունջութի, դեղձի, ծիրանի, սև չամանի, դդմի և սև սալորի կորիզ-ների բնական բուսական յուղերի արտադրությունը, ինչպես նաև կազմակերպվել է նոր արժեքավոր բուսայուղի՝ նռան յուղի արտադրություն: Նշված յուղերն ունեն սննդային, բուժկանխարգելիչ և գեղարարական (կոսմետոլոգիական) նշանակություն (դեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

#### **Գ.ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎ. ՀԻԴՐՈՊՈՆԻԿԱՅԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Մշակվել են ճապոնական կադամբ միզունայի, չինական կադամբ պակ-չոյի և ռուկո-լայի անհող աճեցման կենսատեխնոլոգիաները:

ՀՓԿ-ում պահպանվել և հարստացվել է տարբեր եթերայուղատու, դեղատու, սննդային բույսերի հիդրոպոնիկ բանկը (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Մայրապետյան):

Առաջին անգամ կառուցվել և փորձարկվել է հորիզոնական տարածվող բույսերի ուղղաձիգ աճեցման հիդրոպոնիկ մոդուլ, հաջողությամբ աճեցվել է սելիի նոր սորտ:

Առաջին անգամ հիդրոպոնիկ պայմաններում աճեցվել է Հայաստանում հազվադեպ հանդիպող խավրձիլ բույսը (*Rheum*), որը կիրառական տեսանկյունից պոտենցիալ նոր բու-սատեսակ է սննդային արդյունաբերության համար:

Աճեցվել են գարեջրի հումք հանդիսացող հիդրոպոնիկ գայլուկի կոներ, որոնք փոխ-անցվել են տեղական գարեջրագործներին փորձնական, փոքրածավալ գարեջուր արտադրե-լու համար (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Թադևոսյան):

Մշակվել են գիտականորեն հիմնավորված գործնական առաջարկներ մեղրախոտի և ամսաբողկի միկրոտարրերով առավել հագեցած բուսահումքի ստացման համար (դեկ.՝ գ.գ.դ. Մ.Բաբախանյան):

Հյուսվածքային մշակույթի լաբորատորիայում պահպանվել և լրացվել է բույսերի *in vitro* հավաքածուն (դեկ.՝ կ.գ.դ. Է.Սարգսյան):

Վաճառվել է շուրջ 700 հատ տարբեր ծառաթփերի տնկի՝ մոտ 700 հազար դրամ գու-մարով (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Մշակվել են ռադիոպաշտպանիչների գործնական առաջարկներ, որոնց կիրառումը հիդրոպոնիկայում և ագրոհամակեցություններում կապահովի ռադիոէկոլոգիապես առավել անվտանգ բուսահումքի ստացում և միաժամանակ կունենա բնապահպանական նշանա-կություն (դեկ.՝ գ.գ.թ. Լ.Ղալաչյան):

## ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Իրականացվել է COVID-19 իրական ժամանակում ՊՇՌ թեստերի արտադրություն, և ԱՆ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնին մատակարարվել է 100000 թեստ: ՊՇՌ մեթոդի օպտիմալացման շնորհիվ հնարավոր է դարձել հայտնաբերել վիրուսը նմուշում՝ առանց նուկլեինաթթուների նախնական անջատման (ղեկ.՝ կ.գ.դ. Ա.Առաքելյան):

Ստեղծվել է նոր ալգորիթմ դոքինգի արդյունքները բարելավելու համար, ցույց է տրվել ալգորիթմի արդյունավետությունը (կոդն առկա է հետևյալ հղումով՝ <https://github.com/sahakyanhk/iPBSA/blob/main/iPBSA.sh>) (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Նազարյան):

«Natural Biologics» ընկերության (ԱՄՆ) հետ ուսումնասիրվել է մոնոլաուրինի ազդեցությունը խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի վրա խոզերի կերում: Ցույց է տրվել, որ մոնոլաուրինն ունի ավելի ուժեղ հակավիրուսային ակտիվություն, քան միջին երկարության ճարպաթթուները դոզակախյալ եղանակով: Արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ նշված նյութը կարող է օգտագործվել կերերի հակավիրուսային մշակման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Զաքարյան):

Անջատվել են ոչ տիֆային *Salmonella*, *Shigella*, *Pseudomonas aeruginosa* և *Staphylococcus aureus* տեսակների հանդեպ լիտիկ ակտիվություն ցուցաբերող բակտերիոֆագեր: Իրականացվել են անջատված ֆագերի մաքրման, հարստացման և ադապտացիայի փուլեր, որից հետո բնութագրվել է դրանց լիտիկ ակտիվությունը, կայունությունը, տերերի տիրույթը, ինչպես նաև հարուցիչների կլինիկական իզոլյատների նկատմամբ արդյունավետությունը: Արդյունքում ստեղծվել է հեռանկարային ֆագերի գրադարան, որի հիման վրա կազմվել է 7 պիլոտային հակամանրեային պատրաստուկ: Ստացված արդյունքները վկայում են, որ ստեղծված գրադարանը կարող է հիմք հանդիսանալ Հայաստանում առավել տարածված սննդածին վարակիչ հիվանդությունների բակտերիալ հարուցիչների դեմ բարձր ակտիվությամբ օժտված ֆագային պատրաստուկների մշակման համար՝ նշված հիվանդությունների արդյունավետ կանխարգելման և բուժման նպատակով (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Սեդրակյան):

## Լ.ՕՐԲԵԼՈՒ ԱՆՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

“PSI” ընկերության, ինստիտուտի հոգեֆիզիոլոգիայի լաբորատորիայի երիտասարդ աշխատակիցների և ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի մագիստրոսի կողմից մշակվել է նորարարական նախագիծ՝ «Ցածր հզորային թունելային դիոդով ակտիվացող հարթ կոճով օսցիլյատորային համակարգ՝ նախատեսված քնային զարկերակի պուլսային ալիքների հետազոտման համար» (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Խաչունց):

## ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

“European Union Water Initiative Plus for the Eastern Partnership (EUWI+ 4 EaP) and International office for Water” ծրագրով ֆինանսավորված «Development of Draft River Basin Management Plan for Hrazdan River Basin in Armenia: Part 2» դրամաշնորհի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.թ. Ս.Մինասյան), Եվրամիության ջրի շրջանակային դիրեկտիվի մեթոդաբանությամբ



յամբ և մոտեցումների հիման վրա կազմվել է Հրագրանի գետավազանի կառավարման պլանի նախագիծ:

### **Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Մինթեզվել են սպեկտորի ինֆրակարմիր տիրույթում (400-6000 նմ) թափանցիկ ապակիներ օպտիկական սարքաշինության և գիշերային տեսողության սարքերի համար (ղեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Միկրոալիքային եղանակով խոշոր լաբորատոր սարքավորումներում ստացվել են վանադիում- դիոպսիդ, երկաթ-դիոպսիդ, կոբալտ-դիոպսիդ, նիկել-մոլիբդ, կոբալտ-մոլիբդ, երկաթ-մոլիբդ կերամիկական պիգմենտների փորձնական նմուշներ: Այս պիգմենտների հիման վրա ստացվել են կերամիկական ներկեր, որոնք փորձարկվել են կերամիկական սալիկներ ստանալու համար (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Բադրամյան):

### **ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

Իրականացվել է դիմեթիլվինիլթինիլ կարբինոլի և դրա հիման վրա պիպերիդինի սինթեզի տեխնոլոգիայի մշակում: Մշակվել են վինիլացետիլենի, դիմեթիլվինիլթինիլ կարբինոլի և պիպերիդինի լաբորատոր կանոնակարգերը (ղեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

### **ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Առաջադրվել են ուժեղ երկրաշարժերի դեպքում տարբեր գրունտային պայմաններով տեղանքների տեղափոխությունների և արագացումների մեծությունների կանխագուշակման բանաձևեր՝ երկրաշարժը դիտարկելով որպես երկրի կեղևի ապարների հանկարծակի մեխանիկական խզում (ղեկ.՝ ալ. Է.Խաչիյան):

Ճշգրտվել և լրացվել է ՀՀ տարածքի գեոթերմալ անոմալիաների քարտեզը նոր տվյալներով՝ կազմված ջերմահանքային ջրերի հաշվարկային երկրաքիմիական գեոթերմոմետրերի հիման վրա (ղեկ.՝ ե.գ.դ. Խ.Մելիքսեթյան):

Ինստիտուտի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրի շրջանակում 2020թ. Գեոարխեոլոգիայի և գեոմոնիթորինգի լաբորատորիան մասնակցել է Դիլիջան քաղաքի ջրահեռացման թունելի արդյունավետ աշխատանքի ապահովման միջոցառումների նախագծին՝ հիմնվելով «Դիլիջան քաղաքի ջրահեռացման թունելի ներկա վիճակի ուսումնասիրություն և գնահատում» (2019թ.) հաշվետվության վրա, որտեղ ներկայացված էր Դիլիջանի ջրահեռացման թունելի ներկա վիճակն ամբողջ երկայնքով և բերված էին եզրակացություններ և առաջարկություններ թունելը շահագործող կազմակերպության համար: Խնդրի լուծման համար իրականացվել են մի շարք հետազոտություններ և վերլուծություններ, որոնց արդյունքում ցամաքուրդային թունելի երկայնքով առանձնացվել և դասակարգվել են բոլոր այն տեղամասերը, որտեղ անհրաժեշտ էր իրականացնել թունելի պատերին առկա հորատանցքերում խցանված խողովակների մաքրման աշխատանքներ, ինչպես նաև որոշվել են նոր հորատանցքեր փորելու տեղերը, ինչը թույլ կտա ապահովել թունելում ջրահեռացման համակարգի լիարժեք, արդյունավետ աշխատանքը: Տրվել են եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ (ղեկ.՝ ե.գ.թ. Մ.Գևորգյան):

## **ԱՆԱԶԱՐՈՎԻ ԱՆՎ. ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՏԵՆՇԻՄԱՅԻՆ ՄԵՅՄՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է ուղղահայաց ճոճանակային սեյսմիկ տվիչ (դեկ.՝ Ա. Գասպարյան, Ե.գ.թ. Ջ.Կարապետյան):

Իրականացվել են երկրաֆիզիկական մեթոդների, մեթոդաբանության և կիրառման ուսումնասիրություններ լեռնածալքավոր շրջաններում՝ պայմանավորված ջրամբարների անվտանգ շահագործման և ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածության հետ (Արփի լճի, Կառնուտի և Սառնաղբյուրի ջրամբարների տեղամասերում) (դեկ.՝ Ե.գ.դ. Ռ.Մինասյան):

Նախագծվել, պատրաստվել և փորձարկվել է էլեկտրահետախուզական դյուրակիր կայան, որը տարբերվում է գոյություն ունեցող սարքերից չափման բարձր ճշտությամբ և փոքր քաշով (դեկ.՝ Մ.Միրանյան):

Գյումրի քաղաքի տարածքում իրականացված համալիր էկոերկրաֆիզիկական ուսումնասիրությունների և նախկինում կատարված ինժեներաերկրաբանական աշխատանքների արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտվել են քաղաքի ստորգետնյա տարածքում առկա քյարիզների տարածման որոշ գլխավոր օրինաչափություններ, ինչպես նաև գնահատվել են առանձին քյարիզների երկրաչափական պարամետրերը (դեկ.՝ Ռ. Գասպարյան):

## **ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ինստիտուտի գիտաշխատողները պարբերաբար պատկան մարմիններին են ներկայացրել ՀՀ արտաքին քաղաքականության մի շարք հիմնական ուղղությունների (մասնավորապես մերձավորարևելյան և տարածաշրջանային) մշակմանը և իրականացմանը նպաստող, ՀՀ ազգային անվտանգությանը վերաբերող գիտական և գիտավերլուծական նյութեր, ներգրավված են եղել ՀՀ արտաքին քաղաքականության շուրջը ծավալվող խոսույթում՝ հայաստանյան և արտասահմանյան հեղինակավոր ԶԼՄ-ներին տրված փորձագիտական հարցազրույցների ընթացքում ներկայացնելով իրենց գիտական պրպտումների արդյունքները:

Պետական մարմինների հետ համագործակցության առիավատյան է այն, որ ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակը նամակով շնորհակալություն է հայտնել ակ. Ռ.Սաֆրաստյանին, ինստիտուտի աշխատակիցներ պ.գ.թ. Գ.Իսկանդարյանին, պ.գ.թ. Ա.Փաշայանին և պ.գ.թ. Լ.Հովսեփյանին ՀՀ ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքներին մասնակցության համար:

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստան-Իրան բարեկամական խմբի նախագահ Մ.Հայրապետյանը, Աժ պատգամավոր, Հայաստան-Իրան բարեկամական խմբի անդամ Վ.Հակոբյանը հանդիպել են ինստիտուտի աշխատակիցների հետ, խոսել ինչպես հայ-իրանական հարաբերություններից, այնպես էլ տարածաշրջանային զարգացումներից:

Կիրառական նշանակություն ունեցող կարևոր ձեռքբերումներից է դպրոցական և բուհական դասագրքերի հրատարակումն ինստիտուտի աշխատակիցների կողմից, մասնավորապես եզդիական դպրոցների համար պատրաստված և տպագրված դասագրքերը, «Մուսուլմանական Արևելքի պատմության հիմնահարցեր (7-15-րդ դարեր)» ուսումնամեթոդական ձեռնարկը:

## ՀԱՍԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ պ.գ.թ. Հ.Խառատյան) վերլուծվել են 1949թ. հայկական դեպորտացիայի փաստաթղթերը և կազմվել է ՌԴ, ՀԱԱ, Վրաստանի ՆԳՆ և Արցախի արխիվներից հավաքված շուրջ 96 փաստաթղթի թվայնացված պատճենների և դրանց տեքստային շարադրանքների ժողովածու:

Ինստիտուտի կողմից պեղված հնագիտական հուշարձաններում զբոսաշրջության կազմակերպման, հնավայրերի թանգարանացման ծրագրով Իտալիայից հրավիրված մասնագետների հետ մշակվել է Ագարակի հնագիտական համալիրի ամրակայման և բարեկարգման, հնագիտական պարկ ստեղծելու նախագիծ (ղեկ.՝ թղթ. անդ. Պ.Ավետիսյան):

ԱՄՆ Սմիթսոնյան հաստատության հետ Հայաստանում իրականացվող «Իմ Հայաստան» ծրագրով ծավալուն հետազոտություններ են կատարվել Վայոց ձորի և Սյունիքի մարզերում՝ մշակութային և գյուղական տուրիզմի զարգացման ծրագրեր մշակելու և կյանքի կոչելու նպատակով (ղեկ.՝ մ.գ.թ. Ս.Մկրտչյան, պ.գ.թ. Գ.Շազոյան, Ռ.Ծատուրյան):

«Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն» թեմայով (ղեկ.՝ Գ.Սարգսյան) գործնական աշխատանքներ են իրականացվել Արցախի Քաշաթաղի, Շահումյանի և Հաղործի շրջաններում: Փաստագրվել են 40 հայտնի և նորահայտ բերդեր և ամրոց-բնակավայրեր, պատրաստվել են բոլորի տեղագրական հանույթները: Կազմակերպվել է նյութի ցուցադրություն Արցախի և Հայաստանի Հանրապետությունների խորհրդարաններում:

Վերականգնվել և թանգարանացման համար նախապատրաստվել են 500 անուն պատմամշակութային մեծ արժեք ունեցող գտածոներ՝ կավից, բրոնզից, երկաթից, ապակուց, ոսկրից, քարից պատրաստված իրեր և առարկաներ:

## ՀԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.թ. Մ.Սարգսյան) կատարվել է շտեմարանում ընդգրկվելիք բառապաշարի՝ շուրջ 150 000 բառերի ձևային նկարագրություն բառակազմական տեսակետից: Մշակվել են որոնումներ կատարելու և շտեմարանը կիրառելու ուղեցույցները: Հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով շտեմարանը կգործի համացանցային առանձին կայքում՝ [formlang.am](http://formlang.am) վեբ հասցեի ներքո:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ թղթ. անդ. Ա.Սարգսյան) հրապարակվել է «Նոր բառեր» շարքի Ե պրակը, որը պարունակում է շուրջ 1500 նորաբանություններ՝ բառերի բացատրությամբ և համապատասխան օրինակներով: Քննարկվել են արդի բժշկագիտության տերմինների հայերեն տառադարձության խնդիրները:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) աշխարհաբարի է վերածվել և հրատարակվել Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» երկը:

## Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճի ապահովման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի շրջանակներում

(ղեկ.՝ թղթ. անդ. Վ.Հարությունյան) արձանագրվել է, որ յուրաքանչյուր պետություն մշտապես կանգնած է հարկային բեռի օպտիմալ մակարդակի հասնելու խնդրի առաջ: Հարկային բեռի բարձր մակարդակը սկզբնական շրջանում պետության համար դրական ցուցանիշ է համարվում, քանի որ այն ապահովում է հարկային մեծ եկամուտներ: Սակայն պետք չէ այս խնդրին նայել միանշանակ, քանի որ հարկային բարձր բեռը մյուս կողմից էլ հանգեցնում է գործարար ակտիվության նվազմանը և, որպես հետևանք, կրճատում է բնակչության կողմից աշխատելու խթանները, որն էլ իր հերթին հանգեցնում է հարկային եկամուտների կրճատմանը: Հետևաբար, հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոն՝ հարկերը պետք է համատեղելի լինեն տնտեսական արդյունավետության հետ և հարկային համակարգը պետք է լինի հավասարական, այսինքն՝ պետք է համատեղելի լինի արդարության սկզբունքի հետ:

«Արտահանումը որպես ՀՀ տնտեսական աճի հենասյուն (ոլորտային ռազմավարություն)» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Լ.Սարգսյան) տնտեսական աճի վրա արտաքին առևտրի ազդեցությունն առավելապես դրական դարձնելու նպատակով առաջարկվել է ՀՀ արտահանման կառուցվածքում ռեսուրսատար և ցածր տեխնոլոգիատար ապրանքների արտահանումից աստիճանաբար անցում կատարել դեպի միջին և բարձր տեխնոլոգիատարության ապրանքների արտադրություն և արտահանում: Երկարատև ժամանակահատվածում արտահանման հնարավորությունների բացահայտման համար իրականացված հանգամանալից վերլուծության արդյունքում բացահայտվել են մի շարք ոլորտային հնարավորություններ և առաջարկվել են արտահանման մեխանիզմներ և թիրախային շուկաներ՝ ըստ առանձին ոլորտների:

«Բարձր տեխնոլոգիական տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Դավաթյան) ներկայացվել են կիրառական բնույթի հետևյալ առաջարկները՝ ռազմական ծախսերի քաղաքականություն մշակելիս հաշվի առնել տարածաշրջանային բազմարկիչի գործոնը, ինչպես նաև հիմնավորվել է, որ ռազմական ծախսերը կարող են ոչ միայն պահպանվել ամբողջ տնտեսությունում, այլև բերել տնտեսական աճ ու հետագայում կոռելացիայի ենթարկվելով՝ ինքնաապահովվել և տնտեսության մի շարք ճյուղերի մեջ, ինչպես նաև կառավարության գործունեության մեջ ներդնել կիրառական գիտության, տեղեկատվական անվտանգության խնդիրների լուծման առաջավոր մոտեցումներ:

«Նորարարական զարգացման հիմնախնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տնտ.գ.թ. Մ.Մանուչարյան) առաջարկվել է ստեղծել նախապայմաններ, որպեսզի գյուղատնտեսության ոլորտի նորարարությունները հասանելի լինեն ոչ միայն հարուստ ֆերմերներին, այլև միջին և ցածր եկամուտ ունեցող գյուղացիական տնտեսություններին, որոնք ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմում ՀՀ-ում: Այս պարագայում անհրաժեշտ է կիրառել արտասահմանյան փորձը և գյուղատնտեսության նորարարական նախագծի արժեքի 50%-ի չափով տալ պետական երաշխավորություն, որը նաև կհանգեցնի ոլորտի ռիսկայնության մակարդակի նվազեցմանը: Համագործակցության, կապերի հաստատման և ամրապնդման նպատակով (ներդրողներ, ֆերմերներ) անհրաժեշտ է ստեղծել վեր-հարթակներ, կազմակերպել ցուցահանդեսներ: Նորարարական զարգացման պայմաններում ավելի է կարևորվում տնտեսություն և գիտություն կապի ամրապնդումը, նրանք պետք է գործեն միասնական գործընկերության մթնոլորտում, որպեսզի հնարավոր լինի ապահովել բարձր արդյունավետություն:

## **ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ինստիտուտի իրավագետները ՀՀ-ում փաստաբանական գրասենյակների, ՀՀ փաստաբանական դպրոցի հետ համատեղ շարունակել են իրականացնել սահմանադրաիրավական բարեփոխումների, կառավարման խորհրդարանական ձևին անցման կիրառական հետազոտություններ, իսկ արդյունքները ներկայացվել են պետական կառույցներին, շահագրգիռ կազմակերպություններին: Իրավագետները տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություններ հայ-ադրբեջանական պատերազմից տուժած անձանց: Ներպետական և միջազգային համագործակցության շրջանակներում ներպետական մի շարք կառույցների տրամադրվել են իրավաբանական խորհրդատվություններ և եզրակացություններ վիճահարույց, կոլիզիոն իրավական խնդիրների վերաբերյալ (ղեկ.՝ իր.գ.թ. Լ.Ղազանչյան):

## **ԳԱԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ**

2020թ. իրականացվել է 10587 դատական փորձաքննություն, որոնք իրականացվել են 27 փորձագիտական տեսակի շրջանակներում՝ շուրջ 129 փորձագիտական ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով:

Կազմակերպության ստորաբաժանումները դատարանների կողմից կայացված որոշումների հիման վրա իրականացրել են 169 քաղաքացիական, 53 վարչական դատավարությունների, 115 քաղաքացիաիրավական հարաբերությունների փորձաքննություններ:

# ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

## «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար»

Համակարգող՝ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի փոխտնօրեն ֆ.-մ.գ.թ. Վ.Սահակյան

Ծրագիրը նպատակաուղղված է բնագիտական (հիդրոոդերևութաբանության, բնապահպանության, սեյսմաբանության, կենսաբանության և բժշկական գենետիկայի) խնդիրների լուծմանն ու ամպային ենթակառուցվածքի զարգացմանը՝ օգտագործելով ազգային հետազոտական էլեկտրոնային ենթակառուցվածքի հնարավորությունները:

Ծրագրին մասնակցել են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների, Երկրաբանական գիտությունների (ԵԳԻ), Ա.Նազարովի անվան Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության (ԵԻՄԻ), Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի, ՀՀ արտակարգ իրավիճակների և շրջակա միջավայրի նախարարությունների առաջատար մասնագետները:

Հաշվետու տարում կատարվել են ամպային ենթակառուցվածքների և ծառայությունների մշակման գիտական լուծումներն ապահովելու հետազոտություններ: Ամպային հաշվարկների մոդելի հիման վրա (SaaS) մշակվել են ամպային միջավայրերի ղեկավարման վահանակներ: Մանրամասն հետազոտվել են Openstack-ի նորագույն տարբերակի հիմնական բաղադրիչների և ծառայությունների (Nova, Keystone և այլն) նոր հնարավորությունները: Զարգացվել է ամպային ենթակառուցվածքը, այդ թվում՝ OpenStack ամպային հաշվարկների հարթակի հիման վրա մշակվել է երկու գոտիներով լիարժեք ամպային հարթակ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կոնտրոլերը և հաշվողական ռեսուրսները: Տվյալ պահին այս հարթակն օգտագործվում է 12 գիտական/ուսումնական և այլ կազմակերպությունների կողմից: Օգտագործելով Prometheus/Grafana ծրագրային հարթակի հնարավորությունները՝ մշակվել է մշտադիտարկման ծառայությունը՝ բոլոր վիրտուալ մեքենաների աշխատանքը հսկելու համար:

Տվյալների վերլուծության և արտապատկերման մեթոդների ու ծրագրային միջոցների մշակման ոլորտում կատարվել է հայկական Open Data Cube (ODC) հարթակի զարգացում: ODC հարթակը թույլ է տալիս ներբեռնել մեր տարածաշրջանին վերաբերող առկա արբանյակային նկարները գլոբալ տվյալների շտեմարանից՝ նշելով սահմանի և պրոյեկցիայի պայմանները և ստացված տվյալները վերափոխել բնապահպանական հետազոտությունների համար անհրաժեշտ տեսքի:

Օդերևութաբանության և բնապահպանության բնագավառներում շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները, այդ թվում՝ Հայաստանում կլիմայի փոփոխության և խոցելիության գնահատման մոդելների ներդրման, Weather Research and Forecasting (WRF) եղանակի կանխատեսման թվային մոդելի օգնությամբ բարձր լուծաչափի եղանակի կանխատեսումների ստացման, արեգակնային ճառագայթման և քամու ներուժի բաշխման տարածական մոդելի ներդրման և շրջակա միջավայրի միասնական էլեկտրոնային հարթակի զարգացման ոլորտում:

Սեյսմաբանության բնագավառում կատարվել են սեյսմաբանի ամպային աշխատանքային միջավայրի և սեյսմաբանական ամպային գործիքակազմի զարգացման աշխատանքներ, շարունակվել է ԵԳԻ-ի դիտացանցի թվային սեյսմիկ կայաններից անընդհատ ռեժիմում իրականացվող գրանցումների հոսքի ստացումը և պահպանումը տվյալների ամպային պահոցներում, արդիականացվել է մշակված մասնագիտացված ամպային աշխատանքային

միջավայրը և թարմացվել են ներդրված ծրագրային փաթեթները, կատարվել է ԵԻՄԻ-ի կողմից մշակված նոր սեյսմիկ տվիչի փորձարկում իրական պայմաններում՝ գրանցելով երկրաշարժեր՝ տարածքների մշտադիտարկման և ինժեներական տարաբնույթ խնդիրներ լուծելու նպատակով: Արդյունքում մշակվել է ժամանակակից պահանջները բավարարող և անընդհատ ռեժիմում աշխատող դյուրակիր սեյսմիկ համակարգ:

Կենսաբանության բնագավառում շարունակվել է նախկինում կառուցված լիպիդային երկշերտ/տրանսմեմբրանային ինտեգրին բարդ կենսաբանական համակարգի ուսումնասիրությունը համակարգչային փորձի մեթոդով: Մշակվել և լրամշակվել են որոշակի ծրագրային մոդուլներ:

Բժշկական գենետիկայի բնագավառում մշակվել է բազմաշերտ ինքնակառավարվող քարտեզների ալգորիթմ, իրականացվել է կրծքագեղձի և ձվարանների քաղցկեղների ժամանակ BRCA1 և BRCA2 գեներում սոմատիկ և ժառանգական մուտացիաների ազդեցությունն ամբողջական գենոմի մակարդակով գեների էքսպրեսիայի վրա: Հայկական պոպուլյացիայում արյան քաղցկեղների քեմոթերապիայի ռեզիստենտականության գենետիկական ռիսկերի բաշխման ուսումնասիրության խնդրի շրջանակներում հետազոտվել է 3600 առողջ անձի արյան բջիջների տրանսկրիպտոմը՝ օգտագործելով մեքենայական ուսուցման և կենսաբանական տվյալների պեղման և ֆունկցիոնալ անոտացիայի մի շարք ալգորիթմներ: Ստացված արդյունքները թույլ են տվել կլաստերավորել հետազոտվող անձանց ըստ «արյան տրանսկրիպտոմային խմբերի», գնահատել այդ մոլեկուլային խմբերում գեների էքսպրեսիայի կապը շրջակա միջավայրի գործոնների ազդեցության և հիվանդությունների, մասնավորապես արյան քաղցկեղների զարգացման հետ:

Պետական նպատակային ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված արդյունքները հրապարակվել են 12 հոդվածներում:

### **«Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմների գնահատում և «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակում»**

Համակարգող՝ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն կ.գ.դ. Բ.Գաբրիելյան

Սևանա լճի «ծաղկման» երևույթների դեմ պայքարի մեթոդների մշակման նպատակով իրականացվել է լճի ջրերի «ծաղկմանը» նպաստող հիդրոքիմիական և հիդրոֆիզիկական գործոնների բացահայտում, ավտոտրոֆ օղակի տեսակային կազմի որոշում և քանակական ցուցանիշների գնահատում: Կապտականաչ ջրիմուռներից Սևանա լճի ջրերի մաքրման նպատակով կատարվել է Հայաստանի ցեոլիտների օգտագործման մեթոդաբանության մշակում: Ցեոլիտների օգնությամբ կապտականաչներից ջրի մաքրման արդյունավետությունը գնահատվել է մանրէաբանական ցուցանիշների հիման վրա: Ընտրված սորբենտի ազդեցության տակ 10 րոպեի ընթացքում մանրէների քանակը նվազել է 300 անգամ: Փորձեր են արվում մեծացնելու սորբենտի ազդեցության արագությունը:

Իրականացվել է նաև Սևանա լճի 3 դիտակետերից (Լիճք, Լճաշեն, Նորաշեն) վերցված ջրային նմուշների գենոտոքսիկության և կլաստոգենության մակարդակների բիոթեստավորում Տրադեսկանցիայի 02 կլոնի առեջաթելերի մագիկների (ԱԹՄ) և միկրոկորիզային թեստ՝ համակարգերի կիրառմամբ: ԱԹՄ-ի բիոթեստի տվյալներն ուսումնասիրված բոլոր ջրային նմուշներում ցույց են տվել ծաղկման շրջանում սոմատիկ կետային մուտացիաների, անգույն մուտացիաների, ինչպես նաև անկենսունակ մագիկների քանակի հավաստի բարձրացում: Մաքսիմալ մակարդակի բարձրացում դիտվել է Լճաշենի հարակից տարածքի ջրային նմուշում: Նմանատիպ արդյունքներ դիտվել են նաև միկրոկորիզային թեստի

տվյալների ուսումնասիրության ժամանակ, հետազոտելով նրա երկու հիմնական թեստ-կրիտերիաները՝ միկրոկորիզներ պարունակող տետրադների տոկոսը և միկրոկորիզների տոկոսը տետրադներում:

Այսպիսով, կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ Սևանի լիմնոհամակարգը գտնվում է բնական և անթրոպոգեն գործոնների հզոր ազդեցության ներքո, ինչը լուրջ վերակառուցումներ է առաջացնում լճի կենսացենոզների կառուցվածքում:

### **«Փորձագիտական երկրաքիմիական քարտեզների մշակում կայուն գյուղատնտեսության զարգացման և սննդի անվտանգության ապահովման համար»**

Համակարգող՝ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն աշխ.գ.թ. Լ.Սահակյան

Իրականացվել է Արարատի մարզի ռեգիոնալ մասշտաբի հողային հանույթ՝ նմուշառվել է 84 նմուշ, որոնցում որոշվել են Cr, V, Ti, As, Zn, Cu, Co, Fe, Mn, Ba, Pb, Ni, K և Ca տարրերի պարունակությունները,  $\alpha$  և  $\beta$  ակտիվության ցուցանիշները: Ստեղծվել է տվյալների բազա և կատարվել է ուսումնասիրված ցուցանիշների քարտեզագրում: Արդյունքում հաստատվել է, որ ուսումնասիրված ցուցանիշների տարածաբաշխման դաշտերի ձևավորումը պայմանավորված է երկրաբանական հենքի առանձնահատկություններով և առկա աղտոտման աղբյուրների տեղադիրքով: ՀՀ-ում սահմանված ՍԹԽ նկատմամբ գերազանցումներ գրանցվել են As (նմուշների 98%) և Cr-ի (նմուշների 70%) դեպքում: Երեխաների առողջությանն ուղղված ոչ քաղցկեղածին և կյանքի տևողության քաղցկեղածին ռիսկեր դիտվել են միայն As-ի դեպքում՝ 2-ական տեղամասերում:

### **Գեոպարկը որպես տնտեսության կայուն զարգացման և բնապահպանության խթան Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում**

Համակարգող՝ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ ծրագրի ղեկավար Է.գ.դ. Ա.Ավագյան

Վերլուծվել է երկրատեղանքների (Geosite) ընտրության չափանիշների միջազգային, նաև ՀՀ առկա փորձը: Ընդհանրացնելով՝ որպես երկրաբանական հուշարձաններ ընտրվել են գիտական, ուսումնաճանաչողական, գեղագիտական և զբոսաշրջային նշանակության անկենդան բնության այն օբյեկտները, որոնք հազվագյուտ են, բարձրարժեք և դիտարժան:

Երկրատեղանքների դասակարգման համար ուսումնասիրվել են միջազգային և տեղական գրականության բազմաթիվ օրինակներ, և ՀՀ առաջին Գեոպարկի համար մշակվել է անձնագրավորման 11 պահանջից բաղկացած ձև, ինչպես նաև մասնակի և ընդհանրական գնահատման աղյուսակ: Գեոպարկում առաջարկվում է ընդգրկել տարածքներ հիմնականում Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերից: Հիմնական պատճառները երեքն են՝ ֆինանսավորման բազմապատիկ կրճատումը, հնարավորինս սահմանափակ տարածքի ընդգրկումը և պատերազմական գործողությունների հետևանքով նախատեսվող երկրատեղանքների սահմանային կամ մերձսահմանային տեղադիրքում հայտնվելը:

Աշխատանքների ընթացքում նպատակահարմար է դարձել ներառել փոքրիկ տարածքներ նաև Արարատի և Կոտայքի մարզերից, որը հնարավորություն է տվել, փոքր տարածք ավելացնելով, ընդգրկել հարակից տարածաշրջանային և միջազգային նշանակության օբյեկտներ: Այսպիսով, ՀՀ առաջին Գեոպարկն ընդգրկելու է մոտ 4400 կմ<sup>2</sup> տարածք, որը համապատասխանում է ՀՀ տարածքի 14.7%-ին, 102 համայնքի տարածք: Ռելիեֆը լեռնային



է և պարունակում է 1019-3595 մ բարձրությունները: Առկա է կլիմայական 6 ենթագոտի՝ սկսած չոր ցամաքայինից (տաք ամառ և ցուրտ ձմեռ) մինչև լեռնային տունդրա:

Առաջին տարվա ընթացքում հավաքված տվյալներն ընդգրկվել են Աշխարհագրական տեղեկատվական համակարգում որպես առանձին քարտեզներ:

Երկրատեղանքների ընտրությունը սկսվել է գոյություն ունեցող գրականության ուսումնասիրությամբ: Սկզբնական շրջանում ուսումնասիրվել են բնության և երկրաբանական հուշարձանների գոյություն ունեցող ցանկերը: Ամենակարևոր ներդրումը երկրատեղանքների ընտրության հարցում կատարել են հայ երկրաբանները՝ բազմամյա աշխատանքների արդյունքում:

Վերլուծելով հարուստ երկրաբանական ժառանգությունը, ինչպես նաև Գեոպարկերի միջազգային փորձը՝ առաջարկվել է ստեղծել ոչ թե ընդհանրական երկրաբանական հուշարձանների Գեոպարկ, այլ երկրաբանական վտանգներով մասնագիտացված: Հայկականը կառանձնանա նրանով, որ սահմանափակ տարածքում կունենա երկրաբանական վտանգների տարբեր ոլորտներին վերաբերող օրինակներ (երկրադինամիկա, ակտիվ տեկտոնիկա, հրաբխականություն, երկրաշարժագիտություն, շերտագրություն, ջրաերկրաբանություն և այլն): Այս հանգամանքը հայկական առաջին Գեոպարկին կտա բացառիկություն, առավել ևս, որ ընտրանքի արդյունքում կունենանք տարածաշրջանային և մի քանի միջազգային նշանակության երկրատեղանքներ:

Մինչ այժմ կատարվել է մոտ չորս տասնյակ երկրատեղանքի նախնական ընտրություն: 2020թ. ընթացքում ամբողջությամբ իրականացվել են նախատեսված տեղային աշխատանքները: Արտանիշ թերակղզում, Սևանա լճի արևելյան և արևմտյան ափագծի երկայնքով, Գավառագետի խզվածքի երկարությամբ, Սմբատասար, Վայոցսար, Խոնարհասար հրաբուխների և նրանց լավային հոսքերի տեղանքներում, Սուրբ Կարապետ վանքային համալիրի սողանքային տեղանքում, Հորբատեղում, Զանգակատանը:

**«Մեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական  
հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության  
խնդիրներն ու հեռանկարները»**

Համակարգող՝ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Շարունակվել է «Մեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» ծրագիրը, որի շրջանակներում, արտերկրի գործընկերների մասնակցությամբ, կազմակերպվել է երկու միջազգային սեմինար-քննարկում: Ստեղծվել է սփյուռքի տարբեր համայնքների փորձագետների մասնագիտական ցանց:

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

*Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Աղալովյան*  
*Գիտքարտուղար՝ Լ.Մարտիրոսյան*

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Մաթեմատիկայի, Մեխանիկայի, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտները, «Հիդրոմեխանիկայի և վիբրոտեխնիկայի բաժին» ՓԲԸ-ն:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 12 ակադեմիկոս, 7 թղթակից և 24 արտասահմանյան անդամներ, 5 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անց է կացվել բաժանմունքի 2 ընդհանուր ժողով (հեռավար):

Բաժանմունքի մայիսի 19-ի տարեկան ընդհանուր ժողովը քննարկել և հավանություն է տվել Լ.Աղալովյանի «Բաժանմունքի 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքները» հաշվետու զեկուցմանը: Լսվել է Ա.Պետրոսյանի «ASNET-AM ցանցի տեսակոնֆերանսների և հեռավար ուսուցման հարթակ» գիտական զեկուցումը:

Բաժանմունքի հուլիսի 2-ի ընդհանուր ժողովում քննարկվել է Մեխանիկայի ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի թեկնածուի հարցը: Բաժանմունքը թղթ. անդ. Ա.Ավետիսյանի և ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյանի թեկնածությունները ներկայացրել է ԳԱԱ նախագահության քննարկմանը: Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն է ընտրվել Վ.Ավետիսյանը:

Բաժանմունքն անց է կացրել բյուրոյի 11 նիստ, որոնցում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2020թ. աշխատանքային պլանը, 2020-21 ուստարվա ասպիրանտական տեղերի քանակն ու ըստ ինստիտուտների բաշխվածությունը, ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները, ասպիրանտների գիտական ղեկավարները և գիտական թեմաները, տարեկան հաշվետու ժողովի որոշման նախագիծը, 2021թ. համար ինստիտուտներին տրված բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման հարցերը, պետական նպատակային ծրագրերի հայտերը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Մեխանիկայի ինստիտուտի գիտական խորհրդի նոր կազմը, կառուցվածքը և անդամների քանակը: Հավանություն է տրվել բաժանմունքի կազմակերպությունների տարեկան հաշվետվություններին: Քննարկվել են գիտական կազմակերպությունների 2020թ. կարևորագույն արդյունքները, գիտակազմակերպական բնույթի այլ հարցեր:

Ըստ բաժանմունքի մասնագիտությունների հրատարակվել են հետևյալ գիտական հանդեսները՝ «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» (6 համար), «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» (4 համար), «ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ տեղեկագիր» (տեխնիկական գիտություններ սերիա, 4 համար), «Համակարգչային գիտության մաթեմատիկական խնդիրները» (2 համար), «Հայկական մաթեմատիկական հանդես» էլեկտրոնային ամսագիրը:

Բաժանմունքի ինստիտուտների գիտաշխատողները տպագրել են 162 հոդված (102-ն արտասահմանում), 10 թեզիս (7-ն արտասահմանում), 2 մենագրություն, 1 ժողովածու և 1 ուսումնական ձեռնարկ:

Բաժանմունքի ինստիտուտները կազմակերպել են 1 հանրապետական դասընթաց, միջազգային ֆինանսավորմամբ իրականացրել են 5 դրամաշնորհային ծրագիր:

Բաժանմունքի ինստիտուտների 1 աշխատակից պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ բաժանմունքի ինստիտուտների գիտական մասնագիտական խորհուրդներում՝ 1 թեկնածուական ատենախոսություն:

Դեկտեմբերին բաժանմունքի ինստիտուտներում առցանց անց են կացվել տարեկան

հաշվետու ժողովներ, որտեղ քննարկվել և հաստատվել են 2020թ. գործունեության մասին հաշվետվությունները: Մեխանիկայի ինստիտուտի գիտական կոլեկտիվի ժողովը որոշել է հատուկ ուշադրություն դարձնել երկրի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված խնդիրներին: Առաջարկվել է ստեղծել նոր՝ Ռոբոտատեխնիկայի և կառավարման համակարգերի բաժին:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարապուլյան  
Գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Վաղարշյան  
Էլեկտրոնային փոստ՝ [office@instmath.sci.am](mailto:office@instmath.sci.am)  
Կայքէջ՝ <http://math.sci.am/>

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հայտնաբերվել է կոմպլեքս բազմանդամների նոր հատկություն, որից մասնավորապես հետևում է, որ յուրաքանչյուր  $m$ -րդ կարգի  $P(z)$  մոնիկ բազմանդամի կամայական երեք տարբեր  $a$ -կորերից մեկի վրա կարելի է գտնել այնպիսի  $z^*$  կետ, որի համար  $P'(z^*) > C^* \sqrt{m}$ , որտեղ  $C^*$ -ը կորերից կախված հաստատուն է: Ապացուցվել է նաև գնահատականի ճշգրտությունը: Արդյունքները ներկայացվել են 2020թ. Լոնդոնի կոնֆերանսում (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Բարսեղյան):

Կոշիի տիպի  $K[u]$  ինտեգրալի ածանցյալների համար ներկայացվել են բանաձևեր, որոնք ողորկ են  $u$  ֆունկցիաների պոլիդիսկի սկելետոնի վրա: Այս բանաձևերն արտահայտում են  $K[u]$ -ի  $m$ -րդ կարգի ածանցյալներն ավելի ցածր կարգի ածանցյալների միջոցով: Նրանք օգտագործվում են գնահատելու համար Կոշիի տիպի ինտեգրալի ածանցյալների ողորկությունը Հյուդերի կարգի սանդղակի տերմիններով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Պետրոսյան):

Դիտարկվել է  $\overline{\partial} f = u$  հավասարումը կոմպլեքս հարթության  $\pi_+$  վերին կիսահարթությունում, որտեղ ֆունկցիա  $u$ -ն  $C^1(\pi_+)$ -ից է և տրված է, իսկ ֆունկցիա  $f$ -ը որոնվում է նույնպես  $C^1(\pi_+)$ -ում: Ենթադրելով, որ  $u$ -ն պատկանում է որոշակի կշռային  $L^p$ -դասերին ( $p \geq 1$ ), բացահայտ տեսքով կառուցվել է նշված  $\overline{\partial}$ -հավասարման լուծումների մի ամբողջ ընտանիք նույնպես  $L^p$ -դասերից, բայց այլ կշիռներով, ընդ որում  $f$ -ի կշռային նորմերը գնահատվում են  $u$ -ի կշռային նորմերի միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Կարապետյան):

Հետազոտվել է կիսահարթության դեպքում կառուցված Բյաշկեի արտադրյալների ինտեգրալային լոգարիթմական միջինների աճը: Ապացուցվել է նախապես տրված քանակական ինդեքս ունեցող Բյաշկեի արտադրյալների գոյությունը: Միավոր շրջանում հոլոմորֆ ֆունկցիաների որոշակի կշռային  $L^p$ -դասերի համար կառուցվել է Միտտագ-Լեֆլերի տիպի կորիզներով կշռային ինտեգրալ ներկայացումների մի ամբողջ ընտանիք (ղեկ.՝ Ֆ.Հայրապետյան):

Եռանկյունաչափական առաջին  $n$  ֆունկցիաների տեղափոխության մաժորանտ օպերատորի  $L^2$  նորմի համար ստացվել է  $\log^2 n$  գնահատականը, որը ճշգրիտ է: Հենվելով այդ արդյունքի վրա՝ ապացուցվել է Ուլյանովի հայտնի պայմանի անհրաժեշտությունը հաջորդականությանը եռանկյունաչափական համակարգի ոչպայմանական զուգամիտության Վեյլի բազմապատկիչ լինելու համար, որն էլ Ուլյանովի կողմից 1964թ. առաջադրված խնդրի լուծումն է ներքևից:

Մի շարք հայտնի հավանականային բնույթի անհավասարություններ (Ագումա-Հոեֆ-

դինգ, Զիգմունդ, Խինչին և այլն) ընդհանրացվել են ընդհանուր մուլտիպլիկատիվ համակարգերի համար: Ներկայացվել է մոտեցում, որը թույլ է տալիս նմանատիպ շատ անհավասարություններ հանգեցնել Ռադեմախերի համակարգի դեպքին (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարագուլյան):

Ուսումնասիրվել են պատահական դաշտերը նկարագրող պայմանական հավանականությունների տարբեր համակարգեր, դրանց հատկությունները և ցույց է տրվել, որ Գիբսյան ներկայացումը համընդհանուր է նման համակարգերի համար: Շարունակվել է դասական վիճակագրական ֆիզիկայի անվերջ կավարային համակարգերի ուսումնասիրությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Խաչատրյան):

Ապացուցվել է Մաքս Նյոթերի ֆունդամենտալ թեորեմը և Քելի-Բախարախի թեորեմը, որտեղ պատիկությունները նկարագրվում են մասնական դիֆերենցիալ օպերատորներով:

GC<sub>n</sub> բազմությունների համար սահմանվել է ըստ ուղիղի իջեցման հասկացությունը, որի օգնությամբ բնութագրվել է ուղիղն օգտագործող հանգույցների բազմությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Հակոբյան):

Հիլբերտի չորրորդ պրոբլեմի ոգով քննարկվել է այն հարցը, թե երբ բուֆֆոնյան ֆունկցիոնալները կարելի է շարունակել մինչև չափ, իսկ համապատասխան սեպային ֆունկցիաները սարքել մետրիկաներ: Ապացուցվել է թեորեմ, որ դրա համար անընդհատությունը և ադիտիվությունը բավարար չեն, անհրաժեշտ են նաև երկու տիպի տետրաէդրիկ անհավասարություններ, որոնք համանման են եռանկյան անհավասարությանը հարթ դեպքում: Նույնպես ապացուցվել է թեորեմ, որ իզոտրոպ չափերի դեպքում սեպի ֆունկցիաները կարելի է ֆակտորիզացնել՝ առանձնացնելով կողի երկարությունը որպես անկախ բազմապատկիչ (դեկ.՝ ալ. Ռ.Համբարձումյան):

Շարունակվել է Գիբսիյան պատահական դաշտերի ընդհանուր տեսության կառուցման աշխատանքը՝ հիմնվելով նախկինում առաջարկված Համիլտոնյան աքսիոմատիկ սահմանման վրա: Ապացուցվել է Դոբրուշինի թեզը, որ բոլոր պատահական դաշտերի պայմանական բաշխումները ներկայացվում են Գիբսի տեսքով:

Շարունակվել է պատահական դաշտերը նկարագրող պայմանական հավանականությունների տարբեր համակարգների ուսումնասիրությունը: Հրապարակման է պատրաստվել «Description of random fields by systems of conditional distributions» հոդվածը:

Հ.Ցեսինի հետ համատեղ շարունակվել են հետազոտվել լոկալ վերջավոր չափով օժտված տարածությունների վրա պատահական կետային պրոցեսների կառուցման ու միակության հարցերը: Զույգ պոտենցիալի վրա դնելով բավականին ընդհանուր սահմանափակումներ՝ կառուցվել է սահմանային դաշտ  $P$ , այդ պրոցեսի կորելյացիոն ֆունկցիաների համար ստացվել է ներկայացում Ուրսելլի կորիզի օգնությամբ:

Նաև ապացուցվել է, որ եթե գոյություն ունի պրոցես, որը Գիբսյան պատահական պրոցես է Դոբրուշին-Լանֆորդ-Ռյուելի իմաստով, ապա այն համընկնում է  $P$ -ի հետ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ս.Պողոսյան):

Առաջարկվել է երկչափ անընդհատ ֆունկցիայի կտոր առ կտոր մոտարկման ավտոմատիկ կառուցման ալգորիթմ վատագույն հատվածի տրոհման միջոցով: Ալգորիթմը մինիմիզացնում է մոտարկման սխալը ցանցային հանգույցների տրված թվի դեպքում: Ուսումնասիրվել են առաջարկվող մեթոդի կիրառման հնարավորությունները եզրային խնդիրներ լուծելիս: Ապացուցվել է թեորեմ, որը տալիս է բավարար պայման եզրային խնդրի համար, որպեսզի օպտիմալ ցանց լինի Դելոնեի տրիանգուլյացիան (դեկ.՝ տեխ.գ.դ. Հ.Սուքիասյան):

Հետազոտվել են հարթության վրա ուռուցիկ տիրույթում երկու պատահական կետերի հեռավորության բաշխման պայմանական մոմենտները: Տրվել է  $Rn$ -ում գծային-ադդիտիվ մետրիկաների նկարագրություն: Հետազոտվել են Ռադոնի ձևափոխության սֆերիկ միջինով մոմենտների վերականգնման հարցերը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ռ.Արամյան):

Ուսումնասիրվել է ֆունկցիայի մոտարկման խնդիրն իր վերջավոր քանակությամբ Ֆուրիեի գործակիցներով: Քանի որ դասական Ֆուրիեի շարքերի զուգամիտության վատ որակը հայտնի է ոչ պարբերական ֆունկցիաների դեպքում, դիտարկվել է զուգամիտության շտկման հնարավորությունը քվադր-պարբերական մոտարկման կիրառմամբ: Դիտարկվել են տարբեր ալգորիթմներ, որոնցից մեկն առանձնապես կարևոր է, քանի որ հնարավորություն է տալիս համարյա բացահայտ ներկայացման՝ Վանդերմոնդի մատրիցի հակադարձի տերմիններով գրված: Դա տալիս է ալգորիթմի արդյունավետ իրականացման և զուգամիտության ուսումնասիրման հնարավորություն (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Պոդոսյան, ֆ.-մ.գ.թ. Լ.Պոդոսյան, ֆ.-մ.գ.թ. Ռ.Բարխուդարյան):

Կրկնակի խոչընդոտով խնդրի համար վերջավոր տարբերությունների հիման վրա կառուցվել է թվային լուծման մեթոդ: Դիտարկվել է թվային լուծման գոյությունը, միակությունը և կայունությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Բարխուդարյան):

Ուսումնասիրվել են դասական Ֆուրիեի գործակիցներով (դիսկրետ) իրականացվող որոշ մոտարկումներ (ինտերպոլիացիաներ), որտեղ վերլուծությունները գրված են ոչ թե դասական եռանկյունաչափական, այլ վերջիններիս նկատմամբ բիրթոթոգնալ համակարգերով՝ հետաքրքիր հատկություններով (դեկ.՝ ալ. Ա.Ներսեսյան):

Նկարագրվել է համարյա հիպոէլիպտական օպերատորների մի դաս, որոնց սիմվոլներն անվերջ աճում են արգումենտի մոդուլի աճմանը զուգընթաց: Դիֆերենցիալ օպերատորների սիմվոլների հզորության և ուժի (ըստ Լ.Ջոռմանդերի) համեմատության տերմիններով ապացուցվել է որոշակի դասի օպերատորների կշռային հիպերբոլականությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Հ.Ղազարյան):

Կառուցվել է կիսահարթության մեջ դիտարկվող մի երկչափ էլիպտական հավասարման համար Դիրիլյեի խնդրի բացահայտ լուծումը Սոբոլևի տարածությունում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Քամայան):

Զարգացվել են փաթեթի առաջին սեռի ինտեգրալ հավասարումների լուծման ու դասակարգման որոշ մոտեցումներ: Զարգացվել են գծային հանրահաշվական համակարգերի լուծման նոր խնայողական ալգորիթմներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ն.Ենգիբարյան):

Հետազոտվել են մոնոտոն ոչ գծայնությամբ ինտեգրալ և ինտեգրադիֆերենցիալ հավասարումների տարբեր դասեր: Ստացվել են դիտարկվող հավասարումների լուծելիության բավարար պայմաններ, ուսումնասիրվել են լուծումների հատկությունները: Արդյունքները կիրառվել են ք-ադիկ բաց և փակ լարերի դինամիկ տեսության խնդիրներում (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Խ.Խաչատրյան):

Հետազոտվել է կոնսերվատիվ դեպքում Վիներ-Հոպֆի համասեռ բազմապատիկ հավասարումը, գտնվել է Պայերլսի համասեռ հավասարման լուծման ասիմպտոտիկ վարքը: Կառուցվել է վոլտերյան ֆակտորիզացիա Վիներ-Հոպֆի առաջին սեռի սիմետրիկ կորիզով ինտեգրալ օպերատորների մի դասի համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Լ.Արաբաջյան):

Հետազոտվել են համաճարակի տարածաժամանակային տարածման մաթեմատիկական տեսության ստույգ խնդիրներում առաջացող ոչ գծային ինտեգրալ հավասարումներ: Ապացուցվել են գոյության և միակության կոնստրուկտիվ թեորեմներ (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Խաչատրյան):

Ստացվել է 2 նոր օսցիլյացիոն թեորեմ գծային համիլտոնյան համակարգերի համար: Ստացվել են նոր կայունության թեորեմներ երկրորդ կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների համար (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Գրիգորյան):

Զարգացվել է փաթեթի տիպի ինտեգրալ հավասարումների լայն դասերի թվային-անալիտիկ լուծման հորիզոնական շերտերի մեթոդը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Բարսեղյան):

Շարունակվել է կրկնակի շարքերի միջոցով քվադրպարբերական ֆունկցիաների ներկայացումների ուսումնասիրությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Գ.Ավանեսյան):

## **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«Նոսր օպերատորներ և Ֆուրիեի շարքերի զուգամիտության որոշ հարցեր» թեմայի շրջանակներում ուսումնասիրվել են նոսր տիպի օպերատորների կշռային գնահատականները: Գնդային բազիսներով օժտված տարածություններում դիտարկվել են նոր good- $\lambda$  տիպի գնահատականներ ընդհանուր չափելի ֆունկցիաների զույգերի համար: Գտնվել է ընդհանուր պայման, որը երկու չափելի ֆունկցիաների համար ապահովում է այս կամ այն good- $\lambda$  տիպի անհավասարություն:

Ուսումնասիրվել են Հաարի ենթահամակարգ հանդիսացող ազաի բազիսներին վերաբերող որոշ հաստատունների գնահատականներ: Ուսումնասիրվել է միավորի մոտարկումով ինտեգրալ օպերատորների  $\lambda$ -զուգամիտության խնդիրը չափով օժտված քվադրատիկական տարածություններում (համասեռ տարածություններ):  $1 \leq p < \infty$  ցուցիչների համար գտնվել է այն օպտիմալ տիրույթը, որին համապատասխան մաքսիմալ ֆունկցիան սահմանափակ է  $L_p$  տարածություններում: Ելնելով այդ գնահատականներից՝ գտնվել են այն ճշգրիտ  $\lambda$ -ֆունկցիաները, որոնք ապահովում են նման ինտեգրալ օպերատորների համարյա ամենուրեք  $\lambda$ -զուգամիտությունը (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Գ.Կարապոյան):

## **Հրապարակումներ**

### ***Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր***

1. Poghosyan S., Rafter M., Røelly S.(eds), Proceedings of the XI international conference Stochastic and Analytic Methods in Mathematical Physics, “Lecture Notes in Pure and Applied Mathematics”, Potsdam University Press 2020, 208 pp.

### ***Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ***

2. Նահապետյան Բ.Ս., Արրահամյան Ա.Ս., Մաթեմատիկա 6. հիմնական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Ե., «Մանար» հրատ., 2020, 223 էջ:
3. Шлапунов А.А., Ермилов И.В., Мкртчян А.Д., Задачи по функциональному анализу, часть 1, Красноярск, Сиб. федер. ун-т, 2019, 55 с.

### ***Հոդվածներ, զեկուցումներ***

4. Айрапетян Ф.В., Весовые интегральные представления голоморфных функций в единичном круге посредством ядер Миттаг-Леффлера, Ер., “Известия НАН Армении. Математика”, т. 55, N4, 2020, с.15-30.
5. Арабаджян Л.Г., Арабаджян Г.Л., О нетривиальной разрешимости кратного однородного уравнения Винера-Хопфа в консервативном случае и об уравнении Пайерлса, М., “Теоретическая и математическая физика”, т. 204, N 1, 2020, с. 142-150.
6. Арамян Р.Г., Описание линейно-аддитивных метрик в  $R^n$ , “Тр. Моск. мат. общ.”, т. 81(10), 2020, с. 135-143.
7. Карагулян Г.А., Сингулярные интегралы в абстрактных пространствах с мерой, Тр. XX межд. Саратовской зимней школы “Современные проблемы теории функций и их приложения”, Саратов, 2020, с.25-29.
8. Карагулян Г. А., О множителях Вейля переставленной тригонометрической системы, М., “Математический сборник”, т. 211, N 12, 2020, doi:10.1070/SM9422.
9. Карагулян Г.А., Точная оценка нормы мажоранты переставленной тригонометрической системы, М., “Успехи математических наук”, т. 75, N 3, 2020, с. 183-184.
10. Мелконян Т.Р., Сукиасян Г.С., О кусочно-линейной аппроксимации двумерной функции методом деления худшего отрезка, Ер., “Изв. НАН Армении. Технические науки”, т. 73, N 1, 2020, с. 28-38.
11. Хачатрян Х.А., Существование и единственность решения одной граничной задачи для интегрального уравнения свертки с монотонной нелинейностью, М., “Изв. РАН. Серия математическая”, т. 84, в. 4, 2020, с. 198-207.
12. Хачатрян Х.А., О разрешимости нелинейных граничных задач для сингулярных интегральных уравнений типа свертки, М., “Труды ММО”, т. 81, в. 1, 2020, с. 3-40.

13. Хачатрян Х.А., Петросян А.С., О разрешимости одной нелинейной задачи в  $p$ -адической теории открыто-замкнутой струны, М., "Дифференциальные уравнения", т. 56, N 10, 2020, с. 1402-1408.
14. Хачатрян Х.А., Петросян А.С., Об одном классе интегральных уравнений с выпуклой нелинейностью на полуоси, Ер., "Изв. НАН Армении. Математика", т. 55, N 1, 2020, с. 57-71.
15. Ambartzumian R., Continuity of Buffon functionals in the space of planes, Ер., "Известия НАН Армении. Математика", т. 55, N 6, 2020, с.10-22.
16. Aramyan R., Mnacakanyan V., Conditional moments of the distribution of the distance of two random points in a convex domain in  $R^2$ , Proceedings of the YSU, Physical and Mathematical Sciences, v. 54, N 1, 2020, pp. 8-12.
17. Aramyan R., Mnatsakanov R., To recovering the moments from the spherical mean Radon transform, Journal of Mathematical Analysis and Applications, v. 490, 2020, article 124334.
18. Aramyan R., Yeranyan D., Chord length distribution and the distance between two random points in a convex body in  $R^n$ , The General Letters in Mathematics, v. 9, issue 2, 2020, pp 3-9.
19. Barkhudaryan R., Gomes D., Salehi M., Shahgholian H., System of variational inequalities with interconnected obstacles, Applicable Analysis, 2020, pp. 1-25.
20. Barsegian, G., A new property of arbitrary complex polynomials, CAvid: Complex Analysis video seminar, London, UK, 2020.
21. Bunarjyan T., Harutyunyan A., Poghosyan A., Vinck A.J., Chen Y., Hovhannisyan N., Estimating efficient sampling rates of metrics for training accurate machine learning models, Proceedings from the 2nd Codassca Workshop, Armenia, 2020, pp. 143-151. Logos Verlag Berlin, ISBN 978-3-8325-5141-4.
22. Ghazaryan H., Margaryan V., Hyperbolicity with Weight of Polynomials in Terms of Comparing Their Power, Eurasian Mathematical Journal, v. 11, N 2, 2020, pp. 40-51.
23. Grigorian G., Oscillation Criteria for Linear Matrix Hamiltonian, Proceedings of the American Mathematical Society, v. 148, 2020, pp. 3407-3415.
24. Grigorian G., Stability Criteria for Second Order Linear Ordinary Differential Equations, Sarajevo Journal of Mathematics, v. 16 (29), N 1, 2020, pp. 123-135. DOI: 10.5644/SJM.16.01.09,
25. Hakopian H., Vardanyan N., On the basic properties of  $GC_n$  sets, accepted in Journal of Knot Theory and Its Ramifications, Cornell University, Mathematics, Combinatorics, v.1, pp.1-26, arxiv.org.>math.>arxiv: 2001.05306
26. Hakopian H., Vardanyan N., On the Noether and the Cayley-Bacharach theorems with PD multiplicities, Journal of Contemporary Mathematical Analysis, v. 55, N 3, 2020, pp. 156-165.
27. Hakopian H., Vardanyan V., On the usage of lines in  $GC_n$  sets, Advances in Computational Mathematics, 45, 2020, pp. 311-325.
28. Harutyunyan A., Grigoryan N., Poghosyan A., Dua S., Antonyan H., Aghajanyan K., Zhang B., Intelligent troubleshooting in data centers with mining evidence of performance problems, Proceedings from the 2nd Codassca Workshop, Armenia, 2020, pp. 169-180. Logos Verlag Berlin, ISBN 978-3-8325-5141-4.
29. Harutyunyan A., Grigoryan N., Poghosyan A., Fingerprinting data center problems with association rules, Proceedings from the 2nd Codassca Workshop, Armenia, 2020, pp. 159-168. Logos Verlag Berlin, ISBN 978-3-8325-5141-4.
30. Hovakimyan G., Yengibaryan N., Hovakimyan T., Chang A., Nonlinear Compensation for High Speed Analog to Digital Converter, Proceedings of 12MTC2020 (12-International Instrumentation and Measurement Technology Conference 2020)", 6 pages.
31. Kamalyan A., Karakhanyan M., On solvability of some boundary problem, Proceedings of the YSU, Physical and Mathematical series, v. 54, N 1, 2020, pp. 29-34.
32. Karagulyan G., Lacey M., On logarithmic bounds of maximal sparse operators, Mathematische Zeitschrift, v. 294, N 3-4, 2020, pp. 1271-1281.
33. Karagulyan G., Menshov type correction theorems for sequences of compact operators, Constructive Approximation, v. 51, N 2, 2020, pp. 331-352.
34. Karagulyan G., On systems of non-overlapping Haar polynomials, Arkiv för Matematik, v. 58, N 1, 2020, pp. 121-131.
35. Kazaryan G., Margaryan V., On Smooth Solutions of a Class of Almost Hypoelliptic Polynomials, Journal of Contemporary Mathematical Analysis, v. 45, N 4, 2020, pp. 347-257.
36. Khachatryan A., Khachatryan Kh., On solvability of one infinite system of nonlinear functional equations in epidemic, Eurasian Mathematical Journal, v. 11, N 2, 2020, pp. 52-64.

37. Khachatryan A., On Solvability of One Nonlinear Integral Equation Arising in Modelling of Geographical Spread of Epidemics, Springer Proceedings in Mathematics & Statistics, v. 2, 2020 (accepted).
38. Khachatryan Kh., Petrosyan H., On the Solvability of a Class of Nonlinear Hammerstein–Stieltjes Integral Equations on the Whole Line, Proceedings of the Steklov Institute of Mathematics, v. 308, 2020, pp. 238-249.
39. Khachatryan Kh., Andriyan S., On Solvability of one Class of Nonlinear Integral Equations on Whole Line with Two Monotone Nonlinearities, p-Adic Numbers, Ultrametric Analysis and Applications, 12:4, 2020, pp. 259-275.
40. Khachatryan Kh., Andriyan S., On the Solvability of a Class of Discrete Matrix Equations with Cubic Nonlinearity, Ukrainian Mathematical Journal, v. 71, N 12, 2020, pp. 1910-1928.
41. Khachatryan Kh., Narimanyan A., Khachatryan A., On Mathematical Modelling of Temporal Spatial Spread of Epidemics (France), Mathematical Modelling of Natural Phenomena, v. 15, N 6, 2020, pp. 1-14.
42. Khachatryan L., Nahapetian B., On direct and inverse problems in the description of lattice random fields, Proceedings of the XI international conference stochastic and analytic methods in mathematical physics, Lectures in pure and applied mathematics 6, Universitätsverlag Potsdam, 2020, pp. 107-116.
43. Mikayelyan G., Hayrapetyan F., Blaschke products of given quantity index for a half-plane, Armenian Journal of Mathematics, v. 12, N 2, 2020, pp.1-8.
44. Petrosyan, A., On the Derivatives of Cauchy-Type Integrals in the Polydisk, Journal of Contemporary Mathematical Analysis, v. 55, 2020, pp. 303–306.
45. Poghosyan A., Poghosyan L., Barkhudaryan R., On some quasi-periodic approximations, Armenian Journal of Mathematics, v. 12, N 10, 2020, pp. 1-27.
46. Poghosyan A., Harutyunyan A., Grigoryan N., Kushmerick N., Learning data center incidents for automated root cause analysis, Proceedings from the 2nd Collaborative Technologies and Data Science in Artificial Intelligence Applications (Codassca) Workshop, Armenia, 2020, pp. 181-190. Logos Verlag Berlin, ISBN 978-3-8325-5141-4.
47. Poghosyan A., Harutyunyan A., Grigoryan N., Pang C., Oganessian G., Ghazaryan S., Hovhannisyan N., W-TSF: Time series forecasting with deep learning for cloud applications, Proceedings from the 2nd Codassca Workshop, Armenia, 2020, pp. 152-158. Logos Verlag Berlin, ISBN 978-3-8325-5141-4.
48. Poghosyan S., Zessin H., Construction of limiting Gibbs processes and the uniqueness of Gibbs processes, Proceedings of the XI international conference Stochastic and Analytic Methods in Mathematical Physics, Lectures in Pure and Applied Mathematics, v. 6, Potsdam University Press, 2020, pp. 55-64.
49. Sukiasyan H., Melkonyan T., Semi-recursive algorithm of piecewise linear approximation of two-dimensional function by the method of worst segment dividing, Proceedings of the XI international conference Stochastic and Analytic Methods in Mathematical Physics, Lectures in Pure and Applied Mathematics, v. 6, Potsdam University Press, 2020, pp. 35-44.

## ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Ավետիսյան  
 Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան  
 Գլխաբարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Դաշտոյան  
 Էլեկտրոնային փոստ՝ mechins@sci.am  
 Կայքէջ՝ www.mechins.sci.am

**Մասնագիտական խորհուրդ 047՝ «Մեխանիկա»**

Նախագահ՝ ակ. Լ.Աղալովյան, գլխաբարտուղար՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Խաչատրյան

**Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Ընդհանրացված ֆունկցիաների բարդ մաթեմատիկական ապարատի կիրառմամբ մշակվել է մասնիկներով ուժեղացված բաղադրյալ նյութերի մեզոմասշտաբ մոդել, որը թույլ



է տալիս հետագոտել այդպիսի նյութերի լարվածադեֆորմացիոն վիճակը՝ բացահայտորեն կախված մասնիկների բաշխումից ու նյութի հատկություններից : Մշակված մոդելը կարելի է օգտագործել՝ ըստ մասնիկների բաշխման և նյութի հատկությունների կառուցվածքի օպտիմալացման խնդիրներ լուծելիս: Աշխատանքը կիրառելի է նաև նոր հատկություններով օժտված նյութերի նախագծման և նոր տեխնոլոգիաներով ադիտիվ մշակման ոլորտներում (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Խուրշուդյան):

Ընդհանրացվել է նյութոնյան համաշխարհային ձգողականության ուժը: Ցույց է տրվել, որ համապատասխան պոտենցիալ դաշտն ավելի հզոր է, քան նյութոնյանը: Կապ է հաստատվել Սև խոռոչների գոյության հետ, ցույց է տրվել, որ նրանց գրավիտացիոն շառավիղը կարող է լինել ցանկացած անգամ մեծ, քան նյութոնյանը, իսկ Սև խոռոչի խտությունը շատ ավելի փոքր, քան նյութոնյանը (դեկ.՝ ալ. Լ.Աղալովյան):

Հակահարթ, հարթ և առանցքահամաչափ դեֆորմացիաների պայմաններում հետազոտվել են միջֆազային ճաքերի, միջֆազային ներդրակների, դրոշմների տիպի լարումների կենտրոնացուցիչների և համասեռ ու կտոր առ կտոր համասեռ առաձգական հարթության, կիսահարթության և տարածության տիպի դեֆորմացվող հոծ մարմինների փոխազդեցության էֆեկտները: Մեխանիկական հիմնական բնութագրիչների համար ստացվել են բավականաչափ պարզ կառուցվածքի անալիտիկ բանաձևեր, բացահայտվել են դրանց փոփոխման օրինաչափությունները (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հակոբյան):

Դիտարկվել են շերտավոր կառուցվածքով կավային գրունտե զանգվածի սահքի գազաթնակետային դիմադրության որոշ խնդիրներ: Տեսականորեն ցույց է տրվել, որ երբ սահքի լարումներն ազդում են շերտավորությանն ուղղահայաց, ապա զանգվածի ամրության սպառումը տեղի է ունենում սահքի ավելի փոքր լարումների դեպքում, քան դրա առանձին շերտերի սահքի գազաթնակետային դիմադրությունների գումարային մեծությունն է (միտված է սողանքավտանգ լանջերի կայունության հաշվարկման բանաձևերի ճշգրտմանը) (դեկ.՝ ե.գ.դ. Ս.Հայրոյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Հետազոտվել է Ռելեյի և Գուլյան-Բյուստեյնի էլեկտրաառաձգական տեղայնացված ալիքների խաչասերումը երկու պլեզոէլեկտրիկների անհպում կապի հարթությունում: Ցույց է տրվել, որ մի պլեզոէլեկտրիկի ազատ եզրում հարուցելով Գուլյան-Բյուստեյնի տեղայնացված էլեկտրաառաձգական սահքի ալիք՝ կարելի է գրգռել Ռելեյի տեղայնացված հարթ դեֆորմացիայի էլեկտրաառաձգական ալիք մյուս պլեզոէլեկտրիկում և հակառակը: Ցույց է տրվել նաև, որ սահմանակցող պլեզոէլեկտրիկ նյութերի համապատասխան ընտրությամբ կարող է բերել անհպում կապի հարթության մոտ էլեկտրաառաձգական ալիքների էներգիայի տեղայնացման մեծացմանը կամ թուլացմանը: Բացահայտվել է, որ մի պլեզոէլեկտրիկում հարուցված ոչ ռեզոնանսային հաճախականությամբ ալիքը կարող է առաջացնել ներքին ռեզոնանս կամ արգելված հաճախականությունների գոտի: Կատարվել է ստացված արդյունքների համեմատական վերլուծություն շերտերից մեկն ու մեկում պլեզոէլեկտրական հատկության բացակայության դեպքերի հետ (դեկ.՝ թղթ. անդ. Ա.Ավետիսյան):

Ուսումնասիրվել է ինչպես ջերմային դաշտի, այնպես էլ գազի գերձայնային հոսանքի արագության և աերոդինամիկական ճնշման ազդեցությունը գլանային թաղանթի աերոառաձգական տատանումների բնութագրիչների վարքի վրա: Դիտարկվել են աերոջերմաառաձգական համակարգի զրգրված և չզրգրված վիճակները: Չզրգրված վիճակի համար ստացվել է աերոջերմաառաձգական կայունությունը բնութագրող գծային դիֆերենցիալ հավասարումների համակարգ: Հաշվի են առնվել երկու տեսակի սահմանային պայմաններ՝ եզրերն անշարժ ամրացված են ուղղահայաց ուղղությամբ ու կարող են ազատորեն շարժվել

առանցքի երկայնքով, և եզրերը հոդակապորեն ամրացված են ու անշարժ: Ցույց է տրվել, որ երբ եզրերն ազատ են, կայուն ջերմային դաշտը չի ազդում շրջհոսման կրիտիկական արագության արժեքի վրա: Կախված ալիքային թվից՝ կրիտիկական արագությունն ունի մինիմումի կետ, ջերմային դաշտի փոփոխականությունն էականորեն ազդում է կրիտիկական արագության արժեքի վրա (այն մեծանում է), և այդ ազդեցությունն աճում է ալիքային թվի մեծացմանը զուգընթաց: Կրիտիկական արագությունը, որպես ֆունկցիա ալիքային թվից, ունի մինիմումի կետ, որը կախված է ջերմաստիճանի դաշտի գրադիենտից: Ջերմային դաշտի հաստատուն բաղադրիչը զգալի ազդեցություն ունի ուսումնասիրված համակարգի կայունության վրա: Դրական ջերմաստիճանը նեղացնում է կայունության տիրույթը և նվազեցնում կրիտիկական արագության արժեքը (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Մ.Միկիլյան):

Հետազոտվել է երկու տարբեր կիսահարթություններից կազմված կտոր առ կտոր համասեռ հարթության հարթ դեֆորմացիոն վիճակը, երբ այն կիսահարթությունների միացման գծի երկայնքով պարունակում է վերջավոր քանակությամբ վերջավոր բացարձակ կոշտ ներդրակների և ճաքերի համակարգեր և դեֆորմացվում է ներդրակների վրա գործող ժամանակի ընթացքում հարմոնիկ օրենքով փոփոխվող կենտրոնացված և ճաքերի ափերին գործող ստատիկ բեռների ազդեցության տակ: Կատարվել է թվային հաշվարկ, երբ բաղադրյալ հարթությունը պարունակում է մեկ միջֆազային վերջավոր ճաք և մեկ բացարձակ կոշտ ներդրակ: Պարզվել են ճաքի բացվածքի ամպլիտուդի, ներդրակի երկար կողմերին գործող կոնտակտային լարումների թռիչքների ամպլիտուդների և ճաքի ծայրակետերում քայքայող լարումների ինտենսիվության գործակիցների փոփոխման օրինաչափությունները՝ կախված ստիպողական տատանումների հաճախականությունից:

Հետազոտվել է միևնույն հաստության երկու տարբեր շերտերի հաջորդաբար միացումից ստացված կտոր առ կտոր համասեռ տարածության առանցքահամաչափ լարվածային վիճակը, երբ այն տարասեռ շերտերից մեկի միջին հարթությունների մեջ պարունակում է զուգահեռ դրամաձև ճաքերի պարբերական համակարգ, իսկ մյուսի միջին հարթությունների մեջ՝ բացարձակ կոշտ դրամաձև ներդրակներ: Ստացվել են պարզ բանաձևեր քայքայող լարումների ինտենսիվության գործակիցների և ճաքերի բացվածքի որոշման համար: Պարզվել են ճաքերի բացվածքների, քայքայող լարումների ինտենսիվության գործակիցների, ինչպես նաև ներդրակների տակ գործող նորմալ և շոշափող կոնտակտային լարումների փոփոխման օրինաչափությունները՝ կախված խնդրի ֆիզիկամեխանիկական հատկություններից ու երկրաչափական բնութագրիչների փոփոխությունից (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Վ.Հակոբյան):

## **Հրապարակումներ**

### ***Հոդվածներ, գեկուցումներ***

1. Հայրոյան Ս.Հ., Շերտավոր կառուցվածքով գրունտների սահքի գազաթնակետային դիմադրության որոշ հարցեր, Ե., «ԵՊՀ գիտական տեղեկագիր. երկրաբանություն և աշխարհագրություն», N 54(1), 2020, էջ 11-16:
2. Պողոսյան Մ.Զ., Թարվերդյան Հ.Պ., Սարգսյան Մ.Զ., Գրիգորյան Ա.Լ., Միջանկյալ շրջագծով ամրակցված հոծ կլոր սալի կայունությունը, որը ենթարկված է եզրագծով հավասարաչափ բաշխված շառավղային սեղմող ուժերի ազդեցությանը, Ե., ՃՀՀԱՀ Գիտական աշխատություններ, N IV (65), 2020, էջ 71-78:
3. Аветисян А.С., Белубеян М.В., Казарян К.Б., Электро-магнито-упругие волны типа Рэлея в пьезоэлектрической среде гексагональной симметрии класса 6mm, Ер., “ДНАН Армении”, т. 120, N 3, 2020, с. 164-173.
4. Агаловян Л.А., О свойствах гравитационного поля, обусловленного обобщенно-ньютоновой силой всемирного тяготения, Ер., “ДНАН Армении”, т. 120, N 2, 2020, с. 136-145.
5. Агаловян М.Л., Геворкян Р.С., Закарян Т.В., Об одной динамической смешанной задаче двуслойной

ортотропной пластинки, Ер., “ДНАН Армении”, т.120, N 4, 2020, с.1-12.

6. Агаян К.Л., Дифракция сдвиговых плоских волн на полубесконечной трещине в составном упругом полупространстве, Ер., “Изв. НАН Армении. Механика”, 73, N 1, 2020, с. 22-34, <http://doi.org/10.33018/73.2.2>.
7. Акопян В.Н., Акопян Л.В., Контактная задача для однородной плоскости с трещиной, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 73, N 4, 2020, с. 4-14.
8. Акопян В.Н., Даштоян Л.Л., Амирджанян А.А., Плоско-деформированное состояние упругой составной плоскости с межфазными трещинами и включениями под воздействием динамических нагрузок, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т.73, N 3, 2020, с. 3-23.
9. Акопян Л.В., Амирджанян А.А., Саакян А.В., Влияние колеблющегося на границе упругой полуплоскости жесткого штампа на напряженное состояние вокруг внутреннего жесткого тонкого включения. Тр. XX межд. конф. “Современные проблемы механики сплошной среды”, Ростов-на-Дону, 2020, с. 8.
10. Амирджанян А.А., Белубекян М.В., Геворгян Г.З., Дарбинян А.З., Распространение поверхностных волн в составной полуплоскости, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 73, N 1, 2020, с. 23-29.
11. Амирджанян А.А., Белубекян М.В., Геворгян Г.З., Дарбинян А.З., Волны типа Лява в системе жидкий слой-полупространство, Тр. XX межд. конф. “Современные проблемы механики сплошной среды”, Ростов-на-Дону, т. 1, 2020, с.34-38.
12. Амирджанян А.А., Белубекян М.В., Геворгян Г.З., Дарбинян А.З., Распространение поверхностных волн в составной полуплоскости, “Изв. НАН Армении. Механика”, т. 73, N 1, 2020, с. 23-29.
13. Багдасарян Г.Е., Флаттер композиционной слоистой цилиндрической оболочки при больших сверхзвуковых скоростях, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 73, N 1, 2020, с. 30-40, <http://doi.org/10.33018/73.1.3>.
14. Багдасарян Г.Е., Устойчивость композиционной слоистой цилиндрической оболочки в сверхзвуковом потоке газа, Ер., “ДНАН Армении”, т. 120(2), 2020, с.115-123.
15. Белубекян В.М., Белубекян М.В., Гараков В.Г., Условие появления волны Гуляева-Блюстейна с учетом нестационарности электрического поля, Ер., “ДНАН Армении”, т. 120, N 3, 2020, с. 174-180.
16. Белубекян М.В., Григорьев Ю.М., Саркисян С.В., Николаева Е., Локализованные волны в слое с нагруженной инерционной массой на основе упрощенной модели Коссера, Ер., “ДНАН Армении”, т. 120, N 4, 2020, с.15-21.
17. Белубекян М.В., Саакян С.Л., Резонансные явления в плоских волноводах в зависимости от краевых условий, Ер., “Вестник ЕГУ”, т. 54, N 1, 2020, с. 44-49.
18. Ванцян А.А., Некоторые рассуждения о моделях проникания, Ер., “Вестник НПУА. Механика, Машиноведение, Машиностроение”, N 1, 2020, с. 29-36.
19. Варданян Е.В., Мхитарян С.М., Саруханян А.А., О решении плоской задачи Ламба для полуплоскости, Ер., “ДНАН Армении”, т. 120, N 4, 2020, с. 277-288.
20. Григорян А.А., Смешанная задача для равномерно кусочно-однородной плоскости с периодической системой полубесконечных межфазных трещин, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т. 73, N 4, 2020, с. 4-13.
21. Гулгазарян Л.Г., Амбарцумян П.Р., Динамическая трехмерная задача теории упругости двуслойной пластинки при наличии вязкого сопротивления, Ер., “ДНАН Армении”, т.120, N 3, 2020, с.181-190.
22. Мхитарян С.М., О применении метода гиперсингулярных интегральных уравнений к решению задач для упругой плоскости с коллинеарной системой трещин, Ростов-на-Дону, “Изв. вузов северо-кавказский регион. Естественные науки”, N 2, 2020, с. 72-83.
23. Саакян А.В., Квадратурная формула для гиперсингулярного интеграла, содержащего весовую функцию многочленов Якоби с комплексными показателями, Махачкала, “Изв. вузов северо-кавказский регион. Естественные науки”, N 2, 2020, с. 94-100.
24. Саакян А.В., Решение задачи для краевой трещины с гиперсингулярным определяющим уравнением методом механических квадратур, Ер., “Изв. НАН Армении. Механика”, т.73, N 2, 2020, с. 44-57, DOI: 10.33018/73.2.4.
25. Саргсян А.М., Упругое равновесие кругового диска с радиальной трещиной, берега которой усилены жесткими накладками, Ер., “ДНАН А,рмении”, т.120, N 4, 2020, с. 288-297.

26. Хачатрян А.М., Петросян Г.А., Асимптотическое решение одной смешанной краевой задачи анизотропной двухслойной цилиндрической оболочки, Ер., "Изв. НАН Армении. Механика", т. 73, N 2, 2020, с.58-68.
27. Шемян Г.Г., Об устойчивости колебательных систем, Ер., "Вестник инженерной академии Армении", N 1, 2020, с.71-79.
28. Avetisyan A., Jilavyan H., Hybrid of Rayleigh and Gulyaev-Bluestein Electroacoustic Waves Near the Inner Surface of a Layered Piezoelectric Composite, Proc. NAS Armenia, Mechanics, 2020, v. 73, N 2, pp. 3-21. <http://doi.org/10.33018/73.2.1>
29. Avetisyan A., Khachatryan V., Propagation of Hybrid Electroelastic Waves in Transversally Inhomogeneous Periodic Piezoelectric Structure of Rayleigh and Gulyaev-Bluestein Electroacoustic Waves Near the Inner Surface of a Layered Piezoelectric Composite, Proc. NAS Armenia, Mechanics, 2020, v. 73, N 1, pp. 6-22. <http://doi.org/10.33018/73.1.1>
30. Belubekyan M., Papyan A., Vibration of piezoelectric layer of 6mm class with initial conditions and with rigidly clamped and free edges, Proceedings of The YSU Physical and Mathematical sciences, 2020, N 54, pp. 3-9.
31. Ohanyan S., Shear Wave Reflection and Transmission From Symmetrically and Asymmetrically Arranged Bi-material Layer, Proc. NAS RA, Mechanics, v. 73, N 1, 2020, pp. 63-71. <http://doi.org/10.33018/73.1.6>
32. Пэпыан А., Propagation of Magnetoelastic Waves in a Periodic Media, Proc. NAS RA, Mechanics, v. 73, N3, 2020, pp. 3-12. <http://doi.org/10.33018/73.3.1>
33. Аветисян В.В., Управляемый динамический поиск подвижного объекта при минимальных затратах световой энергии, М., "Автоматика и телемеханика" N 4, 2020, с. 110-119.
34. Агаловян Л.А., Агаловян М.Л., Закарян Т.В., Асимптотический анализ вынужденных колебаний двухслойных пластин при наличии вязкого сопротивления, М., ПММ, т. 84, вып. 1, 2020, с. 91-101.
35. Акопян В.Н., Амирджян А.А., Казаков К., Осесимметричное напряженное состояние равномерно слоистого пространства с периодическими системами внутренних дискообразных трещин и включений, М., "Вестник МГТУ им. Н.Э.Баумана, сер. естест. науки", N 2, 2020, с. 25-40.
36. Акопян В.Н., Григорян А.В., Антиплоская деформация равномерно кусочно-однородного пространства с периодической системой полубесконечных внутренних трещин, М., "Изв. вузов северо-кавказский регион естественные науки", N2, 2020, с. 13-20, DOI 10.18522/1026-2237-2020-2-13-20.
37. Барсегян В.Р., Задача оптимального управления колебаниями струны с неразделенными условиями на функции состояния в заданные промежуточные моменты времени, М., "Автоматика и телемеханика", N 2, 2020, с. 36-47; Automation and Remote Control, 2020, vol. 81, is. 2, pp. 226-235.
38. Барсегян В.Р., Солодуша С.В., Задача граничного управления колебаниями струны смещением левого конца при закрепленном правом конце с заданными значениями функции прогиба в промежуточные моменты времени, Тамбов, "Вестник российских университетов. Математика", т. 25, N 130, 2020, с. 131-146. DOI: 10.20310/2686-9667-2020-25-130-131-146.
39. Геворкян Г.А., Моделирование упругих древовидных динамических систем при наличии внешних голономных связей, М., "Вестник МГТУ им. Н.Э. Баумана, сер. естест. науки, N2 (89), 2020, с. 4-24.
40. Геворкян Г.А., Об одной интерпретации параболической тригонометрии, East European Scientific Journal (Warsaw, Poland), #12 (52), 2019, part 6, с. 43-48.
41. Филиппов Д.А., Галичян Т.А., Магнитоэлектрический эффект в трехслойных асимметричных структурах в области изгибных мод колебаний, Минск, "Физика твёрдого тела", N 62, 2020, с. 1192-1199.
42. Aghalovyan L., Consequences of a Generalized Newtonian Gravity with an Exponential Factor. International Journal of Astronomy and Astrophysics (IJAA), v.10, N 3, 2020, pp.224-230.
43. Aghalovyan L., Investigation on the Consequences of a Strengthened Newtonian Gravity at Short Distances. In book: New Insights into Physical Science, Book Publisher International. London, UK and Hooghly, West Bengal, India. v. 9, Chapter 2, 2020, pp. 24-33.
44. Aghalovyan L., On some Classes of Three-dimensional Dynamic Problems of Plates and Shells and an Asymptotic Method of Solving them. In book: Analysis of Shells, Plates and Beams, Advanced Structured Materials. Springer Nature Switzerland AG 2020, pp. 1-14.
45. Antipov Y., Mkhitaryan S., Correspondence principle in plane and axisymmetric mixed boundary value problems of elasticity, American Mathematical Society (AMS) Quarterly of Applied Mathematics Brown University, 78, 2020, pp. 333-362.

46. Antipov Y., Mkhitarian S., 2020 Annular and circular rigid inclusions planted into a penny-shaped crack and factorization of triangular matrices. // Proc. R. Soc. A 476: 20200240. <http://dx.doi.org/10.1098/rspa.2020.0240>
47. Avetisyan A., Kamalyan A., Hunanyan A., Wave energy localization near the rough surfaces of piezoelectric waveguide. Near-surface inhomogeneities as a resonator or filter, IOP Conf. Series: Journal of Physics: Conf. Series, 1474, 2020, 012006, IOP Publishing <http://doi.org/10.1088/1742-6596/1474/1/012006>
48. Avetisyan V., Controlled dynamic search for a mobile object with minimum cost of light energy, Automation and Remote Control. 2020, v. 81, issue 4, pp. 624-631.
49. Baghdasaryan G., Mikilyan M., Vardanyan I., Danoyan E., Melikyan K., Influence of boundary conditions on the aero-thermo-elastic stability of a closed cylindrical shell. IOP Conf. Series: Journal of Physics: Conf. Series 1474, 2020, 012008; doi:10.1088/1742-6596/1474/1/012008
50. Baghdasaryan G., Mikilyan M., Vardanyan I., Panteleev A., Influence of supersonic flow on nonlinear oscillations of a cylindrical shell. IOP Conf. Series: Journal of Physics: Conf. Series 1474, 2020, 012007; doi:10.1088/1742-6596/1474/1/012007
51. Baghdasaryan G., Mikilyan M., Vardanyan I., Panteleev A., Severina N., Nonlinear flutter response of cylindrical shell in thermal field and supersonic gas flow. IOP Conf. Series: Materials Science and Engineering, 2020, 927(1), 012022; doi:10.1088/1757-899X/927/1/012022
52. Baghdasaryan G., Mikilyan M., Panteleev A., Rybakov K., Spectral Method for Analysis of Diffusions and Jump Diffusions Smart Innovation. Springer, Advances in Theory and Practice of Computational Mechanics, Smart Innovation, Systems and Technologies, 2020, 173, pp. 293-314. [https://doi.org/10.1007/978-981-15-2600-8\\_21](https://doi.org/10.1007/978-981-15-2600-8_21).
53. Barseghyan V., About One Problem of Optimal Control of String Oscillations with Non-separated Multipoint Conditions at Intermediate Moments of Time. In: Stability, Control and Differential Games. Lecture Notes in Control and Information Sciences - Proceedings. Springer, Cham. 2020, pp. 13-25. [https://link.springer.com/chapter/10.1007/978-3-030-42831-0\\_2](https://link.springer.com/chapter/10.1007/978-3-030-42831-0_2)
54. Barseghyan V., The Problem of Optimal Control of String Vibrations, International Applied Mechanics, v. 56, N 4, 2020, pp. 471-480. <https://doi.org/10.1007/s10778-020-01030-w>.
55. Belubekyan M., Belubekyan V., On a stability problem of a preliminary compressed console plate , Journal of Physics: Conference series 2020, v. 1474, 012009. <http://doi.org/10.1088/1742-6596/1474/1/012009> ,
56. Belubekyan M., Sarkisyan S., Effect of inertial mass on elastic waveguide characteristics, IOP Conf. Series: Journal of Physics: Conf. Series 1474, 2020, 012010 IOP Publishing, <http://doi.org/10.1088/1742-6596/1474/1/012010>,
57. Filippov D., Galichyan T., Zhang J., Ying L., Yajun Q., Zhang T., Srinivasan G., Magneto-electric Effect in Three-Layer Asymmetric Structures in the Region of Bending Vibrational Modes, Physics of the Solid State, 62, 2020, pp. 1338-1345.
58. Ghazaryan K., Ghazaryan R., Papyan, A., Ohanyan, S., Localisation of guided wave in stratified elastic reflector sandwiched between two elastic semi-spaces, IOP Conf. Series: Journal of Physics, 1474, 2020, 012015 IOP Publishing. <http://doi.org/10.1088/1742-6596/1474/1/012015> ,
59. Ghazaryan K., Mozharovsky V., Sarkisyan S., Ohanyan S., Shear surface wave propagation in stratified media with slip interfaces, Int. J. Materials and Structural Integrity. 2020, v.14 N 3, p. 7.
60. Hakobyan V., Grigoryan A., Anti-plane stressed state uniformly piece-homogeneous space with a periodic system of parallel semi-infinite interfacial cracks, Journal of Physics: Conference Series, 2020, v. 1474. <https://iopscience.iop.org/issue/1742-6596/1K474/1>
34. Mkrtchyan A.R., Lalayan A., Eritsyany H., Margaryan A., Diffraction on an aperture located between media with different refractive indices, Y., "Armenian Journal of Physics", v. 13, N 3, 2020, pp. 185-192.
35. Mkrtchyan A.R., Abrahamyan A., Acoustoplasma state of matter, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 2, 2020, pp. 131-139.
36. Mkrtchyan A.R., Grigoryan L., Saharian A., Mkrtchyan A.H., Khachatryan H., Kotanjyan V., Self-amplification of radiation from an electron bunch inside a waveguide filled with periodic medium, "JINST", v.15, 2020, C06019.
37. Mkrtchyan A.R., Eritsyany H., Lalayan A., Eritsyany Sh., Hakobyan R., Khachatryan Zh., Polarization and diffraction peculiarities of optical media possessing simultaneously the properties of right and left substances, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), v.55, N3, 2020, pp.199-204.
38. Mkrtchyan A.R., Eritsyany H., Lalayan A., Eritsyany Sh., Hakobyan R., Khachatryan Zh., Diffraction of electromagnetic waves from a round hole located between vacuum and matter with a refraction index different from one, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), v.55, N 4, 2020, pp. 314-316. <https://doi.org/10.3103/S1068337220040118>.
39. Muradyan T., Bagdasaryan E., Petrosyan S., Samsonyan H., Aloyan L., Shahverdyan A., Kocharyan V., Formation of parallel X-ray beams with controllable quantity and distances, Y., "Armenian Journal of Physics", v. 13, N 3, 2020, pp. 175-179.
40. Petrosyan A., A so-called "Triglycine phosphate" is a dubious crystal, "J. Mol. Struct.", v.1215, 2020, 128313. <https://doi.org/10.1016/j.molstruc.2020.128313>.
41. Petrosyan A., Giester G., Ghazaryan V., Fleck M., Halogenides of  $\beta$ -alanine, "J. Mol. Struct.", v. 1222, 2020, 128825. <https://doi.org/10.1016/j.molstruc.2020.128825>.
42. Saharian A., Kotanjyan A., Mkrtchyan A.R., Kotanjyan V., Radiation of surface polaritons from a charge rotating around a dielectric cylinder, Y., "Armenian Journal of Physics", v. 13, N 2, 2020, pp. 84-94.
43. Saharian A., Petrosyan T., Chitchyan S., Grigoryan A., Scalar field modes in de Sitter spacetime with negative curvature spatial foliation, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 3, 2020, pp. 316-329.
44. Saharian A., Kotanjyan A., Grigoryan L., Khachatryan H., Kotanjyan V., Synchrotron radiation from a charge circulating around a cylinder with negative permittivity, "International Journal of Modern Physics B", v. 34, N 8, 2020, 2050065/18.
45. Saharian A., Petrosyan T., The casimir densities for a sphere in the milne universe, "Symmetry", v. 12, 2020, 619.
46. Saharian A., Grigoryan L., Grigorian A., Khachatryan H., Kotanjyan A., Cherenkov radiation and emission of surface polaritons from charges moving paraxially outside a dielectric cylindrical waveguide, "Physical Review A", v. 102, 2020, 063517.
47. Sahradyan A., Aghbalyan S., Martirosyan A., Ordyan N., Poghosyan Kh., Studying opportunities of optimization metal bond diamond tools production technology, "Cutting & Tools in Technological System", v. 92, 2020, pp. 136-14. <https://doi.org/10.20998/2078-7405.2020.92.14>.
48. Sarian V., Mkrtchyan A.R., Ermakov V., Nazarenko A., Lyubushin A., Meshcheryakov R., Hybrid monitoring systems for global processes. The results of the experiment at the first point of the hybrid system, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 3, 2020, pp. 243-254.

49. Sargsyan A., Grigoryan S., Jomardyan Ts., Ghukasyan M., Shahinyan A., The study of lyotropic mesomorphism of a system of sodium pentadecyl sulfonate-polyethylene glycol -water under the influence of temperature, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 3, 2020, pp. 290-300.
50. Sargsyan A., Grigoryan S., Jomardyan Ts., Ghukasyan M., Shahinyan A., X-ray study of the lyotropic mesomorphism of sodium dioctyl sulfosuccinate-water system, Y., "Armenian Journal of Physics", v. 13, N 3, 2020, pp. 301-309.
51. Sukiasyan R., Suponitsky K., Atanesyan A., Danghyan A., Hovhannisyan A., Petrosyan A., Crystal structures and vibrational spectra of L-argininium(2+) bis tetrafluoroborate) and L-argininium(2+) bis (perchlorate), "Spectrochim. Acta A", v. 228, 2020, 117782. <https://doi.org/10.1016/j.saa.2019.117782>.
52. Srinivasan B., Petrosyan A., In fact, L-Alanine, "J. Cryst. Growth", v. 533, 2020, 125477. <https://doi.org/10.1016/j.jcrysgro.2019.125477>.
53. Srinivasan B., Petrosyan A., Tylczyński Z., Comments on 'Process development and characterization of centrosymmetric semiorganic nonlinear optical crystal: 4-dimethylaminopyridine potassium chloride', "Physica B", v.582, 2020, 411997. <https://doi.org/10.1016/j.physb.2020.411997>.
54. Srinivasan B., Suvidha G. Naik, Petrosyan A., Comments on the paper "Co-crystals of urea and hexanedioic acid with third-order nonlinear properties: An experimental and theoretical enquiry", "J. Mol. Struct.", v.1216, 2020, 128306. <https://doi.org/10.1016/j.molstruc.2020.128306>.
55. Srinivasan B., Petrosyan A., Comments on "Investigation on novel bulk size single crystal of Glycine with metal ions grown by solution growth method for photonic applications", "Materials Letters", v. 272, 2020, 127884. <https://doi.org/10.1016/j.matlet.2020.127884>.
56. Srinivasan B., Petrosyan A., Comments on the paper: "Analysis on linear and nonlinear optical properties of an efficient semi-organic crystal: Thiourea borate", "Opt. Laser Technol.", v.131, 2020, 106390. <https://doi.org/10.1016/j.optlastec.2020.106390>.
57. Srinivasan B., Petrosyan A., Tylczyński Z., Comments on the paper "Crystal design, thermal and dielectric behavior of novel silver (Ag) co-ordinated thiourea single crystals", "Materials Letters", v. 280, 2020, 128675. <https://doi.org/10.1016/j.matlet.2020.128675>.
58. Trouni K., Truni A., Dynamic diffraction of thermal neutrons in weakly deformed crystals, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 2, 2020, pp. 127-130.
59. Vardanyan J., Hovhannisyan M., Mkhitarian S., Nersisyan M., Agajanyan H., Radiation-resistant and radiation-sensitive sensors based on wide-gap oxides, Y., "Armenian Journal of Physics", v.13, N 4, 2020, pp. 382-391.  
Հոդվածները հրատարակվել են "VI International Conference on Electron, Positron, Neutron and X-Ray Scattering under External Influences (Meghri-2019)" միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում (2-րդ մաս), Ե., "IAPP", 2020, 144 էջ, ISBN 978-9939-1-1098-1.
60. Mahtessian A., Karapetian G., Hovhannisyan M., Movsisyan V., Mahtessian L., About hidden energy, pp.18-25.
61. Hovhannisyan M., Mahtessian A., Mahtessian L., Sargsyan A., Radio and optical radiation of quasars and the distribution of objects around them, pp. 26-32.
62. Atanesyan A., Balayan L., Growth and Investigation of  $3\alpha$  - LiIO single crystals in the presence of additive amounts of permanganate-ion, pp. 33-38.
63. Bezhanova L., The influence of structural features of molecules on viscosity characteristics, on dynamic of orientation processes and structural ordering in liquid crystal systems, pp. 39-52.
64. Trouni K., Truni A., Dynamic diffraction of thermal neutrons in weakly deformed crystals, pp. 53-57.
65. Stepanyan L., Husikyan D., Aleksanyan D., Apreyan R., Determination of the optimal matrix configuration for the elements of a Printed Circuit Board (PCB), pp. 64-75.
66. Grigoryan L., Mkrtchyan A.R., Saharian A., Mkrtchyan A., Khachatryan H., Grigoryan M., Kotanjyan V., Harutyunyan H., Self-amplification of radiation from a relativistic electron bunch inside the waveguide containing a stack of plates, pp. 76-90.
67. Abrahamyan A., The Dependence of The luminous efficacy of fps and sps lines of nitrogen in the mixture CO<sub>2</sub>:N<sub>2</sub>:He=1:1:8 on acoustoplasma discharge parameters and the selective amplification of individual lines, pp. 91-106.
68. Abrahamyan A., Chilingaryan R., Glow discharge in long thin hollow cathode tubes, pp. 107-120.
69. Muradyan T., Mirzoyan V., Bagdasaryan E., Shahverdyan A., Margaryan A., Simonyan H., Full pumping of spatially modulated x-ray beams from a quartz single crystal in the presence of a temperature gradient, pp. 121-125.

70. Hayrapetyan K., Noreyan S., Margaryan V., Kocharyan V., The dependence of the absorption coefficient of x-rays on the position of the vectors of diffraction and temperature gradient, pp. 126-130.
71. Khalpakhchyan S., Features of conversion of an Ultraviolet Radiation /UvR/ into optical by means of single corundum crystals and constructions of new sensitive UvR receivers, pp. 131-136.
72. Khalpakhchyan S., Converter of the receiver of ultraviolet radiation, pp. 137-143.  
Հոդվածները հրատարակվել են «Современные методы анализа дифракционных данных и актуальные проблемы рентгеновской оптики» 9-րդ միջազգային գիտական սեմինարի և 7-րդ միջազգային երիտասարդական գիտական դպրոց-սեմինարի նյութերի ժողովածուում, Մոսկվա, ФНИЦ «Кристаллография и фотоника» ՌԳԱ, 2020, 162 էջ, <http://x-ray-ship.info>.
73. Атанесян А.К., Балаян Л.С., Выращивание и исследование монокристаллов  $\alpha$ -LiIO<sub>3</sub> с примесью марганца, с. 35-38.
74. Кочарян В.Р., Мовсисян А.Е., Мурадян Т.Р., Гоголев А.С., Двумерная фокусировка отраженного рентгеновского излучения от монокристалла кварца при наличии внешнего температурного градиента, с. 89-92.
75. Мурадян Т.Р., Кочарян В.Р., Таргонский А.В., Багдасарян Э.Г., Параллельные рентгеновские пучки с управляемым количеством и расстояниями между ними, с. 99-101.

Ա.Պետրոսյանը և Վ.Ղազարյանը դարձել են «Արդյունավետ գիտաշխատող 2020» մրցույթի հաղթողներ:

## ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան  
Փոխտնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Է.Ասմարյան  
Գլխավոր տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան  
Էլեկտրոնային փոստ՝ [office@irphe.am](mailto:office@irphe.am)  
Կայքէջ՝ [www.irphe.sci.am](http://www.irphe.sci.am)

## Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հետազոտվել է միկրոալիքային մագնիսական դաշտի փոխազդեցությունը կենսաբանական հյուսվածքների և իոնային ջրային լուծույթների հետ: Այդ նպատակով մշակվել է հատուկ ռեզոնանսային էլեկտրադինամիկական կառուցվածք, որն ապահովում է միկրոալիքային դաշտի մագնիսական և էլեկտրական բաղադրիչների տարածական խիստ տեղայնացումը: Կատարված հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է կենսաբանական հյուսվածքների և լուծույթների կողմից միկրոալիքային մագնիսական դաշտի խիստ կլանման երևույթ, որը կախված չէ արտաքին մագնիսական դաշտից և ունի էական ջերմաստիճանային կախվածություն: Հայտնաբերված երևույթը կարող է կիրառվել բժշկության մեջ՝ ոչ ինվազիվ հետազոտություններ կատարելիս (դեկ. թղթ.անդ. Ա.Հախումյան):

Հետազոտվել են ոչռեկուրսիվ ասիմետրիկ բինոմիալ գործակիցներով սանրաձև գտիչների հաճախային բնութագրերը: Շնորհիվ իրենց բացարձակ կայունության՝ այդպիսի գտիչները լայնորեն կիրառվում են ռադիոլոկացիոն համակարգերում: Ցույց է տրվել դրանց թողարկման շերտի լայնացման հնարավորությունն ի հաշիվ թույլատրելի սահմաններում ամպլիտուդահաճախային բնութագրի անհավասարությանը (դեկ. ֆ.-մ.գ.թ. Տ.Զաքարյան, Ն.Պողոսյան):

Ուսումնասիրվել է լույսի բևեռացման պտույտը, երբ այն անցնում է աջ և ձախ տեսակի թաղանթներով և բազմաշերտ միջավայրերով: Օգտվելով պտտման անկյան, որպես կոմպլեքս թիվ ներկայացումից՝ վերլուծվել են ինչպես անցման (Ֆարադեյի երևույթ), այնպես էլ անդրադարձման (Կեռի երևույթ) դեպքերը: Ցույց է տրվել, որ կոմպլեքս անկյան իրական և

կեղծ մասերը բեկման ցուցիչի համապատասխանաբար կենտ և զույգ ֆունկցիաներ են: Բացասական ցուցիչ ունեցող թաղանթի դեպքում կա Կեռի անկյան ռեզոնանսային աճ, որը կարող է դիտվել փորձնականորեն: Ուսումնասիրվել են բեկման ինդեքսի հատուկ պրոֆիլների լրացուցիչ համաչափությունները, որոնք օգտագործվում են կատարյալ պատկերապատման (perfect imaging) և թաքցնելու (cloaking) հայտնի երևույթների մեջ: Դիտարկված դեպքերում պահպանվում են փոխադրման գեներատորը և անկյունային մոմենտը: Ճառագայթների հետագծի պարամետրերն արտահայտվել են շարժման ինտեգրալների միջոցով, դիտվել է առավելագույն անկյունային մոմենտ ունեցող ֆոտոնային վիճակի առկայությունը, որը կարող է օգտագործվել որպես օպտիկական ռեզոնատոր: Դիտարկվել է լիցքավորված մասնիկի ճառագայթումը, երբ այն անցնում է Maxwell fish eye բեկման ցուցիչ ունեցող միջավայրով: Հետազոտվել է ճառագայթման ինտենսիվության անկյունային բաշխվածությունը: Դուրս է բերվել Չերենկովի մոդիֆիկացված պայման ճառագայթման առկայության համար (դեկ. ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

Համիլտոնյան և գերդաշտային մոտեցումների հիման վրա կառուցվել են դեֆորմացված  $N=4$  և  $N=8$  սուպերսիմետրիկ մեխանիկաներ Կելերի բազմազանների վրա, որոնք փոխադրում էին հաստատուն մագնիսական դաշտի հետ, ուսումնասիրվել են դրանց համաչափությունները: Ցույց է տրվել, որ առաջարկվող սուպերսիմետրիկ ընդլայնումները ժառանգում են սկզբնական բոզոնային մոդելների բոլոր համաչափությունները: Ուսումնասիրվել են սուպերինտեգրվող Սմորդոլինսկի-Վինթերնիթսի  $SU(2|1)$  սուպերսիմետրիկ ընդհանրացման քվանտային հատկությունները կոմպլեքս Էվկլիդեսյան  $CN$  տարածության վրա: Կառուցվել է ալիքային ֆունկցիաների ամբողջական համախումբը և հաշվվել էներգիայի սպեկտրը (դեկ. ֆ.-մ.գ.դ. Ա.Ներսեսյան):

Ուսումնասիրվել է բազմաֆոտոն պրոցեսների ոչ-գծային վարքը երկչափ նանոկառուցվածքներում, մասնավորապես գրաֆենում՝ չափավոր հզոր կոհերենտ ճառագայթման հետ փոխազդեցության ընթացքում: Դիտարկվել է երկշերտ գրաֆենում (AB stacked) ընտրված հաճախությունների՝ տերահերցայինից մինչև միջին ինֆրակարմիր միջակայքի կոհերենտ ճառագայթման դաշտում բարձր հարմոնիկների գեներացիան: Կատարվել են թվային հետազոտություններ կամայական բևեռացմամբ լազերային գրգռող դաշտում: Արդյունքները ցույց են տվել, որ հաճախությունների ընտրված տիրույթում բարձր հարմոնիկների ճառագայթման հավանականությունը սենյակային ջերմաստիճանում մեծ է արդեն չափավոր ինտենսիվության գծային բևեռացված էլեկտրամագնիսական ալիքի դաշտում: Դիտարկվել է բարձր հարմոնիկների գեներացիան երկշերտ գրաֆենում՝ հաստատուն էլեկտրական դաշտով ստեղծված ճեղքի առկայության և բացակայության դեպքերում, ցածր հաճախությամբ կոհերենտ ճառագայթային դաշտում: Ստացված արդյունքները ցույց են տվել, որ հիմնական պարամետրերի օպտիմալ արժեքների ընտրությամբ երկշերտ գրաֆենը կարող է ծառայել որպես արդյունավետ միջավայր որոշակի լայնության ճեղքի, սուբտերահերցային հաճախության չափավոր ինտենսիվության գրգռող ալիքի և ցածր ջերմաստիճանների դեպքում (դեկ. թղթ.անդ. Հ.Մաթևոսյան):

Ուսումնասիրվել է էլեկտրոնային փնջի և պլազմայի փոխազդեցությունն այնպիսի երկրաչափությունում, որը համապատասխանում է պլազմային գեներատորներին: Ուսումնասիրվել են զարգացող անկայունության հատկությունները: Ուժեղ դիսիպացիայի առկայության դեպքում զարգանում է նոր տիպի դիսիպատիվ փնջային անկայունություն (դեկ. ֆ.-մ.գ.դ. Է.Ռոստոմյան):

Ուսումնասիրվել է խիտ դիսկլազիոն ցանցի ( $10^9$  սմ<sup>-2</sup>) ազդեցությունն էպիտաքսային  $Al_xGa_{1-x}N:Si$  կառուցվածքների ( $n[Si] \sim 10^{18}$  սմ<sup>-3</sup>) եզրային լյումինեսցենտումի ինտենսիվության [ $I = I(n, N_{dis})$ ] վրա: Անալիտիկ հաշվարկների ընթացքում օգտագործվել են ուժեղ կապի մո-

տավորությունը և  $n$ -տիպի III-նիտրիդային համակարգերում էլեկտրոնային լիապատկերման մեթոդով զննված եզրային ու պտուտակային դիսլոկացիաների էլեկտրաֆիզիկական բնութագրերը: Քննարկվել են փորձարարական աշխատանքներում չափված ինտենսիվության վարքի առանձնահատկությունները ( $\partial I / \partial n > 0, \partial I / \partial N_{dis} < 0$ ) (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Լ.Հովակիմյան):

Միայնակ նանուլարի վրա հիմնված արեգակնային տարրի արդյունավետության վրա մակերևութային ռեկոմբինացիայի ազդեցության գնահատման համար առաջարկվել է տեսական մոդել, համեմատվել է փորձի հետ և ցույց է տրվել, որ, օրինակ, սիլիցիումային լարերի դեպքում տարրի՝ արեգակնային էներգիան էլեկտրականի փոխակերպման արդյունավետությունը կարող է նվազել ավելի քան 30%:

InSb/CdTe հետերոանցման օրինակով հետազոտվել է բաժանման սահմանի մոտ փոքր արգելված գոտիով կիսահաղորդիչում առաջացող ինվերսիոն շերտի ազդեցությունը կառուցվածքի գոտիական դիագրամայի, ֆոտոէլեկտրական հատկությունների, մասնավորապես դրանց հիման վրա ստեղծվող կոորդինատազգայուն ֆոտոընդունիչների վրա:

Տեխնոլոգիական ռեժիմների կատարելագործման արդյունքում սինթեզվել են  $(Al_{0.5}Nb_{0.5})_xTi_{1-x}O_2$  կերամիկական նմուշներ, որոնց դիէլեկտրիկական թափանցելիությունը գերազանցել է  $10^3$ :

Հաշվարկվել են նանուլար-դիէլեկտրիկ-մետաղ կառուցվածքի քվադիստացիոնար վոլտ-ֆարադային բնութագրերը մակերևութային վիճակների հաշվառմամբ և ցույց է տրվել, որ, կախված լարի շառավղից, խորը աղբատացումից հետո նանուլար-դիէլեկտրիկ սահմանի մոտ կարող է չառաջանալ ինվերսիոն շերտ, ինչի արդյունքում կառուցվածքի ունակությունը ձգտելու է զրոյի, այլ ոչ թե դիէլեկտրիկ շերտի երկրաչափական ունակությանը, ինչպես տեղի է ունենում սովորաբար:

Լազերային-ինպուլսային փոշեցրման եղանակով ստացվել են  $MoS_2$  քվադիերկչափ բյուրեղներ՝ բաղկացած մեկ, երկու և ավելի ատոմական մենաշերտերից, ուսումնասիրվել են դրանց հատկությունները կոմբինացիոն ցրման, էլեկտրոնային միկրոսկոպիայի, ռենտգենյան դիֆրակցիայի, ֆոտոլյումինեսցենցիայի և օպտիկական կլանման մեթոդներով (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Պետրոսյան):

Կատարվել են նանոչափային բարակ թաղանթների էլեկտրական պարամետրերի նախնական չափումներ՝ սկսած հեղուկ ազոտայինից մինչև սենյակային ջերմաստիճանային տիրույթում նոր ձեռք բերված և գործարկված Հոլլի երևույթի չափման համակարգի միջոցով (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մուսաեյյան):

Շարունակվել է նանուլարային անանցումային իոնազգայուն դաշտային տրանզիստորների հիման վրա բիոքիմիական տվիչի մոդելի մշակումը: Ուսումնասիրվել է տվիչի  $pH$  զգայնությունը: Ցույց է տրվել, որ առաջադրված անալիտիկ մոդելը թույլ է տալիս ճշգրտորեն հաշվարկել տվիչի զգայնության կախվածությունը նրա երկրաչափական և ֆիզիկական պարամետրերից (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Եսայան):

Սինթեզվել են բազմաբյուրեղ օրգանական  $CH_3NH_3PbI_{3-x}Cl_x$  կիսահաղորդիչների բարակ շերտեր և չափվել են դրանց բոլոր օպտիկական պարամետրերը (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Կ.Ավջյան):

Կատարվել են լազերային աբլյացիայի մեթոդով ջրային լուծույթներում ստացված երկաթի (Fe) նանոմասնիկների խտության չափումներն օպտիմիզացված կրկնակի քառակուսային պրոֆիլով միկրոալիքային շերտավոր տվիչի օգնությամբ: S11 տվիչի միկրոալիքային անդրադարձման գործակիցը ռեզոնանսային հաճախության վրա փոփոխվում է՝ կախված ջրային լուծույթներում երկաթի խտությունից: Հետազոտվել է տվիչի արձագանքը երկաթի նանոմասնիկների կոնցենտրացիաների 0÷20 մկգ/լ տիրույթում 1.75 ԳՀց աշխատանքային

հաճախության վրա: Մինիմալ չափված ազդանշանը կազմել է 0.035 դԲ/մկգ/լ: Այդպիսի սիստեմների էլեկտրամագնիսական անդրադարձը բացատրվում է ջրային լուծույթներում Fe լազերային աբլյացիայի ժամանակ ջրի մոլեկուլների կլաստերային կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ կառուցվածքի, ցածր ինքնաբեռի և մեծ ճշտության շնորհիվ այդպիսի սիստեմները կարող են օգտագործվել որպես ֆիզիկաքիմիական տվիչներ հեղուկ միջավայրերում ոչ ինվազիվ մեթոդով մետաղների նանոմասնիկների խտությունների մոնիթորինգի համար (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Խաչատրյան):

Նախորդ տարիներին ՌՖԷԻ-ում մշակված և պատրաստված բժշկական ախտորոշիչ սարքի միջոցով հետազոտվել է էլեկտրական ազդանշանների ազդեցությունը մարդու մաշկի վրա: Մշակվել են երկու առանձին համակարգչային ծրագրեր, որոնցից մեկը նախատեսված է օպերատորի, մյուսը՝ ստացված ազդանշանների ուսումնասիրությունների համար: Կատարվել են սպեկտրազննման տեսական վերլուծություններ: Կատարվել են փորձարարական հետազոտություններ, ինչպես նաև ստացված ազդանշանների սպեկտրների համեմատական վերլուծություններ (ղեկ.՝ ակ. Ա.Ղուլյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Դիտարկվել է մեծ արագությամբ (50-300 մ/վ) շարժվող օբյեկտի արագ հայտնաբերման հնարավորությունը, երբ այն գտնվում է տեղորոշող համակարգին բավականաչափ մոտ (1-20 մ) հեռավորության վրա: Առաջարկվել է որոշակի հեռավորության վրա գտնվելիս օբյեկտի արագ հայտնաբերման բավական պարզ՝ անկյունաչափական եղանակ, որը հիմնված է օբյեկտից (թիրախից) զոնդավորող ճառագայթի անդրադարձումը (ցրումը) ուղղակիորեն գրանցելու վրա: Որպես զոնդավորող ճառագայթման աղբյուր կարող է օգտագործվել կիսահաղորդիչային լազեր կամ լուսադիոդ, որը, համալրվելով համապատասխան ոսպնյակով, ապահովում է ճառագայթման որոշակի անկյունային բացվածք: Ֆոտոռեդուկտիչ համակարգում որպես լուսազգայուն տարր կարող է օգտագործվել կիսահաղորդիչային ֆոտոդիոդ, որի դիմաց որոշակի հեռավորության վրա տեղադրվում է ձեղքային դիաֆրագմա: Ընդունիչի տեսադաշտի անհրաժեշտ անկյունային բացվածքն ապահովվում է դիաֆրագմայի ձեղքի լայնության և երկարության ընտրությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Ա.Մակարյան):

Օպտիկական որակի միկրոնային չափի կիսաբյուրեղային MAPbI<sub>3-x</sub>Cl<sub>x</sub> պերովսկիտային թաղանթների օպտիկական պարամետրերը որոշվել են անցման և անդրադարձման գործակիցների սպեկտրաֆոտոմետրիկ չափումների միջոցով: Ցույց է տրվել, որ այդ թաղանթների համար միջին և թույլ կլանման տիրույթում ծրարի մեթոդը պարամետրերի որոշման համար գործում է 3%-ից ոչ պակաս ճշգրտությամբ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ժ.Գևորգյան):

### **Հրապարակումներ**

#### ***Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր***

1. Rostomyan E V. Selected Topics in Plasma Physics, Chapter: Introduction: Plasma Parameters and Simplest Models, publisher “IntechOpen”, London, March 2020, 17p. doi: 10.5772/intechopen.91222

#### ***Հոդվածներ, զեկուցումներ***

2. Аракелова Э.Р., Мирзоян А.А., Григорян С.Л., Хачатрян А.М., Мирзоян А.Б., Ераносян М.А., Гогинян В.Б., Григорян С.Г., Степанян Р.М., Мурадян Р.Е., Разработка способа получения цинкоксидных композиций антибактериального препарата цефтриаксон, Ер., “Вестник НПУА. Металлургия, Материаловедение, Недропользование”, N 1, 2020, с. 52-61.
3. Макарян А.О., Преобразование частот СВЧ излучения в феррите, Ер., “Доклады НАН Армении”, т. 120, N 1, 2020, с. 38-44.
4. Одабашян Л., Маргарян Н., Оганян Г., Манвелян М., Амбарян Д., Абраамян Т., Хачатрян Р., Бабаджанян

- А., Обнаружение наночастиц железа в водных растворах с помощью микроволнового сенсора, Ер., “Известия НАН Армении. Физика”, т. 55, N 2, 2020, с. 251-258.
5. Esther J., Josh L., Gasparian V., Gevorkian Zh., Faraday and Kerr effects in right and left handed films and layered materials, “Reviews on Advanced Materials Science”, v. 59, N 1, 2020, pp. 243-251.
  6. Ghazaryan A., Matevosyan H., Sedrakian Kh., High harmonics generation in bilayer graphene at high Fermi energies induced by coherent THz-radiation, “Journal of Nanophotonics” v. 14, N 4, 2020, 046009, 15 pp. DOI: <https://doi.org/10.1117/1.JNP.14.046009>
  7. Ghazaryan A., Matevosyan H., Sedrakian Kh., Second and third harmonics generation by coherent sub-THz radiation at induced Lifshitz transitions in gapped bilayer graphene, “arXiv preprint:” 2007. 02724, 2020.
  8. Gevorkian Zh., Avjyan K., Matevosyan L., et al, Determination of the complete set of optical parameters of micron-sized polycrystalline  $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_{3-x}\text{Cl}_x$  films from the oscillating transmittance and reflectance spectra, “Materials Research Express”, v. 7, 2020, 016408.
  9. Gevorkian Zh., Davtyan M., Discrete spectrum Radiation from a charged particle moving in a medium with Maxwell fish eye refraction index profile, “Phys. Rev. A”, v.102, 2020, 063504.
  10. Gevorkian Zh., Davtyan M., Nersessian A., Extended symmetries in geometrical optics, “Phys. Rev. A”, v. 101, 2020, 023840.
  11. Gevorkian Zh., Matevosyan L., Avjyan K., Harutyunyan V., Aleksanyan E., Manukyan Kh., Determination of the complete set of optical parameters of micron-sized polycrystalline  $\text{CH}_3\text{NH}_3\text{PbI}_{3-x}\text{Cl}_x$  films from the oscillating transmittance and reflectance spectra”, “Mater. Res. Express”, v. 7, 2020, 016408.
  12. Ivanov E., Nersessian A., Sidorov S., Shmavonyan H., Symmetries of deformed supersymmetric mechanics on Kahler manifolds, “Physical Review D”, v.101, 2020, 025003.
  13. Ivanov E., Nersessian A., Sidorov S., Quantum  $\text{SU}(2|1)$  supersymmetric  $\text{C}^N$  Smorodinsky--Winternitz system, “Journal of High Energy Physics,” arXiv:2009.14273, 2020, 25 p.
  14. Krivonos S., Nersessian A., Shmavonyan H., Geometry and integrability in  $N=8$  supersymmetric mechanics, “Physical Review D”, v. 101, 2020, 045002.
  15. Petrosyan S., Khachatryan V., Nersisyan S., Influence of Surface Recombination on Open Circuit Voltage of s Single Nanowire Solar Sell with Radial p-n-Junction., “Journal of Contemporary Physics”, v. 55, N 3, 2020, pp. 225-234.
  16. Rostomyan E., Peculiar behavior of the instability in systems with weak electron beam-plasma coupling, “Plasma Research Express”, v2, 2020, 025002. <https://doi.org/10.1088/2516-1067/ab8076>
  17. Yesayan A., Jazaeri F., Sallese JM, Analytical modeling of double-gate and nanowire junctionless ISFETs, “IEEE Trans. Electron Devices”, v. 67, 2020, pp. 1157-1164.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ս.Պետրոսյանը ստացել է ՀՀ նախագահի «Պողոսյան մրցանակ» տեխնիկական գիտությունների բնագավառում:

### ԻԿՐԱՆԵՏ ԿԵՆՏՐՈՆ ՄԿ

Տնօրեն՝ ֆ.-մ.գ.թ. Ն.Սահակյան  
 Էլեկտրոնային փոստ՝ [narsahakyan@gmail.com](mailto:narsahakyan@gmail.com)  
[yerevan.secretariat@gmail.com](mailto:yerevan.secretariat@gmail.com)

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Ուսումնասիրվել են բարձր էներգիայի (ԲԷ)  $\gamma$  տիրույթում գրանցված երեսուներեք ամենահեռավոր բլազարների ( $z > 2.5$ ) ճառագայթման սպեկտրալ և ժամանակային հատկությունները՝ վերլուծելով Fermi-LAT և Swift UVOT/XRT դիտակներով գրանցված տվյալները: Առանձնացված աղբյուրների  $\gamma$  տիրույթում ճառագայթման սպեկտրը բնութագրվում է  $\Gamma_\gamma \geq 2.2$  ֆոտոնային ցուցիչով, մինչդեռ այդ աղբյուրները, որոնք գրանցվել են ռենտգենյան

տիրություն, ունեն  $\Gamma_X = 1.01 - 1.86$  ֆոտոնային ցուցիչ: Այդ աղբյուրների  $\gamma$  տիրություն ճառագայթման հոսքը փոփոխվում է  $4.84 \times 10^{-10}$ -ից մինչև  $1.50 \times 10^{-7}$  ֆոտոն  $\text{սմ}^{-2}$  վրկ $^{-1}$ , իսկ լուսատվությունը  $(0.10 - 5.54) \times 10^{48}$  էրգ վրկ $^{-1}$  տիրություններում: Ցույց է տրվել, որ ռենտգենյան տիրություն փոփոխական է միայն PKS 0438-43, B2 0743 + 25 և TXS 0222 + 185 աղբյուրների ճառագայթումը, իսկ  $\gamma$  տիրություն՝ տասնչորս աղբյուրների ճառագայթումը. B3 1343 + 451 և PKS 0537-286 աղբյուրների հոսքը փոփոխվում է օրից կարճ տիրություն, PKS 0347-211 և PKS 0451-28 աղբյուրներին օրերի կարգի է, մինչդեռ մյուս աղբյուրների ճառագայթումը փոփոխական է շաբաթվա կամ ամսվա ընթացքում: Գնահատվել է, որ շիֆերից ճառագայթումն առաջանում է  $\leq 0.05$  պս չափերով տիրությից, իսկ մագնիսական դաշտը և Դոպլեր ուժեղացման գործակիցը համապատասխանաբար  $0.10 - 1.74$  Գ և  $10.0 - 27.4$  տիրություններում են: Մոդելավորելով օպտիկական-ուլտրամանուշակագույն տիրություն գրանցված տվյալները՝ գնահատվել է, որ կենտրոնական սև խոռոչի զանգվածը և ակտեցիոն սկավառակի լուսավորությունները համապատասխանաբար  $(1.69 - 5.35) \times 10^9 M_\odot$  և  $(1.09 - 10.94) \times 10^{46}$  էրգ վրկ $^{-1}$  տիրություններում են:

Վերլուծելով Swift դիտակով վերջին 15 տարիների ընթացքում գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել են բլազարների ճառագայթման հատկությունները ռենտգենյան տիրություն: Տվյալները վերլուծվել են՝ օգտագործելով Swift\_deepsky ավտոմատացված գործիքը, որն ավտոմատ կերպով ներբեռնում է գրանցված տվյալները, իրականացնում է տվյալների ավտոմատացված վերլուծություն և տալիս է մի շարք արդյունքներ՝ ներառյալ ռենտգենյան պատկերները, հոսքը, էներգիայի սպեկտրալ բաշխվածությունը և այլն: Տվյալների մշակման արդյունքում հայտնաբերված աղբյուրները համարա պատրաստվել է *LogN-LogS*-ը, որը համընկնում է այլ դիտակների ստացված տվյալների հետ: Ստացված արդյունքները համատեղելով բազմահաճախային տիրություն գրանցված այլ կատալոգների հետ՝ ընտրվել են այն բլազարները, որոնց սինքրոտրոնային ճառագայթման առավելագույնը բարձր հաճախականության տիրություն է ( $> 10^{15}$  Հց):

Հետազոտվել են 1ES 1959+650 բլազարի բազմաալիքային տիրություն ճառագայթման մեխանիզմները՝ վերլուծելով MAGIC, Fermi-LAT և Swift դիտակներով գրանցված տվյալները: MAGIC դիտակների համակարգով դիտումները ցույց են տվել, որ 2016թ. հունիսի 13-ին, 14-ին և հուլիսի 1-ին այդ աղբյուրը գտնվել է ակտիվ ճառագայթման վիճակում, երբ ՏեՎ տիրություն ոչ միայն աճել է հոսքը, այլև ճառագայթման սպեկտրը շեղվել է դեպի ԲԷ-երը: Ցույց է տրվել, որ 2016թ. հունիսի 13-ին և հուլիսի 1-ին աղբյուրի ՏեՎ տիրություն ճառագայթման հոսքն արագ փոփոխական է: Այդ ակտիվ ճառագայթման ժամանակ գրանցված էներգիայի սպեկտրալ բաշխվածությունը (ԷՄԲ) հնարավոր է բացատրել մեկ տիրություն էլեկտրոնների սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ կոմպտոնյան ցրման մեխանիզմով միայն մեծ Դոպլեր գործակիցների դեպքում, իսկ հաղորդային մոդելի շրջանակում՝ երբ մագնիսական դաշտը շատ մեծ է ( $\sim 100$  Գ) և պրոտոնների առավելագույն էներգիան հասնում է մի քանի  $10^{19}$  էՎ:

Օգտագործելով OVRO, KAIT, KVA, NOT, GASP-WEBT, Swift-UVOT, Swift-XRT, Fermi-LAT, FACT և MAGIC դիտակներով գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել են 1ES 2344+514 աղբյուրի ճառագայթման մեխանիզմները 2016-ի բռնկման ժամանակ: Ստացված ԷՄԲ-ը բազմաալիքային տիրություն մեկնաբանվել է լեպտոնային և հաղորդային մոդելների շրջանակներում: MAGIC և Fermi-LAT դիտակներով ստացված տվյալների համադրությունը տալիս է այս աղբյուրի բարձր էներգիաների բաղադրիչի մանրամասն նկարագրություն: Տվյալների համադրությունը ցույց է տվել, որ աղբյուրը գտնվել է ճառագայթման ծայրահեղ ակտիվ վիճակում, երբ սինքրոտրոնային բաղադրիչի առավելագույնը եղել է  $10^{18}$  Հց-ից բարձր հաճախականությունների տիրություն:



Օգտագործելով 2012-15թթ. MAGIC, Fermi-LAT, Chandra, HST, EVN, VLBA և Liverpool Telescope դիտակներով գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել են M 87 ( $z = 0.00436$ ) աղբյուրի ԳԲԷ  $\gamma$  ճառագայթման տիրույթի դիրքը և այդ ճառագայթման առաջացման մեխանիզմները: Ցույց է տրվել, որ ԳԲԷ  $\gamma$  տիրույթում սպեկտրը նկարագրվում է պարզ աստիճանային օրենքով  $-2.41 \pm 0.07$  ֆոտոնային ցուցիչով, իսկ 300 ԳԷՎ-ից բարձր տիրույթում հոսքը  $(1.44 \pm 0.13) \times 10^{-12}$  սմ<sup>-2</sup>վրկ<sup>-1</sup> է: Ցույց է տրվել, որ ճառագայթման հանգիստ վիճակում գրանցված ԷՄԲ հնարավոր է մոդելավորել սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրման մեխանիզմով, ինչպես նաև հիմքրիդ հաղորդային մոդելով:

Պատրաստվում է լրիվ թվային լեպտո-հադրոնիկ կոդ՝ բլազարների շիթերում հադրոնային պրոցեսների ուսումնասիրության և ԳԲԷ նեյտրինոների ճառագայթման հոսքը գնահատելու համար: Այս մոդելում ռեյաստիվիստական շիթում պրոտոնների էներգիան փոխակերպվում է էլեկտրամագնիսական ճառագայթման, երբ դրանք փոխազդում են զազային կամ ֆոտոնային թիրախների ( $p\gamma$ ) հետ և/կամ սինքրոտրոնային ճառագայթման ժամանակ: Այդ փոխազդեցության երկրորդային մասնիկներից (պիոններ, մյուոններ, ֆոտոններ) առաջանում է էլեկտրամագնիսական հեղեղ, որը զարգանում է այնքան, մինչև էլեկտրամագնիսական բաղադրիչի էներգիան ավելի ցածր է, քան  $\gamma - \gamma$  կլանման շեմային էներգիան, և այդ երկրորդային մասնիկների փոխազդեցությամբ մոդելավորվում են ԷՄԲ-ները:

Fermi-LAT դիտակի չորրորդ կատալոգում ընդգրկված անորոշ տիպի բլազարների դասակարգման համար մշակվել է նոր եղանակ, որն օգտագործել է արհեստական նյարդային ցանցի վրա հիմնված մեքենայական ուսուցման վերահսկվող մեթոդը: Այս մեթոդով համեմատելով բլազարների հատկությունները  $\gamma$  տիրույթում արդեն իսկ գրանցված բլազարների հետ՝ հնարավոր է դասակարգել տարբեր դասերի բլազարները:

## Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Վերլուծելով Swift UVOT/XRT, NuSTAR և Fermi-LAT դիտակներով գրանցված տվյալները՝ ուսումնասիրվել են BL Lac դասի 1ES 1218 + 304 աղբյուրի բազմաալիքային տիրույթում ճառագայթման մեխանիզմները: Իրականացվել է  $\gamma$  ( $> 100$  ՄԷՎ), ռենտգենյան (0.3-70 կԷՎ) և օպտիկական տիրույթներում 2008-20թթ. ընթացքում գրանցված տվյալների մանրամասն ժամանակային և սպեկտրալ վերլուծություն:  $\gamma$  տիրույթում ճառագայթման սպեկտրը նկարագրվել է  $1.71 \pm 0.02$  ֆոտոնային ցուցիչով, իսկ Swift UVOT/XRT դիտակների դիտումները ցույց են տվել, որ աղբյուրի ճառագայթման հոսքն օպտիկական և ռենտգենյան տիրույթներում փոփոխական է. 0.3-3 կԷՎ տիրույթում ամենամեծ հոսքը եղել է  $(1.13 \pm 0.02) \times 10^{-10}$  էրգ սմ<sup>-2</sup> վրկ<sup>-1</sup>, իսկ ամենափոքր ֆոտոնային ցուցիչը՝  $1.60 \pm 0.05$ , որը գրանցվել է MJD 58489-ին: Ժամանակի ընթացքում միջինացված ԷՄԲ-ը մոդելավորվել է մեկ տիրույթից սինքրոտրոնային ֆոտոնների հակադարձ կոմպտոնյան ցրման մեխանիզմով՝ օգտագործելով ճառագայթող էլեկտրոնների տարբեր բաշխվածություն: Ցույց է տրվել, որ տվյալները լավագույնս նկարագրվում են, երբ էլեկտրոնների բաշխվածությունը նկարագրվում է  $E^{-2.1}$  օրենքով, մինչև  $(1.7 - 4.3) \times 10^5$  տիրույթ, որոնք ճառագայթում են թույլ մագնիսական դաշտում ( $1.5 \times 10^{-2}$  Գ): Լուծելով ճառագայթման տիրույթում էլեկտրոնների էվոլյուցիան նկարագրող կինետիկ հավասարումը՝ քննարկվել է ստացված էլեկտրոնային էներգիական բաշխվածության ձևավորումը՝ հաշվի առնելով մասնիկների սկզբնական բաշխումը, էներգիայի կորուստը և ճառագայթման տիրույթից հեռանալը:

Ուսումնասիրվել է CTA 102 բլազարի ճառագայթումը 2016-17թթ., երբ  $\gamma$  տիրույթում գրանցվել են մի քանի ուժեղ բռնկումներ: Օգտագործելով Fermi-LAT դիտակի տվյալները՝ իրականացվել է CTA 102-ի  $\gamma$  տիրույթում ճառագայթման սպեկտրի մանրամասն ուսումնասիրություն: Մի քանի ժամանակահատվածներում  $\gamma$  տիրույթում սպեկտրը շեղվել է պարզ

աստիճանային օրենքից (9 – 16) ԳԷՎ էներգետիկ տիրույթում: Այդ շեղումը հնարավոր չէ բացատրել լայն գծերով տիրույթից անդրադարձած ֆոտոնների հետ փոխազդեցությամբ պայմանավորված կլանումով, եթե նույնիսկ ճառագայթման տիրույթը շատ մոտ է կենտրոնական աղբյուրին: Այս շեղումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ճառագայթող մասնիկների սպեկտրում նմանատիպ շեղման առկայությամբ, ինչը հետագոյվել է՝ մոդելավորելով էներգիայի սպեկտրալ բաշխվածությունը, քննարկելով ճառագայթման տիրույթի տարբեր դիրքեր: Գրանցված ռենտգենյան և ԲԷ  $\gamma$  տիրույթների տվյալները մոդելավորվել են ռադիո օպտիկական տիրույթում ճառագայթող էլեկտրոնների վրա սինքրոտրոնային և արտաքին դաշտերի ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրման մեխանիզմով: Ստացված արդյունքները քննարկվել են մասնիկների արագացման և ճառագայթման տարբեր մեխանիզմների շրջանակում:

Ուսումնասիրվում են հեռավոր B3 1343 + 451 ( $z = 2.534$ ) բլազարի բազմաալիքային տիրույթում ճառագայթման մեխանիզմները:  $\gamma$  տիրույթում գրանցվել են ուժեղ բռնկումներ 2011 թ. դեկտեմբերի 5-ին և 2009 թ. դեկտեմբերի 13-ին, երբ հոսքն աճել է մինչև  $(8.78 \pm 0.83) \times 10^{-7}$  ֆոտոն  $\text{սմ}^{-2}$  վրկ $^{-1}$ : Ամենափոքր ֆոտոնային ցուցիչը գրանցվել է MJD 58089-ին և եղել է  $\Gamma = 1.73 \pm 0.24$ , որը բնութագրական չէ հարթ սպեկտրով ռադիո-բլազարների համար: Swift XRT դիտակով գրանցված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ 2014-ին աղբյուրի ռենտգենային հոսքը 2009-ի համեմատ աճել է  $\sim 2$  անգամ, բայց երկու ժամանակահատվածներում էլ ռենտգենյան տիրույթում ճառագայթումը նկարագրվում է 1.2 – 1.3 ֆոտոնային ցուցիչով:  $\gamma$  տիրույթում հոսքի կրկնապատկման ամենակարճ ժամանակահատվածը  $\sim 2.34$  օր է, ինչը նշանակում է, որ ճառագայթումն առաջանում է տիրույթից, որի չափերը  $R \leq \delta c t / (1 + z) = 3.43 \times 10^{16} \text{ սմ}$  (երբ  $\delta = 20$ ): Աղբյուրի ԷՄԲ-ը հանգստի և բռնկման ժամանակ մոդելավորվել է՝ ենթադրելով, որ ճառագայթման տիրույթը գտնվում է լայն գծերով տիրույթից դուրս: Ցույց է տրվել, որ բռնկումները հնարավոր է բացատրել ճառագայթման տիրույթի Դոպլեր գործակցի փոփոխությամբ՝ առանց ճառագայթող էլեկտրոնային պարամետրերի և շիթի լուսավորության էական փոփոխության:

PKS 0537-286 բլազարի ( $z = 3.1$ ) ճառագայթումն ուսումնասիրվել է՝ օգտագործելով Fermi-LAT դիտակի ավելի քան տասը տարվա ընթացքում գրանցված տվյալները, որոնք համադրվել են 2005-17թթ. Swift UVOT/XRT դիտակներով գրանցված տվյալների հետ: Տվյալների մշակման արդյունքում ստացվել է, որ  $\gamma$  տիրույթում հոսքի առավելագույնը եղել է  $F_{\gamma} = (6.23 \pm 0.56) \times 10^{-7}$  ֆոտոն  $\text{սմ}^{-2}$  վրկ $^{-1}$ , որին համապատասխանում է  $L_{\gamma} = 2.46 \times 10^{49}$  էրգ վրկ $^{-1}$  լուսատվություն: Swift XRT դիտակի գրանցված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ ռենտգենյան տիրույթում ճառագայթումը բնութագրվում է  $\Gamma_{X\text{-ray}} \leq 1.3$  ֆոտոնային ցուցիչով, իսկ հոսքը  $4 \times 10^{-12}$  էրգ  $\text{սմ}^{-2}$  վրկ $^{-1}$  է, որը գրեթե հաստատուն է 12 տարվա ընթացքում: ԷՄԲ մոդելավորվում է մեկ տիրույթից լեպտոնային մոդելի շրջանակում՝ ենթադրելով, որ ճառագայթման տիրույթը գտնվում է լայն գծերով տիրույթի ներսում: Գրանցված ռենտգենյան և  $\gamma$  տիրույթի տվյալները մոդելավորվել են միայն սինքրոտրոնային ֆոտոնների կամ սինքրոտրոնային և արտաքին դաշտերի ֆոտոնների հակադարձ Կոմպտոնյան ցրման մեխանիզմներով: Մոդելավորումը ցույց է տվել, որ PKS 0537-286-ի շիթում ոչ ջերմային էլեկտրոնների բաշխվածությունը նկարագրվում է  $< 1.9$  աստիճանային օրենքով, և շիթում մասնիկների լուսատվությունը  $10^{45} - 10^{46}$  էրգ վրկ $^{-1}$  կարգի է:

## Հրապարակումներ

### Հոդվածներ, զեկուցումներ

1. Sahakyan N., Israyelyan D., Harutyunyan G., Khachatryan M., Gasparyan S., Multiwavelength study of high-redshift blazars, Monthly Notices of the Royal Astronomical Society, v. 498, iss. 2, 2020, pp. 2594-2613.

2. Sahakyan N., Broad-band study of high-synchrotron-peaked BL Lac object 1ES 1218+304, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 496, iss. 4, 2020, pp. 5518-5527.
3. Sahakyan, N., Investigation of the  $\gamma$ -ray spectrum of CTA 102 during the exceptional flaring state in 2016-2017, *Astronomy & Astrophysics*, v. 635, id.A25, 2020, 10 p.
4. Sahakyan N., Israyelyan D., Harutyunyan G., A Multiwavelength Study of Distant Blazar PKS 0537-286, *Astrophysics*, v. 63, 2020, pp. 459-469.
5. Sahakyan N., Harutyunyan G., Israelyan D., Khachatryan M., Exploring the Origin of Multiwavelength Emission from High-Redshift Blazar B3 1343 + 451, *Astrophysics*, v. 63, iss. 3, 2020, pp. 334-348.
6. Giommi P., Chang Y., Turriziani S., Glauch T., Leto C., Verrecchia F., Padovani P., Penacchioni A., Arneodo F., Barres de Almeida U., Brandt C., Capalbi M., Civitarese O., D'Elia V., Di Giovanni A., De Angelis M., Del Rio Vera J., Di Pippo S., Middei R., Perri M., Pollock A., Puccetti S., Ricard N., Ruffini R., Sahakyan N., Open Universe survey of Swift-XRT GRB fields: Flux-limited sample of HBL blazars, *Astronomy & Astrophysics*, v. 642, id.A141, 2020, 9 pp.
7. Sahakyan N., High Energy  $\gamma$ -ray variability of NGC 1275 and 3C 120, *Proceedings of the International Astronomical Union*, v. 342, 2020, pp. 172-175.
8. MAGIC Collaboration, VERITAS Collaboration, Abeysekara A., Benbow W., Gasparyan S., Sahakyan N., Villata, M., The Great Markarian 421 Flare of 2010 February: Multiwavelength Variability and Correlation Studies, *The Astrophysical Journal*, v. 890, iss. 2, id.97, 2020, 21 pp.
9. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zarić D., MAGIC very large zenith angle observations of the Crab Nebula up to 100 TeV, *Astronomy & Astrophysics*, v. 635, id.A158, 2020, 10pp.
10. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Lohfink A., New Hard-TeV Extreme Blazars Detected with the MAGIC Telescopes, *The Astrophysical Journal Supplement Series*, v. 247, iss. 1, id.16, 2020, 24 p.
11. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Walker R., Monitoring of the radio galaxy M 87 during a low-emission state from 2012 to 2015 with MAGIC, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v.492, iss. 4, 2020, pp.5354-5365.
12. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Tammi J., Study of the variable broadband emission of Markarian 501 during the most extreme Swift X-ray activity, *Astronomy & Astrophysics*, v. 637, id.A86, 2020, 27 pp.
13. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan, S., Sahakyan N., Zarić, D., A search for dark matter in Triangulum II with the MAGIC telescopes, *Physics of the Dark Universe*, v. 28, article id. 100529, 2020.
14. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zarić, D., Broadband characterisation of the very intense TeV flares of the blazar 1ES 1959+650 in 2016, *Astronomy & Astrophysics*, v. 638, id.A14, 2020, 16 pp.
15. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Reinthal R., Unraveling the Complex Behavior of Mrk 421 with Simultaneous X-Ray and VHE Observations during an Extreme Flaring Activity in 2013 April, *The Astrophysical Journal Supplement Series*, v. 248, iss. 2, 2020, id.29.
16. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zheng W., An intermittent extreme BL Lac: MWL study of 1ES 2344+514 in an enhanced state, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 496, iss. 3, 2020, pp. 3912-3928.
17. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zarić, D., Studying the nature of the unidentified gamma-ray source HESS J1841-055 with the MAGIC telescopes, *Monthly Notices of the Royal Astronomical Society*, v. 497, iss. 3, 2020, pp. 3734-3745.
18. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zarić, D., Bounds on Lorentz Invariance Violation from MAGIC Observation of GRB 190114C, *Physical Review Letters*, v.125, iss. 2, 2020, article id.021301
19. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Kehusmaa P., Testing two-component models on very high-energy gamma-ray-emitting BL Lac objects, *Astronomy & Astrophysics*, v. 640, id.A132, 2020, 29 p.
20. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Zarić, D., MAGIC observations of the diffuse  $\gamma$ -ray emission in the vicinity of the Galactic center, *Astronomy & Astrophysics*, v.642, id.A190, 2020, 9p.
21. MAGIC Collaboration, Acciari V., Ansoldi S., Gasparyan S., Sahakyan N., Saz Parkinson P., Detection of the Geminga pulsar with MAGIC hints at a power-law tail emission beyond 15 GeV, *Astronomy & Astrophysics*, v. 643, id.L14, 2020, 6 p.

# ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

*Ակադեմիկոս-քարտուղար՝ թղթակից անդամ Ռ.Հարությունյան*

*Գլխավոր քարտուղար՝ Ս.Աճեմյան*

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնները, Ա.Թախտաջյանի անվ. բուսաբանության, Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի, Գ.Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Մոլեկուլային կենսաբանության, Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտները:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են 7 ակադեմիկոս, 10 թղթակից և 27 արտասահմանյան անդամներ, 12 պատվավոր դոկտոր:

Հաշվետու տարում անց են կացվել բաժանմունքի 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 6 նիստ և աշխատանքային խորհրդակցություններ, գիտական կազմակերպությունների 8 հաշվետու ժողով: Համավարակի պատճառով բաժանմունքի բոլոր ժողովներն անցկացվել են առցանց:

Բաժանմունքի տարեկան ժողովում լսվել է 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության վերաբերյալ ակադեմիկոս-քարտուղար Ռ.Հարությունյանի զեկուցումը: Քննարկվել են կազմակերպությունների հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքները, ԳԱԱ արտասահմանյան անդամների՝ միջազգային գիտական կապերի զարգացման գործում ներգրավման հնարավորությունները: Քննարկվել են համավարակի հետ ծագած խնդիրները:

Բյուրոյի 6 նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի 2020թ. աշխատանքային պլանը, բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2019թ. բազային ֆինանսավորման, ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, պետական նպատակային ծրագրերի մասին հաշվետվությունները, 2020-21 ուստարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության հարցերը, ԳՀԿ-ների՝ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման հայտերը և 2020թ. գիտակազմակերպական գործունեության հաշվետվությունները:

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվել է Լ.Սահակյանը:

Հաշվետու տարում բաժանմունքը կազմակերպել է կյոռ սեղան՝ նվիրված ՀՀ-ում համավարակի խնդիրներին, ներկայացվել են վիրուսաբանների զեկուցումներ, քննարկվել են ՀՀ կառավարության օժանդակությամբ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում COVID-19-ի ախտորոշման թեստերի արտադրման հեռանկարները: Ինստիտուտի տնօրենության և աշխատակիցների ջանքերի շնորհիվ Հայաստանում առաջին անգամ իրականացվել է 100 000 ախտորոշման թեստի արտադրություն, որոնք հանձնվել են ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ախտորոշման լաբորատորիաներին: Համավարակի դեմ պայքարի և ուսումնասիրության գիտատեխնիկական բազայի մշակման և ներդրման, այլ համավարակների դեմ պայքարի նպատակով ստեղծվել է COVID-19-ի գիտական ուսումնասիրությունների համակարգման Գիտական խորհուրդ (նախագահ՝ ակ. Ա.Սաղյան):

ԳՀԿ-ները կատարել են ռազմական-պաշտպանական մի շարք միջոցառումներ, հավաքվել է հումանիտար օգնություն պատերազմից տուժած Արցախի և Հայաստանի բնակիչների համար:

ԳԱԱ մրցութային հանձնաժողովի նիստերում քննարկվել է անհրաժեշտ սարքեր ձեռքբերելու համար ինստիտուտներին ֆինանսավորում տրամադրելու հարցը:

Բաժանմունքի ԳՀԿ-ներն անցկացրել են հանրապետական և միջազգային 13 միջոցառում, այդ թվում՝ ուսուցողական սեմինարներ, գիտաժողովներ, գիտարշավներ, որոնց մասնակցել է 741 մարդ (492-ն արտերկրից):

Բաժանմունքի ԳՀԿ-ները տպագրել են 244 հոդված (150-ն արտասահմանում), 72 թեզիս (47-ն արտասահմանում), 4 մենագրություն, 3 ուսումնական ձեռնարկ և ստացել 2 արտոնագիր:

Բաժանմունքի 5 մասնագիտական խորհուրդներում պաշտպանվել են 6 թեկնածուական և 2 դոկտորական ատենախոսություններ:

Հաշվետու տարում կատարված աշխատանքի հիման վրա կարելի է եզրակացնել, որ բաժանմունքի ԳՀԿ-ների աշխատակիցները, չնայած համավարակին և ռազմական դրությանը, կարողացել են առավելագույնս կենտրոնացնել իրենց հնարավորություններն ու ուժերը, պահպանել գիտական պոտենցիալը, իրականացնել գիտական ծրագրեր:

## ԷԿՈԼՈԳԱՆՈՍՖԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան  
Փոխտնօրեն՝ աշխ.գ.թ.՝ Շ.Ասմարյան  
Գիտքարտուղար՝ կ.գ.թ.՝ Ն.Մաղաքյան  
Էլեկտրոնային փոստ՝ ecocentr@sci.am, info@cens.am  
Կայքէջ՝ www.cens.am

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Հրազդան գետի՝ Երևանի տարածքով հոսող հատվածի հատակային նստվածքներում 2019թ. համեմատ գրանցվել է Zn և Pb տարրերի միջին պարունակությունների նվազում համապատասխանաբար 0.7 և 0.6 անգամ, ինչը, հավանաբար, COVID-19 համավարակով պայմանավորված աղտոտման աղբյուրներից տեղի ունեցող արտանետումների նվազման հետևանք է: Երևանի տարածքում աճող ծառատեսակների տերևներում ուսումնասիրվել են Pb, Ni, Mo, Cu, Zn-ի պարունակությունները և դրանց քանակությունների սեզոնային փոփոխականությունը: Արդյունքում հաստատվել է, որ վեգետացիայի շրջանում ուսումնասիրված տարրերից միայն Mo և Pb են դրսևորել տերևներում կուտակման միտում: Ավելին, նրանց համեմատաբար բարձր պարունակությունների տարածական կոռելյացիան աղտոտման հայտնի աղբյուրների հետ հաստատում է, որ Mo և Pb-ի տերևներում առկա քանակությունները կարող են հանդիսանալ քաղաքային միջավայրում առկա աղտոտման աղբյուրների կենսաինդիկացիոն ցուցիչներ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Տեփանոսյան):

Գնահատվել է բնական ռադիոակտիվության տեխնոլոգիական ավելացումը ՀՀ լեռնահանքային խոշոր կենտրոն Ալավերդի քաղաքում: Քաղաքային հողերում ռադիոակտիվ նյութերի բնական տարածաբաշխման վրա վերադրվել են  $^{238}\text{U}$ ,  $^{226}\text{Ra}$ ,  $^{232}\text{Th}$  և  $^{40}\text{K}$  տեխնածին կարգաշեղումները, որոնք ձևավորվել են Ալավերդու պղնձաքիմիական կոմբինատի ազդեցությամբ, որտեղ որպես հումք կիրառվում է Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի բնական ռադիոնուկլիդներով հարուստ խտանյութը (ղեկ.՝ կ.գ.թ. Օ.Բեյլանա):

Տափաստանային գոտու թույլ արածեցված արոտներում իրականացվել է արդյունավետության, կերային տարբեր արժեք ունեցող մարգագետնային բուսախմբերի մասնաբաժնի, տերև/ցողուն հարաբերության, տերևներում քլորոֆիլների և հողում N, P պարունակության գնահատում: Ուսումնասիրված փորձատեղամասերի բերքը տատանվել է 84-174, 120-196 և 104-244 գ/մ<sup>2</sup> (գերակշռել են հացազգիները և տարախոտերը), հացազգիների,

բակլազգիների և տարախոտերի տերև/ցողուն հարաբերությունը՝ համապատասխանաբար 0.4-0.6, 0.8-1.0 և 0.6-0.8, Ա, Բ քլորոֆիլների պարունակությունը՝ 133-215 և 72-88 մգ/100գ, իսկ N, P-ը՝ 0.3-0.5 և 0.4-0.5%-ի սահմաններում: Տվյալ փորձերում կորեյացիոն կապը բերքի և մնացած ցուցանիշների միջև եղել է թույլ արտահայտված (դեկ.՝ գյուղ.գ.դ. Բ.Մեծունց):

Արբանյակային լուսանկարների վերծանմամբ գյուղատնտեսական մշակաբույսերի ծանր մետաղներով աղտոտման գնահատման նպատակով ՀՀ Սյունիքի մարզի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի տերևներում ծանր մետաղների (Mo, Cu, Ni, Cd) պարունակությունների տվյալները համադրվել են SPOT 7 արբանյակային լուսանկարից ստացված տվյալների հետ: Վիճակագրական (MLR) և արհեստական նեյրոնային ցանցերի մոդելների կիրառմամբ հաջողվել է վեր հանել լոբու տերևներում Mo-ի և Cu-ի պարունակությունների և SPOT 7 արբանյակային լուսանկարում սպեկտրալ անդրադարձման արժեքների միջև դիտվող կոռելյացիոն կապերը: Landsat արբանյակային լուսանկարների 1987-2015թթ. արխիվի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ տոպոգրաֆիական C-ուղղմամբ լուսանկարների նախնական մշակումը բարելավում է դրանց դասակարգման ընդհանուր ճշտությունը 2%-ով (դեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

ՀՀ-ում արտադրված ձկան և մեղրի մեջ հայտնաբերվել են արգելված հականաբեային նյութերի մնացորդային քանակություններ, սակայն նշված մթերքների սպառումով պայմանավորված՝ առողջական ռիսկերը գտնվել են թույլատրելի տիրույթում: Մշակվել է սննդամթերքի անվտանգության համակարգերի ներդրման մեթոդական ուղեցույց (գիտա-մեթոդական բնույթի աշխատանք) (դեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

Շարունակվել է աջակցությունը «Կրթություն հանուն կայուն զարգացման» միջազգային գործընթացին և նպաստել է գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով: Հաշվի առնելով առցանց կրթության կարևորությունը և կարևորելով ՄԱԿ-ի «Կայուն զարգացման օրակարգ 2030» փաստաթղթի 4-րդ՝ «Որակյալ կրթություն» նպատակը՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն Երևանի N 198 ավագ դպրոցի հետ՝ սկսել կրթական տարածաշրջանային հեռավար ծրագիր, մշակվել է ծրագրի համառոտ հայեցակարգը (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«Էկոլոգաերկրաքիմիական հետազոտությունները որպես որոշումների ընդունման հենք (Ալավերդի քաղաքի օրինակով)» նախագծի շրջանակներում ամփոփվել են Ալավերդի քաղաքի էկոլոգաերկրաքիմիական համալիր հետազոտությունների արդյունքները: Գնահատվել է քաղաքի ֆունկցիոնալ նշանակության տարբեր տարածքներում (նախադպրոցական հաստատություններ, արդյունաբերական գոտի) և տարբեր միջավայրերում (հող, ճանապարհային փոշի, հատակային նստվածք) պոտենցիալ տոքսիկ տարրերի (ՊՏՏ) տարածաբաշխման էկոլոգաերկրաքիմիական առանձնահատկությունները, էկոլոգիական և ազգաբնակչության առողջությանն ուղղված ռիսկերը: Հայաստանի էկոլոգաերկրաքիմիական հետազոտություններում տվյալների մշակման ավանդական մեթոդներն առաջին անգամ համադրվել են մեքենայական ուսուցման մեթոդների հետ՝ բացահայտելու ՊՏՏ երկրաքիմիական ասոցիացիաները և դրանց ծագման առանձնահատկությունները: Վերջիններս համադրելով ազգաբնակչության առողջական ռիսկերի գնահատման արդյունքների հետ՝ իրականացվել է քաղաքի միջավայրի էկոլոգիական իրավիճակի ամբողջական գնահատում և ստեղծվել է մասնագիտական ինտերակտիվ էլեկտրոնային ատլաս: Այն կարող է հենք հանդիսանալ պատկան մարմինների համար քաղաքի գրագետ տարածքային պլանավորման և շրջակա միջավայրի խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների կիրառման գործում:

«Քաղաքի բազմազենտային էկոլոգատնտեսական համակարգի կայուն զարգացումն ապահովող մոդելների, մեթոդների և ծրագրերի համալիրի մշակում՝ ՀՀ ք. Երևանի օրինակով» հայ-ռուսական ծրագրի շրջանակներում մշակվել է քաղաքային (Երևանի օրինակով) էկոլոգատնտեսական համակարգերի մաթեմատիկական և իմիտացիոն մոդելների համալիր, որոնց կիրառմամբ հետազոտվել են մթնոլորտի վնասակար արտանետումների նվազման հնարավորությունները՝ թիրախավորելով քաղաքի պաշտպանվող, սոցիալական տարբեր նշանակության տարածքները, մասնավորապես Երևանի նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարածքները: Մշակվել և AnyLogic-ում գործարկվել է նոր ազենտային մոդել, որը հաշվի է առնում կանաչապատման կամ քաղաքային կանաչ ենթակառուցվածքների հորիզոնական-ուղղաձիգ համակարգերի և արտանետումների փոխազդեցությունը, թույլ է տալիս կառավարել նմանատիպ համակարգերի բնութագրիչները կանաչապատման կլաստերների ինդիվիդուալ մակարդակում: Արդյունքները ներկայացվել են քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանմանը՝ նպաստելու Երևանի հորիզոնական-ուղղաձիգ կանաչապատմանը և կանաչ ենթակառուցվածքների զարգացմանը՝ դրանք դիտելով որպես բնահեն լուծումներ (դեկ.՝ աշխ.գ.թ. Լ.Սահակյան):

«Հայաստանի տարածքի ռադիոէկոլոգիական մոնիթորինգ: Փուլ երկրորդ» նախագծի շրջանակներում (դեկ.՝ կ.գ.թ. Օ.Բելյանա) ՀՀ տարածքի համար առաջին անգամ գնահատվել են շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչներում բնական ռադիոնուկլիդների ֆոնային ու տեխնածին ռադիոնուկլիդների հիմնագծային ակտիվության և բաշխվածության բնութագրերը: Արդյունքները ցույց են տվել, որ բնական  $^{238}\text{U}$ ,  $^{226}\text{Ra}$ ,  $^{232}\text{Th}$ -ի ակտիվությունը հոդերում կախված է մայրապարների քիմիական կազմից, բնական  $^{40}\text{K}$ -ի համար նկատելի է բացասական, իսկ տեխնածին  $^{137}\text{Cs}$ -ի համար՝ դրական կոռելյացիա տեղանքի բացարձակ բարձրության աճի հետ:

«Երևան քաղաքի տարածքում ջերմային դաշտերի ուսումնասիրության հեռազննման մեթոդի մշակում» նախագծի շրջանակներում կատարվել է գերբարձր լուծաչափի տվյալներից քաղաքի տարածքում ջերմային դաշտերի վերձանման հայտանիշերի մշակում և Landsat արբանյակային լուսանկարների կիրառմամբ Երևանի տարածքում մակերևութային ծածկի տարածաժամանակային փոփոխությունների և էկոլոգիական հարմարավետության վրա ջերմային դաշտերի ազդեցության գնահատում: Արդյունքում մշակվել են արբանյակային լուսանկարներից Երևան հողածածկի դասակարգման և տարածաժամանակային փոփոխությունների գնահատման մեքենայական ուսուցման ալգորիթմներ, բացահայտվել են քաղաքի մակերևութային ծածկի և ջերմային դաշտերի տարածաժամանակային փոփոխության առանձնահատկությունները:

«Գերբարձր լուծաչափի տվյալների կիրառմամբ լեռնային լճերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի մշակում» հայ-ռուսական նախագծի շրջանակներում իրականացվել է Սևանա լճի ջրի ջերմաստիճանը և պոտորությունը բնութագրող մի շարք ցուցանիշների գնահատման համար ԱԹՍ լուսանկարահանում և ստացված գերբարձր լուծաչափի լուսանկարների (<2մ) կիրառման պիտանելիության գնահատում: Այնուհետև կատարվել է արբանյակային նկարների (Landsat 8 OLI/TIRS, Sentinel-2) հեռազննման մոդել-ալգորիթմների ստուգաչափում՝ ԱԹՍ-ից ստացված գերբարձր լուծաչափի բազմասպեկտրալ լուսանկարների հետ համադրմամբ: Արդյունքում ստուգաչափվել են լճերի ափագծերի վերձանման և փոփոխության գնահատման, պոտորության, սառցակալման, մակերևութային ջերմաստիճանի Landsat և Sentinel արբանյակային լուսանկարներից վերձանման ալգորիթմները: Նաև բացահայտվել է, որ ԱԹՍ լուսանկարները ջրի որակի գնահատման համար կիրառելի չեն, քանի որ միայն ջրային միջավայրը պատկերող լուսանկարների ֆրագմենտներով օրթոմոզափկա կազմել հնարավոր չէ: Վերջինիս կազմման համար լուսանկարում պար-

տաղիր է ավային հատվածի առկայությունը, ուստի առաջադրված խնդիրների լուծման դեպքում դրանք կարող են օգտագործվել միայն ավագծի հեռագնման աշխատանքներում:

«Երկրաէկոլոգիական հետազոտություններում երկրատարածական տվյալների մշակման գործում մեքենայական ուսուցման կիրառման կարողությունների հզորացում» նախագիծն ուղղված է հզորացնելու էկոլենտրոնի կարողությունները գեոէկոլոգիական հետազոտություններում երկրատարածական տվյալների մշակման գործում մեքենայական ուսուցման մեթոդների կիրառումը: Նախատեսվում է միջազգային համագործակցություն Պավիայի համալսարանի հետ (Իտալիա), իրականացվել են տեղեկատվության և սարքավորումների ձեռքբերման նախապատրաստական փուլի աշխատանքներ (դեկ.՝ աշխ.գ.թ. Շ.Ասմարյան):

«Երևան քաղաքում իրացվող սննդամթերքում ծանր մետաղների ռիսկի գնահատումը» նախագծի շրջանակում առաջին անգամ, ընդհանուր սննդակարգային ուսումնասիրության մեթոդի կիրառմամբ, իրականացվել է Երևանի բնակչության կողմից հիմնական մթերքների (հաց-հացամթերք, կաթ-կաթնամթերք, միս-մսամթերք, հավկիթ, մրգի, բանջարեղեն, սև սուրճ և ծորակի ջուր) սպառման միջոցով ծանր մետաղների (Pb, Cd, As, Hg, Mo, Cu, Fe) ռիսկի գնահատում: Մթերքների ընդհանուր սպառման դեպքում As և Cu տարրերի ոչ քաղցկեղածին ռիսկը գերազանցել է անվտանգության շեմը (THQ>1):

«Երևան քաղաքում իրացվող սննդամթերքում տրանսճարպաթթուների ռիսկի գնահատումը» նախագծի շրջանակում առաջին անգամ ուսումնասիրվել է Երևանի բնակչության կողմից սպառվող մի շարք մթերքներում տրանսճարպաթթուների պարունակությունը, որը համեմատաբար բարձր է եղել պիցցայի, բուլկու, կրուասանի, հոթ-դոգի և բուրգերի նմուշներում:

«Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման գիտամեթոդական կարողությունների հզորացում» նախագիծը գլխավորապես նպատակաուղղված է ՀՀ-ում սննդագիտական հետազոտությունների կարողությունների հզորացմանը՝ ազգաբնակչության կողմից սննդանյութերի ընդունման և սնման կարգավիճակի գնահատման համար: Մեկնարկային տարում իրականացվել են ՀՀ-ում սննդանյութերի հետազոտությունների իրականացման գիտամեթոդական հիմունքների մշակման և լաբորատոր կարողությունների ձևավորման նախապատրաստական աշխատանքներ (դեկ.՝ սննդ.գ.դ. Դ.Պիպոյան):

«Գյուղամերձ արոտների «հող-բույս» համակարգի հիմնական չափորոշիչները և բուսածածկի վերականգնման կանխատեսման հնարավորությունը» նախագծի շրջանակներում (դեկ.՝ կ.գ.թ. Մ.Նավասարդյան) շարունակվել են օրացուցային պլանով նախատեսված հետազոտությունները, կատարվել է տվյալների վիճակագրական վերլուծություն և ամփոփիչ հաշվետվության ձևակերպում: Ուսումնասիրված մոդելային տարածքները տարբերվել են լերկացվածության (10-67%), արդյունավետության (60-307գ/մ<sup>2</sup>), տերևային մակերեսի (26-112դմ<sup>2</sup>/մ<sup>2</sup>), բույսերում և հողերում N, P, K-ի գումարային պարունակության (2.6-3.8 և 1.4-1.9%) ցուցանիշներով: Ստացված ռեգրեսիոն մոդելները բացահայտել են բերքի կախվածության աստիճանը հողերի լերկացվածությունից և որոշ չափորոշիչների համատեղ ազդեցությունից, որոնք կարելի է օգտագործել արոտների բարելավման ծրագրերում:

Ամփոփվել է «Ավագ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել» հայ-ռուսական նախագիծը (դեկ.՝ կ.գ.թ. Գ.Պողոսյան), որի արդյունքն է ՅՈՒՆԵՍԿՕ-ԿԿԶ ամբիոնի կողմից մշակված քաղաքացիական կոմպետենտության մոդելը ոչ ֆորմալ և ֆորմալ էկոլոգիական կրթության զարգացման հեռանկարներում:

«Արագած լեռնազանգվածում ռադիոէկոլոգիական իրավիճակի գնահատման նորարարական մոտեցումներ: Ռադիոնուկլիդային ֆոն և հիմնագիծ, միգրացիա և ռիսկ» ծրագրի շրջանակներում (դեկ.՝ Ն.Մովսիսյան) մշակվել է դաշտային աշխատանքների իրականացման պլան, մշակվել և ներդրվել է որակի ապահովման ու վերահսկման պլան:



## Հրապարակումներ

### ***Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր***

1. Սաղաթեյան Ա.Վ., Սահակյան Լ.Վ., Տեփանոսյան Գ.Հ., Արմավիրի մարզի գյուղատնտեսական հողերի երկրաքիմիական ատլաս, Ե., «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» հրատ., 2020, 35 էջ:
2. Межунц Б.Х., Навасардян М.А. Биопродуктивность горных пастбищ и сенокосов Армении, Ер., изд. Центра эколого-ноосферных исследований НАН РА, 2020, 210 с.

### ***Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ***

3. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Մենագրությունների անվտանգության կառավարման համակարգեր (մեթոդական ուղեցույց), Ե., «ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» հրատ., 2020, 52 էջ:

### ***Հոդվածներ, զեկուցումներ***

4. Հովսեփյան Ա.Ա., Արբանյակային լուսանկարների կիրառման հնարավորությունները Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրների ուսումնասիրման գործում, Ե., «Գիտություններ Երկրի մասին» հանդես, N 2, 2020, էջ 57-71:
5. Մովսիսյան Ն.Է., Մթնոլորտով տեղափոխվող ռադիոնուկլիդները Հայաստանում աճող մամուռներում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 3 (72), 2020, էջ 37-44:
6. Պիպոյան Դ.Ա., Արբահամյան Ա.Ս., Հովհաննիսյան Ա.Ս., Ծանր մետաղների ռիսկի գնահատումը հացամթերքի սպառման դեպքում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N (69)1, 2020, էջ 113-117:
7. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Ստեփանյան Ս.Ա., Սարգսյան Ա.Է., Երևան քաղաքի սուպերմարկետներում իրացվող աղցանների մանրէաբանական աղտոտվածության գնահատում, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N(71)3, 2020, էջ 96-100:
8. Պողոսյան Գ.Ս., Գասպարյան Ա.Ս., Էթնոմշակութային ավանդույթների համատեքստում սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորումը, Ե., «Արդի հոգեբանություն» հանդես, N 2(7), 2020, էջ 79-89:
9. Սարգսյան Ս.Ա., Նավասարդյան Մ.Ա., Մեծունց Բ.Խ., Ուղղաձիգ գոտիների և բույսերի աճման շրջանի ազդեցությունը բնական արոտների կենսազանգվածի կուտակման վրա, Ե., «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N 3 (71), 2020, էջ 72-77:
10. Տեփանոսյան Գ.Հ., Հովսեփյան Ա.Ա., Մուրադյան Վ.Ս., Ասմարյան Շ.Գ., Երևան քաղաքի մակերևութային ծածկի փոփոխության տարածաժամանակային ուսումնասիրություն արբանյակային հեռազննման տվյալների կիրառմամբ, Ե., «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին», N 74(2), 2020, էջ 72-83:
11. Бабаян Г.Г., Сакоян А.Г., Тяжёлые металлы и мышьяк в питьевой воде и оценка риска здоровью населения региона с развитой горнодобывающей промышленностью, Мытищи, “Гигиена и санитария”, N99 (7), 2020, DOI: <https://doi.org/10.33029/0016-9900-2020-99-7>.
12. Гаспарян А.М., Матин Б.В., Погосян Г.С., Татоян С.Р., Решение содержательных проблем экологического образования в общем образовании через интегрированные предметы, материалы IX-ой всерос. научно-практич. конф. “Молодежь и будущее: профессиональная и личностная самореализация”, Владимир, 2020, с. 29-30.
13. Навасардян М.А., Саргсян Т.А., Межунц Б.Х., Сезонная динамика формирования наземной биомассы естественных сенокосов Армении, Оренбург, “Известия Оренбургского гос. аграрного ун-та”, N3 (83), 2020, с. 108-113.
14. Саргсян Т.А., Навасардян М.А., Межунц Б.Х. Площадь листьев и фотосинтетические пигменты доминирующих растений присельных пастбищ степного пояса г. Арагац Армении, Пенза, “Нива Поволжья Пензенского гос.аграрного ун-та”, N3 (56), 2020, DOI 10.36461/NP.2020.56.3.016, с.42-47.
15. Akopov A.S., Beklaryan L.A., Saghatelyan A. K., Belyaeva O.A., Sahakyan L.V., Tepanosyan G.H., Agent-based modelling of mutual influence between horizontal-vertical greenery systems and air pollutants with the use of the city of Yerevan, Armenia as a case study, “Artificial Societies”, v.15 (1), 2020, pp. 7-25, DOI: 10.18254/S207751800008317-7
16. Beglaryan M., Markosyan D., The average cost of residents’ diet in Yerevan, “Agriscience and Technology”, N (70)4, 2020, pp. 29-33.

17. Belyaeva O., Pyuskyulyan K., Movsisyan N., Sahakyan L., Saghatelyan A., Radioecological Studies in Armenia: A Review, "Electronic Journal of Natural Science", v.1(34), 2020, pp. 34-40.
18. Buchner J., Yin H., Frantz D., Kuemmerle T., Askerov E., Bakuradze T., Bleyhl B., Elizbarashvili N., Komarova A., Lewińska E. K., Rizayeva A., Sayadyan H., Tank B., Tepanosyan G., Zazanashvili N., Radeloff V., Land-cover change in the Caucasus Mountains since 1987 based on the topographic correction of multi-temporal Landsat composites, "Remote Sensing of Environment", v.248, 2020, 111967, <http://doi.org/10.1016/j.rse.2020.111967>
19. Hovhannisyan A., Bioconcentration of DDT and its isomers in carrot roots grown in a rural community of Aramus, Kotayk, "Agriscience and Technology", N (70)4, 2020, pp. 69-74.
20. Hovhannisyan H., Gevorgyan A., Ecological assessment of elm species in Yerevan, Armenia, "Katchar Scientific Periodical", N 2, p. 7-19.
21. Medvedev A., Telnova N., Alekseenko N., Koshkarev A., Kuznetchenko P., Asmaryan Sh., Narykov A. UAV-Derived Data Application for Environmental Monitoring of the Coastal Area of Lake Sevan, Armenia with a Changing Water Level. Remote Sensing, v. 12, Issue 22, 2020, 3821, <https://doi.org/10.3390/rs12223821>
22. Muradyan V., Tepanosyan G., Asmaryan Sh., Maghakyan N., Sahakyan L., Saghatelyan A., Estimating Mo, Cu, Ni, Cd Contents in the Crop Leaves Growing on Small Land Plots Using Satellite Data, "Communications in Soil Science and Plant Analysis", v. 51(1), 2020, pp. 1457-1468, <http://doi.org/10.1080/00103624.2020.1784922>.
23. Pipoyan D., Beglaryan M., Stepanyan S., Amirjanyan A., Assessment of microbiological safety of cheese and sausage products sold in the city of Yerevan, "Agriscience and Technology", 2020, pp. 75-80.
24. Pipoyan D., Beglaryan M., Stepanyan S., Gharibyan G., Dietary Exposure Assessment of Trans-Fatty Acids through Consumption of Ice-Cream in Yerevan, Armenia, "Agriscience and Technology", N(70)2, 2020, pp. 92-96.
25. Pipoyan D., Hovhannisyan A., Beglaryan M., Stepanyan S., Mantovani A., Risk assessment of dietary exposure to potentially toxic trace elements in emerging countries: A pilot study on intake via flour-based products in Yerevan, Armenia, "Food and Chemical Toxicology", v. 146, 2020, 111768, DOI: 10.1016/j.fct.2020.111768.
26. Pipoyan D., Stepanyan S., Beglaryan M., Risk assessment of potentially toxic trace elements through the consumption of tap water and black coffee in Yerevan, "Katchar Scientific Periodical", 2020, N1, pp. 7-16.
27. Pipoyan D., Stepanyan S., Beglaryan M., Stepanyan S., Mantovani A., Health risk assessment of toxicologically relevant residues in emerging countries: A pilot study on Malachite Green residues in farmed freshwater fish of Armenia, "Food and Chemical Toxicology", v.143, 2020, 111526, DOI:10.1016/j.fct.2020.111526.
28. Poghosyan G., Gasparyan A., Nurdiana N., Ridwan M., Khair Amal B., Formation of High School Students' Civic Competence in the Context of Ethno-Cultural Traditions, BirLE-Journal, Budapest International Research and Critics in Linguistics and Education, 2020, v.3, N3, pp.1521-1527, DOI: <https://doi.org/10.33258/birle.v3i3.1225>.
29. Sahakyan L., Tepanosyan G., Maghakyan N., Melkonyan G., Saghatelyan A., Mercury contents and potential risk levels in soils and outdoor dust from kindergartens of the city of Vanadzor (Armenia), "Human and Ecological Risk Assessment: An International Journal", 2020, pp .1-18, DOI:10.1080/10807039.2020.1820853
30. Tepanosyan G., Muradyan V., Hovsepyan A., Pinigin G., Medvedev A., Asmaryan Sh., Studying spatial-temporal changes and relationship of Land Cover and Surface Urban Heat Island derived through RS in Yerevan, Armenia, "Building and Environment" v. 187, J2021, 107390, <http://doi.org/10.1016/j.buildenv.2020.107390>.
31. Tepanosyan G., Saghatelyan A., Armenia / in Mosses as biomonitors of air pollution: 2015/2016 survey on heavy metals, nitrogen and POPs in Europe and beyond, Report of the ICP Vegetation, 2020, pp. 62-64.
32. Tepanosyan G., Sahakyan L., Maghakyan N., Saghatelyan A., Combination of compositional data analysis and machine learning approaches to identify sources and geochemical associations of potentially toxic elements in soil and assess the associated human health risk in a mining city, "Environmental Pollution", v. 261, 2020, 114210, <http://doi.org/10.1016/j.envpol.2020.114210>.
33. Tepanosyan G., Sahakyan L., Maghakyan N., Saghatelyan A., Identification of spatial patterns, geochemical associations and assessment of origin-specific health risk of potentially toxic elements in soils of Armavir region, Armenia, "Chemosphere" v.262, pp. 128365, 2020, <http://doi.org/10.1016/j.chemosphere.2020.128365>.

## Ա.ԹԱԽՏԱԶՅԱՆԻ ԱՆՎ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ կ.գ.թ. Ա.Ղուկասյան  
Փոխտնօրեն՝ տնտ.գ.թ. Ս.Վարդանյան  
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Լ.Մարգարյան  
Էլեկտրոնային փոստ՝ botanyinst@sci.am, botinst@sci.am  
Կայքէջ՝ www.botany.sci.am

### Մասնագիտական խորհուրդ 035՝ «Բուսաբանություն»

Նախագահ՝ թղթ.անդ. Ժ.Վարդանյան, գիտքարտուղար՝ կ.գ.դ. Գ.Օգանեզովա

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Շարունակվել են Հայաստանի ֆլորայի կենսակարգաբանական ուսումնասիրությունները, արդյունքում հաստատվել է Հայաստանում *Schoenoplectus hyppolyti* (V.Krecz. V. V. Krecz.) ex Griseb. և *S. lacustris* (L.) Palla (*Cyperaceae*) տեսակների առկայությունը:

Նույնականացվել և կրճատման նպատակով խմբագրվել են «Հայաստանի անոթավոր բույսերի որոշիչ»-ի *Acanthaceae*, *Aceraceae*, *Amaranthaceae*, *Anacardiaceae*, *Apocynaceae*, *Araliaceae*, *Balsaminaceae*, *Berberidaceae*, *Betulaceae*, *Boraginaceae*, *Asteraceae*, *Brassicaceae*, *Scrophulariaceae*, *Fabaceae*, *Rosaceae*, *Melanthiaceae*, *Colchicaceae*, *Liliaceae*, *Iridaceae*, *Ixioliriaceae*, *Orchidaceae*, *Hemerocallidaceae*, *Hyacinthaceae*, *Alliaceae*, *Amaryllidaceae*, *Convallariaceae*, *Ruscaceae*, *Asparagaceae*, *Asphodelaceae*, *Smilacaceae*, *Dioscoreaceae*, *Juncaceae*, *Cyperaceae*, *Butomaceae*, *Najadaceae*, *Alismataceae*, *Juncaginaceae*, *Potamogetonaceae*, *Zannichelliaceae*, *Araceae*, *Lemnaceae*, *Acoraceae*, *Sparganiaceae*, *Typhaceae* ընտանիքների ռուսերեն, անգլերեն, հայերեն տարբերակները:

Կատարվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանից ստացված հերբարիումային նյութերի՝ *Poaceae*, *Rosaceae*, *Amarantaceae*, *Polygalaceae*, *Scrophulariaceae*, *Crassulaceae* (կ.գ.թ. Ս.Մարգարյան), *Asteraceae-Anthemideae* (կ.գ.թ. Ն.Ղանդիլյան), *Zygophyllaceae*, *Polygonaceae*, *Santalaceae*, *Solanaceae*, *Iridaceae*, *Alliaceae*, *Liliaceae*, *Loranthaceae*, *Campanulaceae*, *Linaceae*, *Ranunculaceae* (*Ceratocephalus*) (կ.գ.դ. Մ.Հովհաննիսյան) ընտանիքների որոշումներ և վերաորոշումներ:

Ավարտվել են Մ.Մաշտոցի անվ. Մատենադարանի հետ Ստեփանոս Շահիրմանյանի աշխատության հրատարակման համատեղ աշխատանքները:

Ամփոփվել է Կարմիր սար տեղավայրի ֆլորիստիկ ուսումնասիրությունը «Վիշապաքարերի բնական միջավայրն ըստ Կարմիր սարի (Արագած) տեղավայրի նյութերի» ծրագրի շրջանակներում:

Կազմվել է Հայաստանի ֆլորայի անոթավոր բույսերի համար հայտնի ԴՆԹ-ի ուսումնասիրված տեսակների ցուցակ, որն ընդգրկում է 1650 տաքսոն:

Շարունակվել են Հայաստանի ֆլորայի *Pyrus* L. ցեղի կարգաբանական և կենսամորֆոլոգիական ուսումնասիրությունները: Ուսումնասիրվել են հազվագյուտ և էնդեմիկ մի քանի տեսակների՝ *Pyrus browiczii* Mulk., *P. daralaghezii* Mulk., *P. pseudosyriaca* Gladkova, *P. hyrcana* Fed. մորֆոլոգիական, կենսաբանական, ֆենոլոգիական առանձնահատկությունները, սածիլների և երիտասարդ բույսերի համեմատական մորֆոլոգիան: Նովոսիբիրսկի կենտրոնական բուսաբանական այգու մասնագետների հետ համատեղ կատարվել են *Chenopodiaceae* ընտանիքի *Suaeda altissima* (L.) Pall., *Suaeda heterophylla* (Kar. et Kir.) Bunge, *Suaeda salsa* (L.) Pall տեսակների կարիոլոգիական ուսումնասիրություններ: Առաջին անգամ նկարագրվել է *Suaeda heterophylla* հազվագյուտ տեսակի հայկական պոպուլյացիայի (Արարատ քաղաքի շրջակայք) քրոմոսոմային կազմը: Ուզբեկստանի գիտությունների ազգային

ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի մասնագետների հետ համատեղ իրականացվել է Հայաստանի և Ուզբեկստանի ֆլորաների *Chenopodiaceae* ընտանիքի դեղաբույսերի համեմատական ուսումնասիրություն: Արդյունքում տվյալներ են ստացվել դեղաբանական արժեքի, գիտական և ժողովրդական բժշկության մեջ օգտագործման, բնակմիջավայրերի, էկոլոգիայի և ուսումնասիրված տարածքներում այս տեսակների տարածվածության վերաբերյալ, որի հիման վրա կազմվել են համապատասխան քարտեզներ: Կատարվել է *Chenopodiaceae* ընտանիքի *Betoideae* ենթաընտանիքի որոշ տեսակների ծաղկման կենսաբանության համեմատական ուսումնասիրություն: *Beta corolliflora* Zosimovich ex Buttler և *Hablitzia tamnoides* M. Bieb. տեսակների համար բացահայտվել են ծաղկաբույլերում ծաղիկների բացման հերթականության, դիխոգամիաներում պրոտանդիաների արտահայտվածության, առեջավոր փուլում ծաղիկների բացման և փոշոտման եղանակների նույնանման հատկանիշները (ղեկ. կ.գ.դ. Մ. Հովհաննիսյան):

Հերբարիումի տիպային հավաքածուն լրացվել է 11 ընտանիքի, 17 ցեղի պատկանող 20 տեսակի և ենթատեսակային կարգի 7 տաքսոնի 29 ավթենտիկ նմուշով, որոնք պարունակում են 10 իզոտիպ, 2 սինտիպ, 1 իզոսինտիպ, 4 ավթենտիկ նմուշ: 2 չիրապարակված տաքսոն տիպիֆիկացվել են որպես ավթենտիկ նմուշներ: Հերբարիումային հավաքածուում ընդգրկվել է նաև 11 տոպոտիպ: Պիտակների տվյալները ներմուծվել են JACQ տվյալների բազա և արդեն ունեն բաց մուտք (<http://herbarium.univie.ac.at/database/search.php>): Բոլոր նմուշները սկանավորվել են և պատկերները կտեղադրվեն JACQ և GPI (<http://plants.jstor.org>) տվյալների բազաներում: Հերբարիումի տեղական բաժնի հավաքածուն հարստացվել է 15 ընտանիքի պատկանող բուսատեսակների 1637 նմուշով և ներկայումս հավաքածուի ընդհանուր թիվը 198078 է: Այն հարստացվել է 5 նոր տեսակով՝ *Allium convallarioides*, *Convallaria transcaucasina* (Liliaceae), *Aconitella hohenackeri*, *Consolida ajacis*, *Thalictrum flavum* (Ranunculaceae): Հերբարիումի ընդհանուր բաժնի հավաքածուն հարստացվել է 1 նոր տեսակով՝ *Thesium dollinerii* (Santalaceae): Կատարվել են նոր որոշված, ինչպես նաև վերաորոշված (հատկապես Apiaceae ընտանիքի) շուրջ 160 նմուշ բույսերի գրանցման և տեղադրման աշխատանքներ (ղեկ. կ.գ.թ. Մ. Ասատրյան):

«*Potentilla* ցեղի հարմարողական պոտենցիալը» թեմայով անատոմիական ուսումնասիրությունների շրջանակներում, բացի նախկինում ընդգրկված բազմամյա խոտաբույսային *P. reptans*, *P. recta*, *P. porphyreantha* տեսակներից, հետազոտվել են *P. gelida* խոտաբույսային և *Dasiphora fruticosa* թփային տեսակները՝ պայմանավորված տարբեր տիպի հատկանիշներ (բնակավայրեր, էկոլոգիա, կենսաձևեր և այլն) ունեցող նմուշների ընդլայնման անհրաժեշտությամբ: *Dasiphora fruticosa* տեսակի կարգաբանական դիրքը մնում է անորոշ, բազմաթիվ հեղինակներ այն համարում են *Potentilla* ցեղի տեսակ: Հետազոտվող տեսակների համար պատրաստվել են վեգետատիվ օրգանների՝ տերևի, տերևակոթի, տերևակիցների, էպիդերմայի, հանգույցի, ցողունի (միամյա, բազմամյա), քսիլեմայի ուսումնասիրման արդյունքներով կոճղարմատի անատոմիական պատրաստուկներ մանրամասն նկարագրություններով: Որպես նախնական արդյունք կարելի է նշել, որ տեսակների հարմարվողականությունը բացի կենսաձևից ապահովում է նաև բույսի մազածածկը, որը կազմված է տրիխոմների 3 տեսակից՝ հասարակ միաբջջե երկար, կարճ և բազմաբջջե գեղձային գլխիկով: Տրիխոմների համադրումը, դրանց քանակը, տարածումը բույսի մակերեսին տարբերվում են տարբեր բնակավայրերից և էկոտոպերից տեսակների մոտ: *Potentilla* ցեղի տեսակների ադապտիվ համակարգում կարևոր դեր ունեն նաև տերևակիցները: Իրենց զարգացման աստիճանը, մազածածկի տիպը տեսակից տեսակ փոխվում է՝ կապված տեսակներին բնորոշ էկոլոգիական պայմաններից (ղեկ. կ.գ.դ. Գ. Օգանեզովա):

Պալինոլոգիական ուսումնասիրությունների շրջանակում շարունակվել են «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկափոշու Ատլաս»-ին վերաբերող ուսումնասիրությունները:

*Rosaceae* Juss. ընտանիքի *Amelanchier* Medik., *Amygdalus* L., *Armeniaca* Mill., *Cerasus* Juss., *Cotoneaster* Medik., *Crataegus* L., *Cydonia* Mill., *Malus* Mill., *Mespilus* L., *Padus* Mill., *Persica* Mill., *Prunus* L. ցեղերի 36 տեսակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա (լուսային (ԼՄ) և սկաներային էլեկտրոնային (ՄԷՄ) մանրադիտակների մակարդակով) ամփոփվել են աշխատանքները: Իրականացվել է *Berberis* L. (*Berberidaceae* Juss.), *Betula* L. (*Betulaceae* Gray), *Lonicera* L. (*Caprifoliaceae* Juss.), *Carpinus* L., *Corylus* L. (*Corylaceae* Mirb.), *Ephedra* L. (*Ephedraceae* Dumort.), *Astragalus* L., *Colutea* L., *Onobrychis* Mill., *Prosopis* L. (*Fabaceae* Lindl.), *Rhamnus* (*Rhamnaceae* Juss.), *Populus* L. (*Salicaceae* Mirb.), *Juniperus* L. (*Cupressaceae* Bartlett), *Tamarix* L. (*Tamaricaceae* Link) ցեղերի որոշ ներկայացուցիչների ծաղկափոշու պատրաստուկների պատրաստում (2 հիմնական մեթոդով) լուսային մանրադիտակի մակարդակով:

Ավարտվել են Անդրկովկասի և հարևան տարածաշրջանների ֆլորայի *Quercus* ցեղի (*Fagaceae* Dumort.) *Quercus* և *Heterobalanus* ենթացեղերի 19 տեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունները (ԼՄ և ՄԷՄ մակարդակով): Ստացված տվյալները թույլ են տվել ենթադրել, որ ծաղկափոշու քանակի զգալի միատարրությունը (հատկապես *Quercus* ենթացեղում), երկրորդային սպորոպոլենինի առկայությունը ծաղկափոշու մակերևույթին, օրբիկուլների առկայությունը փոշանոթներում վկայում են այս խմբում տեսակառաջացման ակտիվության համեմատաբար բարձր աստիճանի մասին:

«Հարավային Անդրկովկասի *Salsoloideae* ենթաընտանիքի (ընտ. *Chenopodiaceae* Vent.) պալինոկարգաբանությունը» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Ա.Հայրապետյան) ուսումնասիրվել են *Salsola* s. l. ցեղի 12 տեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունները (ԼՄ և ՄԷՄ մակարդակով): Ստացված տվյալները մի կողմից մատնանշում են *Climacoptera* և *Halothamnus* ցեղերի ներկայացուցիչների, ինչպես նաև *Kali tragus* (L.) Scop. տեսակի որոշ մեկուսացումը *Salsola* s. l. ցեղի սահմաններում, մյուս կողմից՝ *Caroxylon* ցեղի տարասեռությունը և նրա սերտ կապերի առկայությունը *Kali* և *Kaviria* ցեղերի հետ: Իրականացվել են *Anabasis* L., *Girgensohnia* Bunge ex Fenzl., *Halanthium* K. Koch., *Halimocnemis* Bunge., *Noaea* Moq., *Petrosimonia* Bunge, *Seidlitzia* Bunge in Boiss. ցեղերի ներկայացուցիչների ծաղկափոշու պատրաստուկների պատրաստման աշխատանքներ (2 հիմնական մեթոդով) լուսային մանրադիտակի մակարդակով ուսումնասիրության նպատակով: Կատարվել է առանձին նմուշների ծաղկափոշու միկրոլուսանկարում (ԼՄ), ֆոտոադյուսակների կազմում, գրականության տվյալների մշակում:

«Հայաստանի ֆլորայի Հիբիկազգիների (*Iridaceae*) ընտանիքի ներկայացուցիչների պալինոկարգաբանությունը» թեմայի շրջանակներում իրականացվել են *Crocus* L., *Gladiolus* L. և *Iris* L. ցեղերի ներկայացուցիչների ծաղկափոշու պատրաստուկների պատրաստման աշխատանքներ (2 հիմնական մեթոդով) լուսային մանրադիտակի մակարդակով ուսումնասիրություններ իրականացնելու համար: Կատարվել են *Crocus* L. ցեղի 2 տեսակի՝ *C. adamii* J. Gay. և *C. speciosus* M. Bieb. առանձին նմուշների ծաղկափոշու միկրոլուսանկարումներ (ԼՄ): Ուսումնասիրվել են ՀՀ տարածքում կանաչապատման մեջ լայնորեն օգտագործվող *Buxus sempervirens* L. (*Buxaceae* Dumort.) ալերգեն տեսակի ծաղկափոշու մորֆոլոգիական առանձնահատկությունները (ԼՄ, ՄԷՄ մակարդակով): Ստացված տվյալները կարող են օգտագործվել աերոպալինոլոգիական ուսումնասիրություններում՝ օդում տարածված ծաղկափոշու տաքսոնոմիական կազմը պարզելու, ալերգեն բույսերի ծաղկման տարածաշրջանային օրացույց կազմելու համար (ղեկ.՝ Կ.Գ.Պ. Ա.Հայրապետյան):

Հնէաբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակում սկսվել է ՀՀ տարբեր ֆլորաների, դրանց նմուշների վերաբերյալ տվյալների բազաների ստեղծումը: Կատարվել են ՀՀ տարածքի մեզոզոյան ֆլորաների ուսումնասիրություններ (Ջերմանիսի տրիասի, Հովքի յուրայի, Խնձորուտի կավճի ժամանակաշրջանների ֆլորաները): Ուսումնասիրվել են

Լոռու լճերի ջրային ֆլորաների պատմությունը և լճերի ջրաքիմիական կազմը Սանկտ Պետերբուրգի մասնագետների հետ համատեղ:

«Հորթունի պլիոցենյան ֆլորան (Հայաստան)» թեմայի շրջանակներում հետազոտություններով ընդհանուր առմամբ հայտնաբերվել և որոշվել է 61 տաքսոն, որոնք պատկանում են բարձրակարգ բույսերի 4 բաժնի, 5 դասի, 29 ընտանիքի, 39 ցեղի: Հորթունի ֆլորայի 61 տաքսոնից 47-ը որոշվել են մինչև տեսակ:

«Սևանի ավազանի հոլոցենի ֆլորայի և բուսականության առանձնահատկություններն ըստ Ծովինարի տորֆերի հնէաբուսաբանական տվյալների» թեմայի շրջանակներում շարունակվել են Սևանի ավազանի բրածո և ժամանակակից ծաղկափոշու ուսումնասիրությունները: Ամփոփվել են մոտ 90 բրածո տաքսոնի վերաբերյալ տվյալները: Շարունակվել են Սևանի ավազանի բրածո և ժամանակակից պտղաբանական ուսումնասիրությունները: Ամփոփվել են շուրջ 60 բրածո տաքսոնների տվյալները: Ժամանակակից համեմատական նյութի հավաքածուները լրացնելու նպատակով հավաքվել են մոտ 20 տեսակ ծաղկավոր բույսերի սերմեր:

Շարունակվել են բուսաբանական թանգարանի կառուցման աշխատանքները: Մի շարք հավաքածուների համար ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա, կատարվել են ինֆրաստրուկտուրայի բարելավման աշխատանքներ (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Գաբրիելյան):

Երկրաբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակում շարունակվել են Հայաստանի բուսական համակեցությունների փոփոխությունների, էկոհամակարգերի և բնակմիջավայրերի, 2016թ. հրապարակված, դասակարգման նոր սխեմայի հստակեցման ուղղությամբ տարվող աշխատանքները: Հատուկ ուշադրություն է դարձվել հազվագյուտ էկոհամակարգերին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը կընդգրկվի երկլեզու «Հայաստանի էկոհամակարգերի Կարմիր գրքում»: Ուսումնասիրություններն իրականացվել են ինչպես Հյուսիսային, այնպես էլ Կենտրոնական և Հարավային Հայաստանում: Արդյունքում առանձնացվել է 83 հազվագյուտ էկոհամակարգ, որոնց մեծ մասը (մոտ 70-ը) մանրակրկիտ նկարագրված է:

Ավարտվել է 2019թ. բուսականության գիտության միջազգային ասոցիացիայի չոր խոտաբուսային համակեցությունների խմբի կողմից Հայաստանում իրականացված միջազգային գիտարշավի հերթաբիրտմային նյութերի մշակումը, բոլոր տվյալները մուտքագրվել են միջազգային տվյալների բազա:

Շարունակվել են Հայաստանի մերձալպյան և ալպյան գոտիների ֆլորայի և բուսականության ուսումնասիրությունները: Մասնավորապես ընդհանրացվել են կովկասյան մրտավարդի (*Rhododendron caucasicum*) պոպուլյացիայի ժամանակակից վիճակի և տարածվածության տվյալները: Վայոց Ձորի մարզում սկսվել է «Անհետացման վտանգի տակ գտնվող տանձենու տեսակների պահպանությունը և դրանց պոպուլյացիաների կենսոնակության ապահովումը» ծրագիրը, որի շրջանակներում իրականացվել են դաշտային ուսումնասիրություններ և հավաքագրվել են տվյալներ 5 տեսակ (*Pyrus sosnovskyi*, *P.gergerana*, *P.daralagezi*, *P.tamamschjanae*, *P.hajastana*) տարածվածության ու բնակմիջավայրերի վերաբերյալ:

Էկոլոգիական ֆիզիոլոգիայի բնագավառում շարունակվել են կենսաբազմազանության կարևորագույն տարածքներում աճող Հայաստանի հազվագյուտ և անհետացող տեսակների էկոֆիզիոլոգիական ուսումնասիրությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել աղուտ և կավային (հալոֆիտ և գիպսոֆիտ) բնակմիջավայրերում հանդիպող տեսակներին, մասնավորապես ուսումնասիրվել են ջրային ռեժիմը (ազատ և կապված ջրի պարունակությունը, ջրային դեֆիցիտը), ֆոտոսինթեզի և տրանսպիրացիայի ինտենսիվությունը, պլաստիդներում գունանյութերի քանակությունը (քլորոֆիլ և կարոտինոիդներ): Կատարված էկոֆիզիոլոգիական ուսումնասիրությունները թույլ են տվել գնահատել դրանց հար-

մարվողականության պոտենցիալը և բացահայտել խոցելիության հնարավոր պատճառները (ղեկ.՝ կ.գ.թ. Ժ.Հովակիմյան):

«*Spiraea* L. ցեղի գնահատումը որպես բարձր գեղազարդ տեսակների ներմուծման աղբյուր Հայաստանում» ուսումնասիրության շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Վարդանյան) ներմուծման աշխատանքների արդյունքում Երևանի բուսաբանական այգում ասպիրակների հավաքածուն հարստացվել է նոր բարձր գեղազարդ տեսակներով և ներկայումս ընդգրկում է 22 տեսակ:

Շարունակվել են *Primula denticulata* և *Primula cortusoides* գեղազարդ բազմամյա բույսերի աճի և զարգացման վրա Միկոսոիլ էնդոֆիկորիզային պատրաստուկի ազդեցության հետազոտական աշխատանքները: Հաստատվել է դրա խթանիչ ազդեցությունը զարգացման բոլոր փուլերում: Պատրաստուկը խթանել է փորձարկվող բույսերի մերիստեմատիկ ակտիվությունը՝ այս բույսերի արմատների վրա միկորիզայի ձևավորման շնորհիվ: Միկոսոիլով մշակումն էականորեն խթանում է տվյալ կուլտուրաների բոլոր կենսական գործընթացները, առաջացնում է երկրորդային ամառային ծաղկում 13.07 մինչև 08.08, ինչը նպաստում է դրանց գեղազարդ հատկությունների բարձրացմանը: Առաջին անգամ ուսումնասիրվել է Դրախտավարդ խոշորատերևի (*Hydrangea macrophylla*) կտրոնների արմատակալման վրա Զուլալ օրգանական պատրաստուկի ազդեցությունը: Հաստատվել է այդ պատրաստուկի ակտիվ խթանիչ ազդեցությունը փորձարկվող բույսերի կողքային արմատների ձևավորման վրա: Ծաղկային գեղազարդ բույսերի կուլտուրաների հավաքածուների հարստացման գործընթացն իրականացվել է բույսերի ներմուծման, ինչպես նաև Հայաստանի այնպիսի վայրի բուսականության ներգրավման ճանապարհներով, որոնք օժտված են բարձր գեղազարդ հատկություններով: Հավաքածուն համալրվել է *Aquilegia x hybrida* “Spring Magic Yellow”, *Belamcanda chinensis*, *Iris barbata elatior* 4 սորտերով, *Hosta sieboldiana*, *Rudbeckia lacinata* “Hortensia” և միամյա *Ageratum houstonianum* “Floristis White”, ինչպես նաև Հայաստանի ֆլորայի գեղազարդ տեսակներով:

Վարդանցում տնկվել է թեյահիբրիդային խմբին պատկանող “Jumilia” սորտի թվով 550 վարդի թուփ: Տնկման ժամանակ հողին խառնվել է «զուլալ» օրգանական պարարտանյութ, իսկ տնկելուց հետո ջրվել դրա ջրային լուծույթով: Նշված սորտը դիմացկուն է հիվանդությունների, վնասատուների և ցրտի նկատմամբ: Աշնանը վարդանոց են տեղափոխվել նաև մազլցող և կիսամազլցող վարդերի հետևյալ սորտերը՝ “Sympathie” (4 հատ), “Madame Plantier” (3 հատ), “Dans du Feu” (3 հատ), որոնք բազմացվել են կտրոններով:

Բուսաբանական այգու լանդշաֆտային ձևավորման նպատակով աճեցվել են ծաղկային կուլտուրաների 9100 միամյա, 700 բազմամյա սաճիլներ, որոնք օգտագործվել են 430 քմ ընդհանուր մակերեսով ծաղկանոցներում: Կոլեկցիոն հողամասում և ծաղկանոցներում ամբողջ վեգետացիոն շրջանում իրականացվել են տնկիների խնամքի ագրոտեխնիկական միջոցառումներ, իսկ ավարտին՝ սերմերի ընտրովի հավաք, որին հաջորդել է չորացումը, տեսակավորումը, փաթեթավորումը և պահեստավորումը (ղեկ.՝ կ.գ.թ. Լ.Մարտիրոսյան):

Մերձարևադարձային և արևադարձային բույսերի գիտական հավաքածուի տեսակաձև ընդլայնման նպատակով շարունակվել են նոր տեսակների ներմուծման գիտափորձնական աշխատանքները: Բուսատեսակներն աճեցվել են սերմերից, որոնք ստացվել են դելեկտուսի՝ սերմերի փոխանակման ֆոնդի օգնությամբ: Գիտական հավաքածուն հարստացվել է 18 ցեղի և 16 ընտանիքի 18 նոր տեսակով, ընդլայնվել է ինչպես ընտանիքի (*Lardizabalaceae*, *Menispermaceae*), այնպես էլ ցեղի (*Ardisia*, *Cautleya*, *Cocculus*, *Idesia*) մակարդակով: Ներկայումս հավաքածուն ընդգրկում է 770 տեսակ, որոնք պատկանում են 137 ընտանիքի և 357 ցեղի: Ծաղկե թաղարների ընդհանուր քանակը 2300 է:

Շարունակվել են բուսատեսակների հարմարողական հատկությունների բացահայտման գիտափորձնական աշխատանքները: Մասնավորապես կատարվել են բուսատեսակներ-

րի կենսամորֆոլոգիական, աճի և զարգացման, բազմացման առանձնահատկությունների ուսումնասիրություններ: Մշակվել են մի շարք տեսակների բազմացման արդյունավետ ձևեր, համապատասխան ագրոտեխնիկա՝ վերջիններիս հեռանկարային օգտագործման նպատակով:

Շարունակվել են արևադարձային և մերձարևադարձային բույսերի հավաքածուի տվյալների բազայի ձևավորման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման աշխատանքները (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Ալեքսանյան):

Երևանի բուսաբանական այգում գործում է տնկարանային տնտեսություն, որտեղ բազմացվում և վաճառքի են հանվում 68 տեսակի տեղածին և ներմուծված գեղազարդ ծառեր, թփեր, բնափայտային լիաններ և պարտիզային ձևեր: Ընթացիկ տարում վեգետատիվ ճանապարհով բազմացման համար մայրացու ծառերից, թփերից և լիաններից կտրվել է 4150 կտրոն, գարնանը և աշնանը կատարվել է 38 անուն բույսերի սերմերի ցանք, վերատնկվել է 450 բուսատեսակ: Աշնանային աշխատանքների ընթացքում կատարվել է սերմերի հավաք, լվացում ու չորացում աշնանային և գարնանային ցանքի համար: Այգում անտառպուրակի չորացած բույսերի փոխանակման համար տնկարանից տրվել է 7 անուն ծառատեսակներից 410 տնկի (ղեկ.՝ Հ.Գրիգորյան):

«Հայաստանի ֆլորա և բուսականություն» ցուցադրական հողամասում կատարվել են հավաքածուի հարստացման ու պահպանման աշխատանքներ: Հողամասի հավաքածուն համալրվել է 32 բուսատեսակով, բարեկարգվել և լրացվել է «Սուկուլենտային բույսեր»-ի ցուցադրությունը Crassulaceae ընտանիքի տեսակներով: Անտառային բուսականության ցուցադրությունը համալրվել է ծառատեսակներով և թփերով, գիհիների հավաքածուն՝ նոր տնկարկներով. տնկվել է Գեղարքունիքի ֆլորիստիկական շրջանից բերված 23 բույս: *Pyrus* L. ցեղի հավաքածուն համալրվել է տանձենիների նոր տեսակներով՝ *P. hyrcana* Fed.(տեսակը ներառված է ՀՀ Կարմիր գրքում, 2010թ.) և *P. pseudosyriaca* Gladkova (Հայաստանի էնդեմիկ), որոնք աճեցվել են Վայոց Ձորի մարզում հավաքված սերմերից: Շարունակվել են *Chenopodiaceae*, *Rosaceae* և *Fabaceae* ընտանիքների ներկայացուցիչների կենսամորֆոլոգիական, ֆենոլոգիական և տաքսոնոմիական ուսումնասիրությունները (ղեկ.՝ կ.գ.դ. Ժ.Հակոբյան):

Հայաստանի Ֆլորայի սերմերի բանկում երկարաժամկետ *ex situ* պահպանության նպատակով իրականացվել է Հայաստանի ֆլորայի 116 տեսակի (82 ցեղից 40 ընտանիքից) սերմերի հավաք, որոնցից մշակվել և նախապատրաստվել է 146 նմուշ, որոնցից 15 տեսակը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Որոշվել է *Poaceae* ընտանիքի 27 ցեղի 50 տեսակի սերմերի կենսունակությունը, ծլունակությունը և ծլունակության տևողությունը սառը պայմաններում ( $-20^{\circ}\text{C}$ ) 1 տարով պահելուց հետո: Հաստատվել են ներ- և միջտեսակային տարբերություններն ըստ ուսումնասիրված հատկանիշների: *Sorbus hajastana* տեսակի սերմերը ստրատիֆիկացիայից հետո տեղափոխվել են ծաղկամանների մեջ: Կատարվել է Հայաստանի Սերմերի բանկի հավաքածուների տվյալների բազայի համալրում:

Կազմակերպվել և իրականացվել են Հայաստանի կենսաբազմազանության տեղեկատվական և էկոլոգիական կենտրոնի ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքները, կենդանի հավաքածուն համալրվել է 23 բուսատեսակով:

Շարունակվել են *in vitro* միկրոբազմացման մեթոդով 2 բուսատեսակի՝ *Sorbus hajastana* և *Dianthus grossheimii* բազմացման և սուբստրատ տեղափոխման գործողությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Ներսեսյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«Հայաստանի ֆլորայի որոշ վտանգված տեսակների *ex situ* պահպանությունը միկրոբազմացման և սերմերի հավաքածուների ստեղծման եղանակներով» ծրագրի շրջանակ-



ներում (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Ներսեսյան) իրականացվել են գործուղումներ Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Վայց Ձոր և Սյունիք մարզեր: Ուսումնասիրվել են *Dianthus martuniensis*, *Centaurea erivanensis*, *Onobrychis aragatzi*, *Cercis griffithii*, *Gundelia aragatzi*, *Cotoneaster hajastanicus* և *Gypsophila takhtadzhanii* տեսակների պոպուլյացիաները: Հավաքվել են տվյալներ տեսակների անհետացման հավանականությունը գնահատելու համար: Իրականացվել է տեսակների *ex situ* պահպանություն կլոնային միկրոբազմացման և սերմերի երկարաժամկետ պահպանության միջոցով: Հյուսվածքային կուլտուրաների լաբորատոր փորձերի և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակվել են *Dianthus martuniensis*, *D. grossheimii* (Caryophyllaceae), *Onobrychis aragatzi* (Fabaceae), *Cotoneaster hajastanicus* (Rosaceae) տեսակների կլոնալ միկրոբազմացման պայմանները: Իրականացվել է *Cotoneaster hajastanicus*, *Dianthus martuniensis*, *Gundelia aragatzi*, *Gypsophila takhtadzhanii*, *Onobrychis aragatzi* տեսակների անհետացման ռիսկերի տարածաշրջանային գնահատում ըստ IUCN դասակարգիչների: Գնահատումները ներկայացվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և կներառվեն ՀՀ Կարմիր գրքի նոր հրատարակման մեջ: Ըստ արդյունքների՝ 2 տեսակ գտնվում է կրիտիկական վիճակում (CR), երեքը՝ վտանգված (EN):

«Ինվազիվ բուսատեսակների կողմից Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հասցվող վտանգների գնահատում» թեմայի շրջանակում (դեկ.՝ կ.գ.դ. Գ.Ֆայվուշ) իրականացվել է Հայաստանի համար արդեն իսկ հայտնի ինվազիվ և էքսպանսիվ տեսակների տարածվածության վերաբերյալ առկա գրականության, հերբարիումային նյութերի և սեփական տվյալների վերլուծություն: Պարզվել է, որ դրանք առկա են բոլոր 3 արգելոցների (Խոսրովի անտառ, Շիկահող, Էրեբունի) և 4 ազգային պարկերի (Արփիլիճ, Արևիկ, Սևան, Դիլիջան) տարածքներում, ինչպես նաև այն 26 հատուկ բնապահպանական նշանակություն ունեցող տարածքներում, որոնք նախատեսվում է ընդգրկել Հայաստանում ստեղծվող «Էմերալդ» էկոլոգիական ցանցում: Արդյունքում կազմվել է Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում հանդիպող ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների նախնական ցանկը, առանձնացվել է 30 բուսատեսակ, որոնց պետք է ուշադրություն դարձվեր 2019-20թթ. դաշտային աշխատանքների ընթացքում:

Պարզվել է, որ ինվազիվ և էքսպանսիվ տեսակների շարքում կան տեսակներ, որոնք վերջին տարիներին Հայաստանի տարածքում ինտենսիվ տարածվում են, սակայն դեռևս չեն հանդիպում ՀՀ Բնության հատուկ պահպանվող տարածքներում: Բացի այդ, վերջին տարիներին Հայաստանի տարածքում գրանցվել են մի շարք օտարածին տեսակներ, որոնք ունեն ինվազիվ պոտենցիալ և սկսել են ինտենսիվ տարածվել, սակայն դեռևս մեծ տարածքներ չեն զբաղեցնում:

«Ինվազիվ տեսակների ազդեցությունը Հայաստանի տարբեր էկոհամակարգերում ածխածնի կուտակման վրա» թեմայի շրջանակներում (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Ալեքսանյան) աշխատանքային թիմի կողմից առանձնացվել են այն ինվազիվ և էքսպանսիվ տեսակները, որոնք առավել մեծ վտանգ են ներկայացնում բնական տարբեր էկոհամակարգերի համար, առանձնացվել են նաև առավել խոցված և խոցելի էկոհամակարգերը: Այս տվյալների համադրման արդյունքում ընտրվել են փորձահրապարակների համար առավել նպատակահարմար տարածքներ: Ածխածնի կուտակման, առկա պաշարների քանակը և ինվազիվ բուսատեսակների առկայությամբ դրանց փոփոխությունները գնահատելու համար առաջին փուլում տեղադրվել է 7 փորձահրապարակ Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում, երկրորդ փուլում՝ ևս 9 փորձահրապարակ Արագածոտնի, Արարատի և Լոռու մարզերում:

Քանի որ 2020թ. վեգետացիոն շրջանում, համաճարակով պայմանավորված, հնարավոր չէր լիարժեք կատարել դաշտային ուսումնասիրությունները, հատկանիշների մշտադիտարկումը և պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրությունը պլանավորվել է իրականաց-

նել 2021թ. վեգետացիոն շրջանում: Ներկայումս մշակվել են այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ է ուսումնասիրել արդեն իսկ հիմնված մշտական փորձահրապարակներում:

## Հրապարակումներ

### Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Վարդանյան Ժ.Հ., Ծառաբույսերի աճեցման և գեղազարդ տնկարկների ստեղծման առանձնահատկությունները Հայաստանում, Բուսաբան. ինստ., Ե., 2020, 208 էջ:
2. Ֆայվուշ Գ.Մ., Ալեքսանյան Ա.Ս., Հովհաննիսյան Հ.Բ., Բույսեր նախահարձակներ. Հայաստանի առավել կարևոր էքսպանսիվ և ինվազիվ բուսատեսակները, Ե., Բուսաբան. ինստ., 2020, 88 էջ: ISBN 978-9939-0-3413-3.

### Հոդվածներ, զեկուցումներ

3. Գրիգորյան Մ.Ս., Պարտիզային ձևերի բազմացման առանձնահատկությունները Երևանի բուսաբանական այգու պայմաններում, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հ. 72, N 4, 2020, էջ 85-91:
4. Կորակյան Ս.Ա., Երևանի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի հարստացման և գեղազարդության բարձրացման խնդիրները, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», N 1, 2020, էջ 42-49:
5. Հովսեփյան Ռ.Ա., Ստեփանյան-Ղանդիլյան Ն.Պ., Դաֆնի Ա., Վայրի բուսական ռեսուրսների սննդային օգտագործումը Վայքում. էթնոբուսաբանական հետազոտությունների մեկնարկը Վայոց Ձորում, «Վառ անցյալ, վառ ապագա» միջազգ. գիտաժող. նյութ., Եդեգնաձոր, 2020, էջ 34-35:
6. Ստեփանյան-Ղանդիլյան Ն.Պ., Բույսերի որոշման նոր մեթոդ. եռաբայլ որոշում, «Ինտովագիոն հնարավորությունները և մարտահրավերները ժամանակակից աշխարհում» միջազգ. գիտաժող. նյութ., N 546, Ե., 2020, էջ 538-544:
7. Айрапетян А.М., Сонян А.О., Мурадян А.Г., Морфология пыльцы аллергенного вида *Buxus sempervirens* L. (Самшит вечнозеленый), М., “Аллергология и иммунология”, N 7 (18), 2020, с. 4-7.
8. Марджанян М.А., Арутюнян Р.Г., Брух А.А., Габриелян И.Г., К познанию палеофауны подсемейства Lixinae (Coleoptera, Curculionidae) Сисианской свиты (Южная Армения, Ранний Плейстоцен), Ер., “Биол. журн. Армении”, N 1-2 (72), 2020, с. 110-114.
9. Овакимян Ж.О. Эколого-физиологические особенности трех редких псаммофильных видов растений Арапатской равнины, Ер., “Биол. журн. Армении”, N 1 (72), 2020, с. 89-94. Akopian J., Ghukasyan A., Oganessian M., Notes on the narrow endemic of Armenia, *Pyrus browiczii* Mulk. (Rosaceae), Barnaul, “Turczaninowia”, N23 (3), 2020, pp. 99-105. DOI:10.14258/turczaninowia.23.3.10
10. Akopian J., Ghukasyan A., Oganessian M., Notes on the narrow endemic of Armenia, *Pyrus browiczii* Mulk. (Rosaceae), Barnaul, “Turczaninowia”, N23 (3), 2020, pp. 99-105. DOI:10.14258/turczaninowia.23.3.10
11. Akopian J., Ghukasyan A., Shomurodov J., Adilov B., On some medicinal plants of Chenopodiaceae family in the floras of Armenia and Uzbekistan, Y., “Electronic Journal of Natural Sciences of NAS RA”, N 1 (34), 2020, pp. 12-17.
12. Aleksanyan A., Biurrun I., Belonovskaya E., Cykowska-Marzencka B., Berastegi A., Hilpold A., Kirschner P., Mayrhofer H., Shyriaieva D., Vynokurov D., Becker T., Becker U., Dembicz I., Fayvush G., Frank D., Magnes M., García-Mijangos I., Oganessian M., Palpurina S., Ünal A., Vasheniak Y., Dengler J., Biodiversity of dry grasslands in Armenia: First results from the 13th EDGG Field Workshop in Armenia, Palaeartic grasslands, 46, 2020, pp. 12-51. DOI: 10.21570/EDGG.PG.46.12-51 ISSN 2627-9827
13. Asatryan A, *Rhododendron caucasicum* Survey in Armenia for Conservation of the Species and its Habitats, “Journal of American Rhododendron Society”, 2020. pp. 211-216.
14. Bo Hu, Khutsishvili M., Fayvush G., Atha D., Borris R.P., Phytochemical investigations and antimicrobial activities of *Anchusa azurea*. “Chemistry of Natural Compounds”, N 56 (1), 2020, pp.119-121. DOI 10.1007/s10600-020-02958-8 IF 0.653 ISSN 1573-8388
15. Fasyvush G., Aleksanyan A., The Transcaucasian Highlands. In: Noroozi J. (ed.) Plant biogeography and vegetation of high mountains of Central and South-West Asia, Springer, Cham, 2020, pp. 287-313. Doi: doi.org/10.1007/978-3-030-45212-4. ISBN 978-3-030-45211-7.
16. Fayvush G., Aleksanyan A, Amazing grassland near crowded city (Yerevan, Armenia), Palaeartic grasslands, N 46, 2020, pp.76-77. DOI: 10.21570/EDGG.PG.46.76-77 ISSN 2627-9827
17. Fayvush G., Ghazaryan H., Jenterejyan K., Aleksanyan A., Natural ecosystems and biodiversity. In: Fourth National Communication on Climate Change., Y., UNDP Armenia, 2020, pp.101-117. ISBN 978-9939-1-1101-8

18. Gabrielian E., Sargsyan M., *Crataegus gregorianii* (*Rosaceae*), a new species from Armenia, *Новости систематики высших растений*, 2020, N 51, pp. 22-25.
19. Hayrapetyan A., Bruch A., Pollen morphology of some species of the genus *Quercus* L. (*Fagaceae*) in the Southern Caucasus and adjacent areas, "Acta Palaeobotanica", N 60 (1), 2020, pp. 1-42.
20. Hayrapetyan N., Kvavadze E., Shatilova I., Gabrielyan I., Bruch A., Subfossil Palynological Spectra from the Surroundings of the Village Tsovinar (Lake Sevan, Armenia), Y., "Biological Journal of Armenia", N 3 (72), 2020, pp. 52-58.
21. Imran Amanullah, Abdel Rahman Mohammad Said Al-Tawa-ha, Abdel Razzaq Al Tawaha, Ali M. Qaisi, Devarajan Thangadurai, Jeyabalan Sangeetha, Saher Islam, Yousef M. Abu-Zaitoon, Wafa'a A. Al-Taisan, Aleksanyan A., Ezz Al-Dein Al-Ramamneh, Micronutrient Biofortification in Rice for Better Quality, "Rice Research for Quality Improvement: Genomics and Genetic Engineering", v. 2, 2020, pp. 639-653.
22. Jin L., Fayvush G., Khutsishvili M., Atha D., Borris R., Phytochemical Investigation of *Erodium oxyrrhynchum* M. Bieb., "Natural Product Communications", v. 15 (6), 2020, pp. 1-5.
23. Lomonosova M., Akopian J., Khalbekova Kh., Turginov O., Mokni R., An'kova T., IAPT chromosome data 33/8, Marhold & Kuc'era (eds.), "Taxon", N 69 (6): 7, 2020, pp. 29-31.
24. Martinetto E., Adele B., Bhandart S., Bruch A., Cerilli E., Cherin M., Field J.H., Gabrielyan I., Gianotti F., Kern A., Kienast F., Lindsey E., Momohara A., Ravazzi C., Thomas E., The last Three Millions of Unequal Spring Thaws, "In book: Nature through Time / Springer Textbook in Earth Sciences, Geography and Environment", 2020, pp. 1-53.
25. Xuehong Xu, Alireza Naqinezhad, Shahina A. Ghazanfar, Ori Fragman-Sapi, Oganessian M., Magda Bou Dagher Kharrat, Hatem Taifour et al., Mapping Asia plants: Current status on floristic information in Southwest Asia, *Global Ecology and Conservation* (ELSEVIER), N 24, 2020, pp. 1-14.  
Հոդվածներ հրապարակվել են "Takhtajania" ամսագրում, N 6, Ե., 2020, 134 էջ:
26. Айрапетян А.М., Сомян А.О., Палиносистематика некоторых представителей рода *Salsola* sensu lato флоры Южного Закавказья, с. 47-63.
27. Навасардян Е.М., Элбакян А.А., Щербакова Е.Н., Нерсисян А. А., Жизнеспособность семян видов семейства *Росеае* из коллекции Банка Семян Флоры Армении Ин-та ботаники им. А.Тахтаджяна НАН РА, с. 102-111.
28. Оганезова Г.Г., Проблема категории "род" в современной систематике в свете универсальных понятий "прерывность – непрерывность", с. 4-17.
29. Файвуш Г.М., О книге С.А. Литвинской "Таксономическая и биогеографическая характеристика флоры Западного Предкавказья и Западного Кавказа: Phylum MAGNOLIOPHYTA: Classis LILIOPSIDA", с. 112-114.
30. Файвуш Г.М., Алексанян А.С., Ованнисян Р.И., Джанджугазян К.З., Подрод *Limniris* рода *Iris* (*Iridaceae*) в Армении, с. 35-41.
31. Элбакян А.А., *Schoenoplectus hyppolyti* и *S. lacustris* (*Cyperaceae*)-новые виды во флоре Армении, с.27-34.
32. Akopian J., On the flowering biology of *Beta corolliflora* and *Habltzia tamnoides* (Betoideae, Chenopodiaceae), pp. 42-46.
33. Asatryan A., New data on distribution of Caucasian rhododendron (*Rhododendron caucasicum* Pall.) in Armenia, pp. 21-24.
34. Asatryan A., New data on distribution of two rare orchid species (*Orchis tridentata* Scop. and *O. papilionacea* L.) in Armenia, pp. 25-26.
35. Asatryan M., Oganessian M., Revision of the types collection of Herbarium of the Institute of Botany, National Academy of Sciences, Republic Armenia (ERE), 4. (Additions), pp. 18-20.
36. Hayrapetyan A., Muradyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. X. *Rosaceae*. Genera *Crataegus*, *Cydonia*, *Malus*, *Mespilus*, *Padus*, *Persica*, *Prunus*), pp. 77-94.
37. Hayrapetyan A., Pollen of trees and shrubs of Armenia (Angiospermae. IX. *Rosaceae*. Genera *Amelanchier*, *Amygdalus*, *Armeniaca*, *Cerasus*, *Cotoneaster*), pp. 64-76.
38. Nersesyan A., Shcherbakova Ye., Danielyan A., Melkonyan, N., Navasardyan Ye., *Ex situ* conservation of the species of *Dianthus martuniensis*, *D. grossheimii* (*Caryophyllaceae*), *Onobrychis aragatzi* (*Fabaceae*) and *Cotoneaster hajastanicus* (*Rosaceae*) by the clonal micropropagation method, pp. 95-101.

# ԿԵՆՏՐԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՂՐՈՎԿՈՒՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ Կ.Գ.Դ. Բ.Գաբրիելյան  
Փոխտնօրեն և գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Հ.Խաչատրյան  
Էլեկտրոնային փոստ՝ zoohec@sci.am, gabrielb@sci.am, hasoika@yahoo.com  
Կայքէջ՝ www.sczhe@sci.am

**Մասնագիտական խորհուրդ 036՝ «Կենդանաբանություն»**  
Նախագահ՝ Կ.Գ.Դ. Բ.Գաբրիելյան, գիտքարտուղար՝ Կ.Գ.Թ. Հ.Խաչատրյան

## Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

«Սևան-Հրազդան հիդրոէկոհամակարգի և հարակից տարածքների ցամաքային ֆաունայի և հիդրոբիոտների արդի վիճակի ուսումնասիրություն կլիմայի փոփոխման պայմաններում» թեմայի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են Հրազդան գետի ստորին հատվածում և հարակից տարածքներում՝ Երևանի սահմաններից դուրս, մինչև Արաքս գետը թափվելը: Ուսումնասիրվող տարածքն ընդհանուր առմամբ խիստ ուրբանիզված և վերափոխված է: Հրազդան գետի գրեթե ողջ հունի մերձակա հատվածում առկա են բազմաթիվ պտղատու այգիներ, բանջարանոցներ, տարբեր բնույթի շինություններ և արհեստական ձկնաբուծարաններ: Բնական կիսաանապատային և խոնավ տարածքների լանդշաֆտները ներկայացված են առանձին կղզիներով: Կատարվել են ողնաշարավոր և անողնաշար կենդանիների ֆաունայի, պարագիտաֆաունայի ներկա վիճակի, ինչպես նաև Հրազդան գետի ջրաքիմիական և ջրակենսաբանական համալիր հետազոտություններ և անթրոպոգեն գործոնների գնահատում:

Ցամաքային կենդանիներից նշվել է ողնաշարավորների ինչպես լայն տարածված, այնպես էլ հազվագյուտ և անհետադարձ 121 տեսակ, այդ թվում՝ երկենցաղների 5, սողունների 28, թռչունների 76: Նկատվել են կենդանիների նշված խմբերի և հատկապես թռչունների տեսակային կազմի և քանակական զգալի փոփոխություններ: Կազմվել են ցուցակագրված տեսակների տեղաբաշխման քարտեզներ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Մ.Ղասաբյան):

Կատարվել են թանգարանային նյութերի գույքագրման, թվայնացման, ցուցափեղքերի նորոգման, ցուցանմուշների վերականգնման ու համալրման աշխատանքներ (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Լ.Աղասյան):

Արքեոկենդանաբանական հետազոտությունների շրջանակներում նկարագրվել և չափվել են Սևանա լճի առափնյա մերկացումներից հայտնաբերված ոսկրաբանական նյութերը: Իրականացվել են ընտանի (ցուլեր, ոչխարներ, ձիեր) և վայրի (բիզոն, արջ, եղջերու) ձկների զանգաչափական աշխատանքներ: Շիրակի մարզի մի շարք հնագիտական հուշարձաններից պեղված վայրի և ընտանի տեսակների մնացորդներից որոշվել է ավելի քան 2000 ոսկրային էլեմենտ: Վիճակագրորեն մշակվել է խոշոր եղջերավոր անասունների և ձիերի ավելի քան 400 ոսկրային մնացորդ (ղեկ.՝ Կ.Գ.Դ. Ն.Մանասերյան):

Հայտնաբերվել է տարբեր կարգաբանական խմբերի պատկանող շուրջ 500 տեսակ՝ երկթև միջատների 90, թեփուկաթևների 39, կարճաթևների 350: Գրանցվել է բզեզների 4 և ֆիտոֆագ գալամկակների 4 նոր տեսակ Հայաստանի ֆաունայի համար, բզեզների 12 նոր տեսակ՝ Արմավիրի մարզի ֆաունայի համար: Հայաստանի տարածքից բացահայտվել և նկարագրվել է գիտության համար 3 նոր բզեզների տեսակ:

ԴՆԹ-ի սեքվենավորման արդյունքների հիման վրա առաջին անգամ կառուցվել են ֆիլոգենետիկական ծառեր Հայկական լեռնաշխարհի *Carabus* ցեղի *Procerus* ենթացեղի ներկայացուցիչների և Cetoniinae ենթաընտանիքի որոշ խմբերի համար (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Գ.Կարապյան):

Ուսումնասիրվել է կենդանիների մակաբուծաֆաունայի տեսակային կազմը և խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների, ճագարների, թռչունների և ձկների վարակվածությունը մակաբույծներով: Գրանցվել են ձկների մարմնի խոռոչում, աղիքի և աչքերի ոսպնյակի մեջ տեղակայված մակաբույծ հելմինթներ՝ տրեմատոդների 4, ցեստոդների 2, նեմատոդների 1 տեսակ (ղեկ.՝ ալ. Ս.Սովսեյան):

Մոլեկուլային-գենետիկական մեթոդների կիրառմամբ կատարվել են որոշ մակաբույծների հայտնաբերման և որոշման աշխատանքներ: Կրծողների և միջատակերների արյան նմուշներից անջատվել է գենոմային ԴՆԹ-ն և հայտնաբերվել է *Toxoplasma gondii* տեսակին սպեցիֆիկ B1 գենի հատվածը (ղեկ.՝ կ.գ.թ. Ս.Ադայան):

Մակաբույծ ֆիտոնեմատոդների հայտնաբերման նպատակով հետազոտվել են ավելի քան 25 պտղատու ծառատեսակներ, խաղողի այգիներ, տարբեր տեսակի խոտաբույսեր: Որոշվել է 7 սեռի, 4 ընտանիքի պատկանող 11 մակաբույծ տեսակ: Ծառատեսակների մոտ ավելի հաճախ և մեծ քանակությամբ հանդիպել են 4 ցեղի ներկայացուցիչներ, նվազագույն քանակությամբ՝ *Rotylenchus*, *Pratilenchus* և *Aphelenchoides* ցեղից: Խոտաբույսերի մոտ մեծաքանակ էին *Rotylenchus* և *Xiphinema* սեռերի նեմատոդները: Որպես առավել վտանգավոր վիրուսակիր նշվել են *X. index* և *X. vuittenesi* տեսակները: Հայտնաբերվել են հողում ազատ ապրող ռիզոֆիտ (Dorilaimidae), գիշատիչ (*Mononchidae*) և սապրոֆիտ (*Diplogasteridae*) տեսակներ (ղեկ.՝ կ.գ.թ. Հ.Մկրտչյան):

Ուսումնասիրվել են ակարիֆաունայի տեսակային կազմը, կենսաբանական առանձնահատկությունները, տնտեսական նշանակությունը: Հայտնաբերվել է տարբեր կարգաբանական խմբերի պատկանող մակաբույծ տզերի 13 և ֆիտոսեիդ գիշատիչ տզերի 7 տեսակ: Առաջին անգամ Հայաստանի ֆաունայի համար գրանցվել է Tydeidae ընտանիքի բույսերի վնասատու տզերի 2 նոր տեսակ: Իրականացվել են գյուղատնտեսական վնասատուների դեմ կենսաբանական պայքարում նոր մոտեցումների ուսումնասիրություններ: Շարունակվել են նախկինում ստեղծված ցրտադիմացկուն ֆիտոսեիդ *Ph. persimilis* տիզի պահպանման, միջատատգասպան ազդեցությամբ նյութերի մշակման աշխատանքները: *P. harmala*, *A. tenuifolia* և *E. orientalis* բույսերից ստացված համակցված էքստրակտների փորձարկումը լվիճների վրա ցույց է տվել դրանց տարբեր մակարդակի միջատասպան ակտիվությունը. ամենաբարձրն արձանագրվել է *A. tenuifolia* բույսի համար (ղեկ.՝ կ.գ.դ. Կ.Դիլբարյան):

Կատարվել է լճագորտի (*Pelophylax ridibundus*) և կանաչ դոդոշի (*Bufo variabilis*) կենսաբանական և բջջագենետիկ որոշ ցուցանիշների ուսումնասիրություն: Քրոմոսոմային հավաքակազմի փոփոխություն չի գրանցվել: Գեղանիստ գյուղի շրջակայքում տեղակայված պուպուլյացիայում հայտնաբերվել է քրոմոսոմային փոփոխականության 2 տիպ՝ 20% և 15% հաճախականությամբ: Գեղանիստ և Հովտաշեն գյուղերի շրջակայքի պուպուլյացիաներում նկատվել են նաև երիթրոցիտների ձևաբանական տարբերություններ (ղեկ.՝ կ.գ.թ. Ի.Ստեփանյան):

Իրականացվել են Հրազդան գետի ստորին հոսանքի համալիր՝ ջրաքիմիական, ջրակենսաբանական և հիդրոէկոլոգիական հետազոտություններ: Հիդրոքիմիական հետազոտությունները ցույց են տվել, որ կենսածին տարրերով ծանրաբեռնվածությունը գետում ակունքից գետաբերան աճել է: Սահմանված էկոլոգիական նորմերը գերազանցող կենսածին տարրերի բարձր արժեքներ գետում գրանցվել են հատկապես Երևանից հետո տեղակայված դիտակետերում:

Ֆիտոպլանկտոնային համակեցության կազմում հայտնաբերվել են ջրիմուռների 6 խմբի (կապտականաչ, դիատոմային, կանաչ, դեղնականաչ, էվգլենային, դինոֆիտային) պատկանող տեսակներ: Առավել մեծ թվաքանակով հանդիպել են կապտականաչ թելանման ջրիմուռների *Oscillatoria chlorina*, *O. aghardii*, *Phormidium foveolarum*, *Lyngbia kutzingina*, *L. limnetica* տեսակները: Բոլոր նշված տեսակները, որոնք առավելապես հայտնաբերվել են գե-

տի ստորին հոսանքում տեղակայված դիտակետերում, բարձր սապրոբայնություն ունեցող տեսակներ են և բնորոշ են օրգանական բարձր աղտոտվածությամբ ջրերին: Դարբնիկ դիտակետում հայտնաբերվել է անաէրոբ *Thiospirillum jenense* ծծմբաբակտերիա, որը բնորոշ է ծծմբաջրածնով հարուստ և թթվածնով աղքատ ջրերին:

Ջոռպլանկտոնի կազմում գրանցվել է խեցգետնակերպերի 14 տեսակ՝ 7 անվակիր (Rotifera), 4 ճյուղաբեղավոր (Cladocera), 3 թիռտանի (Copepoda): Տեսակային բազմազանությամբ տարբեր սեզոններին աչքի են ընկել Սիս գյուղից հետո ընկած տարածքը և Հովտաշեն դիտակետը: Աէրացիա և Դարբնիկ դիտակետերում զոոպլանկտոնային օրգանիզմներ գրեթե չեն գրանցվել: Ըստ զոոպլանկտոնային համակեցության ցուցանիշների՝ գրանցվել են օրգանական նյութով հարուստ  $\beta$ -  $\alpha$ - մեզոսապրոբ ջրերին բնորոշ տեսակներ: Նախորդ տարիների համեմատ տեղի է ունեցել քանակական արժեքների աճ:

ձկնաբանական հետազոտությունները ցույց են տվել ձկների տեսակային կազմի փոփոխություն՝ կախված կենսամիջավայրից: Մաղմոնագգի ձկնատեսակների համար համեմատաբար լավ կենսապայմաններ են առկա եղել Արզնի ձոր և Մարմարիկ դիտակետերում, որտեղ բնահողը քարային է, գետի հոսքը՝ համեմատաբար արագ: Ամենամեծ տեսակային բազմազանությունը գրանցվել է Հրազդան գետի ստորին հոսանքում՝ Արաքսավան դիտակետում, ինչը պայմանավորված է Արաքս գետին մոտ լինելով: Տարբեր ձկնատեսակներ, իրենց էկոլոգիական առանձնահատկություններին համապատասխան, գաղթում են Արաքս գետից դեպի Հրազդան գետի ստորին հոսանք:

Հրազդան գետի բենթիկ ֆաունայի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Երևանին համեմատաբար մոտ տարածքներում՝ Դարբնիկ գյուղի և Աէրացիա մաքրման կայանի հարևան հատվածում, հատակային մակրոանոդնաշարների ֆաունայի բազմազանությունը խիստ փոքր է: Նշված դիտակետերում բացակայել են օբսիֆիլ և ջրի մաքրության կենսաբացահայտիչներ հանդիսացող օրգանիզմները, իսկ գրանցված կենդանիները հիմնականում դասվել են պոլիսապրոբ օրգանիզմների խմբին, որոնց մի մասը տարածված է նույնիսկ կոյուղատարներում և բնակարանային լվացարանների խողովակներում (*Psychoda sp.*): Հրազդան գետի Սիս գյուղի հարակից դիտակետի հատակային ֆաունայում գրանցվել են մակրոանոդնաշարների 16 ընտանքի պատկանող 19 ցեղի, իսկ Հովտաշեն գյուղի հարակից դիտակետում՝ 15 ընտանիքի պատկանող 17 ցեղի ներկայացուցիչներ: Սիս գյուղի հատվածում հոկտեմբեր ամսին արձանագրվել է *Anopheles* ցեղի մալարիայի մոծակի առանձնյակ, ինչը վկայում է այս տարածքում մալարիայի պոտենցիալ վտանգի մասին:

Մանրէաբանական հետազոտությունների ընթացքում ջրի որակի գնահատման նպատակով ուսումնասիրվել են մեզոֆիլ սապրոֆիտ բակտերիաները (աճեցված 37°C, 24 ժամվա ընթացքում), որոշվել է կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների քանակը 1լ ջրում), որը բնութագրում է մարդկանց և կենդանիների կողմից հիդրոհամակարգ ներմուծված միկրոֆլորան: Ուսումնասիրված դիտակետերում սապրոֆիտ բակտերիաների թվաքանակի նվազագույն արժեք գրանցվել է Հրազդան գետի ակունքում (60-800 ԳԱՄ/մլ), իսկ առավելագույն՝ Աէրացիա մաքրման կայանից հետո (21600-38880 ԳԱՄ/մլ): Նախորդ տարիների համեմատ սապրոֆիտ բակտերիաների թվաքանակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Աէրացիա մաքրման կայանից հետո դիտակետի, որտեղ բակտերիաների թվաքանակը կրկնակի ավելացել է՝ կազմելով 38000 ԳԱՄ/մլ: Համեմատաբար բարձր արժեք է գրանցվել ամռանը, ինչը հավանաբար պայմանավորված է ջրի ծավալի նվազմամբ: Ըստ մեզոֆիլ սապրոֆիտ բակտերիաների միջին արժեքների՝ Հրազդան գետի ջրերն Աէրացիա մաքրման կայանից հետո՝ Դարբնիկ գյուղի տարածքում, Սիս գյուղից հետո և Հովտաշեն գյուղից առաջ ընկած դիտակետերում դասվել են «կեղտոտ» (5-րդ դաս), իսկ ըստ կոլի-ինդեքսի արժեքների՝ «աղտոտված» (4-րդ դաս) ջրերի դասին (դեկ. կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

## **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«Սևանա լճի լճախորշերի էկոլոգիական առանձնահատկությունները ջրի մակարդակի տատանման պայմաններում» ծրագրի շրջանակներում համալիր հետազոտություններ են իրականացվել Սևանա լճի Արդանիշ, Լճաշեն, Ծովագարդ և Լիճք-Ծակքար լճախորշերում: Ուսումնասիրվել են լճախորշերի ջրաբանական, ջրաֆիզիկական, ջրաքիմիական ու ջրակենսաբանական առանձնահատկությունները և կենսացենոզների կառուցվածքային բաղադրիչների՝ սապրոֆիտ, կոլիֆորմ բակտերիաների, բորբոսասնկերի, բարձրակարգ ջրային բույսերի, հատակային ֆաունայի, ձկնաշխարհի որակական և քանակական ցուցանիշները:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ կենսացենոզների կառուցվածքը և առանձին տեսակների փոխհարաբերությունները պայմանավորված են լճախորշերի ձևաչափական առանձնահատկություններով: Փոքր Սևանի Լճաշեն և Ծովագարդ լճախորշերում ստեղծվել են նպաստավոր պայմաններ հարուստ կենսաբազմազանության ձևավորման համար: Այստեղ ափից լիճ թափանցած կենսածին տարրերը և կուտակված տիղմը պայմաններ են ստեղծել սապրոֆիտ բակտերիաների զարգացման, մակրոֆիտների տեսակային կազմի բազմազանության և տարածման համար: Վերջիններս էլ կենսամիջավայր են հանդիսանում հատակային բազմաթիվ օրգանիզմների համար: Տրոֆայության առումով այս լճախորշերն էվտրոֆացման միտում ունեն: Տեղի պայմանները նպաստավոր են հիմնականում ծածանագգի ձկնատեսակների համար: Էնդեմիկ ձկնատեսակները՝ կողակը և բեղլուն, Լճաշենի լճախորշում ի սկզբանե չեն հանդիպել անբավարար թթվածնային պայմանների համապատասխան բնահողի բացակայության և բարձր ջերմաստիճանի պատճառով: Փոքր խորության ու բարձր ջերմաստիճանի պայմաններում լճախորշերում առավել բուռն են ընթանում էվտրոֆացման գործընթացները, ինչը որոշակիորեն արտացոլվում է կենսացենոզների կառուցվածքում՝ դառնալով պոտենցիալ վտանգ ողջ լճի համար:

Արդանիշի լճախորշի վրա ջրհավաք ավազանի տնտեսական գործունեության ազդեցությունը խիստ սահմանափակ է: Արդանիշի լճախորշը կենսարդյունավետության տեսակետից միջին տեղ է գրավում թվարկված լճախորշերի շարքում: Մեծ խորության, կերային և թթվածնային բարենպաստ պայմանների առկայության շնորհիվ այն լավագույն տարածքն է Էնդեմիկ ձկնատեսակների համար: Կողակը և բեղաձուկը հետազոտված լճախորշերից հանդիպել են միայն Արդանիշի հատվածում: Հետևաբար, օտարածին և Էնդեմիկ ձկնատեսակների միջև էկոլոգիական նիշաների զբաղեցման առումով հնարավոր մրցակցություն առկա է միայն Արդանիշի հատվածում:

Կենսապայմանների փոփոխությունները նպաստում են ձկնային համակեցության սահմաններում սուկցեսիոն երևույթների զարգացմանը: Լիճք-Ծակքար լճախորշը, որը տարիներ շարունակ եղել է Էնդեմիկ ձկնատեսակների բնադրավայր, այսօր միջավայրի պայմանների փոփոխության արդյունքում զրկվել է կողակի և բեղլուի ներկայությունից (դեկ.՝ կ.գ.դ. Բ.Գաբրիելյան):

## **Հրապարակումներ**

### ***Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ***

1. Հայրապետյան Վ.Տ., Հովհաննիսյան Վ.Ս., Ողնաշարավորների կենդանաբանություն (թռչուններ, կաթնասուններ), մաս 2, Ստեփանակերտ, Հեղինակային հրատ., 2020, 233 էջ:
2. Воронова Н.В., Степанян И.Э., Дилбарян К.П., Оценка эффективности масел растений в отношении тлей в лабораторных условиях, Минск, изд. БГУ, 2020, 20 с.

### ***Հոդվածներ, զեկուցումներ***

3. Բարսեղյան Ռ.Է., Ճագարների փորձարարական վարակումը կոկցիդիոզի հարուցիչներով և դրանց գոյատևումը՝ կախված պահման պայմաններից, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հ. 72,

4. Չապանյան Ե.Ն., Սարգսյան Մ.Ս., Ամոնիֆիկատորների քանակության դինամիկան անտառային դարչնագույն հողերում *Bacillus thuringiensis* տեսակի բակտերիական միջատասպաններով ցողումից հետո, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հ. 72, N1-2, 2020, էջ 24-29:
5. Չապանյան Ե.Ն., Հարությունյան Ս.Հ., Սարգսյան Մ.Ս., *Azotobacter chroococcum*-ի քանակության դինամիկան անտառային դարչնագույն հողերում *Bacillus thuringiensis* տեսակի բակտերիական միջատասպաններով ցողումից հետո, Ե., «Հայաստանի կենսաբանական հանդես», հ. 72, N3, 2020, էջ 45-51:
6. Барсегян Р.Э., Кокцидиоз и сопровождающие другие паразитические болезни в связи с получением корма из разных регионов, Ер., «Биолог. журн. Армении», т. 72, N 1-2, 2020, с.147-151. ISSN 0366-5119, <http://biology.asj-oa.am/11680/>
7. Варламова А.И., Мовсесян С.О., Архипов И.А., Халиков С.С., Арисов М.В., Кочетков П.П., Абрамов В.Е., Ильин М.М., Локшин Б.В., Биологическая активность и особенности фармакокинетики фенбендазола на основе супрамолекулярной системы адресной доставки с экстрактом солодки и диоктансульфосукцинатом натрия, М., «Известия» РАН, Серия биолог., N 6, 2020, с. 565-574. ISSN: 1026-3470 <https://DOI: 10.31857/S0002332920060132>
8. Григорян Н.М., Оганесян В.С., Галстян А.Г., Исследование сельскохозяйственных вредителей рода *Liriomyza* (Diptera: Agromyzidae) в Нагорном Карабахе, Самара, «Самарский научн. вестник», т. 9, N 3, 2020, с. 37-43.
9. Григорян Н.М., Оганесян В.С., Эколого-биологические особенности минирующих мух *Phytomyza horticola* (Goureau, 1851) в Республике Арцах, Иркутск, «Байкальский зоол. журн.», т.27, N1, 2020, с.23-26.
10. Калашян М.Ю., Креджан Т.Л., Шохин И.В., Некоторые вопросы номенклатуры рода *Glaphyrus* Latreille, 1802 (Coleoptera: Glaphyridae), Ростов-на-Дону, «Кавказский энтомологический бюллетень», 16 (1), 2020, с. 171-173. DOI: 10.23885/181433262020161-171173
11. Калашян М.Ю., Новый вид златок рода *Aphanisticus* Latreille, 1829 (Coleoptera, Buprestidae) из Непала, СПб., «Энтомологическое обозрение», 99 (2), 2020, с. 429-434. DOI: 10.31857/S0367144520020173
12. Марджанян М.А., Арутюнян Р.Г., Брух А.А., Габриелян И.Г., К познанию палеофауны подсемейства Lixinae (Coleoptera, Curculionidae) Сисианской свиты (Южная Армения, ранний плейстоцен), Ер., «Биолог. журн. Армении», т. 72, N 1-2, 2020, с.110-114.
13. Мовсесян С.О., Панайотова-Пенчева М.С., Теренина Н.Б., Никогосян М.А., Воронин М.В., Таксономическая классификация и филогенетические взаимосвязи циклофиллидных цестод (Cyclophyllidea van Beneden in Braun 1900), М., «Зоолог. журн.» РАН, т. 99, N 8, 2020, с. 866-876. <https://DOI: 10.31857/S0044513420060112> <https://www.elibrary.ru/item.asp?id=43067252>
14. Amouei A., Sarvi S., Sharif M., Aghayan S., Javidnia J., Mizani A., Moosazadeh M., Shams N., Hosseini S.A., Hosseininejad Z., Nayeri Chegeni T., Badali H., Daryani A., A systematic review of *Toxoplasma gondii* genotypes and feline: Geographical distribution trends. «Transboundary Emerging Disease», v. 67, 2020, pp. 46-64. DOI:10.1111/tbed.13340.
15. Faizi F., Nozari J., Ghobari H., Kalashian M., Notes on the fauna of the genus *Dorcadion* Dalman, 1817 (Coleoptera: Cerambycidae) of Kurdistan Province, Iran with description of a new species, Zootaxa 4743 (4), 2020, pp. 594-598. <https://DOI.org/10.11646/zootaxa.4743.4.9>
16. Gevorgyan G., Rinke K., Schultze M., Mamyan A., Kuzmin A., Belykh O., Sorokovikova E., Hayrapetyan A., Hovsepian A., Khachikyan T., Aghayan S., Fedorova G., Krasnopeev A., Potapov S., Tikhonova I., First report about toxic cyanobacterial bloom occurrence in Lake Sevan, Armenia, «International Review of Hydrobiology», 2020, v.105 (5-6), pp. 131-142. DOI:10.1002/iroh.202002060.
17. Grigoryan G., Aghayan S., Gevorgyan H., Malkhasyan A., Vallee I., Karadjanian G., The First Report of *Trichinella britovi* in Armenia, «Iranian Journal of Parasitology», 15 (3), 2020, pp. 452-456. <https://DOI.org/10.18502/ijpa.v15i3.4212>.
18. Guimaraes S., Arbuckle B., Peters J., & Manaseryan N. *et al.* (11), Ancient DNA shows domestic horses were introduced in the southern Caucasus and Anatolia during the Bronze Age, Sci. Adv. 2020, pp. 1-10. DOI: 10.1126/sciadv.abb0030.
19. Hosseini S., Sharif M., Sarvi S., Abediankenari S., Hashemi-Soteh M., Amouei A., Montazeri M., Aghayan S., Gholami S., Shaker D., Mizani A., Shabanzadeh S., Daryani A., Genetic characterization of *Toxoplasma gondii* in Iranian HIV positive patients using multilocus nested-PCR-RFLP method, «Parasitology», v.147(3), 2020, pp. 322-328. DOI:10.1017/S0031182019001598.
20. Kalashian M., A New Species of the Buprestid Genus *Aphanisticus* Latreille, 1829 (Coleoptera, Buprestidae)



- from Nepal, «Entomological Review», v. 100, N 4, 2020, pp. 536-540. DOI: 10.1134/S0013873820040120
21. Kalashian M., A new species of the jewel beetle genus *Endelus* Deyrolle (Coleoptera: Buprestidae: Agrilinae: Aphanisticini) from Laos, «Israel Journal of Entomology», v.50 (2), 2020, pp.87-92. <http://DOI.org/10.5281/zenodo.4279591>
  22. Karagyan G., Golub N., Sota T., Cytogenetic characterization of periodical cicadas (Hemiptera: Cicadidae: *Magicicada*), European Journal of Entomology, 2020, 117, pp. 474–480. doi: 10.14411/eje.2020.050
  23. Kreshchenko N., Terenina N., Nefedova D., Mochalova N., Voropaeva E., Movsesyan S., The neuroactive substances and associated muscle system in *Rhipidocotyle campanula* (Digenea: Bucephalidae) from the intestine of the pike *Esox Lucius*, «Journal of Morphology» (Germany), v. 281, 2020, pp. 1047-1058. <https://DOI.org/10.1002/jmor.21230>, <https://publons.com/publon/10.1002/jmor.21230>.
  24. Kuemmerle T., Bluhm H., Ghoddousi A., Arakelyan M., Askerov E., Bleyhl B., Ghasabian M., Gavashelishvili A., Heidelberg A., Malkhasyan A., Manvelyan K., Soofi M., Yarovenko Y., Weinberg P., Zazanashvili N., Identifying priority areas for restoring mountain ungulates in the Caucasus ecoregion, «A journal of the Society for Conservation Biology. Conservation Science and Practice», v. 2, Issue 11, 2020, e276. pp. 1-15. <https://conbio.onlinelibrary.wiley.com/doi/10.1111/csp.2.276>
  25. Niedziałkowska M., Doan K., Górny M. & Manaseryan N. *et al.* (32), Winter temperature and forest cover have shaped red deer distribution in Europe and the Ural Mountains since the Late Pleistocene, «Journal of Biogeography», 2020, pp.1-13. <https://doi.org/10.1111/jbi.13989>
  26. Raković M., Aghayan S.A., Drovetski S. V., Medenica I., Aghababian K., Summer observations of European Goldcrest *Regulus regulus* and European Serin *Serinus serinus* in Armenia, «Sandgrouse», v.42, 2020, pp.294-297.
  27. Sota T., Hori M., Scholtz C., Karagyan G., Liang H.-B., Ikeda H., Takami Y., The origin of the giant ground beetle *Aplothorax burchelli* on St Helena Island, «Biological Journal of the Linnean Society», v.131(1), 2020, pp. 50-60. With 4 figures. <https://DOI.org/10.1093/biolinnean/blaa093>
  28. Spangenberg V., Arakelyan M., Cioffi M., Liehr T., Al-Rikabi A., Martynova E., Danielyan F., Stepanyan I., Galoyan E., Kolomiets O., Cytogenetic mechanisms of unisexuality in rock lizards, «Scientific Reports», v.10, article number 8697, 2020, pp.1-14. ID: <https://www.nature.com/articles/s41598-020-65686-7>
  29. Spangenberg V., Kolomiets O., Stepanyan I., Galoyan E., Cioffi M., Martynova E., Martirosyan I. et al., Evolution of the parthenogenetic rock lizard hybrid karyotype: Robertsonian translocation between two maternal chromosomes in *Darevskia rostombekowi*, «Chromosoma», v. 129, 2020, pp. 275-283. ID: <https://link.springer.com/article/10.1007/s00412-020-00744>
  30. Terenina N., Kreshchenko N., Mochalova N., Nefedova D., Voropaeva E., Movsesyan S., Demiaszkiewicz A., Yashin V., Kuchin A., The new data on the serotonin and FMRFamide localization in the nervous system of the *Opisthorchis felinus* metacercaria, «Acta Parasitologica» (Poland), v. 65 (2), 2020, pp. 361-374. ISSN 1230-1821, <https://DOI.10.2478/s11686-019-00165-2>
  31. Кобелян Р.О., Мкртчян Ж.Г., Габриелян Б.К., Оценка эколого-санитарного состояния Ереванского озера и водохранилища Ахпара, Ер., Биологический журнал Армении, 72 (1-2), 2020, с. 126-131.
  32. Asatryan V., Dallakyan M., Vardanyan T., Barseghyan N., Gabrielyan B., An integrative evaluation of suitability of a river for natural reproduction of trout of Lake Sevan (Armenia), Environmental Science and Pollution Research, 27(6), 2020, pp. 6352-6361. DOI:10.1007/s11356-019-07151-1 (article in journal indexed in Scopus).
  33. Barseghyan N., Vardanyan T., Asatryan V., Dallakyan M., Arakelyan A., Mamikonyan V., Application of new method of artificial incubation of Sevan trout (*salmo ischchan*, Kessler) eggs in natural condition of tributaries of lake Sevan, Vestnik of Astrakhan State Technical University. Series: fishing industry, N 1, 2020, pp. 103-110. DOI: 10.24143/2073-5529-2020-1-103-110 (article in journal indexed in Scopus).
  34. Belykh O., Tikhonova I., Krasnopeev A., Galachyants A., Sukhanova E., Suslova M., Gorshkova A., Gevorgyan G., Potapov S., Characterization of photoautotrophic microbial communities in the coastal water of Lake Baikal. Limnology and Freshwater Biology, 3(4), 2020, pp. 966-968. DOI: <https://doi.org/10.31951/2658-3518-2020-A-4-966> (article in peer-reviewed journal).
  35. Gabrielyan B., Gevorgyan S., Krapivin V., Mkrtchyan F., Innovative approach to diagnostics of lake Sevan water quality using optical instruments and modeling tools, Proceedings of XIV International Symposium "Problems of Ecoinformatics", 2020, pp. 176-183 (article in peer-reviewed journal).
  36. Gabrielyan B., Ghukasyan E., Yepremyan H., Kobelyan H., Melkonyan H., Hakobyan S., Vardanyan T., Ecological features of the bays of Lake Sevan during water “blooming”, Y., Electronic Journal of Natural Sciences of NAS RA, 35(2), 2020, pp.10-14. (article in peer-reviewed journal)
  37. Gevorgyan G., An investigation of hydrochemical contamination in the Hrazdan River, Armenia. Proceedings

of the Yerevan State University: Chemistry and Biology, 54(3), 2020 (article in peer-reviewed journal).

38. Ghazaryan K., Gevorgyan G., Movsesyan H., Khachatryan H., Soil salinization in the agricultural areas of Armenian semi-arid regions: case study of Masis region, Proceedings of the Yerevan State University: Chemical and biological sciences, 2020, 54(2), pp. 159-167, DOI: <https://doi.org/10.46991/PYSU:B/2020.54.2.159> (article in peer-reviewed journal).
39. Hambaryan L., Stepanyan L., Mikaelyan M., Gyurjyan Q., The bloom and toxicity of cyanobacteria in Lake Sevan. Proceedings of the Yerevan State University: Chemistry and Biology, 54(2), 2020, pp. 168-176. DOI: <https://doi.org/10.46991/PYSU:B/2020.54.2.159> (article in peer-reviewed journal).
40. Karnaukhov D., Teplykh M., Ermolaeva Y., Rusanovskaya O., Gevorgyan G., Hayrapetyan A., Silow E.I., Effect of light pollution on the several aquatic communities of Lake Baikal. Proceedings of the Yerevan State University: Chemistry and Biology, 54(1), 2020, pp. 86-88, DOI: <https://doi.org/10.46991/PYSU:B/2020.54.1.086> (article in peer-reviewed journal).
41. Khosrovyan A., Gabrielyan B., Kahru A., Ingestion and effects of virgin polyamide microplastics on Chironomus riparius adult larvae and adult zebrafish Danio rerio, Journal Chemosphere, v. 259, 2020, pp.121-126. DOI: 10.1016/j.chemosphere.2020.127456 (article in journal indexed in Scopus).
42. Sakharova E., Krylov A., Sabitova R., Tsvetkov A., Gambaryan L., Mamyan A., Gabrielyan B., Hayrapetyan A., Khachikyan T., Horizontal and vertical distribution of phytoplankton in the alpine Lake Sevan (Armenia) during the summer Cyanoprokaryota bloom, Contemporary Problems of Ecology, 13(1), 2020, pp. 60-70 (article in journal indexed in Scopus).
43. Sakharova E., Krylov A., Sabitova R., Tsvetkov A., Gambaryan L., Mamyan A., Gabrielyan B., Hayrapetyan A., Khachikyan T., Horizontal and vertical distribution of phytoplankton in alpine Lake Sevan (Armenia) during the summer water blooms of Cyanoprokaryota, Siberian Ecological Journal, v. 27, N 1, 2020, pp. 76-88. DOI: 10.15372/SEJ20200106 (article in peer-reviewed journal).
- Հոդվածները հրատարակվել են «Теория и практика борьбы с паразитарными болезнями» միջազգային գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածուում, Մոսկվա, «Наука» հրատ., N 21, 2020, с. 536. <https://www.elibrary.ru/contents.asp?titleid=51218>
44. Мовсесян С.О., Петросян Р.А., Варданян М.В., Никогосян М.А., Манукян Г.Е., О спонтанном бабезиозе собак, мерах профилактики и лечения, с. 234-240. <https://DOI: 10.31016/978-5-9902341-5-4.2020.21.234-239>
45. Нефедова Д.А., Мочалова Н.В., Теренина Н.Б., Ворopaева Е.Л., Мовсесян С.О., Кучин А.В., Крещенко Н.Д., Rhipidocotyle sampanula (Digenea: Vucephalidae): мышечная система, локализация серотонина и нейропептида FMRFамида в нервной системе, с. 276-280. <https://DOI: 10.31016/978-5-9902341-5-4.2020.21.276-280>
46. Рухкян М.Я., Оганесян Р.Л., Репеллентное воздействие растений на клещей Varroa jacobsoni (Oud., 1904) в Армении, с.341-346. DOI: <https://DOI.org/10.31016/978-5-9902341-5-4.2020.21>
- Հոդվածները տպագրվել են «Биологическое разнообразие Кавказа и Юга России» միջազգային XXII գիտական կոնֆերանսի ժողովածուում, Գրոգնի, «АЛЕФ», 2020, 407 էջ, ISBN 978-5-00128-529-8, ID:<https://www.kniiran.ru/index.php/informatsiya/77-novosti/1430-xxii-mezhdunarodnaya-nauchnaya-konferentsiya>
47. Акопян Н.Х., О биологии и морфологии медведицы Diacrisia sannio Linnaeus, 1758 (Lepidoptera, Erebiidae, Arctiinae) в Армении, с. 226-228.
48. Акопян Н.Х., Некоторые виды медведиц (Lepidoptera, Erebiidae, Arctiinae) вредителей, встречающиеся в Армении, с. 222-226.
49. Арутюнян Р.Г., Арутюнян Г.А., Марджанян М.А., Новые данные о вредителях фисташки туполистной (*Pistacia mutica* Fisch.&C.A.Mey.) в Армении, с. 228-231.
50. Барбарян Р.А., Степанян И.Э., Аракелян А.С., Пипоян С.Х., Особенности эритроцитов серебряного караса *Carassius gibelio* (Cypriniformes, Actinopterygii) из различных водоемов Армении, с. 236-238.
51. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Гаджиев А.А., Состав фауны и особенности географического распространения наземных моллюсков Хунзанского района П.Д., с. 314-318.
52. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Рамазанова М.М., Характер накопления тяжелых металлов в раковинах наземных моллюсков в городских условиях (на примере г.Изербали РД), с.318-320.
53. Степанян И.Э., Караган Г.А., Акопян А.С., Воздействие комплексных растительных экстрактов на основе масел *Peganum harmala*, *Achillea tenuifolia* и *Euphorbia orientalis* на жизнеспособность розанной и бобовой тли, с. 372-374.
54. Stepanyan I.E., Karagyan G.A., Akopyan A.S., Effect of complex vegetable extracts based on *Peganum harmala*, *Achillea tenuifolia* and *Euphorbia orientalis* oils on the viability of rose and bean aphid, p. 372-374.

Հոդվածները հրատարակվել են «Экология и природопользование» միջազգային գիտագործնական կոնֆերանսի ժողովածուում, Մազաս, ООО «КЕП» հրատ., 2020, 473 էջ, [http://www.inggu.ru/about\\_the\\_university/news/700/](http://www.inggu.ru/about_the_university/news/700/)

55. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Видовой состав наземных моллюсков Ново-лакского района РД и особенности их географического распространения, с. 278-282.
56. Магомедова М.З., Магомедова П.Д., Арутюнова Л.Д., Мусалаева Г.Г., Сравнительный анализ содержания тяжелых металлов в раковинах моллюсков, с. 275-277.
57. Оганесян В.С., Мирумян Л.С., Двукрылые (Diptera) бассейна оз. Севан, с. 288-292.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

Ս.Մովսեսյանին շնորհվել է ՌԴ «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» II կարգի շքանշան, Ս.Աղայանին՝ «Պողոսյան մրցանակ» (բնական գիտությունների զարգացման բնագավառում):

### «ՀԱՅԿԵՆՄԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ակ. Ա.Սաղյան  
Փոխտնօրեն՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան  
Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Հ.Քոլոյան  
Էլեկտրոնային փոստ՝ [armbiotech@gmail.com](mailto:armbiotech@gmail.com)  
Կայքէջ՝ [www.armbiotech.am](http://www.armbiotech.am)

**Մասնագիտական խորհուրդ 018՝** «Միկրոբիոլոգիա, կենսատեխնոլոգիա»  
Նախագահ՝ ակ. Ա.Սաղյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Էքսպրեսիոն կլոնավորման նպատակով *P. carotovorum subsp. carotovorum* PC1-ի գենոմի ամբողջական սեքվենսից (NC\_012917) ընտրվել են ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների գեները (համապատասխանաբար "GeneID:8132725" և "GeneID:8134484") հետազայում դրանց *E. coli*-ի ուժեղ էքսպրեսիայով վեկտորների կազմում ընդգրկելու նպատակով:

Հետազոտվել են *P. carotovorum*-ի ռեկոմբինանտ ասպարտատ և արոմատիկ ամինատրանսֆերազների ջերմաստիճանային և pH օպտիմումները: Բոլոր ստացված ռեկոմբինանտ ամինատրանսֆերազների ջերմաստիճանային և pH օպտիմումները բավականին լայն են և համընկնում են: Արոմատիկ և ասպարտատ ամինատրանսֆերազների ջերմաստիճանային օպտիմումները գտնվում են 50°C ջերմաստիճանի տիրույթում: Արոմատիկ ամինատրանսֆերազների օպտիմալ pH-երը գտնվում են 7.5-9.0 տիրույթում, իսկ ասպարտատ ամինատրանսֆերազների օպտիմալ pH-երը՝ 6.5-9.0 տիրույթում (դեկ.՝ կ.գ.թ. Ա.Համբարձումյան):

L-արգինինի նոր շտամ-արտադրիչների ստացման նպատակով իրականացվել է *G. stearothermophilus* և *T. neapolitana* թերմոֆիլ մանրէների *argJ* գենների մոլեկուլային կլոնավորումը pACYC184 վեկտորի վրա: Ստացված ռեկոմբինանտ պլազմիդների հիման վրա կառուցվել են արգինին սինթեզող նոր *E. coli* HK (pargJ-G) և *E. coli* HK (pargJ-T) ռեկոմբինանտ շտամեր: Իրականացվել է *E. coli* HK ռեկոմբինանտ շտամերի բջիջների ընտրությունը քլորամֆենիկոլ (Cm) պարունակող թասերից: Ցույց է տրվել, որ Cm-ի նկատմամբ կայունություն ունեցող pargJ-G և pargJ-T ռեկոմբինանտ պլազմիդները կրող բջիջների քանակն ամբողջությամբ պահպանվել է:

*E. coli* HK (pargJ-G) և *E. coli* HK (pargJ-T) ռեկոմբինանտ շտամերի ընտրված գաղութների մոտ ուսումնասիրվել է արգինինի կենսասինթեզի ակտիվությունը: Ռեկոմբինանտ շտամ-արտադրիչները սինթեզել են համապատասխանաբար 12 գ/լ և 14 գ/լ L-արգինին:

*E. coli* HK ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների կենսասինթետիկ ակտիվության բարձրացման նպատակով իրականացվել է ցանքսային և ֆերմենտման միջավայրերի կազմի բարելավում: Ընտրված ցանքսային և ֆերմենտման միջավայրերն ապահովել են համապատասխանաբար 15.5 գ/լ և 18 գ/լ L-արգինինի կենսասինթեզ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան):

Ուսումնասիրվել է *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերին պատկանող շտամերի կայունությունը ցեֆալոսպորինի և ազիտրոմիցինի շարքի հակաբիոտիկների նկատմամբ: Ուսումնասիրված շտամերի գենոմում բետա-լակտամազը կոդավորող *blaOXA-10* գենը նույնականացվել է ՊՇՌ-ի միջոցով: Բացահայտվել է հակաբիոտիկների նկատմամբ շտամերի կայունության բազմազանությունը, ինչը վկայում է շրջակա միջավայրում մանրէների հարմարվողականության բարձր մակարդակի մասին: Բետա-լակտամների նկատմամբ կայուն որոշ շտամերում հայտնաբերվել է *blaOXA-10* գենը, որը հաճախ հանդիպում է ուսումնասիրվող մանրէների ցեղերի պաթոգեն շտամերի մոտ: *Pseudomonas taetrolens* 9248 շտամի մոտ հայտնաբերվել է նաև ոչ ակտիվ մուտանտ *blaOXA-10* գեն, որի առկայությունը չի ապահովում կայունությունը լակտամային հակաբիոտիկների նկատմամբ: Հարկ է նշել, որ *aac (6') II* գենը, որը պատասխանատու է կանամիցինի նկատմամբ կայունության համար, չի հայտնաբերվել ուսումնասիրված շտամերում:

Պարզվել է, որ *P. aeruginosa* 9058, *P. fluorescens* 9110 և *P. taetrolens* 9248 շտամերը պարունակում են *blaOXA-10* գենը, որը գտնվում է քրոմոսոմի վրա, մինչդեռ *P. fluorescens* 9075, *Stenotrophomonas maltophilia* 9302 և *S. maltophilia* 306d2 շտամերում այս գենը տեղակայված է պլազմիդի վրա, սակայն նույնիսկ այս դեպքում չի բացառվում քրոմոսոմի վրա գենի հայտնաբերման հնարավորությունը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն.Հովհաննիսյան):

Քիմիական մուտագենեզի մեթոդով *Br. flavum* ATCC 14067 շտամի հիման վրա ստացվել է L-տրիպտոֆանի նկատմամբ աուքսոտրոֆ (*trp*<sup>-</sup>) շտամը, որը հետագայում օգտագործվել է p-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտների ընտրության համար: Որոշվել է *Br. flavum* շտամի աճն արգելակող p-ֆտորֆենիլալանինի նվազագույն խտությունը՝ 5 մգ/մլ, այնուհետև սելեկցիայի մեթոդով առանձնացվել է 23 ինդուկցված մուտանտ: Հիմնվելով մուտանտների սինթետիկ ակտիվության համեմատական վերլուծության վրա՝ ստացվել է խորքային ֆերմենտման պայմաններում տրիպտոֆան սինթեզող ամենահեռանկարային *Br. flavum* 21 (p-FP-r) շտամը (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Ավետիսովա):

Փորձարտադրական պայմաններում օպտիմալացվել են ցանքսանյութի ստացման սննդամիջավայրի կազմը (հաշվի առնելով ածխաջրի և ամոնիակային ազոտի խտությունների ռացիոնալ հարաբերությունները), ցանքսանյութի ստացման տեխնոլոգիական (Kla, pH, pO<sub>2</sub>, pCO<sub>2</sub>, t°) և *Br. flavum* LGS-6-ի ֆիզիոլոգիական ցուցանիշները (աճի տեսակարար արագություն, գեներացիայի ժամանակ, էկոնոմիկական գործակից, նյութափոխանակային գործակից): L-հիստիդինի կենսասինթեզի գործընթացում կիրառվել են մեր կողմից մշակված ֆերմենտացիոն սննդամիջավայրը և տեխնոլոգիական ռացիոնալ ցուցանիշները: *Br. flavum* LGS6-ի ֆիզիոլոգիական վիճակից կախված՝ զանգվածափոխանակային գործակցի, Kla-ի, pH-ի, pO<sub>2</sub>-ի և pCO<sub>2</sub>-ի օպտիմալ արժեքները կենսասինթեզի տարբեր փուլերում ունեն տարբեր մեծություններ: *Br. flavum* LGS6 շտամ-արտադրիչի կիրառմամբ մշակվել է L-հիստիդինի ստացման արդյունավետ տեխնոլոգիա՝ ապահովելով կենսասինթեզի բարձրացում 30-35%-ով (ղեկ.՝ կ.գ.թ. Վ.Ղուչիկյան):

Ուսումնասիրվել է Լոռու մարզի անտառածածկ գոտիներից հավաքված կլորավուն տանձատերևի (*Pýrola rotundifolia*) և լուծաղեղ ճահճայինի (*Persicária hydropíper*) վերգետնյա օրգանների լուծամզվածքների ֆիտոքիմիական, հանքային մակրո- և միկրոտարրերի բա-

դադրությունն ու դրանց հակաօքսիդանտային ակտիվությունը: Պարզվել է, որ կլորավուն տանձատերերը պարունակում է մեծ քանակությամբ դաբադող նյութեր (18-70%), վիտամին C (1.49 մգ/գ), արբուտին (10.67 մգ%), որոնք օժտված են հակամանրէային, հակաբորբոքային և հակաօքսիդիչ ակտիվությամբ:

Իրականացվել է անջատված վիտամին B<sub>17</sub>-ի, դրա հեպտաացիլ ածանցյալի, հաճաբենու կախասնկի (*Pleurotus ostreatus*) և բուլղարական պղպեղի (*Capsicum annuum*) լուծամզվածքների հակառուռուցքային ակտիվության գնահատում՝ սարկումա 180 և էռլիխի սացիտային կարցինոմա փորձնական մոդելային շտամերով վարակված սպիտակ մկների (20-25 գ) վրա: Ստացված տվյալների համաձայն՝ մեր կողմից անջատված վիտամին B<sub>17</sub>-ը սարկումա 180 մոդելի վրա ցուցաբերում է զգալի հակառուռուցքային ակտիվություն՝ 57.1% ճնշելով ուռուցքի աճը: Նույն պայմաններում դրա հեպտաացիլ ածանցյալը ճնշել է սարկումա 180 մոդելի աճը 41%: Թույլ հակառուռուցքային ակտիվություն է ցուցաբերել պղպեղի խիտ լուծույթը (դեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան):

Ստացվել է Շիֆի հիմքի (*S*)-2-N-(N'-բենզիլպրոլիլ) ամինաբենզոֆենոն քիրալային օժանդակ ռեագենտի և  $\alpha$ -տեղակալված պրոպարգիլզիցինի ելային հարթ քառակուսային կոմպլեքս: Կոմպլեքսը կիրառվել է որպես ացետիլային կապերի պարունակությամբ ելային ամինաթթվային սինտոն ամինաթթուների առաջացման ռեակցիաներում և ուսումնասիրվել է Գլայզերի հետերոհամակցման ռեակցիայում: Մշակվել են  $\alpha$ -տեղակալված պրոպարգիլզիցինային կոմպլեքսի կիրառմամբ Գլայզերի ռեակցիայի օպտիմալ պայմաններ: Ստացված արդյունքների հիման վրա հետազոտվել է 4 ալկին ռեագենտի հետ Գլայզերի համակցման ռեակցիան և սինթեզվել է 4 նոր ամինաթթու: Սինթեզվել են նաև Co<sup>III</sup> իոնի մոդիֆիկացված քիրալային կոմպլեքսներ՝ մոդելային ռեակցիաներում որպես կատալիզատորներ դրանց հետագա օգտագործման հեռանկարով (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Մկրտչյան):

Սինթեզվել են նախկինում չնկարագրված կողմնային ռադիկալում ացետիլենային և 1,2,3-տրիագոլային կամրջակով կապակցված տարբեր բնույթի տեղակալիչներով արիլային մնացորդներ պարունակող էնանտիոմերապես մաքուր թվով 10 ոչ սպիտակուցային (*S*)- $\alpha$ -ամինաթթուներ: Ոչ սպիտակուցային (*S*)- $\alpha$ -պրոպարգիլալանինի ամինաթթվի հենքի վրա ակտիվացված պեպտիդային էսթերների աստիճանական սինթեզի մեթոդով ստացվել են պոտենցիալ կենսաբանական ակտիվությամբ օժտված նոր դի- և տրիպեպտիդներ: Արդյունքում սինթեզվել են նախկինում գրականության մեջ չնկարագրված ամինաթթուներ և դրանց միջանկյալ կոմպլեքսները: Քլիք-համակցման ռեակցիայով սինթեզվել են էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուներ և նրանց միջանկյալ կոմպլեքսները:

AutoGrid 4 և AutoDock 4 ծրագրերի օգնությամբ պրոպարգիլ ալանինի հենքի վրա մոդելավորվել են մի շարք դի- և տրիպեպտիդներ, սինթեզվել են ենթադրաբար պոտենցիալ կենսաբանական ակտիվությամբ օժտված N-t-Boc-զիցին-(*S*)-պրոպարգիլալանին և N-t-Boc-(*S*)-ալանին-(*S*)-պրոպարգիլալանին-զիցին ամինաթթուները (դեկ.՝ ք.գ.թ. Զ.Մարդիյան):

Մելանինի ստացման համար որպես ելային հումք օգտագործվել են բուսական ծագման հումքի թափոններ (խաղողի սերմ և կեղև, բանանի կեղև, թեյ, սուրճ և չազա սունկ): Հելֆիլտրման և ԲԱՀՔ եղանակների կիրառմամբ հաստատվել է, որ ստացված մելանինները պարունակում են միևնույն հատկություններով օժտված 4 ֆրակցիա: Վերլուծված մելանինի մեջ սպիտակուցի ընդհանուր պարունակությունը կազմել է 10.36%, իսկ դրա աղաթթվային հիդրոլիզատում ամինաթթուների ընդհանուր քանակի 57%-ը կազմել են գլիցինը, գլուտամինաթթուն, ասպարագինաթթուն (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան):

Կաթնաթթվային բակտերիաների (ԿԹԲ) հակամանրէային ակտիվության լայն տիրույթը խթանել է դրանց կիրառումը սննդի արդյունաբերության մեջ որպես բնական կենսապահածոյացման միջոցներ: Այդ նպատակով ուսումնասիրվել են ավելի քան 400 ԿԹԲ-ների շտամեր: Նախկինում ցույց էր տրվել, որ այծի, ոչխարի, գոմեշի, ավանակի կաթից մեկուսացված

ԿԹԲ-ների որոշ շտամեր ճնշում են տարբեր կարգաբանական խմբերին պատկանող սննդի փչացմանը բերող մանրէների աճը, որոնք մի շարք հակաբիոտիկների հանդեպ ունեն բարձր բազմակի կայունություն:

*L. helveticus* KG5՝ և *L. acidophilus* 1991 շտամերը ցուցաբերում են մանրէասպան ազդեցություն *E. coli* 1 շտամի աճի վրա: Նույն ժամանակ *L. rhamnosus* 20-12 և *Enterococcus faecium* KE 5 շտամերի կիրառումը բերել է միայն *E. coli* բջիջների տիտրի նվազեցմանը:

Արդյունքները ցույց են տվել ԿԹԲ-ների շտամերի կողմից արգելակիչ ազդեցություն *in vitro* պայմաններում: Սա ենթադրում է, որ *L. acidophilus* 1991 և *L. helveticus* KG5 շտամերը նախընտրելի են կաթնամթերքի կենսապահպանման և *E. coli*-ով վարակման կանխարգելման համար և կարող են օգտագործվել որպես բնական կոնսերվանտներ կաթնաշոռի պահպանման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Կ.Չիտչյան):

Ուսումնասիրվել է կենսահիդրոմետալուրգիական տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունը Քաջարանի ցածրորակ պորֆիրային պղնձամոլիբդենային հանքաքարի մշակման համար: Փորձարկվել են դրա սուլֆիդային և օքսիդացած հանքանմուշները: Արդյունքները ցույց են տվել, որ հանքանմուշի նկատմամբ ադապտացված մանրէային կուլտուրաների կիրառումը թույլ է տալիս պղնձի կորզումը սուլֆիդային հանքաքարից ավելացնել մինչև 5 անգամ 15 օրվա ընթացքում: Պղնձի կորզման աստիճանը հասցվել էր 91-94%՝ 10% պուլպի խտության դեպքում և 98%՝ 20% պուլպի խտության դեպքում: Օքսիդացած հանքանմուշի դեպքում պղնձի կորզումն ադապտացված կուլտուրաների միջոցով ավելանում է մոտ 2 անգամ՝ հասնելով 100% առաջին իսկ օրը:

Համեմատական տեսանկյունից կատարվել է պղնձի լուծակորիզում մետաղ պարունակող թափոններից (պլատայից) եռարժեք երկաթի ( $\text{Fe}_2\text{O}_3 \cdot x\text{H}_2\text{O}$ ) լուծույթի և կենսածին երկաթի միջոցով *Acidithiobacillus ferrooxidans* 61 և *Leptospirillum ferrophilum* Ksh կուլտուրաների իմոբիլիզացված կենսազանգվածի կիրառում: Պարզվել է, որ պղնձի տարրալուծումը կենսածին երկաթի միջոցով ընթանում է 2-3 անգամ ավելի ինտենսիվորեն, քան մետաղ պարունակող թափոնները երկաթի  $\text{Fe}_2\text{O}_3 \cdot x\text{H}_2\text{O}$  լուծույթով մշակելիս: Այսպիսով, կենսածին երկաթի միջոցով տարրալուծման ինտենզիվումը մետաղ պարունակող թափոնների (մայրական պլատաների) վերամշակման գործընթացում նպաստել է պղնձի և այլ մետաղների արդյունավետ կորզմանը երկրորդային հումքից (ղեկ.՝ կ.գ.դ. Ն.Վարդանյան):

Հաշվի առնելով 5-ամինալևուլինաթթվի (5-ԱԼԹ) և նրա ածանցյալների գործնական նշանակությունը բժշկության, գյուղատնտեսության, կենսատեխնոլոգիայի, օրգանական և կենսաօրգանական սինթեզի մեջ՝ կատարվել են 5-ԱԼԹ-ի ռեկոմբինանտ շտամ-արտադրիչների ստեղծման, նրանց մոտ 5-ԱԼԹ-ի էլքի բարձրացման և նրա կենսատեխնոլոգիական ստացման գիտական հիմքերի մշակման աշխատանքներ: Հետազոտության իրականացման համար կիրառվել է 5-ԱԼԹ-սինթետազ ֆերմենտի համար պատասխանատու *hema* գենը: Աշխատանքի արդյունքում *Rba. azotoformans* ՄՄԿ6508 շտամից ու նրա E10 մուտանտից հաջողությամբ մեկուսացվել և ՊՇՌ-ի միջոցով ամպլիֆիկացվել է *hema* գենը: Իրականացվել է նշված գենի և pUC18 վեկտորի ռեստրիկցիա *EcoRI* և *HindIII* ռեստրիկտազների միջոցով և կապակցում լիգազ ֆերմենտի միջոցով: Կատարվել է pUC18 վեկտորի և *E. coli* Top10 շտամի տրանսֆորմացիա: Ամպլիցիլին և X-գալ պարունակող LB ագարային սննդամիջավայրի վրա *E. coli* Top10 շտամի կուլտիվացումից հետո հայտնաբերվել են կապույտ գունավորմամբ գաղութներ, որը ցույց է տվել, որ տրանսֆորմացիան իրականացվել է, սակայն pUC18 վեկտորը չի պարունակում *hema* գենը: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ *HindIII* ռեստրիկտազն արդյունավետորեն է գործում վեկտորների վրա, սակայն արդյունավետ չի գործում այն ԴՆԹ-ի հատվածների վրա, որոնք ավարտվում են անմիջապես *HindIII* ռեստրիկտազիոն հատվածով (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան):

Միմիոտիկ ազոտֆիքսող բակտերիաների որոշ տեսակներ ցուցաբերել են բարձր աս-

տիճանի հալոտոլերանտություն: Նրանց համատեղ կիրառումն աղադիմացկուն լոբագգի բույսերի հետ հնարավորություն կտա վերականգնել աղակալված հողերը հետագա օգտագործման համար: Ստացված տվյալների համաձայն՝ լոբու արմատային համակարգի վրա պալարների առաջացման լավագույն ցուցանիշը (միջինում ամեն բույսի 25.8 հատ) ապահովել է ազոտֆիքսող բակտերիա *Rhizobium leguminosarum* bv. *faseoli* 5700 շտամի կիրառումը: Միևնույն ժամանակ, բույսի կանաչ զանգվածում ընդհանուր սպիտակուցի մակարդակը կազմել է 14%, ինչն աղի սթրեսի պայմաններում աճի կարևոր ցուցանիշ է:

Շարունակվել է Արցախի հողերից մեկուսացված պալարաբակտերիաների շտամերի վիրուլենտության ուսումնասիրությունը «Rhizomix» կենսաբանական պարարտանյութի հատկությունները բարելավելու նպատակով, որն իր բաղադրության մեջ ներառում է *Azotobacter chroococcum* և *Bacillus polymyxa* բակտերիաները: Արցախի հողերից մեկուսացված լոբու, սոյայի և գետնանուշի պալարաբակտերիաների առավել վիրուլենտ շտամերը կարելի է ներառել «Rhizomix» կենսաբանական պարարտանյութի բաղադրության մեջ *A. chroococcum* և *B. polymyxa* կուլտուրաների հետ միասին՝ հողը ազոտով հարստացնելու համար (ղեկ.՝ Ս.Հարությունյան):

Պահպանվել է միտոսպորիկ կենսաքայքայիչ սնկերի ավելի քան 1100 և բազիդիոմիցետների 45 շտամերի կենսունակությունը և վերարտադրողական ակտիվությունը տարբեր ազարային սննդամիջավայրերի վրա: *Penicillium* և *Aspergillus* ցեղերի սնկերի 40 շտամերի մոտ հաստատվել է բարձր վերարտադրողականություն 10 տարի վազելինի յուղի տակ պահպանումից հետո: Ուսումնասիրվել են բորբոսասնկերի 20 շտամի ածխածնի տարբեր աղբյուրների յուրացման առանձնահատկություններն աուքսանագրաֆիայի եղանակով՝ Պրիդիեմի միջավայրի վրա:

Կատարվել է կաթնաթթվային բակտերիաների 600 շտամի կրիոկոնսերվացիա գլիցերինի և կուլտուրալ հեղուկի խառնուրդում -20°C պայմաններում, ինչն արդյունավետ մեթոդ է տվյալ խմբի բակտերիաների համար:

Ուսումնասիրվել են կովի մաճից անջատված կաթնաթթվային բակտերիաների 50 շտամի կուլտուրալ, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունները: Այդ բակտերիաների ձողաձև ձևերը թերմոֆիլ շտամեր են (աճի ջերմաստիճանը ~50°C), կայուն են NaCl-ի 2-ից մինչև 4% խտությունների հանդեպ: Նրանց մեծ մասը լավ է յուրացնում գլյուկոզը և լակտոզը, իսկ որոշները՝ նաև մաննոզը: Միևնույն ժամանակ, կոկաձև ձևերն ակտիվորեն աճում են 15°C ջերմաստիճանում և լավ են յուրացնում գլյուկոզը, ֆրուկտոզը, ռիբոզը, արաբինոզը և մաննոզը:

Ուսումնասիրվել են սպորառաջացող բակտերիաների 10 շտամի ֆիզիոլոգիական և կենսաքիմիական հատկությունները, այդ թվում՝ կատալազի առաջացումը, օսլայի հիդրոլիզը, կազեինի քայքայումը, աճը pH մինչև 5.7 դեպքում և ածխածնի աղբյուրների յուրացումը: Փորձարկված շտամերը կատալազ դրական են, հիդրոլիզում են օսլան, աճում են միջավայրում 7% NaCl առկայությամբ, թթու չեն առաջացնում մանիտից, քսիլոզից ու արաբինոզից, լավ են յուրացնում գլյուկոզը, ֆրուկտոզը, տրեհալոզը, ռիբոզը, չեն յուրացնում արաբինոզը, ֆուկոզը, լիքսոզը:

Ուսումնասիրվել է նոր անջատված *Brevibacillus laterosporus* 688-2 շտամի միջատասպան ակտիվությունը տերևակերի նկատմամբ: Հաստատվել է նշված շտամի միջատասպան ակտիվությունը, որն առաջացնում է միջատների 100% մահացություն փորձարկումը սկսելուց 72 ժ հետո (ղեկ.՝ Կ.Գ.Թ. Հ.Զարգարյան):

## **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«Բուսահումքերի համալիր մշակման եղանակ՝ էկոլոգիապես մաքուր սննդամթերքի,

կերային հավելումների և հալենային պատրաստուկների ստացման համար» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Դադայան) մշակվել է չիչխանի, պուտավոր կաթնափուշի և դառը կորիզավորների համալիր մշակման անթափոն տեխնոլոգիա: Ցույց է տրվել, որ ոչ թանկարժեք ռեպերկոյացիոն վերափոխված համակարգի կիրառմամբ մեկ տեխնոլոգիական հոսքագծով կարելի է միաժամանակ ստանալ բուսահումքերի բժշկական յուղեր, բնական վիճակում գտնվող ԿԱՆ-եր (սիլիմարին, սիլիբինին, վիտամին B17), մակրո- և միկրո-տարրերով ու վիտամիններով հարուստ անասնակերային հավելումներ:

«Ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիաների կարգաբանության և տաքսոնոմիայի պատկանելության ուսումնասիրություն» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ան.գ.թ. Վ.Գոգինյան) մոլեկուլային գենետիկական մեթոդների կիրառմամբ անջատվել, ամպլիֆիկացվել և սեքվենավորվել է ծիրանագույն ֆոտոսինթեզող բակտերիաների 62 գումարային ԴՆԹ-ների նմուշ: 16S r-ՌՆԹ գեների տվյալների վերլուծության հիման վրա ի հայտ են բերվել մանրէների տեսակային պատկանելությունները: Համապատասխան համակարգչային ծրագրերի օգնությամբ իրականացվել է հետազոտության օբյեկտների համեմատական և ֆիլոգենետիկ անալիզ՝ նրանց մերձագակցական կապերի բացահայտմամբ:

««Click» ռեակցիաների կիրառմամբ կոդմային շղթայում տեղակալված 1,2,3-տրիագուլային խմբեր պարունակող նոր էնանտիոմերապես հարստացված ամինաթթուների սինթեզ» ծրագրի շրջանակներում սինթեզվել են տերմինալային ագետիլենային կապեր պարունակող ամինաթթվային կոմպլեքսներ, որոնք հետազոտվել են «click» ռեակցիաներում: Ստացվել են ամինաթթվային ֆրագմենտում 1,2,3-տրիագուլային խմբեր պարունակող դիաստերեոմեր կոմպլեքսներ: Բնութագրվել են դրանց կառուցվածքները, բացարձակ կոնֆիգուրացիան և դիաստերեոմերային մաքրության աստիճանը: Սինթեզվել են էնանտիոմերապես մաքուր 16 նոր կոմպլեքս և նրանց համապատասխան α-ամինաթթուներ՝ օժտված պոտենցիալ կենսաբանական ակտիվությամբ:

«Ցածրմոլեկուլային զանգվածով պոլիիոնների միջև էլեկտրաստատիկ և ջրածնական փոխազդեցությունների հիման վրա ասիմետրիկ սինթեզի կատալիտիկ համակարգերի ծրագրավորում և կառուցում» ծրագրի շրջանակներում սինթեզվել են էլային Շիֆի հիմքերը և դրանց հենքի վրա կոմպլեքսները, որոնք ուսումնասիրվել են որպես կատալիզատորներ մոդելային ռեակցիայում (ղեկ.՝ ակ. Ա.Սադյան):

«Մանրէային մեկանիինի կիրառումը որպես հազվագյուտ դեղաբույսերի և տեղային տեսակների բարձր գեղազարդությամբ բույսերի աճի և զարգացման խթանիչ» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Հովսեփյան) մշակված ֆերմենտման միջավայրի և կուլտիվացման պայմանների օպտիմալացման հիման վրա ստացվել է ցածր ինքնարժեքով և կենսաբանորեն ակտիվ մանրէային մեկանիին: Անջատման և մաքրման պրոցեսում համակցված եղանակի կիրառումը 19%-ով բարձրացրել է նյութի ելքը: Մանրէային մեկանիինի կիրառման արդյունքում գրանցվել է գեղազարդ բույսերի մոտ ծաղկման երկարացում, թփերի արտաքին տեսքի բարելավում, սաղարթի կանաչ գույնի ինտենսիվության ուժեղացում, ծաղիկների խոշորացում և քանակի ավելացում:

«Գարեջրի արտադրության թափոնների վերամշակումը միաբջիջ կանաչ միկրոօրգանիզմների կիրառմամբ» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Ծատուրյան) գնահատվել է գարեջրի արտադրության արդյունքում առաջացած թափոնների վերամշակման արդյունավետությունը *Parachlorella kessleri*, *Chlorella vulgaris*, *C. protothecoides* և *Neochloris oleoabundans* միկրոօրգանիզմների տեսակների կիրառմամբ:

«Կոլագենազ ֆերմենտի պոտենցիալ արգելակիչներ հանդիսացող ոչ սպիտակուցային ամինաթթուների և պեպտիդների մոդելավորումը, նպատակային սինթեզը և ազդեցության in vitro հետազոտումը» ծրագրի շրջանակներում (ղեկ.՝ ք.գ.թ. Տ.Սարգսյան) AutoGrid 4 և



AutoDock 4 ծրագրերի կիրառմամբ մոդելավորվել և որոնվել են նոր պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ ամինաթթուներ և պեպտիդներ:

## Հրապարակումներ

### Հոդվածներ, գեկուցումներ

1. Аветисян С.В., Паронян М.Г., Оганнисян С.С., Овсепян А.С., Меланиногенные штаммы *Bacillus thuringiensis*: перспективы их применения, Ер., “ДНАН РА”, т. 120, N 1, 2020, с. 74-80.
2. Багдасарян С.А., Бабаян Б.Г., Мелкумян М.А., Антибиотикоустойчивость фитопатогенных *Pseudomonas syringae* и *Xanthomonas vesicatoria*, М., Электрон. научн. журн. “Интернаука”, N18, 2020, с. 23-24.
3. Башилов А.В., Шутова А.Г., Овсепян А.С., Аветисян С.В., Использование биопрепарата на основе меланиногенного штамма *B. thuringiensis* при подготовке посадочного материала для озеленения городской среды, Минск, “Вестник фонда фундаментальных исследований”, т.93, N3, 2020, с.48-56.
4. Дадаян А.С., Степанян Л.А., Петросян А.Р., Погосян А.С., Овсепян Г.Ц., Казарян С. Г., Дадаян С.А., Особенности технологий комплексной переработки облепихи крушиновидной (*Hippophae*), расторопши пятнистой [*Silybum marianum* (L.) Gaertn)] и миндаля обыкновенного (*Prunus dulcis*), Ер., “Химич. журн. Армении”, т.73, N 1, 2020, с. 91-102.
5. Дюкова К.Г., Измаилян М.С., Палоян А.М., Амбарцумян А.А., Улучшение каталитических свойств штамма-продуцента аспартазы *Pectobacterium carotovorum* в процессе получения L-аспарагиновой кислоты, М., “Биотехнология”, т. 36, N 2, 2020, с. 30-35.
6. Мелкумян И.Э., Фотометрический метод определения инулина в экстракте клубней топинамбура, Ер., Биологический Журнал Армении, т. 72, N 3, 2020, с. 24-28.
7. Оганесян Г.Г., Барсегян А.А., Даниелян Л.В., Пашаян М.М., Видовая принадлежность заквасочной культуры лечебно-диетического кисломолочного напитка «НАРИНЕ», Ер., “Биол.журн.Армении”, т. 72, N 1-2, 2020, с. 95-101.
8. Петросян А.Р., Дадаян А.С., Степанян Л.А., Погосян А.С., Исраелян М.О., Дадаян С.А., Сравнительное изучение содержания биологически активных веществ экстрактов горца перечного, произрастающего в Армении, Ер., “Химич. журн. Армении”, т. 73, N 1, 2020, с. 103-108.
9. Сарибекян Ж.Н., Агаджанян А.Е., Разработка эффективной технологии выделения пролина из культуральной жидкости, Ер., Вестник Национального политехнического университета, N 1, 2020, с.1- 13.
10. Чапанян Е.Н., Арутюнян С.А., Саркисян М.А. Динамика численности *Azotobacter chroococcum* в коричневых лесных почвах после опрыскивания бактериальными инсектицидами вида *Bacillus thuringiensis*, Е., “Биолог. журн. Армении”, т. 72, N 3, 2020, с. 45-52.
11. Aganyants H., Weigel P., Hovhannisyan Ye., Lecocq M., Koloyan H., Hambardzumyan A., Hovsepyan A., Hallet J.-N., Sakanyan V., Rational Engineering of the Substrate Specificity of a Thermostable D-Hydantoinase (Dihydropyrimidinase), "High-Throughput", v. 9, N 5, 2020, p. 15.
12. Babayan B., Antibiotic resistance and xenobiotic biodegradation correlation in native soil *Pseudomonas chlororaphis* group, European Journal of Technical and Natural Sciences, 2020, N 2, pp. 3-11.
13. Babayan B., Bagdasaryan S., Kinosyan M., Melkumyan M., Hovhannisyan N., Metabolic and genetic features of biodegradation and resistance potential of soil *Pseudomonas sp.* from the National Culture Collection of Microorganisms, Republic of Armenia, The European Journal of Biomedical & Life Sciences, v.1, 2020, pp.12-19.
14. Babayan B., Bagdasaryan S., Melkumyan M., Davidian T., Phenol Oxidase of biodegradation in native *Pseudomonas* of soil, М., "Internauka" electronic scientific journal, 2020, N 18, pp. 9-11.
15. Babayan B., Melkumyan M., Bagdasaryan S., *Stenotrophomonas maltophilia* resistance and biodegradation potential, М., CHRONOS, v. 2, 2020, pp. 4-8.
Ստացվել են տարբեր մետաղներ պարունակող ալբումինային նանոմասնիկներ, որոշվել են դրանց ձևը, չափսերը: Այդ մասնիկներում ընդգրկվել են պրոտեազների արգելակիչներ՝ սոյայից ստացված տրիպսինի արգելակիչ, միզանյութ: Մարդու տարբեր հյուսվածքներից մաքրվել է ինսուլինի ժամանակ մակարդուկի գոյացման գործընթացում թիրախային ֆերմենտ հանդիսացող պրոտեին կինազ C-ն: Որպես հիվանդության զարգացման դինամիկայի ցուցանիշ հետազոտվել է քսանտին օքսիդազի ակտիվությունը փորձարարական գլիոբլաստոմայի պայմաններում: Շարունակվել են պոլիէթիլեն գլիկոլից և այլ պոլիմերներից գլիոբլաստոմայի աճը կանխարգելող դեղեր պարունակող կաչուն թիթեղների ստացման աշխատանքները: GEO, GSEA ծրագրերի, ինչպես նաև Molecular Signature Databases (MSignDB), GEOR գործիքների կիրառմամբ ուսումնասիրվել են գլիոբլաստոմայի կենսամարկերները և պարզաբանվել են այդ մարկերի՝ գեների հետ կապված բոլոր մոլեկուլային կենսաբանական, կենսաքիմիական ուղիները (դեկ.՝ կ.գ.թ. Բ.Դանիելյան):

Առնետների ալոքսանով առաջացրած շաքարային դիաբետի մոդելի վրա հետազոտվել են ալկոհոլի և ամինաթթվային խառնուրդի ազդեցությունները: Իրականացվել են կենդանիների վարքագծային, արյան քսուքների ու ենթաստամոքսային գեղձի մորֆոլոգիական հետազոտություններ (դեկ.՝ կ.գ.թ. Ի.Սահակյան):

Հետազոտվել է 1-ին տիպի շաքարային դիաբետով (S1C7) հիվանդ երեխաների արյան պլազմայի ադենոզինդեամինազայի ակտիվությունը: Դիտվել է ԱԴԱ ակտիվության աճ հիմնականում ԱԴԱ2 իզոմերի հաշվին: Երիտասարդ կամավորների արյան պլազմայում որոշվել է ԱԴԱ իզոմերների ակտիվության նորման և ցույց է տրվել, որ ԱԴԱ ակտիվության փոփոխությունն ազդում է S1C7 պաթոգենեզի վրա: Բացահայտվել են դեռատի/երիտասարդ առողջ մարդկանց սեռի և սեռահասունացման հետ կապված ԱԴԱ ակտիվության տարբերությունները (դեկ.՝ կ.գ.թ. Ե.Սարգիսովա):

Շարունակվել է 1-ին տիպի շաքարային դիաբետի (S1C7)՝ «Մուրացան» հիվանդանոցի և Մ.Հերացու անվ. ԵՊԲՀ հետ համատեղ ուսումնասիրությունը: S1C7-ով հիվանդների (երկու հասակային խմբերում՝ մանկությունից մինչև սեռահասունություն և դրա սկզբից մինչև լրիվ հասունություն) արյան լեյկոցիտների L-արգինինի նյութափոխանակության մեջ բացահայտվել են սեռական դիմորֆիզմի դրսևորումներ: Բացահայտվել է գլիկեմիկ կարգավիճակի ազդեցությունը սեռական դիմորֆիզմի դրսևորումների վրա արգինազի, ազոտի օքսիդի սինթազի ու կրեատինկինազի ակտիվությունների փոփոխմամբ, որոնք տարբերվում են արյան պլազմայից: Ստացված տվյալներն ընդլայնել են S1C7ի էնդոտիպերի առանձնահատկությունների մասին պատկերացումները, ինչը կարող է օգտակար լինել թերապևտիկ ռազմավարության, հիվանդության սրությունը և բուժման ընթացքը գնահատելու գործում, ինչպես նաև աուտոիմունային դիաբետի բուժման ու կանխարգելման նոր մոտեցումներ մշակելիս (դեկ.՝ կ.գ.թ. Ն.Ալչուջյան):

Շարունակվել է սիզմայաձև աղու կարցինոմայով հիվանդների մոտ աղիքային ցուպիկի տրանսլոկացիոն և կենսաքիմիական հատկությունների փոփոխությունների ուսումնասիրությունը: Անաերոբ բակտերիաների քանակի նվազման պատճառով նկատվել է միկրոբիոցենոզի պատենշային ֆունկցիայի թուլացում, աղիքի լորձաթաղանթի թափանցելիութ-

յան մեծացում և իմունային համակարգի խախտում: Առողջ և կարգինումայով հիվանդ մարդկանց արյունից մեկուսացվել են *E. coli* պլազմիդները (ղեկ.՝ կ.գ.թ. Ա.Աղաբաբովա):

Հետազոտվել են էլեկտրաբուժության ժամանակ ակտիվ դերակատարում ունեցող էլեկտրաինդուկցված ազատ ռադիկալների և որոշ նեյրոակտիվ միացությունների հավանական հակաօքսիդանտային ազդեցությունները լիպիդային երկշերտ թաղանթային կառույցներում մակաձվող օքսիդանտային պրոցեսների վրա: Ագրարային համալսարանի հետ համատեղ իրականացվել են ստրեպտոկոկերի վրա գալարմինի D-15 ածանցյալի ազդեցության ուսումնասիրություններ: ԵՊԲՀ-ի և Տյուբինգենի համալսարանի հետ համատեղ իրականացվել են  $\beta$ -ամիլոիդի հակաֆիբրոտիկ ազդեցության և լյարդի ցիռոզի ժամանակ վերջինիս նվազման,  $\alpha 2$ -ադրեներգիկ ռեցեպտորների վրա մեսիդինի ազդեցության ուսումնասիրություններ (ղեկ.՝ կ.գ.թ. Թ.Սեֆերյան):

Շարունակվել են հեմոքֆինների հակաշաքարախտային ազդեցության ուսումնասիրությունները նոր համալիր հակաշաքարախտային դեղամիջոցներ ստեղծելու նպատակով, որոնց բաղադրիչներից մեկը հեմոքֆինն է: Սկսվել են LVV-հեմոքֆին-3-ի և կորտիկոստրոպին ռիլիզինգ գործոնի՝ CRF-ի ռեցեպտոր-2-ի (CRF-R2) ագոնիստ յուրոկորտին-3-ի (Uro3) հակաշաքարախտային ազդեցության համատեղ հետազոտությունները: Նախնական փորձերով ցույց է տրվել, որ LVV-հեմոքֆին-3 և Uro3 համատեղ ներորովայնային ներարկումը ստրեպտոզոոցինով խթանված դիաբետիկ առնետներին ունի առավել արտահայտված գլյուկոզ-նվազեցնող ազդեցություն, քան այս միջոցներից յուրաքանչյուրն առանձին վերցրած (ղեկ.՝ կ.գ.թ. Ֆ.Սարուխանյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Մշակվել են տարբեր մեթոդներ միկրոալբումինային և նանոալբումինային մասնիկներ ստանալու համար: Գալարմին պեպտիդը կապվել կամ ադսորբցիայի է ենթարկվել ալբումինային մասնիկների մակերեսին: Տրանսմիսիոն էլեկտրոնային մանրադիտակի կիրառմամբ ստույգ որոշվել են մասնիկների չափսերը: Ուսումնասիրվել են գալարմինի պրոտեոլիզը կանխարգելող հատկությունները: Առնետների արյան հոսքում ուսումնասիրվել են միկրոմասնիկների և նանոմասնիկների շրջանառության առանձնահատկությունները ֆիզիոլոգիական և պաթոլոգիական պայմաններում: Գնահատվել է գալարմինով հագեցած մասնիկների ազդեցությունը փորձարարական ինսուլտի և նորմալ ֆիզիոլոգիական պայմաններում: Շարունակվում են  $^{99}\text{Tc}$ -կիրառմամբ մասնիկների հյուսվածքային բաշխվածության ուսումնասիրման աշխատանքները (ղեկ.՝ կ.գ.դ. Ս.Չախյան):

### **Հրապարակումներ**

#### ***Հոդվածներ, գեկուցումներ***

1. Аветисян С.В., Паронян М.Г., Оганнисян С.С., Овсепян А.С., Меланиногенные штаммы *Bacillus thuringiensis*: перспективы их применения, Ер., “ДНАН РА”, т.120, N 1, 2020, с. 74-80.
2. Башилов А.В., Шутова А.Г., Овсепян А.С., Аветисян С.В., Использование биопрепарата на основе меланиногенного штамма *B. thuringiensis* при подготовке посадочного материала для озеленения городской среды, Минск, “Вестник фонда фунгаментальных исследований”, N 3 (93), 2020, с. 48-56.
3. Дюкова К.Г., Измаилян М.С., Палоян А.М., Амбарцумян А.А., Улучшение каталитических свойств штамма-продуцента аспартазы *Pectobacterium carotovorum* в процессе получения L-аспарагиновой кислоты, М., “Биотехнология”, т.36, N 2, 2020, с. 30-35.
4. Хачатрян Н. Х., Сравнительное действие диabetогенов на содержание нейроактивных аминокислот в мозге и поджелудочной железе крыс, Ер., “Мед. наука Армении”, т. LX, N 2, 2020, с. 38-44.
5. Abrahamyan S., Sahakyan I., Tumasyan N., Kocharyan N., Simonyan A., Aroutiounian R., Chailyan G.,



- Chailyan S., Davtyan T., Galoian K., Morpho-functional study of the hypothalamic proline-rich polypeptide apoptotic activity against mouse Ehrlich ascites carcinoma, London, Oncology Reports, v. 44. 2020, pp. 196-212.
6. Aganyants H., Weigel P., Hovhannisyan Ye., Lecocq M., Koloyan H., Hambardzumyan A., Hovsepyan A., Hallet J.-N., Sakanyan V., Rational Engineering of the Substrate Specificity of a Thermostable D-Hydantoinase (Dihydropyrimidinase), "High-Throughput", v. 9, N1, 2020, pp. 1-15, doi:10.3390/ht9010005.
  7. Buniatian G., Weiskirchen R., Weiss T. S., Schwinghammer U., Fritz M., Seferyan T., Proksch B., Glaser M., Lourhmati A., Buadze M., Borkham-Kamphorst E., Gaunitz F., Gleiter Ch. H., Lang T., Schaeffeler E., Tremmel R., Cynis H., Frey W. H., Gebhardt R., Friedman S. L., Mikulits W., Schwab M., Danielyan L., "Antifibrotic Effects of Amyloid-Beta and Its Loss in Cirrhotic Liver", MDPI, j. Cells, 9 (2), 2020, pp.452-474. DOI: 10.3390/cells9020452.
  8. Danielyan K., Chailyan S., Albumin Consisted Carriers Might Be Protected from Proteases, Biomedical Journal of Scientific and Technical Research, 28(2), 2020, pp 21372- 21374, DOI: 10.26717/BJSTR.2020.28.004613.
  9. Danielyan K., Yeghiazaryan T., Chailyan S., Harutyunyan L., Harutyunyan R., Petrosyan G., Purine and Pyrimidine-Linked Enzymes and Genes are Strongly Responsible for the Development of Tumors, Particularly Glioblastoma Multiforme. Computational Molecular Bioscience, 10(3), 2020, pp. 73-80.
  10. Gasparyan H., Buloyan S., Karapetyan L., Harutyunyan H., Antonyan A., Sharoyan S., Mardanyan S., Mitigation with plant ethanol extracts of STZ-induced histopathological injuries in the tissues of laboratory rats, Glob. J. Biotechnol. Biomater. Sci. 6(1), 2020, pp. 001-006. DOI: <https://dx.doi.org/10.17352/gjbs.000011>.
  11. Gasparyan V., Mikaelyan M., Poghosyan G., Antibodies to oxidized lipoproteins in human normal plasma, detection and analysis, J. Immunoassay Immunochem, v. 41, N 4, 2020, pp. 761-767.
  12. Gyulkhandanyan A., Zakoyan A., Mkrtchyan L., Gyulkhandanyan A., Parkhats M., Dzhagarov B., Sheyranyan M., Simonyan G., Lazareva E., Tuchin V., Gyulkhandanyan G., Binding of ceruloplasmin with cationic porphyrins: pH and salt composition of a medium, Proc. SPIE 11363, Tissue Optics and Photonics 2020, 1136329, pp.1-9. <https://doi.org/10.1117/12.2556021>
  13. Gyulkhandanyan G., Sargsyan A., Paronyan M., Sheyranyan M., Absorption and fluorescence spectra parameters of cationic porphyrins for photodynamic therapy of tumors, Y., Biolog. Journal of Armenia, 3 (72), 2020, pp. 72-75.
  14. Gyurjyan Q., Mikaelyan M., Poghosyan G., Hovhannisyan V., Gasparyan V., Detection of Saccharomyces cerevisiae by silver nanoparticles sensitized with various lectins, Analytical Methods, 12, 2020, pp. 3508-3512.
  15. Karapetyan L., Adenosine deaminase at septic arthritis, Медицинская наука Армении, v.LX, 4, 2020, pp.40-44.
  16. Koloyan H., Avetisyan S., Paronyan M., Aganyants H., Hovsepyan A., Obtaining new recombinant strains of *Brevibacterium flavum* containing heterologous *Geobacillus stearothermophilus* gene *arg*, J. "Research Journal of Biotechnology", v.15, N 5, 2020, pp. 71-85.
  17. Melkonyan A., Guevorkyan A., Alchujyan N., Hovhannisyan M., Movsesyan N., Hairapetyan H., Kevorkian G., Aghajanova E., Sex and age-related changes of L-arginine metabolism in peripheral blood leukocytes in young Caucasians with type 1 diabetes mellitus". Ind. J. Biochem. Biophys, 57 (3), 2020, pp. 339-350. <http://nopr.niscair.res.in/bitstream/123456789/54462/1/IJBB%2057%283%29%20339-350.pdf>
  18. Paloyan A., Melkonyan L., Sargsyan A., Mkhitarayan A., Dyukova K., Hambardzumyan A., Production and Properties of a Novel Raw Starch Hydrolyzing -Amylase from *Bacillus amyloliquefaciens* MDC1974, "Electronic Journal of Natural Sciences of NAS of Armenia", v. 34, N 1, 2020, pp. 4-11.
  19. Sargsyan M., Seferyan T., Chailyan S., The Impact Study of Poline-Rich Polypeptide Galarmin D-15 Derivative on the Streptococci", "Agriscience And Technology" Armenian National Agrarian University, N(70) 2, 2020, pp. 87-91. UDC 619:636.996.132.
  20. Schwinghammer U., Melkonyan M., Hunanyan L., Tremmel R., Weiskirchen R., Borkham-Kamphorst E., Schaeffeler E., Seferyan T., Mikulits W., Yenkyan K., Schwab M., Danielyan L.,  $\alpha$ 2-Adrenergic Receptor in Liver Fibrosis: Implications for the Adrenoblocker Mesedin, 9(2), 2020, pp. 456-469. doi: 10.3390/cells9020456..
  21. Simonyan R., Chailyan S., Chavushyan Y., Simonyan K., Isoyan A., Babayan M., Simonyan G., Simonyan M., Superoxide-producing associate between NADPH oxidase and NADPH containing lipoprotein (NCL0 from human blood erithrocytes and leukocytes membranes: activation of immune cells by NCL, Y., Biolog. Journal of Armenia, 4 (72), 2020, pp. 47-50.

Պաշտպանվել է 1 դոկտորական ատենախոսություն:

# ՔԻՄԻԱՅԻ ԵՎ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

*Ակադեմիկոս-քարտուղար՝ ակադեմիկոս Լ.Թավադյան*  
*Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Լ.Գասպարյան*

Բաժանմունքի կազմում ընդգրկված են Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի, Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի, Երկրաբանական գիտությունների, Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը:

Բաժանմունքի կազմում ընդգրկված են ԳԱԱ 5 ակադեմիկոս, 5 թղթակից և 21 արտասահմանյան անդամներ:

Հաշվետու տարում բաժանմունքն անց է կացրել 1 ընդհանուր ժողով, բյուրոյի 7 նիստ:

Բաժանմունքի մայիսի 22-ի հեռավար տարեկան ընդհանուր ժողովում լսվել են 2019թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության վերաբերյալ բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի և ինստիտուտների տնօրենների տարեկան հաշվետվությունները:

Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել և հաստատվել են բաժանմունքի գիտական կազմակերպությունների 2021թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում», պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման, 2020-21ուստարվա հեռակա ուսուցման ուսման վճարի փոխհատուցմամբ (անվճար) ասպիրանտուրայի տեղերի, ներքին գործուղումների, «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հազեցվածության բարելավում և արդիականացում» և «ՀՀ ԳԱԱ ինստիտուտների գիտական սարքավորումների սպասարկում, վերազինում, գիտափորձերի իրականացման համար նյութերի ձեռքբերում և չնախատեսված անհետաձգելի ծախսերի կատարում» 2020թ. ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցների հաշվին սարքավորումների ձեռքբերման բաժանմունքի գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերը, բաժանմունքի և ինստիտուտների 2020թ. աշխատանքային պլանը:

Քննարկվել և հաստատվել է բաժանմունքի գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» պետական նպատակային-ծրագրային ծրագրերի 2020թ. հաշվետվությունները:

Լսվել և երաշխավորվել է ալ. Ա.Մանթաշյանի «Շղթայական ռեակցիաներ և զուգորդված պրոցեսներ» մենագրությունը ԳԱԱ հրատարակչությունում հրատարակման ներկայացնելու հարցը:

Բաժանմունքի գիտական կազմակերպությունները նախագահությանն են ներկայացրել ՀՀ-ում COVID-19 համավարակի կանխարգելման, տարածման և ազդեցությունների վերաբերյալ իրականացվող հետազոտություններին առնչվող նյութեր:

Բաժանմունքի ինստիտուտները տպագրել են 229 հոդված (109-ն արտասահմանում), 12 թեզիս (9-ն արտասահմանում), 2 մենագրություն (1-ն արտասահմանում), 1 ուսումնական ձեռնարկ և ստացել 1 արտոնագիր:

Բաժանմունքի ինստիտուտներում պաշտպանվել են 9 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսություններ:

Բաժանմունքը մասնակցել է ինստիտուտների տարեկան ժողովներին, ստացված արդյունքների քննարկմանը:

## Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎ. ՔԻՄԻԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ ք.գ.թ. Ս.Մինասյան  
Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան  
Գիտքարտուղար՝ ք.գ.թ. Ե.Գրիգորյան  
Էլեկտրոնային փոստ՝ ichph@ichph.sci.am  
Կայքէջ՝ www.chph.sci.am

### Մասնագիտական խորհուրդ 017՝ «Քիմիա»

Նախագահ՝ ակ. Լ.Թավադյան, գիտքարտուղար՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Սարգսյան

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Գազահեղուկային քրոմատոգրաֆիայի եղանակով ուսումնասիրվել է սելենօրգանական միացությունների (դիֆենիլսելենիդի, դիֆենիլդիսելենիդի) և կումոլի հիդրոպերօքսիդի միջև ռեակցիան: Բացահայտվել են վերջինիս կինետիկական օրինաչափությունները և իրականացվել է ռեակցիաների արգասիքների ուսումնասիրություն: Սպինային թակարդման եղանակով ստացվել են տվյալներ այդ ռեակցիաներում ազատ ռադիկալների առաջացման մասին:

Կենսաբանական թթվածնային համալիրի (YSI 5300A, ԱՄՆ) օգնությամբ քանակապես հետազոտվել է B խմբի կարևոր ջրալուծ վիտամին ֆոլաթթվի կոֆերմենտային կառուցվածքային ածանցյալներ (ֆոլատներ) տետրահիդրոֆոլաթթվի և դիհիդրոֆոլաթթվի՝ լիպիդային մոդելային համակարգերում պերօքսիդացման շղթայական ռեակցիաներն արգելակելու ունակությունը:

Քառակուսաալիքային վոլտամպերաչափական եղանակով ուսումնասիրվել են ԴՆԹ-ի հետ կենսահակաօքսիդիչների (ռուտին, քվերցետին, մորին նարինգին և ռեսվերատրոլ) փոխազդեցությունները: Ստացված տվյալների հիման վրա Սկետչարդի կոորդինատներում կառուցվել են կապման ոչ գծային կորեր, որոնց վերլուծությամբ ցույց է տրվել, որ ԴՆԹ-ի հետ հետազոտվող միացությունները կարող են կապվել երկու եղանակով: Որոշվել են կապման հաստատունը (K) և ԴՆԹ-ի հիմքերի զույգերի թիվը (n) բաժին ընկնող կենսահակաօքսիդիչի մեկ կապված մոլեկուլին (դեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Կատարվել են տեսական ուսումնասիրություններ՝ բարդ համակարգերում ոչ գծային բազմակումպունենտ դիֆուզիայի դոմինանտ մեխանիզմի որոշման համար: Առաջարկվել է ֆունկցիոնալ անալիզի եղանակներից փոխառված արժեքային մոտեցում: Դիտարկվել է դիֆուզիոն տեղափոխության պրոցեսում յուրաքանչյուր տարրական ակտի և յուրաքանչյուր բաղադրիչի կինետիկական նշանակության և քանակային ներդրման արժեքայնության խնդիրը:

Լազերային դիֆրակցիաչափական եղանակի հնարավորությունների՝ նորմայում և հիվանդության դեպքում արյան էրիթրոցիտների չափային դիսպերսիայի աստիճանի գնահատման տեսական ուսումնասիրություններով ցույց է տրվել, որ լազերային դիֆրակցիաչափական մեթոդը թույլ է տալիս իրարից տարբերել տարբեր աստիճանի չափային դիսպերսիա ունեցող էրիթրոցիտների պոպուլյացիաները (դեկ.՝ ֆ.-մ.գ.թ. Հ.Սարգսյան):

Ելնելով ռեակտորի մակերևույթի բնույթից, կախված պերօքսիլ ռադիկալների հետ ալդեհիդների հետերոգեն փոխազդեցության և բոցավառման յուրահատկություններից՝ որոշակի միջակայքում բոցավառման պատասխանատու պերօքսիդային միացության քանակի փոփոխության դեպքում բոցավառման ջերմաստիճանի հաստատունության փաստը բացատրվել է ռեակտորի մակերևույթի վրա ակտիվ կենտրոնների սահմանափակ թվով, որն էլ հանգեցրել է դրանց հազեցվածությանը (դեկ.՝ ակ. Բ.Վարդանյան):

Առաջարկվել է տեսական մոդել, որը թույլ է տալիս նկարագրել պոլյար մասնիկների օջախների, մասնավորապես ռեակտորի մակերևութին ադսորբված հալոգենիդ իոնի և ծակոտիներում կամ ճեղքերում առկա ջրի մոլեկուլների ազդեցությունը ջրածնի և պրոպանի ցածրջերմաստիճանային օքսիդացման պրոցեսների վրա: Մոդելի շրջանակներում հաշվարկներով ցույց է տրվել, որ մերձմակերևութային շերտում վերը նշված մասնիկների առկայությունը նպաստում է օքսիդացման ռեակցիաների միջանկյալ արգասիք հանդիսացող ջրածնի պերօքսիդի փոխարկման հետևանքով օզոնի մոլեկուլների առաջացմանը, ինչը կարող է հանգեցնել ռեագիբող համակարգում փոխարկումների մեխանիզմի և շղթայական պրոցեսի ջերմային ռեժիմի կտրուկ փոփոխությունների:

Ջրային միջավայրում մեթիլենային կապույտ ներկանյութի (մոդելավորում է ջրում պարունակվող կայուն օրգանական ադոտտիչը) չեզոքացման ռեակցիայում  $TiO_2$ -ի նանոփոշիների հիման վրա սինթեզվել է 5:1 մոլային հարաբերությամբ  $TiO_2:WO_3$  ֆոտոկատալիզատոր: Բացահայտվել է, որ հետազոտված պայմաններում (ՈւՄ ճառագայթում,  $\lambda=253,7$  նմ) կատալիզատորը նույնպես ցուցաբերում է բարձր կատալիզային ակտիվություն. ներկանյութի կորզման աստիճանը կազմել է 88.5-90% (ղեկ.՝ ք.գ.թ. Ա.Հարությունյան):

Բացահայտվել է, որ կվարցե երկսեկցիոն շիթային ռեակտորում պրոպանի ջերմային քայքայման ժամանակ էթիլենի ավելացումը հանգեցնում է պրոպիլենի ելքի մեծացմանը: Պրոպանի և էթիլենի զուգորդված ջերմային քայքայման արդյունքում թթվածին պարունակող կողմնակի նյութերի բացակայությունն այդ պրոցեսը դարձնում է պրոպիլենի ստացման տեսանկյունից ավելի գերադասելի պրոպանի և էթիլենի օքսիդային ջերմաքայքայման նկատմամբ:

Ջրային լուծույթներում կալիտացիայի պայմաններում մեթանի, էթիլենի և դրանց խառնուրդների փոխարկումների ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ հիմնական արգասիք հանդիսացող ֆորմալդեհիդն առաջանում է նույնիսկ լուծույթում լուծված թթվածնի բացակայության պայմաններում (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Արսենտև):

Միկրոալիքային տաքացման եղանակով սինթեզվել է 70%(Ni-Mo<sub>2</sub>C)/30%C կատալիզատոր Ni:Mo=0.19:1 ատոմական հարաբերակցությամբ, որի հետ համեմատելու համար սինթեզվել է նաև Mo<sub>2</sub>C/C կատալիզատոր: Ստացված կատալիզատորները հետազոտվել են ալկենների (ցիկլոհեքսեն, դեցեն-1), նաֆթալինի հիդրման և բնական բենզոթիոֆենի պարունակությամբ դիզելային ֆրակցիաների մոդելային խառնուրդների հիդրոծծմբագրկման ռեակցիաներում: Ցույց է տրվել, որ կարբիդային կատալիզատորներն առավել ակտիվ են նիկելի ատոմների առկայությամբ, որի դեպքում փոխարկման աստիճանը հնարավոր է հասցնել 100%-ի:

Միկրոալիքային տաքացման եղանակով սինթեզվել են 73%B<sub>4</sub>C/27%ReB<sub>2</sub> նանոփոշիներ, որոնց պլազմակայծային եռակալման միջոցով ստացվել է կոմպոզիտային գերկարծր նմուշ, որի կարծրությունը և համեմատաբար փոքր խտությունը համադրելի են համապատասխանաբար խորանարդային բորի նիտրիդի և մաքուր բորի կարբիդի նմանատիպ բնութագրերի հետ: Այդպիսով, ստացված կոմպոզիտը հեռանկարային է որպես հատուկ նշանակությամբ նյութ կիրառելու տեսանկյունից (ղեկ.՝ ք.գ.թ. Ռ.Մնացականյան):

Ջարգացվել է սկզբունքային նոր մոտեցում, որը թույլ է տալիս դասական չկարգավորված սպինային համակարգերի վիճակագրական հատկությունները մոդելավորել՝ ելնելով դասական մեխանիկայի առաջին սկզբունքներից: Ցույց է տրվել պատկերացման արդյունավետությունը 1D մոդելի հիման վրա, որը կարելի է ընդհանրացնել ցանկացած չափի՝ առանց մեծացնելու խնդրի հաշվողական ծավալները: Ջարգացված պատկերացումը կարող է հիմք հանդիսանալ տարբեր տիպի ամորֆ նյութերի մոդելավորման համար վերջավոր ջերմաստիճաններում:

Ռեակցիոն քվանտային համակարգերի թերմոդինամիկական հատկությունները նկա-

րագրելու համար զարգացվել է սկզբունքային նոր պատկերացում՝ էլենելով քվանտային մեխանիկայի առաջին սկզբունքներից (դեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Գևորգյան):

Հնարավոր տարրական ռեակցիաների լայն ցանկի հիման վրա (ավելի քան 80) իրականացվել է օքսիդացման եղանակով մեթանի փոխարկման պրոցեսի կինետիկական թվային վերլուծություն ինչպես դանդաղ այրման, այնպես էլ պրոցեսի բարձրջերմաստիճանային պայմաններում: Բացատրվել են բացասական ջերմաստիճանային գործակցի, սառը բոցերի և ջերմակինետիկական տատանումների առաջացման պատճառները: Լայն ջերմաստիճանային տիրույթի համար բացահայտվել են պրոցեսի ընթացքի կինետիկական առանձնահատկությունները, պրոցեսի նպատակային արգասիքների ստացման համար ուղղորդված փոխարկման պայմանները:

Ցույց է տրվել, որ ջրածին-թթվածին խառնուրդների օքսիդացման շղթայական ռեակցիաների ցածրջերմաստիճանային, նոսրացված բոցերի պայմաններում ծծմբի երկօքսիդի առկայությունը բերում է նոր երևույթի՝ ընդհատվող բոցերի առաջացմանը: Բացահայտվել է շղթայական ռեակցիաների նոր տեսակ՝ ծծմբի երկօքսիդով ջրածնի օքսիդացման շղթայական ռեակցիա (դեկ.՝ ալ. Ա.Մանթաշյան):

Որպես էլանյութեր օգտագործելով համաստեցման եղանակով ստացված նանոչափ-սի  $Ag_2WO_4$ , ինչպես նաև լուծույթների այրմամբ սինթեզի եղանակով ստացված համասեռ և մանրահատիկ  $Ag+WO_3$  խառնուրդ՝ իրականացվել է օպտիմալ բաղադրությամբ  $Ag-W$  կեղծ համաձուլվածքի սինթեզ  $WO_3-Ag-Mg-C$  և  $Ag_2WO_4-Mg-C$  համակարգերի այրման արդյունքում: Մանրահատիկ և համասեռ էլանյութերի կիրառումը հնարավորություն է տվել սինթեզել 30-50մմ մասնիկի չափսով  $Ag-W$  կեղծ համաձուլվածք, դրա էլեկտրակայծային եռակալման միջոցով ստանալ կոմպակտ դետալներ, որոնք լայն կիրառություն ունեն գերհզոր էլեկտրական կոնտակտների պատրաստման ոլորտում, միկրոէլեկտրոնային և կիսահաղորդիչ սարքավորումներում, միկրոալիքային վառարաններում որպես ջերմացրիչ դետալ և այլն:

Նիկելի նիտրատ-գլիցին և նիկելի նիտրատ-ուրոտրոպին համակարգերում լուծույթների այրման հետազոտությունները ցույց են տվել, որ վերականգնիչով (գլիցին, ուրոտրոպին) աղքատ խառնուրդների այրումն ուղեկցվում է  $NiO$ -ի առաջացմամբ և բնութագրվում է վերականգնման պրոցեսի ավելի բարձր ակտիվացման էներգիայով, քան վերականգնիչով հարուստ խառնուրդներում, որոնց դեպքում առաջանում է մետաղական նիկել:

Բացահայտվել է պղնձե լարերի արտադրության պրոցեսում առաջացող պղնձի (I) օքսիդային թափոնի վերամշակման և դրանից պղնձի մանրահատիկ փոշու ստացման հնարավորությունը լուծույթների այրմամբ սինթեզի եղանակով: Այդ նպատակով որպես էլանյութեր օգտագործվել են պղնձի օքսիդային թափոնից ստացված պղնձի նիտրատը և կիտրոնաթթուն (որպես վերականգնիչ), իսկ ռեակցիայի բավարար ջերմային էֆեկտ ապահովելու համար՝ նաև ամոնիումի նիտրատ: Որոշվել են նպատակային վերջնանյութի (փոշենման պղնձի) ստացման օպտիմալ պայմանները՝ ըստ էլային խառնուրդում կիտրոնաթթվի և ամոնիումի նիտրատի բաղադրության (դեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Նախապես ԲԻՄ եղանակով սինթեզված  $Ti_{0.45}H_{1.07+1.17}$  և  $Ti_{0.5}H_{0.22+0.79}$  կարբոհիդրիդների հիման վրա հիդրիդային ցիկլում սինթեզվել է MAX-ֆազի նոր երկչափ նյութերի ընտանիքին պատկանող գրեթե միաֆազ  $Ti_2AlC$  միացությունը (ինչպես և այդ դասի մյուս նյութերը, բնութագրվում է փոքր խտությամբ, բարձր ջերմա- և էլեկտրահաղորդականությամբ, ամրությամբ, կոռոզիոն կայունությամբ և այլ եզակի ֆիզիկաքիմիական հատկություններով), որի մասնիկների չափերը կազմել են 0.5-1.5 մկմ: Բացահայտվել է, որ այդ միացության ձևավորումը տեղի է ունենում մեկ փուլով՝ պինդֆազային մեխանիզմով, որոշվել են ֆազային բաղադրության և կառուցվածքի ձևավորման հիմնական օրինաչափությունները:

Հիդրիդային ցիկլում սինթեզվել է  $Ti_{0.74}Nb_{0.21}Zr_{0.05}$   $\beta$ -համաձուլվածքը, որն այնուհետև ԲԻՄ եղանակով հիդրիդացվել է մինչև համապատասխան  $Ti_{0.74}Nb_{0.21}Zr_{0.05}H_{1.8}$  ֆազի առաջա-

ցումը (այն փխրուն և հեշտ մանրացվող նյութ է, ինչի շնորհիվ կարող է լցվել տարբեր ձևերի և չափսերի կաղապարների մեջ և ջերմային մշակումից ու եռակալումից հետո վերածվել համապատասխան իմպլանտի): Գտնվել են պրոցեսի պայմաններից կախված կիրառական հետաքրքրությունն ներկայացնող, առավելագույնը 0.5-2.5 մկմ չափերով փոշեհատիկների ստացման պայմանները (ղեկ.՝ տեխն.գ.դ. Ս.Դուրխանյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Կենսաբանական թթվածնային համալիրի (YSI 5300A, ԱՄՆ) օգնությամբ ուսումնասիրվել և քանակապես բնութագրվել են վիտամին B12-ի բաղադրիչների՝ կոբալամինների (ցիանո-, հիդրօքսո-, մեթիլ-, ադենոզիլ-) հակաօքսիդիչ հատկությունները մոլեկուլային թթվածնով մեթիլլինոլեատի շղթայական պերօքսիդացման մոդելային ռեակցիայի միջեղային համակարգում: Ցույց է տրվել, որ կոբալամինները հանդես են գալիս որպես բջիջների մեմբրանների լիպիդների պերօքսիդացման ռեակցիայի հակաօքսիդիչ կարգավորիչներ: Առաջարկվել է կոբալամինների հակապերօքսիդատիկալային ազդեցության մեխանիզմ (ղեկ.՝ ակ. Լ.Թավադյան):

Ջերմային անալիզի եղանակով (HS SET-3 արագագործ սկանող էլեկտրաթերմոգրաֆիական սարքավորման միջոցով) ցույց է տրվել, որ վոլֆրամի եռօքսիդի ջրածնով վերականգնումն ընթանում է միջանկյալ օքսիդային ֆազերի ( $W_{17}O_{47}$ ,  $W_{18}O_{49}$ ,  $WO_2$ ) ձևավորման միջոցով, իսկ վերականգնման վերջնական արգասիք է հանդիսանում մետաղական վոլֆրամը: Փոխարկման աստիճանի ժամանակային կախվածության S-աձև տեսքը հիմք է տվել պնդելու, որ վերականգնումն ընթացել է տոպոքիմիական պրոցեսներին բնորոշ մեխանիզմով: Տաքացման տարբեր արագությունների և ջրածնի ճնշման տարբեր արժեքների համար ստացված տվյալների հիման վրա կառուցվել է  $WO_3$ -ի վերականգնման ջերմային ռեժիմների դիագրամ:

Հինգ մետաղ պարունակող բարձր էնտրոպիական  $MnFeCoNiCu$ ,  $MnFeCoNiCr$ ,  $Al_2FeCoNiCr$ ,  $AlFe_7Co_3Ni_2Cu_{0.4}$  համաձուլվածքների ստացման նպատակով կիրառվել է երկու տարբեր մոտեցում՝ մետաղների օքսիդների համատեղ այրումինաջերմային վերականգնում և մետաղների նիտրատներ-կիտրոնաթթու համակարգերում լուծույթների այրմամբ սինթեզ: Ելային խառնուրդի օպտիմալ բաղադրության ընտրության և այրման պարամետրերի ղեկավարման շնորհիվ համաձուլվածքների ձևավորումը ԲԻՍ պրոցեսում ընթացել է հեղուկ ֆազում (հալույթի առաջացումով)՝ միաժամանակ ապահովելով ամբողջական ֆազաբաժանում այրումինաջերմային վերականգնման հետևանքով առաջացած օքսիդային ( $Al_2O_3$ ) խարամից (ղեկ.՝ թղթ. անդ. Ս.Խառատյան):

Ելային խառնուրդի մեխանիկական ակտիվացման տևողությունից և ածխածնային նանոհավելանյութի (ԱՆ) առկայությունից կախված Ni-Al համակարգում փոխազդեցության մեխանիզմի հետազոտություններով բացահայտվել է, որ մեխանիկական ակտիվացումն առավելապես ազդում է ստացվող արգասիքի միկրոկառուցվածքի վրա, իսկ ԱՆ-ի ավելացումը բերում է արգասիքի մասնիկի չափսի զգալի փոքրացման: Մյուս կողմից, ի տարբերություն չակտիվացված խառնուրդի, մեխանաակտիվացման ենթարկված խառնուրդներում գրանցվել է, որ NiAl ֆազին նախորդում է  $Ni_3Al$  ֆազի առաջացումը (ղեկ.՝ ք.գ.թ. Լ.Աբովյան):

### **Հրապարակումներ**

#### ***Հոդվածներ, զեկուցումներ***

1. Манташян А.А., Макарян Э.М., Эвинян М.А., Акопян А.Г., Кинетический анализ процесса горения водород-кислородных смесей, содержащих добавки  $SO_2$ , в широком диапазоне температур, Ер., “Хим.

- журн. Армении”, т. 73, N 1, 2020, с. 25-36.
2. Манукян З.О., Арутюнян Л.А., Минасян С.Г., Тавадян Л.А., Влияние витамина B12 на реакцию окисления метиллинолеата в мицеллярных растворах, Ер., ДНАН РА, т. 120, N 3, 2020, с. 198-201.
  3. Мартиросян А.С., Царукян С.В., Варданян И.А., “Особенности воспламенения смесей алифатических альдегидов с кислородом, инициированного адсорбированным пероксидным соединением”, М., “Журн. физич. химии”, т. 94, 10, 2020, с. 1576-1577.
  4. Мурадян А.А., Арсентьев С.Д., Изучение взаимодействия аллильных радикалов с катализаторами на основе серебра и оксида цинка, нанесённых на SiO<sub>2</sub>, Ер., “Хим. журн. Армении”, т. 23, N 2-3, 2020, с. 144-154.
  5. Саргсян Г.Н., Арутюнян А.Б., Моделирование влияния адсорбированных на поверхности реактора ионов галогенов в комплексе с молекулами воды на процессы цепного окисления, М., “Кинетика и катализ”, т. 61, N 4, 2020, с. 504-508.
  6. Саркисян Г.П., Теоретическое описание дифракции лазерного излучения на монослое эритроцитов Ер., ДНАН РА, v. 120, N 1, 2020, с. 45-51.
  7. Саркисян Г.П., Оценка степени дисперсности эритроцитов по размерам в норме и при патологии методом лазерной дифрактометрии, Ер., “Биолог.журн. Армении”, т. 72, N 1, 2020, с. 30-38.
  8. Amirkhanyan N., Kharatyan S., Manukyan Kh, Aprahamian A., Thermodynamics and Kinetics of Solution Combustion Synthesis: Ni(NO<sub>3</sub>)<sub>2</sub> + Fuels Systems", Combustion & Flame, v. 221, 2020, pp.110-119.
  9. Arsentev S., Sonochemical Transformations of Methane and Ethylene in Aqueous Solutions under Conditions of Cavitation, Russian Journal of Physical Chemistry, v. 94, N 9, 2020, pp. 1811-1815.
  10. Gevorkyan A., New Concept for Studying the Classical and Quantum Three-Body Problem: Fundamental Irreversibility and Time's Arrow of Dynamical Systems. Particles, v. 3, 2020, pp. 576-620. <http://dx.doi.org/10.3390/particles3030039>.
  11. Gevorkyan A., Sahakyan V., First Principles of the Classical Mechanics and the Foundations of Statistical Mechanics on the Example of a Disordered Spin System, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences). 2020, v. 55, N 4, pp. 265–274. DOI: 10.3103/S106833722004009X.
  12. Gevorkyan A., The Model of Quantum Thermodynamics from the First Principles: pp. 1-27, Quantum Halo or Small Environment. arXiv:2008.00040 [quant-ph].
  13. Grigoryan R., Arsentev S., Epoxidation of Ethylene with Products of Thermal Gas-Phase Oxidation of n-Butane, Petroleum Chemistry, v. 60, N 2, 2020, pp. 187–193.
  14. Mantashyan A., Makaryan E., Kinetic analysis of oxidative conversion of methane in slow combustion. II. Parametric characteristics of directional conversion. Combustion, explosion and shock waves, v. 56, N 1, 2020, pp. 11-22.
  15. Manucharova L., Sargsyan T., Tavadyan L., Photocatalytic decomposition of methylene blue dye in aqueous solution in the presence of WO<sub>3</sub>-doped titanium dioxide, Chemical Journal of Armenia, v. 73, N 4, 2020, pp. 311-317.
  16. Mnatsakanyan R., Davtyan D., Minasyan T., Aydinyana S., Hussainov I., Superhard B<sub>4</sub>C-ReB<sub>2</sub> composite by SPS of microwave synthesized nanopowders, Materials Letters, 2020, pp. 1-5. <https://doi.org/10.1016/j.matlet.2020.129163>.
  17. Pogosyan N., Pogosyan M., Arsentev S., Tavadyan L., Strekova L., Arutyunov V., Propylene Synthesis by Copyrolysis of Propane and Ethylene, Petroleum Chemistry, v. 60, N 3, 2020, pp. 316-320.
  18. Sargsyan H., Using the deductive - inductive method to analyze diffusion mechanisms in complex systems. Armenian Journal of Physics. v. 13, N1, 2020, pp. 33-44.
  19. Sargsyan H., On the value method of determining a dominant mechanism of nonlinear multicomponent diffusion, Journal of Contemporary Physics (Armenian Academy of Sciences), v. 55, N4, 2020, pp. 353-358.
  20. Tavadyan L., Musaelyan M., Stepanyan A., Minasyan S., Kinetik EPR-studies of the anti-peroxyl radical reactivities with various metallochelates of 3,5-di-iso-propylsalicylate and salicylidene schiff base, Applied Magnetic Resonance. v. 51, 2020, pp. 1049-1069.
  21. Zakaryan M.K., Arzumanyan A.S., Kharatyan S.L., Magnesio-carbothermic reduction of Ag<sub>2</sub>WO<sub>4</sub>. DTA/TG study, Chem. J. Armenia, v. 73, N 4, 2020, pp. 300-310.
  22. Zakaryan M.K., Nazaretyan Kh.I., Aydinyan S.V., Kharatyan S.L., NiO Reduction by Mg+C Combined Reducer at High Heating Rates, Journal of Thermal analysis & Calorimetry, 2020. DOI: 10.1007/s10973-020-10148-5.
  23. Варданян В.С., Чатилян А.А., Манукян Х.В., Харатян С.Л., Кинетика восстановления трехокси вольфрама водородом и метаном в условиях линейного нагрева, Ер., “Хим. журн. Армении”, т. 73, N 2-3,

2020, с. 131-143.

24. Гукасян П.С., Царукян С.В., Сравнительные характеристики низкотемпературного горения пропана, нормального бутана и сжиженного газа в области холодных пламен, Ер., “Хим. журн. Армении”, т.73, N 2-3, 2020, с. 169-172.
25. Minasyan S., Shahnazaryan G., Zatikyan A., Derivation background concentrations of hydrochemical parameters using probability distribution statistics (Lake Sevan basin, Armenia), Multivariate statistical analysis, econometrics and simulation of real processes. Proceedings of Xth International School-Seminar, Tsaghkadzor, RA. June, 2020, pp. 89-90. DOI: 10.33276/978-58211-0786-2-89-90.

Պաշտպանվել է 6 թեկնածուական ատենախոսություն:

## **Մ.ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԱՆՎ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Տնօրեն՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան

Փոխտնօրեն՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան

Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Գ.Մանուկյան

Էլեկտրոնային փոստ՝ ionx@sci.am

### **Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Ուսումնասիրվել է ալյումինիումի պոլիօքսիվոլֆրամատի  $\beta$ -միջուկի երկարատև պահպանման, ստերիլիզացիայի կամ պաստերիզացիայի ազդեցությունը, նրա հակավիրուսային ակտիվությունը միկրոբային ֆլորայի բոլոր ձևերի ոչնչացման վրա, ներառյալ վիրուսները, սպորները և սնկերը: Պարզվել է, որ  $\beta$ -միջուկի պահպանումը 18 ամիսների ընթացքում 4-8°C ջերմաստիճանային պայմաններում չի նվազեցնում նրա հակավիրուսային ակտիվությունը, ինչպես նաև պաստերիզացիան 70-80°C ջերմաստիճանում, 30 րոպեի ընթացքում չի իջեցնում նաև հակավիրուսային ակտիվությունը (ղեկ.՝ ք.գ.թ. Է.Հայրիյան):

Ուսումնասիրվել են  $\text{MeB}_2\text{O}_4\text{-Al}_2\text{O}_3\text{-(SiO}_2\text{)-MeO/MeF}_2$  (Me- Mg, Ca, Sr, Ba) համակարգերի ապակիների հատկությունները, դրանց կիրառման հնարավորության բացահայտումը որպես ապակեբյուրեղային նյութ և որպես կապակցող «ապակի+կերամիկա» կոմպոզիտի բաղադրությունում ստանալու ցածրջերմաստիճանային համատեղ եռակալված կերամիկական նյութ էլեկտրոնիկայի համար: Հետազոտվել են ապակեգոյացման առանձնահատկությունները, ապակիների և դրանց ուղղորդված բյուրեղացմամբ, ապակու և բյուրեղի խառնուրդների եռակալմամբ սինթեզված ապակեկերամիկական նյութերի ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխության օրինաչափությունները (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Կոստանյան):

Միկրոալիքային մշակումն ավանդական կոնվեկցիայի հետ համեմատելու նպատակով զուգահեռաբար փորձարկումներ են կատարվել նաև կոնվեկտիվ չորացուցիչի օգնությամբ 350°C ջերմաստիճանի չորացման վառարանում՝ կոմպոզիտային նյութեր ստանալու համար: Հետազոտվել են նմուշների ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ միջին խտությունը, ջրակլանումը և ամրությունը ( $\sigma$ ) սեղմման ժամանակ: Արդյունքում կարելի է եզրակացնել, որ նույն խտության պարագայում ամրությունը փոփոխվում է՝ կախված ինչպես ապարից և հանքավայրից, այնպես էլ ջերմամշակման սարքավորումից (ղեկ.՝ տ.գ.թ. Ն.Գուրգենյան):

Ուսումնասիրվել են  $\text{B}_2\text{O}_3$  պարունակող կորդիերիտային բաղադրության ապակիների մեկ և երկաստիճանային բյուրեղացման ընթացքը (1100°C և 1250 °C), բյուրեղացման պրոցեսների հաջորդականությունն ու բնույթը, ապակիների և ապակեբյուրեղային նյութերի ջերմային հատկությունները: Բացահայտվել է, որ բյուրեղացման ընթացքում  $2\text{Al}^{3+}$



$Mg^{2+} \leftrightarrow Si^{4+}$  և  $2B^{3+} + Mg^{2+} \leftrightarrow Si^{4+} \rightarrow 2B^{3+}$  տիպի հետերովալենտ իզոմորֆիզմն առաջացնում է կորդիերիտային պինդ լուծույթներ  $SiO_2$ -ի և  $Al_2O_3$ -ի պակասով կամ ավելցուկով: Բացահայտվել է, որ սիտալների ջերմային ընդարձակումը գործնականորեն կարելի է հաշվարկել, եթե դիտարկենք, որ բյուրեղ-ապակի անցումային շերտում միկրոլարումները զուտ հիդրոստատիկ են: Մշակվել են էլեկտրատեխնիկական նշանակության սիտալներ ցածր ԳԸՋԳ ( $15-30 \cdot 10^{-7} \text{ Կ}^{-1}$ ): Ուսումնասիրվել է  $CaO-Al_2O_3-SiO_2 - MeF_2$  ( $Me-Ca, Mg$ ) համակարգի հալույթների ( $MeF_2$  5 և 10 մոլ %) և ամորֆ նյութերի ուղղորդված բյուրեղացումը: Հետազոտվել է դրանց հիմքով ստացված արագ ամրացող կապակցողների շաղկապման ընթացքը, սեղմման ամրության սահմանը (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Նորարարական եղանակով սերպենտինիտներից  $(Mg(Fe))_6[Si_4O_{10}](OH)_8$  ստացված քիմիապես ակտիվ հիդրոսիլիկաժելի կամ շերտային սիլիկահողի և ստրոնցիումի աղերի փոխազդեցությամբ սիլիկատի կառուցվածքում ակտիվատորի, մասնավորապես եվրոպիումի իոնի ( $Eu^{3+}$ ) ներմուծմամբ իրականացվել է լյումինեսցենտային սիլիկատային միացությունների սինթեզ: Ուսումնասիրվել են դրանց լյումինեսցենտային հատկությունները՝ կախված մի շարք գործոններից՝ նստեցման պարամետրերից, շիկացման ջերմաստիճանից և ռեժիմից, ակտիվատորի ներմուծման եղանակից, ստացված արդյունքները համեմատվել են ավանդական եղանակներով ստացված համապատասխան միացություններին բնորոշ համանման տվյալների հետ (դեկ.՝ ք.գ.դ. Ն.Զուլումյան):

Միկրոալիքային եղանակով ստացվել են վանադիում-դիոպսիդ, երկաթ-դիոպսիդ, կոբալտ-դիոպսիդ, նիկել-մուլիտ, կոբալտ-մուլիտ, երկաթ-մուլիտ կերամիկական պիզմենտների փորձնական նմուշներ խոշոր լաբորատոր սարքավորումներում: Այս պիզմենտների հիման վրա ստացվել են կերամիկական ներկեր, որոնք փորձարկվել են կերամիկական սալիկներ ստանալիս: Ստացված կերամիկական ներկերն առանձնանում են գունային երանգների բազմազանությամբ և պայծառությամբ: Հաստատվել է, որ միկրոալիքային եղանակը թույլ է տալիս 2-3 անգամ կրճատել վերոնշյալ պիզմենտների սինթեզի տևողությունը, ինչպես նաև  $200-250^\circ\text{C}$  աստիճանով իջեցնել դիոպսիդային և մուլիտային կառուցվածքի ձևավորման ջերմաստիճանը (դեկ.՝ տ.գ.թ. Վ.Բադրամյան):

Ցույց է տրվել, որ ածխաջրածինների և ջրածնի դանդաղ այրման գազաֆազ շղթայական ռեակցիայի ազդեցության ռեժիմում տարբեր բյուրեղային կառուցվածքի տիտանի երկօքսիդը ենթարկվում է արդյունավետ հետերաֆազ մոդիֆիկացման և ակտիվացման:  $TiO_2$ -ի ՇՌԱ-մոդիֆիկացման դեպքում նմուշում հայտնաբերվել է թթվածնի պարունակության զգալի իջեցում՝ ի հակադրություն քանակաչափականի՝  $TiO_{2-x}$ -ի առաջացմամբ և բյուրեղային կառուցվածքի շոշափելի փոփոխմամբ: ՇՌԱ-պրոցեսի ջերմաստիճանի բարձրացմամբ աճել է նմուշի վերականգնման աստիճանը և համապատասխանաբար՝ ոչ քանակաչափական օքսիդների քանակի պարունակությունը դեպի վերականգնված ձևեր (դեկ.՝ ք.գ.թ. Կ.Մանթաշյան):

Շարունակվել են պոլինձ-մոլիբդենային խտանյութերի և նրանց ստացման պրոցեսներում առաջացող թափոնների վերամշակման աշխատանքները: Մշակվել են նոր տեխնոլոգիական եղանակներ, որոնք թույլ են տալիս պոլինձի խտանյութը վերամշակել՝ բացառելով ծծմբային գազերի արտանետումը մթնոլորտ, միաժամանակ նշված նյութերից կորզել բոլոր պիտանի բաղադրամասերը (դեկ.՝ տ.գ.թ. Է.Նազարյան):

Հայաստանի աղքատ գիպսային հանքերից կապակցանյութ ստանալու համար գիպսի ( $Ca_2SO_4 \cdot 2H_2O \sim 64\%$ ) ջրազրկումն իրականացվել է ավտոկլավային եղանակով՝ մեր կողմից առաջարկված հավելանյութերի ներկայությամբ: Ավելի պարզ տեխնոլոգիայի անցնելու նպատակով հանքանյութի ջրազրկումը փորձարկվել է նաև միկրոալիքային վառարանում, միներալիզատորների ներկայությամբ: Մասնավորապես 0.1% կալիումի մալեինատի կիրառումը երկարացնում է գիպսի պնդացման ժամանակը 2.5-4-ից մինչև 7-12 րոպե, սեղմման

ամրությունը մեծանում է 13.5-ից մինչև 25 կգ/սմ<sup>2</sup>, իսկ հավելանյութի (0.1% NaCl) կիրառումը նպաստում է ջրագրկման ժամանակի կրճատմանը 50-ից մինչև 3 րոպե: Նշված եղանակներով առաջանում է  $\alpha$ -մոդիֆիկացիայի կիսաջրային գիպս՝ ի տարբերություն ավանդական եղանակով ստացվող  $\beta$ -ձևի, որը և ապահովում է կապակցանյութի բավարար ամրությունը: Խոնավ պայմաններում և օդում կավագիպսի ամրությունը բարձրացնելու նպատակով որպես հավելանյութ օգտագործվել է բարձրջերմաստիճանային (1000°C) թրծման գիպսային կապակցանյութ՝ մինչև 15%: Համապատասխանաբար առաջարկվել են գիպսային կապակցանյութերի ստացման նախնական տեխնոլոգիական սխեմաներ (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Գրիգորյան):

Մշակվել են ագուրիտի, մալախիտի, կուպրիտի, տենորիտի, խրիզակոլայի և այլ օքսիդացած միներալներից պղնձի կորզման տեսական և տեխնոլոգիական հիմունքները, հաշվարկվել և հետազոտվել են սուլֆիդացման ռեակցիաների թերմոդինամիկան, կինետիկան և մեխանիզմը (ղեկ.՝ տ.գ.դ. Ա.Հովսեփյան):

Շարունակվել են հանքային նյութերից և մրգերի կորիզների կճեպներից որոշ ծանր մետաղների կատիոնների (Mn, Co...) և ռադիոակտիվ իզոտոպների (Cs, Rb, Sr...) նկատմամբ բարձր ընտրողականությամբ օժտված իոնափոխանակիչների և անհրաժեշտ սորբցիոն-ծակոտկենային բնութագրերով ադսորբենտների ստացման և հետազոտման աշխատանքները (ղեկ.՝ տ.գ.թ. Վ.Մարտիրոսյան):

ՀՀ Սյունիքի մարզի Փխրուտի և Կոտայքի մարզի Հանքավանի հանքային դաշտերում տարված աշխատանքների նպատակն է եղել կազմել տվյալ դաշտի լիթոերկրաքիմիական և էկոերկրաքիմիական քարտեզներ, առանձնացնել ծանր մետաղներով հագեցած ու ադսորբված տարածքներ: Վերցվել է մոտ 100 նմուշարկում, կատարվել է դրանց մշակում և մոտ 30 նմուշի սպեկտրալ անալիզ: Ստացված նյութերի մշակումից հետո կազմվել են ուրանի, պղնձի, մոլիբդենի, կապարի համար երկրորդային ցրման պսակների քարտեզներ, որոնցում հստակ երևում են էլեմենտների կուտակումների տարածքները: Բացի թվարկված էլեմենտներից՝ առկա են նաև ոսկու թույլ պարունակություններ (ղեկ.՝ ե.գ.թ. Լ.Հարությունյան):

Որոշվել է  $\text{NaPO}_3 \cdot (0,4\text{AlF}_3, 0,6\text{CaF}_2)$  համակարգում ապակեգոյացման տիրույթը, որը կարող է պարունակել մինչև 80 մոլ. %  $\text{AlF}_3$  և  $\text{CaF}_2$ ՝ շնորհիվ դրանց էվտեկտիկ հարաբերության: Սինթեզված ապակիները կիրառելի են պղնձի, ալյումինի և դրանց համաձուլվածքներից պատրաստված տակդիրների վրա դիէլեկտրիկ շերտեր ստանալու համար: Ապակիների խտության, մոլեկուլյար ծավալի, ջերմային ընդարձակման գծային գործակցի, ԻԿ- և կոմբինացիոն լուսացրման սպեկտրների փոփոխման բնույթը կալցիումֆտորալյումինատային էվտեկտիկայի կոնցենտրացիայի ավելացման հետ մեկտեղ բերում է նրանց կառուցվածքի խտացման և ամրացման (ղեկ.՝ տ.գ.թ. Մ.Պողոսյան):

Ուսումնասիրվել են հիդրոֆոր ֆիլտրող փոշիների ստացման գործընթացները փքած պեռլիտի և բազմաէթիլհիդրոքսիօքսանի համատեղ մանրացման պայմաններում: Ստացված մոդիֆիկացված ֆիլտրող փոշին հնարավոր է վերականգնել և օգտագործել նավթամթերքներից մաքրելուց հետո (ղեկ.՝ տ.գ.թ. Ռ.Մանուկյան):

Շարունակվել են պլազմամեխանաքիմիական եղանակով մետաղական Ni, Co, ինչպես նաև վոլֆրամի, կարբիդի, նանոչափ փոշիների ստացման ուսումնասիրությունները և դրանց կատալիտիկ ազդեցությունը մեթանի ածխաթթվային կոնվերսիայի վրա (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Թաթարյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Իրականացվել է կապարգերմանատային և բարիումգերմանատային համակարգերի հիմքով ապակիների ցածր ջերմաստիճանային սինթեզ: Ուսումնասիրվել են սինթեզված

ապակիների կայունության ջերմաստիճանային տիրույթները, ապակեցման միջակայքը և  $Q_{\Sigma}(\alpha=20\div300)$ : Որոշվել են ապակիների օպտիկական թափանցելիության մարզը և օպտիկական պարամետրերը (դեկ.՝ տ.գ.դ. Ն.Կնյազյան):

Հետազոտվել է դժվար հարստացվող, օքսիդացած բազմամետաղային հանքանյութերի՝ պղնձի, ցինկի և կապարի միներալների խորը սուլֆիդացման պրոցեսը նատրիումի սուլֆիդի և պոլիսուլֆիդի, ինչպես նաև սիլիցիումի սուլֆիդի կիրառմամբ՝ ֆլոտացման նպատակով: Մշակվել է ցինկի և կապարի կորզման պարզեցված տեխնոլոգիական սխեման (դեկ.՝ տ.գ.թ. Ս.Հարությունյան):

## Հրապարակումներ

### Հոդվածներ, գեկուցումներ

1. Երիցյան Ս.Կ., Գասպարյան Գ.Հ., Ավագյան Գ.Վ., Երիցյան Լ.Ս., Գրիգորյան Կ.Գ., Ցոբենի և գարու քարամրիկների և փոշեմրիկների դեմ պայքար նոր բաղադրության համալիր պարարտանյութի կիրառմամբ օրգանական գյուղատնտեսությունում, Ե., ՀԱԱՀ, «Ագրոգիտություն և տեխնոլոգիա», N 4, 2020, էջ 73-83:
2. Աղբալյան Ս.Գ., Հովսեփյան Ա.Հ., Հարությունյան Ս.Ա., Սաֆարյան Տ.Ն., Շոխիյան Գ.Գ., Հակոբյան Ա.Ռ., Խաչատրյան Ս.Հ., Բազմամետաղային օքսիդացած հանքանյութերից ֆլոտացմամբ կապարի և ցինկի կորզման գործընթացի հետազոտումը, Ե., ՀՀ ԳԱԱ և ՀՊՀՀ «Տեղեկագիր», հ. 73, N 4, 2020, էջ 399-405:
3. Баграмян В.В., Саргсян А.А., Жидкое стекло из горных пород Армении, Ер., “Хим. журн. Армении”, N 2-3, 2020, с.176-193.
4. Баграмян В.В., Саргсян А.А., Комплексная переработка перлита микроволновым методом, мат. межд. конф. “Инновационные процессы комплексной переработки природного и техногенного минерального сырья” (Плаксинские чтения – 2020), Апатиты, ФИЦ КНЦ РАН, 2020, с. 219-221.
5. Бадалян А.О., Арутюнян В.В., Алексанян Э.М., Григорян Н.Е., Арестакян А.Г., Петросян Л.А., Баграмян В.В., Саргсян А.А., Исследование радиационно-термостимулированных свойств в модифицированных композитных терморегулирующих покрытиях, Тр. XXX межд. конф. «Радиационная физика твёрдого тела», Севастополь, 2020, с. 291-299.
6. Григорян К.Г., Багинова Л.Г., Айрапетян С.М., Арутюнян Г.А., Хачатрян А.А., Азнаурян А.Н., Синтез гидромоносиликатов кальция в гидрохимических условиях при получении калийного удобрения из туфа и извести, Ер., “Хим. журн. Армении”, N 2-3, 2020, с. 204-212.
7. Гургенян Н.В., Костандян М.Ф., Григорян А.Е., Варданян Н.К., Хачанова И.Б., Корректировка некоторых параметров, влияющих на процесс вспучивания перлитов”, М., “Хим. технология”, т.21, N1, 2020, с. 36-40.
8. Гургенян Н.В., Хачанова И.Б., Костандян М.Ф., Григорян А.Е., Варданян Н.К., Ускоренный метод определения свойств перлитовой породы, М., “Стекло и керамика”, N 5, 2020, с. 35-38.
9. Гургенян Н.В., Хачанова И.Б., Мартиросян А.В., Кремнезем содержащие отходы промышленности – сырьё для дорожного строительства, Ер., “Вестник” НПУА, Химич. и природоохран. технологии, N 1, 2020, с. 27-34.
10. Еганян Дж.Р., Князян Н.Б., Теплофизические свойства стеклокристаллического материала в зависимости от относительного содержания фаз, Ер., “Вестник” НПУА, Химич. и природоохран. технологии, N 1, 2020, с. 9-19.
11. Зангинян А.А., Стеклообразование, магнитные и некоторые свойства стекол в системе  $\text{NaF-Fe}_2\text{O}_3\text{-LiPO}_3$ , Ер., “Хим. журн. Армении”, N 4, 2020, с. 343-348.
12. Костанян А.К., Князян Н.Б., Оксифторидные стекла как основа для получения многослойных сообоженных стеклокерамических материалов, Ер., “Хим. журн. Армении”, N 4, 2020, с. 318-329.
13. Погосян М.А., Стеклообразование и строение стекол системы  $\text{NaPO}_3\text{-(0.4AlF}_3\text{0.6CaF}_2\text{)}$  на основе исследования некоторых физико-химических свойств, Ер., “Хим. журн. Армении”, N 2-3, 2020, с. 194-203.
14. Погосян М.А., Калийфосфатное удобрение длительного действия в стеклообразном состоянии, Ер., “Вестник” НПУА, Химич. и природоохран. технологии, N1, 2020, с. 20-26.
15. Baghramyan V., Sargsyan A., Knyzyan N., Harutyunyan V., Badalyan A., Grigoryan N., Aprahamian A., Manukyan K., Pure and cerium-doped zinc orthosilicate as a pigment for thermoregulating coatings, Ceramics International, v. 46, issue 4, 2020, pp. 4992-4997.

16. Isahakyan, A., Zulumyan, N., Melikyan, S., Beglaryan H., Synthesis of Nanosized  $\beta$ -Wollastonite Crystals Using Hydrated Silica Gel from Serpentine, M., Russian Journal of Physical Chemistry A, 2020, 94(10), pp. 2103-2107. doi:10.1134/S0036024420100143.
17. Pashayan R., Karapetyan J., Harutyunyan L., Geodynamics of Central Armenia Based on the Results of Hydrogeochemical Monitoring, American Journal of Mechanics and Applications, 2020, 8(3), pp. 40-46. doi: 10.11648/j.ajma.20200803.12 <http://www.sciencepublishinggroup.com/j/ajma>
18. Sargsyan A., Baghranyan V., Knyazyan N., Harutyunyan V., Grigoryan N., Aleksanyan A., Badalyan A., Optical Properties and Radiation Resistance of Diopside Obtained by Microwave Method, Y., Journal of Contemporary Physics, N 55, 2020, pp. 23-29.
17. Sargsyan A., Baghranyan V., Knyazyan N., Ovsepyan R., Agamalyan N., Badalyan G., Microwave Synthesis of ZnO/Ag Nanocomposite, “ Y., Journal of Contemporary Physics”, v. 55, N 4, 2020, pp. 360-364.

Պաշտպանվել է 1թեկնածուական ատենախոսություն

## ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՔԻՄԻԱՅԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Հարությունյան  
Փոխտնօրեն՝ Մ.Հարությունյան  
Գլխավոր տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան  
Էլեկտրոնային փոստ՝ [nanraifok54@mail.ru](mailto:nanraifok54@mail.ru)  
Կայքէջ՝ [www.stcopc.sci.am](http://www.stcopc.sci.am)

**Մասնագիտական խորհուրդ 010՝ «Քիմիա»**

Նախագահ՝ թղթ. անդ. Վ.Թովուզյան, գլխավոր տնօրեն՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան

### **Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

4-Օքս-1-ֆենիլցիկլոհեքսանկարբոնիտրիլի, ցիանքացախաթթվի էթիլէթերի և ծծումբի փոխազդեցությամբ Գևալդի ռեակցիայով սինթեզվել է 2-ամինա-6-ցիանո-6-ֆենիլ-4,5,6,7-տետրահիդրոբենզո[*b*]-թիոֆեն-3-կարբոնաթթվի էթիլէթերը: Վերջինի և զանազան արիլ-կարբոնաթթուների քլորանհիդրիդների հետ կոնդենսացմամբ սինթեզվել է ամիդաէթերային ածանցյալների շարք: Նրանց ցիկլացումը հիդրազինհիդրատի առկայությամբ բերել է կոնդենսված 3-ամինա-2-արիլ-4-օքս-թիենոպիրիմիդին-7-կարբոնիտրիլների: Նախկինում սինթեզված 2-ամինա-4-(1,4-բենզոդիօքսան-2-իլ)թիոֆեն-3-կարբոնաթթվի էթիլէթերի և ֆորմամիդի ցիկլացմամբ սինթեզվել է 5-(1,4-բենզոդիօքսան-2-իլ)թիենո[2,3-*d*]պիրիմիդին-4(3H)-ոն, որը ֆոսֆորի քլորօքսիդի ազդեցությամբ վերածվել է համապատասխան 4-քլոր-ածանցյալի: Դրա փոխազդեցությունն առաջնային և երկրորդային ամինների հետ բերել է 4-րդ դիրքում զանազան ֆարմակոֆոր խմբեր պարունակող թիենո-պիրիմիդինների (դեկ. ք.գ.թ. Ա.Աղեկյան):

Սինթեզվել է կառուցվածքում քինոլինային, տրիագուլային և թիադիագուլային օղակներ պարունակող հետերիլքինոլինների շարքի 15 նոր միացություն: Համապատասխան 1,3,4-թիադիագուլ-2-ամինների ացիլացմամբ սինթեզվել են 1,3,4-թիադիագուլ-2-իլ-ացետամիդներ: Կատարվել է տարբեր  $\beta$ -ամինակետոնների և բիս- $\beta$ -ամինակետոնների վերաամինացումը 2-ամինաբենզամիդով, 2-ամինա-1-(4-նիտրո-ֆենիլ)պրոպան-1,3-դիոլով և որոշ ամինաթթուներով: Սինթեզվել է 2-ամինա-5,7-դիհիդրոպրիլ-4,7-դիհիդրո-5H-թիենո [2,3] պիրան-3-կարբօքսիլատը: Իրականացվել է ստացված ամինի ացիլացում և ալկիլացում,

ստացվել են համապատասխան ամիդներ և  $\beta$ -ամինակետոններ: Ուսումնասիրվել է սինթեզված ամիդների հակաբորբոքային ակտիվությունը (ղեկ՝ ք.գ.թ. Ա.Իսախանյան):

Սինթեզվել են  $\alpha,\beta$ -դեհիդրոթիրոզինի մնացորդ պարունակող դիպեպտիդներ, որոնք հումք են հանդիսացել Կանաչ ֆլուորեցենցող սպիտակուցի քրոմոֆորի՝ 4-(4-հիդրօքսի-բենզիլիդեն)-5-իմիդազոլոնի ածանցյալների սինթեզի համար: Ցույց է տրվել բենզոիլ մնացորդի կիրառելիությունը որպես Օ-պաշտպանիչ խումբ  $\alpha,\beta$ -դեհիդրոթիրոզինի մնացորդ պարունակող միացությունների՝ դիպեպտիդների ու 5-իմիդազոլոնների սինթեզի ժամանակ: Մշակվել են Օ-բենզոիլ պաշտպանիչ խմբի հեռացման մեղմ պայմաններ՝ օգտագործելով դիալկիլամինաակլիլամինները (ղեկ՝ թղթ. անդ. Վ.Թովուզյան):

Զրային ամիակով, ինչպես նաև միջֆազ կատալիզի պայմաններում Տետրաէթօքսիսիլանի ուլտրաձայնային մշակմամբ ստացվել են սիլիկահողի քսերոհելեր: Գլիցերին և պրոլոնգացված անջատումով օժտված կենսաբանորեն ակտիվ միացություն պարունակող կոմպոզիտային քսերոհելերը ստացվել են երկփուլ սորբցիայով, ինչպես նաև միափուլ սինթեզով (ղեկ՝ ք.գ.դ. Ս.Գրիգորյան):

2-Օքսո-2,5,6,7-տետրահիդրո-3-ցիանո-1H-ցիկլոպենտա[b]պիրիդինի հիման վրա մշակվել է մատչելի եղանակ տետրացիկլիկ ցիկլոպենտանոպիրի-դո[3,2:4,5]թիենո[3,2-d]պիրիմիդինի-4-թիոալկիլ- և 3-N-ալկիլ տեղակալված ածանցյալների սինթեզի համար: Այդ շարքի միացությունների մոտ հայտնաբերվել է հակացնցումային և նեյրոտրոպ ակտիվություն: Պիրանոպիրիդինների 8-հիդրազինոածանցյալների հիման վրա մշակվել են նոր հետերոցիկլիկ համակարգերի՝ պիրանո[3,4-c][1,2,4]տրիազոլո[4,3-a]պիրիդինի և 8-(պիրազոլ-1-իլ)պիրանո[3,4-c]- պիրիդինի ածանցյալների ստացման եղանակներ: Ռենտգենակառուցվածքային անալիզով հաստատվել է նոր համակարգերում միջմոլեկուլային ջրածնական կապերի առկայությունը: Ալիցիկլո- և հետերոցիկլո[c]պիրիդինների հիման վրա իրականացվել է կոնդենսված քառացիկլ պիրիդո[3',2':4,5]ֆուրո[թիենո][3,2-d]պիրիմիդինների սինթեզ, որոնք այնուհետև ալկիլացվել են 2-քլոր-N-1,3-թիազոլ-2-իլացետամիդով և բերել նպատակային N-ալկիլածանցյալների ստացմանը: Իրականացվել է սինթեզված միացությունների հակամանրէային ակտիվության ուսումնասիրություն արտասահմանյան լաբորատորիաներում, որի արդյունքում հայտնաբերվել են ակտիվ միացություններ և գտնվել օրինաչափություններ սինթեզված միացությունների կառուցվածքի և կենսաբանական ակտիվության միջև (ղեկ՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են տեղակալված  $\beta$ -ցիկլոկետոններ, որոնք ցուցաբերել են հակացնցումային հատկություններ: Վերջիններս ենթարկվել են ամինացման էթանոլամինի, արոմատիկ ամինների, ալիֆատիկ դիամինների հետ, ինչպես նաև ռեակցիայի մեջ են մտել էթիլենգլիկոլի հետ: Իրականացվել է 2-դիրքում բենզոլային օդակում նիտրոխումբ պարունակող տեղակալիչներով 6-օքսո- և 6-օքսի-5,7-դիագաադամանտանների սինթեզը: Վերջիններիս նիտրոխումբը վերականգնվել է հիդրազինով Ni/Re-ի ներկայությամբ: Ստացված ամինները փոխազդեցության մեջ են մտել ալդեհիդային խումբ պարունակող արոմատիկ և հետերոցիկլիկ միացությունների հետ, որի արդյունքում սինթեզվել են համապատասխան ազոմեթիններ (ղեկ՝ ք.գ.դ. Ս.Գասպարյան):

Էթիլ 4'-ամինո-1'H-սպիրո[ցիկլոհեպտան-1,2'-նավթալին]-3'-կարբօքսիլատը փոխազդեցության մեջ է մտել ալիլիզոթիոցիանատի հետ, որի արդյունքում ստացված թիոմիզանյութը, առանց ռեակցիոն միջավայրից անջատելու, ենթարկվել է ցիկլման: Ստացված 3-ալիլ-2-թիօքսո-2,3-դիհիդրո-1H-սպիրո[բենզո[h]խինազոլին-5,1'-ցիկլոհեպտան]-4(6H)-ոնից անցում է կատարվել 2-ալկիլթիո- և 2-հիդրազինո ածանցյալների: 2-հիդրազինո-բենզո[h]խինազոլինը կոնդենսվել է կետոնների և արոմատիկ ալդեհիդների հետ, որոնց արդյունքում ստացվել են ազոմեթինային միացություններ ու հիդրազոններ: Վերոհիշյալ հիդրազինոածանցյալի փոխարկումների արդյունքում սինթեզվել են 4-ալիլ-4H-սպիրո

[բենզո[հ][1,2,4]տրիագուլո[4,3-*a*]խինագուլին-6,1'-ցիկլոհեպտան]-5(7H)-ոնը և նրա 1-մերկապտոնմանակը, որից անցում է կատարվել 1-ակիլլթիոածանցյալների (դեկ՝ ք.գ.դ. Ա.Մարկոսյան):

Իրականացվել են ՕԴՔ ԳՏ կենտրոնի լաբորատորիաներում սինթեզված, տարբեր քիմիական խմբերին պատկանող 299 միացության առաջնային հետազոտություններ, այդ թվում՝ հակամանրէային 217, հակաբորբոքային և ցավազրկող 10, հակաօքսիդանտային 7, հակաուռուցքային 45, ինչպես նաև *in vitro* պայմաններում ուսումնասիրվել է 20 միացության ազդեցությունն ուռուցքային ԴՆԹ-ի մեթիլացման մակարդակի վրա: Ուսումնասիրված միացությունները հիմնականում չեն ցուցաբերել արտահայտված ակտիվություն: Պարբերաբար կատարվել է կենտրոնում արտադրվող դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի որակի կենսաբանական հսկում՝ թունակայնության, արդյունավետության և մանրէազերծման դեղագրքային փորձարկումներ (դեկ՝ կ.գ.թ. Ռ.Մուրադյան):

Հակացնցումային և հոգեմետ հատկություններ հայտնաբերելու նպատակով ուսումնասիրվել են պիրանոտրիագուլոպիրիդինների (10), պիրանո-պիրիդոթիենոտրիագինների (11), թիենոտրիագուլոպիրիդինների (30), տիենոպիրիմիդինների (12), պիրիդո [1,2-*a*] պիրիմիդինների (2) ածանցյալներ՝ թվով 65 միացություն: Առավել ակտիվ (60-80%) թվով 8 միացություն ենթարկվել է խորը հետազոտության՝ «բաց դաշտ», «բարձրացված խաչաձև լաբիրինթ», «հարկադրված լող» թեստերով: Ուսումնասիրվել է 52 քիմիական միացության հակամոնոօքսիդազային ակտիվությունը: Առանձնացվել են 5 սպիրոբենզոքրոմինների, 3 պիրիմիդինների և կոնդենսացված պիրիմիդինների ածանցյալներ խորը ուսումնասիրությունների համար:

Իրականացվել են հակահիպօքսիկ և վեգետատիվ համակարգերի վրա ազդող,  $\alpha$ - և  $\beta$ -ադրենո-պաշարիչ, սիմպատոլիտիկ և ադրենոլիտիկ հատկություններ ցուցաբերող 1.4-բենզոդիօքսանների ամիդների ածանցյալների ուսումնասիրություններ՝ թվով 16 միացություն: 3 առավելապես ակտիվ հակահիպօքսիկ հատկություն ցուցաբերած միացություններ առանձնացվել են հետագա ուսումնասիրությունների համար: Իրականացվել են  $\beta$ -բլոկատորների որոնման զննումը համատեղելու եղանակի մշակում և ուսումնասիրություններ սրտանոթային համակարգի ինքնավար վերահսկողության մեխանիզմների վրա մեկ փորձի ընթացքում՝ օգտագործելով *in vivo* և *silica* մեթոդներ:

Իրականացվել է ամիլոիդային մանրաթելերի զանգվածային տարբեր տեսակների էլեկտրոնամանրադիտակային տեսանելիացում: Որոշվել է պոլիմերների ծրագրավորված պոլիմերիզացիայի տարբեր տեսակների և սինթետիկ լատեքսի էլեկտրոնամանրադիտակային տեղագրության չափաբանակական բնութագիրը, 1.TE VIII,2.CE 0121; 3.CainRD, 4.RG 12 BHT,5. UN VFlox9161V; 6.086; 7.K N95 տիպի դիմակների տեսագրող էլեկտրոնամանրադիտակային վերլուծությունը՝ հաշվի առնելով COVID-19 համավարակի նանոչափագրումը և նրանց մոդելավորման հնարավորությունները, համապատասխան դիմակների արդյունավետությունը: Ուսումնասիրվել են ֆոսֆոլիպիդների որակական և քանակական փոփոխությունները, լիպիդների գերօքսիդացման պրոցեսները և արյան մակարդակիության տարբեր ցուցանիշներ՝ թվով 34 միացություն:

Ներդրվել է հիպոկլամպի և մի շարք օրգանների առաջնային բջջային կուլտուրաների ստացման և դրանց հետազոտության ժամանակակից իմունոբջջաբանական եղանակը: Իրականացվել է TVS, TVV և TVA միացությունների ցիտոտոքսիկության և նեյրոպրոտեկտիվ հատկությունների ուսումնասիրություն առնետի ուղեղի հիպոկլամպից անջատված առաջնային բջջային կուլտուրայի ներգրավմամբ: Ներդրվել և կիրառվում է շիճուկային սպիտակուցների ֆրակցիոն բաժանման դիագնոստիկ ժամանակակից եղանակ մազանոթային էլեկտրաֆորեզի մեթոդով: Մշակվել և ներդրվել է լյարդի տոքսիկ ցիտոզի առաջացման և դինամիկ ուսումնասիրման նոր եղանակ (դեկ՝ կ.գ.թ. Հ.Գասպարյան):

Իրականացվել է N-պարա-ամիլօքսի- և իզո-ամիլօքսի-բենզոիլ-DL-սերինի, սալիցիլիդեն-β-ֆենիլ-α-ալանինի և նրա հիդրազիդի, սալիցիլիդեն-DL-β-ֆենիլ-β-ալանինի և նրա էթիլային էսթերի, N-օրթո-օքսիբենզոիլ-L-β-ֆենիլ-α-ալանինի, N-երրորդ-բուրիլ-օքսիկարբոնիլ-L-թիրոզինի, O-բենզիլային էսթերի, դիպեպտիդներ՝ N-դիֆենիլ-ացետիլ-γ-ամինակարագաթթվային-γ-անինակարագաթթվի, N-բենզիլօքսիկարբոնիլ-DL-ալանիլ-գլիցինի, N-պարա-ամինոբենզոիլ-գլիցինի, N-նիկոտինոիլ-ε-ամինո-կապրոնաթթվի սինթեզը: Ստացվել են սալիցիլիդեն-գլիցինի, սալիցիլիդեն-β-ալանինի և սալիցիլիդեն-L-վալինի կալիումական աղեր, սալիցիլիդեն-DL-տրիպտոֆանի, β-ֆենիլ-β-ալանինի պղնձային խելատներ, N-դիֆենիլացետիլ-γ-ամինակարագաթթվային-γ-ամինակարագաթթվի լիթիումական աղ, N-բենզոիլ գլիցին և նրա արծաթային աղ (դեկ.՝ ք.գ.թ. Ս.Ղազարյան):

Մշակվել է խառը երկրորդային և երրորդային ամինների սինթեզի եղանակ: Ալիլ[3-α-նավթիլ]ամոնիում բրոմիդների հիման վրա իրականացվել է -1-ալիլ(3-α-նավթիլ)ամինների սինթեզ և ուսումնասիրվել է վերջիններիս ալիլատների և պրոպարգիլատների վարքը հիմնային կատալիզի պայմաններում: Դիմերիլալիլ[(1-ալիլ-3-α-նավթիլպրոպ-2-ինիլ)] ամոնիում և 2,2-պենտամեթիլեն[(1-ալիլ-3-α-նավթիլպրոպ-2-ինիլ)]ամոնիում բրոմիդների դեպքում ստացվել են համապատասխան ցիկլիկ աղեր: Համաձայն ՄՄՌ սպեկտրալ ուսումնասիրությունների՝ դիմերիլնմանակի դեպքում ստացվել է երկու օպտիկական իզոմերների խառնուրդ: Կառուցվածքը հաստատվել է նաև ռենտգենակառուցվածքային անալիզի օգնությամբ: Ըստ ՄՄՌ սպեկտրալ անալիզի տվյալների, 2,2-պենտամեթիլենալիլ[(1-ալիլ(3α,4-դիհիդրոնավթոլ[f]))իզոինդոլինիում-բրոմիդը չորս օպտիկական իզոմերների խառնուրդ է: Սինթեզվել են-(3-ֆենիլպրոպ-2-ենիլ)(3-α-նավթիլպրոպ-2-ինիլ) ամոնիում բրոմիդներ և ուսումնասիրվել է դրանց վարքը հիմնային կատալիզի պայմաններում: Իրականացված հետազոտությունների հիման վրա մշակվել է պոտենցիալ բիոակտիվ -4-ֆենիլ-3α,4-դիհիդրոնավթոլ[f]իզաինդոլինիում բրոմիդների սինթեզի եղանակ: Ըստ Երևանի պետական բժշկական համալսարանի դեղաբանական ամբիոնում իրականացված հետազոտությանների, 2,2-դիէթիլ-4-ֆենիլ-3α,4-դիհիդրոնավթոլ[f]իզոինդոլինիում բրոմիդը ցուցաբերել է ուժեղ արտահայտված ցավազրկող ակտիվություն (դեկ.՝ ք.գ.դ. Է.Զուխաջյան):

Ուսումնասիրվել է պրոպարգիլային կառուցվածքով ամինների և դիմեդոնի փոխազդեցության ռեգիոքիմիան սնդիկի ացետատի (II) ներկայությամբ: Պարզվել է, որ սնդիկի (II) ացետատի ներկայությամբ դիմեդոնի նատրիումական աղը փոխազդում է N,N-դիէթիլպրոպ-2-ինիլ-1-ամինի հետ մեթանոլում կամ ԴՄՍՕ-ում, իսկ ռեակցիոն խառնուրդի հետագա մշակումն աղաթթվով հանգեցնում է 3,3,6,6,9-պենտամեթիլ-3,4,5,6,7,9-հեքսահիդրո-1H-քսանթեն-1,8-(2H)-դիոնի առաջացմանը: Դեմերկուրացման պայմաններում ստացվում է նաև բիս (3-դիէթիլամինոպրոպ-1-ինիլ)սնդիկ, որի կառուցվածքը հաստատվել է ՄՄՌ և ԻԿ սպեկտրալ և ռենտգենակառուցվածքային հետազոտություններով: Ցույց է տրվել նաև, որ վերոնշյալ ռեակցիայում 4-(պրոպ-2-ինիլ) մորֆոլինը որպես սուբստրատ կիրառելիս ստացվում են 2,2'-(պրոպան-1,2-դիիլիդեն) բիս (5,5-դիմեթիլցիկլո-հեքսան-1,3-դիոն և բիս (3-մորֆոլինոպրոպ) -1-ինիլ) սնդիկ (դեկ.՝ ք.գ.դ. Հ.Սարգսյան):

Սկսվել են 4-ամինա-1,2,4-տրիազոլի հենքի վրա կառուցված կամրջակային ազոտի ատոմ պարունակող համակցված ազոլազինների սինթեզի հետազոտությունները: β-երկկարբոնիլային և β-եռկարբոնիլային միացությունների հետ փոխազդեցությամբ սինթեզվել են 1,2,4-տրիազոլ[4,3-b]- պիրիդազիններ և դրանց ացիկլիկ ածանցյալներ: Շարունակվել են մեթիլ խմբեր պարունակող պիրիմիդինների և արոմատիկ ու հետերոարոմատիկ ալդեհիդների փոխազդեցությամբ բորաթթվի և աղաթթվի միջավայրերում սինթեզվող ձգված π-համակցված շղթա պարունակող մոնո- և բիցիկլային պիրիմիդինների ստացման հետազոտությունները (դեկ.՝ թղթ. անդ. Գ.Դանագուլյան):

Իրականացվել է 1-բրոմ-վինիլ- և -պրոպենիլդիֆենիլֆոսֆինօքսիդների սինթեզը 1,2-դիբրոմ-էթիլ- և -պրոպիլդիֆենիլֆոսֆինօքսիդների դեհիդրոբրոմացմամբ սենյակային ջերմաստիճանում բենզոլի միջավայրում նատրիումի հիդրօքսիդով: Ուսումնասիրվել են 1-բրոմվինիլդիֆենիլֆոսֆինօքսիդների միացման ռեակցիաները մի շարք նուկլեոֆիլների, մասնավորապես մեթիլ-, էթիլ-, իզոպրոպիլալիլների, էթիլմերկապտանի, մերկապտո-էթանոլի, պիրազոլի, 3,5-դիմեթիլպիրազոլի և իմիդազոլի հետ: Ցույց է տրվել, որ 1-բրոմվինիլդիֆենիլֆոսֆինօքսիդը հեշտությամբ էլեկտրոֆիլ միացման ռեակցիայի մեջ է մտնում բրոմի հետ՝ առաջացնելով համապատասխան տրիբրոմածանցյալներ (դեկ.՝ ք.գ.դ. Մ.Հովակիմյան):

Առևտրային վինիլքացախաթթուն բուր-3-ենական և բուր-2-ենական թթուների խառնուրդ է: Ցույց է տրվել, որ կատալիտիկ քանակությամբ 1-էթիլպիրազոլի ներկայությամբ տեղի է ունենում բուր-3-ենական թթվի իզոմերում: (Z/E)-բուր-2-ենական թթվի երկրաչափական իզոմերները մասնակցում են պիրազոլների հետ ազա-Միքայելի ռեակցիային: Ըստ ՄՄՌ  $^1\text{H}$  տվյալների, ռեակցիոն միջավայրում մնացած Z և E իզոմերների հարաբերությունը (3:1) է, որին բերում է Z իզոմերի բարձր ռեակցիոնունակությունը: Ցույց է տրվել, որ 1-(2-քլորէթիլ)-3-նիտրո-1H-1,2,4-տրիազոլի դիհիդրոքլորացումն էթանոլում կալիումի հիդրօքսիդով ուղեկցվում է նիտրո խմբի տեղակալմամբ էթօքսի խմբով: Այդպիսի նուկլեոֆիլ տեղակալում տեղի է ունենում նաև 1-տեղակալված 3-նիտրո-1H-1,2,4-տրիազոլներում կալիումի հիդրօքսիդի մեթանոլային և ն-պրոպանոլային լուծույթներում (դեկ.՝ ք.գ.դ. Հ.Աթթարյան):

Սինթեզվել են իմունոդիագնոստիկ պրեպարատների համար նախատեսված կայուն կոլոիդ պարամետրերով օժտված լատեքսներ (դեկ.՝ ք.գ.թ. Ն.Գրիգորյան):

Կենսաբանորեն ակտիվ միացություններ ստանալու նպատակով սինթեզվել է տրանս-դիմեթիլ-4-պրոպարգիլօքսիբուր-2-իլամինը, որի փոխազդեցությամբ բրոմ(քլոր)քացախաթթվի ալկիլ էսթերների հետ ստացվել են համապատասխան նպատակային ամոնիումային աղեր: Սինթեզվել են նաև կարբոնիլային և ամիդային խմբեր պարունակող ամոնիումային աղեր: Ստացված բոլոր միացությունների կառուցվածքը հաստատվել է ԻԿ և ՄՄՌ  $^1\text{H}$  սպեկտրալ տվյալներով, երեք միացությունների կառուցվածքը՝ նաև ռենտգենակառուցվածքային անալիզով: Ուսումնասիրվել է սինթեզված միացությունների ակտիվությունը գրամոդրական և գրամբացասական միկրոօրգանիզմների նկատմամբ: Պարզվել է, որ հիդրոֆոբ ալկիլօքսիկարբոնիլմեթիլ շղթայի երկարացմանը զուգընթաց հակամանրեային ակտիվությունը մեծանում է: Սակայն այդ նյութերի հատկությունների վրա էական ազդեցություն չի թողնում բուր-2-իլ խմբի 4-րդ դիրքում տեղակալիչի բնույթը (դեկ.՝ ք.գ.դ. Ա.Գյուլնազարյան):

Ցույց է տրվել, որ մալոնաթթվի արիլամիդոէսթերների փոխազդեցությունն էթօքսի-մեթիլդենմալոնոնիտրիլի հետ եռէթիլամինի ներկայությամբ ընթանում է բացարձակ էթանոլում, սենյակային ջերմաստիճանում և համաձայն ՄՄՌ, ԻԿ սպեկտրոսկոպիայի և ՌԿ անալիզի տվյալների՝ բերում է ալկիլ 1-արիլ-6-ամինո-2-օքսո-5-ցիանո-1,2-դիհիդրո-պիրիդին-3-կարբօքսիլատների: Հաստատվել է, որ մալոնաթթվի արիլամիդոէսթերների, արոմատիկ ալդեհիդների և մալոնաթթվի դինիտրիլի եռլուծույթներում փոխազդեցությունն առաջացնում է ալկիլ 6-ամինո-1,4-դիարիլ-2-օքսո-5-ցիանո-1,2,3,4-տետրահիդրո-պիրիդին-3-կարբօքսիլատներ: Համաձայն ՄՄՌ սպեկտրոսկոպիայի տվյալների՝ եթե նշված միացություններն ամիդային հատվածի արոմատիկ օդակում պարունակում են *o*-տեղակալիչ, ապա դրանք լուծույթում գտնվում են երկու ռոտամերների ձևով (դեկ.՝ ք.գ.դ. Մ.Սարգսյան):

Ազոտի օքսիդի դիօքսիդենացման ( $\text{UO}_2$ ) ռեակցիայի ուսումնասիրման համար ստացվել են համապատասխան 6-կոորդինացված կոմպլեքսներ: Թթվածնային կոմպլեքսի ստացումը կատարվել է նախկին աշխատանքներում նկարագրված եղանակով: Հայտնա-



բերվել է, որ Co պորֆիրինների 5-կոորդինացված կոմպլեքսները ձևավորվում են միայն մեթիլամինի և դիմեթիլամինի հետ: Co պորֆիրինների 5-կոորդինացված կոմպլեքսները ստանալուց հետո կրիոստատի մեջ ավելացվել է թթվածին:  $^{16}\text{O}_2$  և  $^{18}\text{O}_2$  իզոտոպների կիրառությամբ հաստատվել է 6-կոորդինացված թթվածնային կոմպլեքսի առաջացման իսկությունը: Ուսումնասիրվել է նաև 6-կոորդինացված թթվածնային կոմպլեքսի կայունությունը տաքացման պայմաններում թթվածնի մթնոլորտում և վակուումում: 6-կոորդինացված թթվածնային կոմպլեքսի ստացումից հետո ուսումնասիրվել է վերջինիս փոխազդեցությունն ազոտի օքսիդի հետ (ղեկ.՝ ք.գ.դ. Տ.Կուրտիկյան):

Ուսումնասիրվել են քիմիկոսների կողմից սինթեզված միացությունները: Որոշվել են փոխարինված տրիագոլների, պիրագոլների, իմիդագոլների, տետրագոլների, պիրիմիդինների և դրանց հիման վրա շատ կոնդենսացված հետերոցիկլների կոնֆորմացիաները և ՄՄՌ պարամետրերը: Ուսումնասիրվել են ոչ սպիտակուցային ամինաթթուների սինթեզի համար օգտագործվող քիրալ մետաղակոմպլեքս կատալիզատորները: Մշակվել է միջավայրի ազդեցությամբ չխոտորված ՄՄՌ սպին-սպինային փոխազդեցությունների որոշման եղանակ (ղեկ.՝ ք.գ.թ. Հ.Փանոսյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

Պարզվել է, որ 1-(դիեթիլամինոէթիլ)-2-ֆենիլ-4-բենզիլիդեն-5-իմիդագոլոնը և N-բենզոիլ-DL-վալինի դիմեթիլամինոէթիլամիդը *in vitro* պայմաններում կանխում են հիպոկամպի նյարդային բջիջների վրա ամիլոիդային պեպտիդի ունեցած բացասական ազդեցությունը, ինչպես նաև նվազեցնում են բջիջների նեյրոդեգեներատիվ պրոցեսները՝ դրսևորելով արտահայտված նյարդապաշտպանիչ հատկություններ: Այդ միացությունների հետագա նախակլինիկական հետազոտությունները թույլ կտան դրանք որպես նոր դեղամիջոց ներդնել բժշկական պրակտիկայում Ալցհեյմեր հիվանդության կանխարգելման և բուժման համար (ղեկ.՝ թղթ. անդ.Վ.Թովուզյան):

Ուսումնասիրվել է Դիմրոտի վերախմբավորումը համակցված տրիագոլպիրիդինների, տրիագոլպիրիմիդինների և տրիագոլտրիագինների շարքում: Մշակվել են համակցված տետրա-, պենտա-, հեքսացիկլիկ նոր համակարգերի սինթեզի եղանակներ: Կատարվել են բարձր հոգեմետ ազդեցություն ունեցող միացությունների Docking հետազոտություններ: Ցույց է տրվել, որ մոլեկուլային մոդելավորման արդյունքում ստացված տվյալները համապատասխանում են *in vivo* կենսաբանական ուսումնասիրությունների արդյունքներին: Առաջին անգամ իրականացվել են հոգեմետ ազդեցությամբ օժտված միացությունների հիտոպաթոլոգիական հետազոտություններ (ղեկ.՝ ք.գ.դ. Ե.Պարոնիկյան):

Սինթեզվել են պիրանո[3,4-*c*]պիրիդինների ինչպես հայտնի, այնպես էլ նոր ածանցյալներ: Չորս հնարավոր իզոմեր պիրանոպիրիդիններից հայտնաբերվել և նույնականացվել են երեքը և հաջողվել է բարձրացնել նպատակային պիրանո[3,4-*c*] պիրիդինների էլքերը: Շարունակվել են հետազոտությունները Սմայլսի տիպի նոր վերախմբավորման բնագավառում: Հայտնաբերվել է, որ վերջինս իր մեխանիզմով նման է Սմայլսի վերախմբավորմանը և ընթանում է միջանկյալ սպիրոցիկլի առաջացմամբ: Իրականացվել է նոր հնգացիկլ հետերոցիկլիկ համակարգերի սինթեզ: Վերջիններիս շարքում հայտնաբերվել են միացություններ՝ օժտված բարձր հոգեմետ հատկություններով: 6-Օքսոպիրանո[3,4-*c*]պիրիդինների շարքում հայտնաբերվել է միացություն, որը կարող է հանդիսանալ պոտենցիալ հակաթրոմբոցիտային դեղամիջոց (ղեկ.՝ ք.գ.դ. Ս.Սիրականյան):

Ուսումնասիրվել է ազոտի օքսիդի դիօքսիգենացման ռեակցիան մանգան պորֆիրինների թթվածնային կոմպլեքսների հետ: Ցույց է տրվել, որ փոխազդեցության արդյունքում գոյանում է 5-կոորդինացված օքսի- կոմպլեքս: Ստացված օքսի-կոմպլեքսի փոխազդեցությո-

յունն ազոտի օքսիդի հետ 80°C ջերմաստիճանում հանգեցնում է պերօքսինտրիտա-նիտրոզիլային կոմպլեքսի առաջացմանը: Ենթադրվում է, որ պերօքսինտրատանիտրոզիլային կոմպլեքսի տաքացումը ուղեկցվում է նիտրիտ անիոնի պոկմամբ և մանգանիլ-նիտրոզիլային կոմպլեքսի առաջացմամբ: Վերջնական արդյունքում՝ սենյակային ջերմաստիճաններում ունենում ենք հավասար քանակություններով նիտրիտային Mn(Por) ( $\eta^1$ -ONO) և նիտրատային Mn(Por) ( $\eta^1$ -ONO<sub>2</sub>) կոմպլեքսներ: Նույն ռեակցիոն շերտերում թույլ  $\sigma$ -դոնորային լիգանդների՝ տետրահիդրոֆուրանի (THF) կամ դիմեթիլսուլֆի (DMS) առկայության դեպքում, իբրև ռեակցիայի վերջնանյութ, հիմնականում ստացվում է նիտրատային կոմպլեքս՝ Mn(Por)( $\eta^1$ -ONO<sub>2</sub>) (դեկ.՝ ք.գ.թ. Գ.Մարտիրոսյան):

Ցույց է տրվել, որ ՄՄՌ սպեկտրոսկոպիան հարմար մեթոդ է իոնային հեղուկների (ԻՀ) ջրային լուծույթների հատկություններն ուսումնասիրելու համար: Որպես բնութագրիչներ կարող են օգտագործվել կատիոնների և անիոնների միջուկների սպինային-սպինային փոխազդեցությունների հաստատունները և քիմիական շեղումները: Միջավայրի վիճակի այս պարամետրերը նույնպես արդյունավետ և տեղեկատվական են այդ միջավայրերում տաուտոմերային գործընթացների ուսումնասիրության ժամանակ: Պարզվել է, որ ԻՀ-դեյտերացված ջուր համակարգերում տեղի է ունենում այդ համակարգերում լուծված կետոնային միացություններում պրոտոն-դեյտերիումի փոխանակման ռեակցիա: Այդ ռեակցիան կարող է օգտագործվել կարբոնիլային խումբ պարունակող միացությունների ընտրողական դեյտերացման համար: Որոշ ԻՀ-ների ջրային լուծույթներում նկատվում են թույլ կողմնորոշման երևույթներ, ինչը վկայում է այդ համակարգերում ՄՄՌ սպեկտրոմետրի մագնիսական դաշտում կողմնորոշվող միկրո-կազմավորումների (միցելներ, բիցելներ, լամելաներ) առկայության մասին (դեկ.՝ ք.գ.թ. Ս.Մամյան):

Ցույց է տրվել, որ ՄՄՌ սպեկտրոսկոպիան հարմար մեթոդ է ամինաթթուների իոնային վիճակի ուսումնասիրության համար, ընդ որում ամինաթթուների իոնային վիճակի վերահսկման համար կարող են օգտագործվել և՛ քիմիական շեղումները, և՛ սպին-սպինային փոխազդեցությունների հաստատունները: Հիմնավորվել է, որ չեզոք ամինաթթուների ՄՄՌ պարամետրերի արժեքները կարելի է գնահատել՝ օգտագործելով այդ պարամետրերի չափված արժեքները կատիոնային, անիոնային և ցվիտերիոնային ձևերի համար: Բացահայտվել է, որ N-ծայրի, C-ծայրի և շղթայի միջի ամինաթթուների մնացորդների ՄՄՌ պարամետրերը տարբերվում են, ինչը թույլ է տալիս որոշել ամինաթթվի մնացորդի դիրքը պեպտիդային շղթայում: Մշակվել է ՄՄՌ սպեկտրոսկոպիկ մեթոդ ամինաթթուների ներքին էլեկտրական դաշտերի արժեքները գնահատելու համար (դեկ.՝ ք.գ.թ. Ա.Շահիսաթունի):

## Հրապարակումներ

### *Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր*

1. Сборник “Синтезы гетероциклических соединений”, вып., 19, Ер., 2020, 147 с.
2. Isakhanyan A., Harutynyan A., Various synthesis procedures for quinoline derivatives. In the synthesis of biologically active compounds. Lambert Academic Publishing, 2020, 43 p.

### *Հոդվածներ, զեկուումներ*

3. Арутюнян А.А., Паносян Г.А., Сафарян М.С., Арутюнян Г.К., Гукасян Г.Т., Данагулян Г.Г., Анил-синтез в конструировании пушпульных систем: синтез замещенных 2- и 4-(4-арилстирилфенил) дифенилпиримидинов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 2, 2020, с. 269-276.
4. Агекян А.А., Мкрян Г.Г., Паносян Г.А., Сафарян А.С., Аракелян А.Г., Степанян Г.М., Синтез и анти-бактериальная активность новых 4-метоксифенилтетрагидропиран замещенных 1,3,4-оксадиазолов, СПб., ЖОрХ, т. 56, вып., 2, 2020, с. 283-289.
5. Акопян Р.М., Атнарян О.С., Меликян Г.С., Айоцян С.С., Синтез ряда замещенных 4-(тиофен-2-ил)никотинонитрилов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 2, 2020, с. 323-327.

6. Акопян Н.З., Овасян З.А., Овакимян С.С., Мелконян А.Г., Пагутян Н.А., Паносян Г.А., Геворгян Г.А., Синтез и антиоксидантная активность N-аминометильных производных противосудорожных препаратов этосуксимида и пуфемиды, СПб., ЖОХ, т. 90, вып. 3, 2020, с. 403-408.
7. Авакян А.С., Вартанян С.О., Саргсян А.Б., Агемян А.А., Паносян Г.А., Пароникян Р.В., Степанян Г.М., Мурадян Р.Е., Синтез и антибактериальная активность новых производных оксадиазолилбензодиоксана. СПб., ЖОрХ, т. 56, вып. 3, 2020, с. 373-378.
8. Асратян А.Г., Сукоян А.А., Болян Л.А., Акобян Р.М., Тамазян Р.А., Айвазян А.Г., Данагулян Г.Г., Аттарян О.С. Исследование комплексообразования золота (III) с 1-винилимидазолом, Ер., "Хим.журн. Армении", т. 73, N 1, 2020, с. 37-43.
9. Агемян А.А., Мкрян Г.Г., Паносян Г.А., Буниatian Ж.М., Мурадян Р.Е., Синтез и антиоксидантная активность замещенных 2-амино-3-карбэтокси-6-фенил-6-циано-4,5,6,7-тетрагидробензо[b]тиофенов и 3-амино-4-оксо-7-фенил-3,4,5,6,7,8-гекса-гидробензо[4,5]-тиено[2,3-d]пиримидин-7-карбонитрилов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 3, 2020, с. 435-441.
10. Арутюнян А.А., Израелян С.Г., Паносян Г.А., Овсепян Т.Р., Однореакторные трехкомпонентные конденсации 2,6-диаминопиримидин-4-(3H)-она, ароматических альдегидов и нафтолов: синтез изомерных бензохромено[2,3-d]пиримидинов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 7, 2020, с. 1101-1108.
11. Арутюнян А. А., Израелян С. Г., Паносян Г. А., Сафарян М. С., Диланян С. В., Химические превращения 4-(4-аминофенил)-2,6-дифенилпиримидина, СПб., ЖОрХ, т. 56, вып. 9, 2020. с. 1423-1430.
12. Аракелова Э.Р., Мирзоян А.А., Григорян С.Л., Хачатрян А.М., Мирзоян А.Б., Ераносян М.А., Гогинян В.Б., Григорян С.Г., Степанян Р.М., Мурадян Р.Е., Разработка способа получения цинкоксидных композиций антибактериального препарата цефтриаксон. Ер., Вестник НПУА. Металлургия, Материаловедение, Недропользование, N 1, 2020, с. 52-61.
13. Асратян А.Г., Багдасарян Г.А., Данагулян Г.Г., Аттарян О.С., Изучение реакции морфолина и пиперидина с дихлоркарбеном, генерируемой в водно-щелочной среде в системе МФК (NMMO), Ер., "Хим. журн. Армении", Ер., т. 73, N 2-3, 2020, с. 274-279.
14. Аветисян К.С., Галстян Л.Х., Тамазян Р.А., Айвазян А.Г., Рентгеноструктурное исследование строения продукта взаимодействия функционально замещенных 2(5H)-фуранилидентииокарбамидов с этиловым эфиром хлоруксусной кислоты, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 2-3, 2020, с. 251-254.
15. Арутюнян А.А., Паносян Г.А., Данагулян Г.Г., Новые пиримидины с протяженными цепями π-сопряжения, СПб., ЖОрХ, т. 56, вып. 11, 2020, с. 1748-1754.
16. Айвазян А.С., Синтез новых производных 3-алил-спиро[бензо[h]хиназолин-5,1'-циклогептана], Ер., "Хим.журн. Армении", т. 73, N 2-3, 2020, с. 367-380.
17. Бадалян К.С., Сукоян А.А. Багдасарян Г.А., Асратян А.Г., Бичахчян Л.А., Данагулян Г.Г., Аттарян О.С., Алкилирование вторичных аминов (морфолина, пиперидина, пирролидина) в водно-щелочной среде в условиях МФК и в системе NMMO/H<sub>2</sub>O, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 2-3, 2020, с. 223-233.
18. Вартанян С.О., Авакян А.С., Агемян А.А., Саргсян А.Б., Арутюнян С.А., Гаспарян Г.В., Синтез и некоторые превращения 5-(1,4-бензодиоксан-2-ил)-4-фенил-4H-1,2,4-триазол-3-тиола, СПб., ЖОрХ, т. 56, вып. 3, 2020, с. 430-434.
19. Гюльназарян А.Х., Саргсян Г.Т., Аветикян М.Н., Перегруппировка стивенса аммониевых солей, содержащих две бут-2-инильные группы, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 1, 2020, с. 69-73.
20. Григорян Н.П., Маркосян А.И., Григорян А.С., Пароникян Р.Г., Синтез 3-меркапто-3-метилаллил-7,10-диметил-3H-спиро[бензо[h]хиназолин-5,1'-циклогексан]-4(6H)-она и его некоторые превращения, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 1, 2020, с. 69-74.
21. Дабаева В.В., Багдасарян М. Р., Пароникян Е.Г., Дашян Ш.Ш., Пароникян Р.Г., Назарян И.М., Акопян А.Г., Синтез и нейротропная активность новых конденсированных производных циклопентано-пиридо [3',2':4,5]тиено[3,2-d]пиримидина, М., "Хим.фарм.журн.", т. 54, N 7, 2020, с. 27-32.
22. Диланян С.В., Овсепян Т.Р., Нерсесян Л.Э., Агаронян А.С., Даниелян И.С., Минасян Н.С., Арутюнян А.А., Новые бис-4h-1,2,4-триазолы и их изучение *in vitro* в качестве ингибиторов метилирования днк, СПб., ЖОХ, т. 90, вып. 5, 2020, с. 681-689.
23. Данагулян Г.Г., Бояхчян А.П., Туманян А.К., Данагулян А.Г. Аракелян М.Р., Метилирование 1,2,4-триазоло[1,5-a]пиримидинов и методология определения региоселективности реакции по спектрам NOESY ЯМР <sup>1</sup>H-спектроскопии, Ер., "Хим.журн. Армении", т. 73, N 4, 2020, с. 349-358.
24. Исаханян А.У., Арутюнян А.А., Арутюнян Н.С., Новые производные хинолинкарбоновых кислот в синтезе биологически активных веществ, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 1, 2020, с. 44-60.

25. Исаханян А.У., Степанян Г.М., Пароникян Р.В., Шахатуни А.А., Синтез и изучение антибактериальной активности новых гидрохлоридов 2-диалкиламино(хлор)алкил-4-[2-(4-замещенных фенил)хинолил]карбонилатов, Ер., "Хим.журн. Армении", т. 73, N 4, 2020, с. 359-366.
26. Исаханян А.У., Геворгян Г.А., Степанян Г.М., Аракелян А.Г., Сафарян А.С., Шахатуни А.А., Синтез новых производных 2-R-6R'-4-хинолинкарбоновых кислот из ряда гетарил хинолинов, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 2-3, 2020, с. 234 -243.
27. Ирадян М.А., Ирадян Н.С., Сумбатьян А.С., Изыскание новых противоопухолевых соединений на базе фурфурильных и 4-гидрокси-3-нитробензильных производных 4-аллил-5-[4-(4'-R-фенил) имидазол-1-илметил]-4Н-1,2,4-триазол-3-тиолов, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 2-3, 2020, с. 262 -273.
28. Кочаров С.Л., Паносян Г.А., Джагацпаян И.А., Назарян Т.М., Акопян А.Г., Синтез и противосудорожная активность некоторых производных циклогексанона – продуктов конденсации Кнёвенагеля, М., "Хим.фарм.журн.", т. 54, N 9, 2020, с. 15-21.
29. Кочаров С.Л., Паносян Г.А., Чучвар С.Е., Лушчки Я., Физико-химические характеристики новых производных пирролидин-2,5-дионов и сравнительная оценка их противосудорожных свойств, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 4, 2020, с. 401-411.
30. Казарян С.А., Пароникян Р.Г., Григорян А.С., Григорян М.С., Выявление корреляции между холиновым остатком и литиевым катионом у некоторых аминокислот в случае их противосудорожной и антидепрессантной активности, Ер., ДНАН РА, т. 120, N 1, 2020, с.67-73.
31. Казарян С.А., Григорян К.П., Некоторые N-замещенные производные – литиевые соли β-аланина, обладающие радиопротекторной активностью, Ер. "Вестник мед. ин-т им. Г.Меграбяна, т.9, 2020, с.157-160.
32. Маркосян А.И., Айвазян А.С., Габриелян С.А., Мамян С.С., Арсенян Ф.Г., Мурадян Р.Е., Авакимян Дж.А., Синтез и биологическая активность 3-замещенных 1Н-спиро[бензо [h]хиназолин-5,1-циклогептан]-2,4(3Н,6Н)-дионон, М., "Хим.-фарм. журн", т. 54, N 5, 2020, с.21-25.
33. Овакимян М.Ж., Гаспарян Г.Ц., Погосян А.С., Бичахчян А.С., Дердзян Л.В., Реакции электрофильного и нуклеофильного присоединения к α,β-непредельным дифенил-фосфорильным соединениям, СПб., ЖОрХ, т. 56, вып. 1, 2020, с. 112-117.
34. Оганесян А.А., Макичян А.Т., Топузян В.О., Оганнесян Н.А., Простой и высокоэффективный синтез алкиловых эфиров аминокислот, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 4, 2020, с. 381-390.
35. Пароникян Е.Г., Дашян Ш.Ш., Степанян Г.М., Синтез и биологическая активность частично гидрогенизированных производных 1-аминопиримидо[4,5-с]изохино-линов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 11, 2020, с. 1761-1767.
36. Пароникян Р.Г., Противосудорожная и психотропная активность некоторых новых гетероциклических соединений, Ер., ДНАН РА, т. 120, N 1, 2020, с. 60-66.
37. Пароникян Е.Г., Дашян Ш.Ш., Мамян С.С., Синтез и тион-тиольная таутомерия 5-тиоксопирано[3,4-С][1,2,4]триазоло[4,3-А]пиридинов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 8, 2020, с. 1194-1202.
38. Пароникян Е.Г., Арутюнян А.С., Пароникян Р.Г., Синтез новых производных тиено[2,3-Ь]пиридинов на основе конденсированных тиофенов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 3, 2020, с. 414-421.
39. Погосян С.А., Погосян М.В., Арутюнян А.А., Синтез новых спиро[хромен-4,3'-индо-линов] и спиро(индолин-3,4'-пирано[3,2-Ь]хинолинов), СПб., ЖОрХ, т. 56, вып. 2, 2020, с. 204-209.
40. Сиракян С.Н., Казарян С.Г., Акопян Э.К., Овакимян А.А., Синтез новых производных 1-пиразолил-2,7-нафтиридинов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 5, 2020, с. 797-801.
41. Саргсян М.С., Авагян К.А., Саргсян А.А., Бадасян А.Э., Хачатрян А.Х., Манукян А.Г., Айвазян А.Г., Синтез алкил 1-арил-6-амино-2-оксо-5-циано-1,2-дигидро-пиридин-3-карб-оксилата, Ер., "Хим. журн. Армении", т. 73, N 1, 2020, с. 61-68.
42. Саргсян М.С., Авагян К.А., Саргсян А.А., Бадасян А.Э., Хачатрян А.Х., Манукян А.Г., Паносян Г.А., Айвазян А.Г., Однореакторный трёхкомпонентный метод синтеза высокофункционализированных 1,2,3,4-тетрагидропиридинов, Ер., "Хим. жуурн. Армении", т.73, N 4, 2020, с. 391-400.
43. Сиракян С.Н., Казарян С.Г., Акопян Э.К., Овакимян А.А., Синтез и превращения оксоамидов алицикло- и гетероцикло[с]пиридинов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 10, 2020, с. 1630-1635.
44. Чухаджян Э.О., Айрапетян Л.В., Мкртчян А.С., Паносян Г.А., Чухаджян Э.О., Айрапетян Л.В., Мкртчян А.С., Паносян Г.А., Синтез смешанных вторичных и третичных аминов, СПб., ЖОрХ, т. 56, вып. 2, 2020, с. 319-322.

45. Чухаджян Э.О., Айрапетян Л.В., Шахатуни К.Г., Чухаджян Э.О., Синтез 4-бром-1,1':4',1''-терфенила и 4-метил-1,1':4',1''-терфенила, СПб., ЖОрХ, т. 56, вып. 10, 2020, с. 1564-1571.
46. Gasparyan S., Martirosyan A., Alexanyan M., Harutyunyan G., Chilingaryan G., Schinazi R., Design, anti-human immunodeficiency activity and molecular docking studies of synthesized 2-aryl- and 2-pyrimidinyl pyrrolidines, Mol Divers, 2020. <https://doi.org/10.1007/s11030-020-10095-1>
47. Hovhannisyan A., Grigoryan G., Nadaryan A., Grigoryan N., On Problems of Synthesis of Mono-dispersed Latexes in the Static Heterogeneous Monomer-Water System, Evolution in Polymer Technology Journal, Review Article. 2020, v. 3, pp. 27-29.
48. Markosyan A., Gabrielyan S., Mamyan S., Shirinyan V., Arsenyan F., Avakimyan J., Stepanyan H., Synthesis and biological activity of (E)-2-styryl-3H-spyro- [benzo(h)quanzoline-5,1-cycloheptane]-4(6H)ones. NAS RA Electronic journal of Natural Sciences, N 1(34), 2020, pp. 28-33.
49. Markosyan A., Ayvazyan A., Gabrielyan S., Makaryan G., Mamyan S., Synthesis and transformations of 3-allyl-2-thioxo-2,3-dihydro-1H-spiro [benzo[h]-quinazoline-5,1'-cycloheptane]-4(6H)-one, NAS RA Electronic journal of Natural Sciences, 2020, v. 34, issue 1, pp. 22-27.
50. Nersesyan A., Muradyan R., Kundi M., Fenech M., Bolognesi C., Knasmueller S., Smoking causes induction of micronuclei and other nuclear anomalies in cervical cells, International Journal of Hygiene and Environmental Health, 226, 2020, 113492.
51. Paronikyan E., Dashyan Sh., Mamyan S., Synthesis of pyrano[3,4-c]thieno[3,2-e] [1,2,4]triazolo[4,3-a]pyridines, representatives of a new fused heterocyclic system. Mendeleev Commun., 2020, 30, pp. 183-184. Doi: 10.1016/j.mencom.2020.03.017.
52. Shahkhatuni A., Shahkhatuni A., Mamyan S., Ananikov V., Harutyunyan A., Proton Deuterium Exchange of Acetone Catalyzed in Imidazolium-based Ionic Liquids - D<sub>2</sub>O Mixtures. RSC Advances, 2020, 10, pp. 32485-32489. DOI:10.1039/D0RA04206D
53. Shahkhatuni A., Shahkhatuni A., Mamyan S., Ananikov V., Harutyunyan A., NMR Parameters of Imidazolium Ionic Liquids as Indicators of Their State and Properties in Aqueous Solutions, Journal of Solution Chemistry, 2020, v. 49, pp. 11-12. DOI: 10.1007/s10953-020-01044-5
54. Sirakanyan S., Kartsev V., Geronikaki A., Spinelli D., Petrou A., Hakobyan E., Glamoclija J., Ivanov M., Sokovic M., Hovakimyan A., Synthesis and evaluation of antimicrobial activity and molecular docking of new N-1,3-thiazol-2-ylacetamides of condensed pyrido[3',2':4,5]furo(thieno)[3,2-d]pyrimidines. Current Topics in Medicinal Chemistry, v. 20, N 24, 2020, pp. 2192-2209.
55. Tokmajyan G., Karapetyan L., Paronikyan R., Stepanyan H., Synthesis and antibacterial activity of New derivatives of furans containing an oxothiazolidinylidene ring. Yerevan State University. Chemistry and biology, v. 54, N 1, 2020, pp. 12-16.  
Հոդվածները հրապարակվել են “Синтезы гетероциклических соединений” ժողովածուում, N19, Ե., 2020, 147 էջ:
56. Арустамян Ж.С., Маркарян Р.Э., 1-(1,4-Бензодиоксан-6-ил)циклопентан-1-карбоновая кислота, с. 49-50.
57. Арутюнян Н.С., Геворгян Г.А., 3-Бензо[1,3]диоксол-5-ил-3-фенилпропионитрил, с. 50-51.
58. Арутюнян Н.С., Геворгян Г.А., 3-Бензо[1,3]диоксол-5-ил-3-фенилпропиламин, с. 53-54.
59. Арутюнян А.А., Сафарян М.С. 5,5'-[(2,3-Диметоксифенил)метандиил]бис(6-амино-2-метилпиримидин-4(3H)-он), с. 55-56.
60. Агабабян А.Г., Геворгян Г.А., Бисамид (3-циано-4,5,6,7-тетрагидро-бензо[b]тиофен-2-ил)пентандиовой кислоты, с. 57-58.
61. Арутюнян А.Д., Геворкян К.А., Галстян М.В., 3,7-Бис-[(2-хлор-6-метоксихинолин-3-ил)метил]-1,5-диметил-3,7-дизабицикло[3.3.1]нонан-9-он, с. 65-66.
62. Атарян О.С., 1-(Бутадиен-1,3-ил)-1,2,4-триазол, с. 67-68.
63. Арутюнян А.А., Гукасян Г.Т., Данагулян Г.Г., 2-Гидрокси-3[(Е)-2-(4-метил)-6-оксо-5-пентил-1,6-дигидро-2-пиримидинил]-1-этенил-4Н-пиридо[1,2-а]пиримидин-4-он, с. 71-72.
64. Арустамян Ж.С., Маркарян Р.Э., 1-(1,4-Бензодиоксан-6-ил)циклопентан-1-карбоновая кислота, с. 49-50.
65. Арутюнян Н.С., Геворгян Г.А., 3-Бензо[1,3]диоксол-5-ил-3-фенилпропионитрил, с. 50-51.
66. Арутюнян А.А., Израелян С.Г., 9-Амино-12-(4-бромфенил)-10,12-дигидро-11H-бензо- [5,6]хромено- [2,3-d]пиримидин-11-он, с. 32.
67. Арутюнян А.А., Овсепян Т.Р., 8,8-Триметил-5-(4-нитрофенил)-5,8,9,10-тетрагидро-пиримидо[4,5-b]хинолин-4,6(1H,7H)-дион, с. 42-43.
68. Арутюнян А.А., Диланян С.В., 5,5'-(Октан-1,8-диил)бис(4-аллил-4Н-1,2,4-триазол-3-тиол), с. 118-119.

69. Арутюнян А.А., Гукасян Г.Т., Данагулян Г.Г., 2-[(Е)-2-(2-фурил)-1-этинил]-4Н-пиридо[1,2-а]пиримидин-4-он, с.124-125.
70. Аттарян О.С., Пиразол-1-илуксусная кислота, с.140-141.
71. Аттарян О.С., Этиловый эфир пиразол-1-илуксусной кислоты, с.112-113.
72. Агекян А.А., Арустамян Ж.С., Гидрохлорид 6',7'-диметокси-п-метил-3'-н-спиро[цикло-пентан-1,4'-изохинолин]-1'-карбоксамид с. 79-81.
73. Арутюнян Н.С., Геворгян Г.А., Этиловый эфир 3-бензо-[1,3]диоксол-5-ил-2-циано-3-фенилпропионовой кислоты, с.134-135.
74. Вартанян С.О., Авакян А.С., 5-(1,4-Бензодиоксан-2-ил)-4-фенил-4Н-1,2,4-триазол-3-тиол, с. 47-48.
75. Гюльназарян А.Х., Саакян Т.А., Мурадян Г.М., Петросян А.М., 2,3-Бис-(дибромметил)-5-азаспиро[4,5]дец-2-ен-5-иум бромид, с. 59-60.
76. Гюльназарян А.Х., Саакян Т.А., Саргсян, Г.Т., Еремян А.Б., 3,4-Бис-(дибромметил)-1,1-диметил-2,5-дигидро-1н-пиррол-1-иум бромид кристаллогидрат, с. 61-62.
77. Гюльназарян А.Х., Саакян Т.А., Аветикян М.Н., Саакян А.А., 3,4-Бис-(дибромметил)-1,1-диэтил-2,5-дигидро-1н-пиррол-1-иум бромид, с. 63-64.
78. Григорян Н.П., 3-Аллил-2-гидразинил-7,10-диметил-3Н-спиро[бензо[h]хиназолин-5,1'-циклопентан]-4(6H)-он, с. 34-35.
79. Геворгян Г.А., Акопян Н.З., Маркарян Т.А. 7,7'-[Пентан-1,5-диилбис(окси-4,1-фенилен)]бис(1,3-диметил-5,6-дигидропиридо-[2,3-d]пиримидин-2,4(1Н, 3Н)-дион), с.110-111.
80. Гаспарян С.П., Алексанян М.В., Арутюнян Г.К., 2-(5-Метилфуран-2-ил)-5-оксо-1-п-толилпирролидин-2-карбонитри, с.104-105.
81. Григорян Н.П., Погосян С.А., Этиловый эфир 7,7-диметил-2-оксо-4-циано-1,8-диокса-спиро[4,5]декан-3-карбоновой кислоты, с.136-137.
82. Дабаяева В. В., Багдасарян М. Р., 3-Амино-7,7-диметил-2-этоксикарбонил-5,8-дигидро-7Н-пирано[3,4-b]фуоро[2,3-b]пиридин, с. 40-41.
83. Маркосян А.И., 3-амино-5,5-диметил-5,6-дигидробензо[h]хиназолин-4(3Н)-ОН, с. 38-39.
84. Маркосян А.И., 1-Бензил-3-(фуран-2-илметил)-1Н-спиро[бензо[h]хиназолин-5,1'-цикло-гексан]-2,4(3Н,6Н)-дион, с. 44-46.
85. Маркосян А.И., 3-(2-Гидроксиэтил)-5-метил-5-этил-2-фенил-5,6-дигидро-бензо[h]хиназолин-4(3h)-он, с.75-76.
86. Маркосян А.И., Габриелян С.А., 3-Метил-1н-спиро[бензо[h]хиназолин-5,1'-цикло-гексан]-2,4(3Н,6Н) – дион, с.102-103.
87. Маркосян А. И., 1-Метил-3-оксо-1-фенил-2-оксаспиро[4,5]декан-4-карбо-нитрил, с.100-101.
88. Мартиросян А.О., Гаспарян С.П., Алексанян М.В., 6-Имино-1,3-диметил-5-(пирро-лидин-2-илиден) дигидропиримидин-2,4(1Н,3Н)-дион, с.93-94.
89. Ирадян М.А., Ирадян Н.С., 3-(4-Гидрокси-3-нитробензил)тио-5-(4'-метокси-фенил)-1Н-1,2,4-триазол, с.73-74.
90. Исаханян А.У., Геворгян Г.А., Гидрохлорид 2-диметиламино-1-метилэтил-2-(4-мет-оксифенил)хинолин-4-карбоксилата, с.77-78.
91. Исаханян А.У., Геворгян Г.А., Гидрохлорид 2-дипропиламинопропил-6-бром-2-(4-гидроксифенил)хинолин-4-карбоксилата, с.82-83.
92. Ирадян М.А., Ирадян Н.С., Метил-5-{4-аллил-5-[2-(4-метоксифенил) хинолин-4-ил]-4Н-1,2,4-триазол-3-илсульфанил-метил}-2-фуроат, с.97-99.
93. Ирадян М.А., Ирадян Н.С., 2-(4-Метокси-3-нитрофенил)-3-нитроимидазо[1,2-а]пиридин, с.108-109.
94. Исаханян А.У., Геворгян Г.А., 5-(2-Фенил-4-хинолил)-1,3,4-тиадиазол-2-ил-амин, с.120-121.
95. Исаханян А.У., Геворгян Г.А., 2-Фенилхинолин-4-карбоновая кислота, с.122-123.
96. Погосян С.А., Этиловый эфир 2-амино-1'-бензил-7,7-диметил-2',5'-диоксо-5,6,7,8-тетрагидроспиро[хромен-4,3'-индолин]-3-карбоновой кислоты, с.126-127.
97. Погосян С.А., Этиловый эфир 2-амино-5'-бром-7,7-диметил-2',5'-диоксо-5,6,7,8-тетра-гидроспиро[хромен-4,3'-индолин]-3-карбоновой кислоты, с.128-129.
98. Пароникян Е.Г., Мирзоян Г.В., Этиловый эфир 1-амино-8,8-диметил-5-морфолин-4-ил-8,9-дигидро-6h-пирано[4,3-d]тиено[2,3-b]пиридин-2-карбоновой кислоты, с.130-131.
99. Погосян С.А. Этиловый эфир 2'-амино-1-этил-7',7'-диметил-2,5'-диоксо-1'-фенил-5',6',7',8'-тетрагидроспиро[индолин-3,4'-хинолин]-3-карбоновой кислоты, с.132-133.

100. Овсебян Т.Р., Исраелян С.Г., 2-Амино-6-ацетил-5-(3',4'-метилен-диокси-фен-ил)-7-метил-5,8-дигидропиридо[2,3-*d*]пиримидин-4(3*H*)-он, с. 36-37.
101. Овсебян Т.Р., Диланян С.В., 5-(Пиридил-3)-2-(2-цианоэтил)-(2*H*)-4-циклогексил-1,2,4-триазол-3(4*H*)-тион, с.114-115.
102. Сиракян С.Н., Овакимян А.А., Акопян Э.К., 9-Изопропил-5-[(2-метоксиэтил)амино]-7,8,9,10-тетрагидро[1,2,4]триазоло-[5,1-*a*][2,7]нафтиридин-6-карбонитрил, с.91-92.
103. Сиракян С.Н., Овакимян А.А., Акопян Э.К., 3,3,5-Триметил-3,6,8,9-тетрагидро-пирано[4,3-*d*]-пирозоло[3,4-*b*]-пиридин-1-амин, с.116-117.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

## ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Տնօրեն՝ Է.գ.թ. Խ.Մելիքսեթյան  
 Փոխտնօրեն՝ Է.գ.թ. Լ.Սահակյան  
 Գիտքարտուղար՝ Է.գ.թ. Հ.Շահինյան  
 Էլեկտրոնային փոստ՝ igs@sci.am  
 Կայքէջ՝ www.geology.am

**Մասնագիտական խորհուրդ 054՝ «Երկրաբանություն»**  
 Նախագահ՝ ակ. Ռ.Զրբաշյան, գիտքարտուղար՝ Է.գ.թ. Լ.Սահակյան

### Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ

Կազմվել է Արագած ստրատոհրաբխի չորրորդական տուֆ-իզնիմերիտների և մոխրա-յին առաջացումների տեղաբաշխման երկրաբանական քարտեզ: Համալիր երկրաբանական,  $^{40}\text{Ar}/^{39}\text{Ar}$  թվագրման, պալեոմագնիսական, երկրաքիմիական հետազոտությունների հիման վրա անջատվել է Արագածի պիրոկլաստիկ իզնիմերիտ առաջացնող ժայթքումների վեց իրադարձություն՝ խմբավորված երկու հասակային հորիզոններում, համապատասխանաբար 0.97-0.93 Ma և 0.75-0.64 Ma ժամանակային տիրույթում: Պալեոմագնիսական հետազոտությունները թույլ են տվել որոշել պիրոկլաստիկ հոսքերի ուղղությունները և ժայթքման աղբյուրը, այն է՝ Արագածի խառնարանը՝ հերքելով նախկինում եղած իզնիմերիտների առաջացման ճեղքային ժայթքումների գաղափարը (դեկ.՝ Է.գ.թ. Խ.Մելիքսեթյան):

Իրականացվել է Իջևանի Սևքար լյու-պալեոբնահող կտրվածքի նստվածքներում գաստրոպոդների որոշում և իզոտոպային անալիզ ( $\delta^{18}\text{O}$ ,  $\delta^{13}\text{C}$ ): Ուսումնասիրման միջակայքը (MIS-10 - MIS-2) ընդգրկել է երեք սառցապատման-մինչսառցապատման ցիկլեր: Ցամաքային գաստրոպոդներից *Kalitinaia crenimargo* (200 ka) վրա իրականացված  $\delta^{18}\text{O}$  իզոտոպային տվյալներն են -0.5 և -4.1‰, ինչը մատնանշում է չոր սառցադաշտային և ավելի խոնավ միջսառցադաշտային փուլեր:  $\delta^{13}\text{C}$  իզոտոպային տվյալները տատանվում են -3.6 և 7.5‰ և ցույց չեն տալիս կայուն օրինաչափություն կտրվածքի լիթոֆացիալ տեսակների, գաստրոպոդների տեսակների միջև: Մինչսառցադաշտային նստվածքները պարունակում են գաստրոպոդների տեսակներ, որոնք ասոցացվում են բարձր խոտային անտառատափաստանային բիոմներին՝ մատնանշելով խոնավության բարձրացում՝ ի տարբերություն սառցապատման ժամանակաշրջանի նստվածքներում հանդիպող տեսակների: Վերջիններն ասոցացվում են կիսատափաստանային թփուտային և կարճախոտ միջավայրի կիսաչոր, չոր պայմանների հետ (դեկ.՝ Է.գ.թ. Լ.Սահակյան):

Կատարվել է Հայաստանի տարածքի առանձին տերեյներում մերկացող տարբեր հասակի գրանիտոիդային համալիրների և նրանց հետ զուգորդվող տարբեր տիպի հանքայ-

նացման կապակցվածության հարցի վերլուծություն: Գոյություն ունեցող երկրաբանական, միներալաբանական, երկրաքիմիական, այդ թվում՝ իզոտոպային տվյալները թույլ են տվել ավելի հստակ բնորոշել նրանց կապակցվածության առանձնահատկությունները (ղեկ.՝ թղթ.անդ. Ռ.Մելքոնյան):

Ամփոփվել են արևելաանատոլիական և Փոքր Կովկասյան (ներառյալ ՀՀ Ալավերդու շրջանը) մեզո-կայնոզոյան սուբդուկցիոն ծագման առաջացումների երկրաքիմիական և երկրաժամանակագրական հետազոտությունների արդյունքները (հայ-վրաց-շվեյցարական համագործակցությամբ), որոնք մեկնաբանվել են Արևելյան սևծովյան ավազանի բացման համատեքստում: Մանրամասնվել են Սևանի օֆիոլիտային համալիրի Ջիլի տեղամասում (Դալի գետահովիտ) առկա հրաբխամագմատիկ առաջացումների ձևավորման և տեղադրման պայմանները: Պարզվել է, որ մագմային համալիրը բաղկացած է ինչպես բուն օվկիանոսային, այնպես էլ կղզադեղային ծագման միավորներից՝ բարդ փոխհարաբերությամբ: Վուլկանիտների հասակային սահմանը զատվել է պլագիոգրանիտների նոր U-Pb հասակի (~ 172 Ma) հիման վրա: Լրացուցիչ մանրամասներ են ստացվել Սոմխետ-Ղարաբաղի տեկտոնական գոտու Ալավերդու հատվածի յուրայի հասակի մագմատիկ առաջացումների պետրոլոգիական հիմնահարցերի շուրջ (ղեկ.՝ ե.գ.թ. Ղ.Գալոյան):

Շարունակվել են նոր կիրառական էլեկտրահետախուզական եղանակի մշակման աշխատանքները հանքային երկրաբանական օբյեկտների որոնողահետախուզական ուսումնասիրությունների համար: Տարբեր երկրաբանաերկրաֆիզիկական խնդիրներն օպտիմալ լուծելու նպատակով իրականացվել են տեխնածին էլեկտրական դաշտի ռեժիմային դաշտային դիտարկումներ (ղեկ.՝ ֆ.-մ.գ.դ. Ա.Մաթևոսյան):

Շրջակա միջավայրի վրա լեռնահանքային արդյունաբերության ազդեցության գնահատման ծրագրի շրջանակներում կատարված հիդրոքիմիական մոնիթորինգային հետազոտություններն Ալավերդու հանքային դաշտի սահմաններում ցույց են տվել, որ Ալավերդու կոմբինատի աշխատանքների դադարեցումը բերել է մասնավորապես Քոբեր գյուղից մինչև սահման տեղամասում, Դեբեդ գետի ջրի որակի բարելավման և կազմի հիդրոքիմիական բնութագրիչների քանակությունները հիմնականում գտնվում են գործող նորմերի սահմաններում:

Հրաբխագիտության և հիդրոերկրաքիմիայի լաբորատորիաների համատեղ հետազոտությունները ցույց են տվել, որ Արագած հրաբխի արևելյան լանջերի մակերևութային որոշ հոսքեր, որոնք սկիզբ են առնում լեռան գագաթամերձ մասերում, ունեն բարձր թթվայնություն և հանքավայրային ջրերին բնորոշ հիդրոքիմիական բնութագրեր, ինչը կարող է հետևանք լինել հանքային երևակման առկայության (ղեկ.՝ ե.գ.թ. Հ.Շահինյան):

Կատարվել է Երկրի մասին գիտությունների վիրտուալ միջավայրում Երկրի արբանյակային դիտարկման (Earth Observation) միջոցով ստացված մեծածավալ տվյալների (Big Data) կիրառմամբ ՀՀ ջրային ռեսուրսների քանակաորակական ցուցանիշների և փոփոխությունների դինամիկայի գնահատում ու կանխատեսում:

Իրականացվել է ՀՀ տարածքում և առանձին ջրհավաք ավազաններում վերջին 20 տարիների ընթացքում փաստացի և պոտենցիալ էվապոտրանսպիրացիայի արժեքների փոփոխությունների գնահատում MODIS սպեկտրառադիոմետրի MOD16A3 պրոդուկտի միջոցով: Այդ ցուցանիշների հնարավոր փոփոխությունները կանխատեսվել են նաև 2040, 2070, 2100թթ. համար՝ օգտագործելով կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խմբի (IPCC) RCP6.0 և RCP8.5 սցենարները (ղեկ.՝ տ.գ.թ. Ա.Առաքելյան):

Landsat 8 արբանյակի 30մ լուծաչափով նկարներից Սևանա լճի ջրհավաք ավազանի համար հաշվարկվել է ձյան նորմալացված տարբերությամբ ինդեքսը (Normalised Difference Snow Index (NDSI)), որի միջոցով գնահատվել են ավազանում ձյան պաշարի փոփոխությունները վերջին 5 տարիների ընթացքում (ղեկ.՝ ե.-հ.գ.թ. Ա.Ավագյան):



Տեղական, տարածաշրջանային եղած փաստացի հնէաբանական (բրածո կաթնասուններ, օստրակոդներ, փափկամարմիններ և պալինոլոգիական նյութեր) տվյալների մանրամասն և համալիր վերլուծության հիման վրա առաջին անգամ մեծ ճշգրտությամբ հաջողվել է թվագրել Հյուսիսային Հայաստանի Տանձուտի (Լոռու մարզ) վերին նեոպլեյստոգեն բրդոտ մամոնտի բրածո մնացորդներով բնութագրված նստվածքների հասակը 33.2-33 հազար տարի միջակայքում և համահարաբերակցել այդ ժամանակահատվածը դենեկամպ «տաք» միջստադիայի միջին մասով, որն իր հերթին համապատասխանում է Կասպից ծովի վաղ խվալինյան տրանսգրեսիայի առավելագույն փուլին (դեկ.՝ ե.գ.թ. Հ.Մելիք-Ադամյան):

Մակրոսեյսմիկ հետազոտություններով, մասնավորապես՝ պատմական վկայությունների վերլուծությամբ բացահայտվել է, որ 893թ. Դվինի ավերիչ երկրաշարժների ժամանակ, բացի Դվին քաղաքից միակ տեղը, ուր երկրաշարժի ավերիչ ազդեցության մասին ստույգ տեղեկություններ կան, Վայոց Ձորում գտնվող Խոտակերած վանքի շրջակայքն է (դեկ.՝ ե.գ.թ. Ռ.Հարությունյան):

Սևանա լճի ավազանի հյուսիս-արևելյան ափամերձ լեռնալանջերին կառուցվածքային վերլուծությամբ բացահայտվել են սեյսմիկ հարուցման պայմաններում փլուզում-սողանքային գործընթացների վտանգներ (դեկ.՝ ե.գ.դ. Ա.Ավագյան):

Փամբակ-Սևան-Սյունիք տեկտոնական խզվածքի հարավային սեգմենտում օդալուսանկարների և տիեզերական պատկերների վերլուծության ու դաշտային աշխատանքների արդյունքում ստացվել են նոր տվյալներ, որոնց հիման վրա նորովի վերագնահատվել են սեյսմածին խզվածքի երկրաչափական պարամետրերը, որոշվել ակտիվ տեղաշարժերի կինեմատիկան և ճշգրտվել խզումային գոտու կառուցվածքային տարրերի առնաձևահատկությունները: Ուսումնասիրման արդյունքում առաջին անգամ բացահայտվել և հիմնավորվել են հնում տեղի ունեցած պատմական երկրաշարժների հետքերը երկրի մակերևույթին, հաստատվել են տվյալ տարածքում բարձր արխեոսեյսմիկության դրսևորման վկայությունները (դեկ.՝ ե.գ.թ. Հ.Բաղդասարյան):

2019թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ տարածքի հյուսիսային մասում՝ Բավրա քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք, տեղի է ունեցել  $M=4.8$  մանգնիտուդով երկրաշարժ, որին հետևել են բազմաթիվ թույլ հետցնցումներ: ՀՀ ԱԻՆ ՍՊՏՕ և ԳԱԱ, ԵԳԻ մշտադիտարկման սեյսմիկ ցանցերի և էպիկենտրոնային գոտում հիմնական ցնցումից հետո տեղադրված 3 ժամանակավոր սեյսմիկ կայանների տվյալներով որոշվել են երկրաշարժի հիմնական պարամետրերը, հիմնական ցնցման և հետցնցումների ֆոկալ մեխանիզմները: Բավրայի երկրաշարժի հիմնական ցնցումը (սեպտեմբերի 10, 2019թ., 16:22:45.95) բնութագրվում է կողաշարժային (SS) տիպով: Հիմնական ցնցմանն անմիջապես հաջորդել է  $M3.9$  մանգնիտուդով հետցնցումը, այն ևս բնութագրվում է կողաշարժային (SS) տիպով:

Որոշվել է հետցնցումների զբաղեցրած մակերեսը, ինչպես նաև գնահատվել է հետցնցումների ժամանակային նվազման ընթացքի համապատասխանությունը Օմորիի օրենքին: Կիրառելով առավելագույն հավանական մեթոդը՝ կատարվել է հետցնցումների՝ ըստ ժամանակի մարման մոդելավորում (դեկ.՝ ե.գ.թ. Լ.Սարգսյան):

### **Թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

«ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ 18T-1E368» թեմայի շրջանակներում հրաբխագիտական, երկրաքիմիական և սեյսմիկ տոմոգրաֆիայի տվյալների հիման վրա ստեղծվել է Վարդենիսի բարձրավանդակի հրաբխայնության գեներացիայի մոդելը: Ինչպես երկրաբանական, այնպես էլ  $^{40}\text{Ar}/^{39}\text{Ar}$  թվագրման արդյունքներով Վարդենիսում և Սյունիքում 1.5 Ma-ից ավելի երիտասարդ ժայթքումները կապված են մոնոգեն հրաբխականության հետ, իսկ ուշ միոցենից մինչև վաղ պլեյստոգեն ժայթքումների գերակշիռ մասը կապված է եղել պոլիգեն,

մասնավորապես կալդերագոյացնող ժայթքումների հետ: Այս երևույթը բացատրվել է ժամանակի ընթացքում մագմայի առաջացման ծավալների նվազմամբ և տեկտոնական ընդարձակման աստիճանի ավելացմամբ:

«ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ՀՀՌՀ-2018» թեմայի շրջանակներում Հայաստանի խառնարանային լճերի տեղագնման հետազոտություններն ի հայտ չեն բերել հրաբխային կենտրոնների ժամանակակից ակտիվության ակնհայտ նշաններ, որոնք կարտահայտվեին ջրերի աղային կազմում:

Առաջին անգամ տրվել է Սևանի հատակին նախկինում հայտնաբերված գազային ցաների իզոտոպային բնութագիրը: Ցույց է տրվել, որ լճի տարբեր մասերում նրանք ներկայացված են տարբեր կազմի՝ մեթանային և ածխաթթվային գազերով: Ածխաթթվային ցաները, դատելով նրանցում կատարված  $\delta^{13}\text{C}$ -ի արժեքների որոշումներից, ածխաթթվային ջրերի բեռնաթափման մարզեր են (հարստացած հրաբխածին  $\text{CO}_2$ -ով), իսկ մեթանայինները բաղկացած են Սևանի հատակային նստվածքների հաստվածքում գեներացված միկրոբիալ մեթանից:

Մագմայածին թերմոստատիկները, որոնք կապված են չորրորդական հասակի հրաբխային կենտրոնների հետ, ի հայտ են գալիս ոչ միայն ջերմային հոսքի արժեքներում, այլև ֆլուիդոգեներացիայի ջերմաստիճաններում, որոնք գնահատվում են ըստ K-Mg, Li-Mg և  $\text{SiO}_2$ -գերթերմոմետրերի (ղեկ.՝ Ե.Գ.Պ. Խ.Մելիքսեյան):

Ուսումնասիրվել է Արցախի պալեոլիթյան Քարին Տակ քարանձավի երկրամիջավայրը, առաջադրվել է նեոգենի սկզբում անձավի սկզբնավորման գաղափարը և կառուցվածքային զարգացման մոդելը, բացահայտվել է անձավի էպիգեն, տեկտոնական վերահսկմամբ ծագումնաբանությունը, իսկ սպեկտրոսկոպիական հետազոտություններով՝ երկու սեյսմածին փլուզումներ: Քարին Տակ պալեոլիթյան քարանձավի ուշ պլեյստոցենի նստվածքներում առկա փոշեհատիկների ուսումնասիրությունը վկայում է տարածքում փշատերևավորների գերակշռմամբ անտառների գոյության մասին, որտեղ առկա են եղել նաև հացենու և կաղնու տեսակներ՝ մատնանշելով զով, բարեխառն կլիմայական պայմանների մասին: Վերջին գլոբալ սառցապատման մաքսիմումի սկզբում (29.000-14.000 cal BP) քարանձավի շրջակայքում կլիմայի խիստ փոփոխություններ տեղի չեն ունեցել և պայմանները բարենպաստ են եղել մարդու գործունեության համար: XRF տվյալների հիման վրա մեկնաբանվել են տերիգեն նյութի, օրգանական մնացորդների կամ կոնտամինացիայի տարբերությունները շերտերում (ղեկ.՝ Ե.Գ.Պ. Ա.Ավագյան):

«Ծաղկունյաց անտիկլինորիումի մինչքեմբրի, ուշ պալեոգոյի և ուշ յուրայի գրանիտոիդային մագմատիզմը (կենտրոնական-հյուսիսային Հայաստան)» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Ե.Գ.Թ. Ղ.Գալոյան) ամփոփվել են ստացված նոր U-Pb իզոտոպահասակային և երկրաքիմիական վերլուծության արդյունքները: Հիմնավորվել է հին գրանիտոիդային մագմատիզմի գենետիկ կապը համեմատաբար տևական և էպիգոդիկ Անդյան տիպի սուբդուկցիոն իրավիճակների հետ: Ստացված նյութերը համադրվել են ռեգիոնալ՝ Արևելյան Պոնտիդներ-Փոքր Կովկաս-Իրան օրոգեն գոտու երկրատեկտոնիկ էվոլյուցիային առնչվող տվյալների և ժամանակակից պատկերացումների հետ: Գրանիտոիդների ներկայությունը վկայում է Պրոտո-Պալեո- և Նեոթետիս ավազաններում հարավ ուղղված սուբդուկցիայի հնարավորությունը գոնդվանական Հարավ-հայկական միկրոսալի տակ ուշ մինչքեմբրի, ուշ պալեոգոյի և ուշ յուրայի ժամանակաշրջաններում:

49. Պետրոսյան Լ.Ս., Երվանդունի թագավորների թագադրման հնարավոր վայրի մասին, էջ 87-96:
50. Վարդանյան Բ.Վ., Զարիկյան Ն.Հ., Դավթյան Ռ.Հ., Մանուկյան Ս.Վ., Սարիբեկյան Մ.Գ., Լեռնակերտի կենդանաբանությունն ըստ 2019թ. պեղումների արդյունքների, էջ 58-73:  
Հոդվածները հրատարակվել են «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն» հոդվածների ժողովածուում, Ե., «Գիտություն» հրատ., 2020, 342 էջ:
51. Ալեքսանյան Կ.Վ., Բարսեղյան Ա.Գ., Արցախյան գործոնի դերը Հայաստանի Հանրապետության ներքաղաքական զարգացումներում (1992-1998), էջ 3-9:
52. Ակոպով Ա.Ա., Խոտորջուրը Հայոց Մեծ եղեռնի նախօրեին, 2020, էջ 10-17:
53. Այվազյան Գ.Ս., «Թեոդորոս Շիրակունու ձեռագրական ժառանգությունը», էջ 26-34:
54. Ավազյան Ի.Է., Ստալինյան բռնաճնշումները՝ ըստ «Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարի, էջ 192-199:
55. Բազեյան Կ.Ռ., XIX դարի վերջի-XX դարասկզբի հայկական պարբերականները Ալեքսանդրապոլի եպիսկոպոսական վիճակի մասին, էջ 200-208:
56. Բոյաջյան Ա.Գ., Հարավային Կովկասի բնակչության էթնիկական կազմի շարժընթացը XIXդ. վերջ-XXIդ. սկիզբ, էջ 34-42:
57. Հայրապետյան Ա.Ս., Գաղթականության վիճակն Ալեքսանդրապոլի գավառում 1919-1920թթ.: «Պոլիգոնի» ողիսականը, էջ 100-108:
58. Հարությունյան Հ.Հ., Հայ հոգևոր երգը միջնադարյան Շիրակում, էջ 240-245:
59. Հովհաննիսյան Ռ.Պ., Թովմասյան Հ.Վ., Սաղմոսաց գրքի մի քանի տարբերակները հայերեն թարգմանություններում, էջ 253-261:
60. Մատիկյան Հ.Հ., Մանկախաղաց տեքստերը Շիրակի տարածաշրջանում, էջ 271-280:
61. Մելքոնյան Վ.Գ., Տոները լենինականյան ընտանիքում՝ ըստ 1920-1940-ական թթ. պարբերական մամուլի նյութերի, էջ 287-293:
62. Պետրոսյան Լ.Ս., Երկվորյակների առասպելի հետքերը հայոց թագավորների մասին ավանդագրույցներում, էջ 160-168:
63. Պետրոսյան Ս.Գ., Հնագույն Շիրակի պաշտամունքի և քրմության մասին, էջ 168-177:
64. Մահակյան Կ.Ա., Նարեկը՝ որպես բժշկարան և հոգեթերապիայի միջոց, էջ 314-321:
65. Վարդյան Ե.Ռ., Ալեքսանդրապոլի ավանդական երաժշտության նմուշները Նիկողայոս Տիգրանյանի ստեղծագործության մեջ, էջ 321-331:  
Հոդվածները հրատարակվել են «Պատմության դասերը. 1920-2020թթ.: Հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» հոդվածների ժողովածուում, Գյումրի, 2020, 281 էջ:
66. Ալեքսանյան Կ.Վ., Ալեքսանդրապոլի գավառի պետական կրթական գործիչները 1918-1920 թթ., էջ 192-220:
67. Ավազյան Ի.Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանի հուշերում, էջ 259-280:
68. Բազեյան Կ.Ռ., 1918-1920թթ. թուրքական արշավանքները շիրակցիների բանավոր հուշերում, էջ 146-155:
69. Բոյաջյան Ա.Գ., Ժողովրդագրական գործընթացները Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում 1914-1930-ական թթ., էջ 236-259:
70. Մահակյան Կ.Ա., Հայ զինվորի բարոյահոգեբանական նկարագիրը արդի մարտահրավերների համատեքստում, էջ 220-236:
71. Айрапетян А.С., Акопов А.А., Продолжение геноцидной политики Турции в Александропольском уезде в 1918-1921гг., с. 62-85.

Պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն:

## «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր-տնօրեն՝ ք.գ.դ. Հ.Այվազյան

Էլեկտրոնային փոստ՝ [encyclop@sci.am](mailto:encyclop@sci.am)

Կայքէջ՝ [www.encyclopedia.am](http://www.encyclopedia.am)

Հրատարակչությունը 2020թ. տպագրել է «Հովհաննես Թումանյան. հանրագիտարանը», որտեղ ներկայացվել է Հ.Թումանյան բանաստեղծը, գրողը, հրապարակախոսը, քաղաքացին, ընտանիքի հայրը, հասարակական գործիչը՝ մարդկային և բանաստեղծական նկարագրի բնորոշ առանձնահատկություններով, գրողի գրեթե ամբողջ գրական ժառանգությունը՝ առանձին գործեր գրելու հանգամանքները, առաջին տպագրության տեղն ու ժամանակը, ժամանակակիցների արձագանքները: Թումանյանի հասարակական գործունեությունը ներկայացվել է մի քանի փուլերով՝ 1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումներ, «Դաշնակցության գործով» դատավարությունը 1912թ., 1-ին համաշխարհային պատերազմի, Հայաստանի առաջին հանրապետության և խորհրդային իշխանության տարիներ: Հանրագիտարանում ծավալուն անդրադարձ կա Թումանյանի կենսագրությանը, ազգագրությանը, բանահյուսությանը, մանկավարժությանը, Հայկական հարցին, Ղարաբաղի խնդրին, բնության, կյանքի և մահվան խնդիրներին, քրիստոնեությանը, Արևելքի փիլիսոփայությանն ու պոեզիային, աստվածաշնչյան մոտիվներին, հայ գրականությանը և բազմաթիվ այլ հարցերի մասին բանաստեղծի պատկերացումներին, որոնք ամբողջացնում են նրա կյանքի ու գրական աշխարհի նկարագիրը:

Անձնանուններ բաժնում ներկայացվել է Թումանյանի մերձավորների, ժամանակակիցների, թումանյանագետների, գրողների ու գրականագետների մի ամբողջ համաստեղություն, որոնց հետ շփվել, հարաբերվել է բանաստեղծը, ովքեր ուսումնասիրել են նրա գրական ստեղծագործություններն ու ձևավորել թումանյանագիտությունը:

Կազմվել է Հայկական համալսարանի հանրագիտարանի նախնական բառացանկը:

Սկսվել են Հայկական հանրագիտական բառարանի հոդվածների պատրաստման աշխատանքները:

\* \* \*

### ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո

Տնօրեն՝ Բժշ.գ.թ. Ա.Հովսեփյան

Փոխտնօրեն՝ ք.գ.թ. Պ.Ոսկանյան

Գիտքարտուղար՝ տ.գ.թ. Կ.Մամիկոնյան

Էլեկտրոնային փոստ՝ [info@nbe.am](mailto:info@nbe.am)

Կայքէջ՝ [www.nbe.am](http://www.nbe.am)

**Բազային ֆինանսավորմամբ կատարված հետազոտություններ և ստացված արդյունքներ**

### Գիտամեթոդաբանական և գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունը պրոֆիլային թեմաներով իրականացրել է 27 գիտամեթոդաբանական և գիտահետազոտական բնույթի աշխատանքներ, այդ թվում՝

- «Կազմակերպությունների անվճարունակության հատկանիշների որոշման ֆինանսատնտեսագիտական դատական փորձաքննությունների իրականացման մեթոդաբանության կատարելագործման ուղիները» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ տ.գ.թ. Կ.Մամիկոնյան) որպես մեթոդաբանության կատարելագործման ուղի ընտրվել են ընկերությունների կորպորատիվ կառավարման համակարգում շահութաբաժնային ճիշտ քաղաքականության ընդունումն ու ներդրումը, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ապօրինի (ծագման իրավական հաստատում չունեցող) դրամական միջոցների նույնականացման և հաշվարկման վերլուծական մեթոդները, ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման մեթոդական ցուցումների մշակումը:

- «Պոչամբարների աղտոտված հողային տարածքների քարտեզագրումը (Գեղանուշի պոչամբարի օրինակի հիման վրա)» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Գ.Համբարյան, Ա.Գալստյան) իրականացվել է պոչամբարի հարակից տարածքներից վերցված ջրի և հողի նմուշների հետազոտություն, հայտնաբերվել են տարբեր մետաղներ, որոշ նմուշներում՝ նաև ծանր մետաղներ:

«Հայաստանի Հանրապետության տարածքում աճող սոճի ցեղի ծառերի տարեկան օղակների համեմատական գնահատումը տարբեր բնակլիմայական և էկոլոգիական պայմաններում «LINTAB» LTM06-E սարքավորման միջոցով» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Ա.Պետրոսյան) կատարվել է Հայաստանում գիտության որոշակի ճյուղի ներդրում, որը հնարավորություն կընձեռի ծառերի տարեկան օղակների հետազոտության միջոցով ստանալ կարևոր տվյալներ և կիրառել դրանք՝ ապահովելու հետագա տնտեսական հաջողություններ: Կիրառվել են դենդրոխրոնոլոգիական գիտական մեթոդներ, կատարվել են դաշտային ինտենսիվ և լաբորատոր աշխատանքներ, ստեղծվել են համապատասխան տարածքներին բնորոշ բազաներ, որտեղ հնարավոր կլինի կազմակերպել փորձագիտական ուսումնասիրություններ:

- «Ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների մոդելավորմամբ նոր «PC Crash» համակարգչային ծրագրի մեթոդի տեղայնացում» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Դ.Դավաթյան) իրականացվել են փորձագիտական տեղեկատվական կամ տվյալների բազաների ստեղծմանը նպատակաուղղված փորձարարական աշխատանքներ:

- «Բժշկական սխալների և արյան շրջանառության համակարգի հիվանդություններով պայմանավորված մահերի միջև պատճառահետևանքային կապերի համալիր գնահատականը» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Կ.Մխիթարյան) կատարվել է բժշկական փաստաթղթերի վարման թերությունների առաջացման պատճառների, բժշկական սխալների և մահվան պատճառների միջև պատճառահետևանքային կապերի վերլուծություն՝ պարզելու բուժօգնության ցուցաբերման թերությունների և մահվան ելքերի առաջացման հավանականությունը: 2013-18թթ. 177 ՀԴԲՓ-ից 132-ում հայտնաբերվել է բուժօգնության ցուցաբերման 250 թերություն՝ ախտորոշման 34.8%, բուժման 31.2%, բուժօգնության կազմակերպման 12.0% և բժշկական փաստաթղթերի վարման 22.0%:

«Սինթետիկ կանաքինոիդների փորձագիտական հետազոտության ժամանակակից մեթոդների վալիդացումը և տվյալների բազայի՝ (GC-MSD) գրադարանների համալրումը» թեմայի շրջանակներում (ղեկ.՝ Ա.Թովմասյան) ժամանակակից սինթետիկ կանաքինոիդների (դիզայներական թմրամիջոցներ, սփայսներ) փորձագիտական հետազոտության ժամանակակից, արդյունավետ և միջազգային փորձի վրա հիմնված մեթոդիկայի մշակման նպատակով իրականացվել է սփայսների որոշման մեթոդի մշակում, սինթետիկ կանաքինոիդների հայտնաբերման համար կիրառվող մոդելի մասս-սպեկտրոմետրի գրադարանի համալրում 7 նոր տեսակի գրադարաններով, որոնց միջոցով կատարվում է սփայսի կոմպոնենտների բարձր ճշգրտությամբ (99%) հայտնաբերում և իդենտիֆիկացում: Իրականացվել է նաև

թմրակտիվ և հոգեմետ բաղադրատարրերի, կալիբրման կորերի ստացում, քանակական հաշվարկ և անորոշության գնահատում:

### Գիտագործնական աշխատանքներ

Կազմակերպության աշխատակիցներն անցկացրել են վերլուծական բնույթի 108 սեմինար՝ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրման, հնարավոր ներդրման և ՀՀ-ում կիրառման նպատակով:

Կազմակերպության աշխատակիցները շարունակել են ակտիվորեն մասնակցել փորձագիտական բնագավառներին առնչվող առցանց սեմինարներին, մասնավորապես Ամերիկյան քրեագիտական լաբորատորիաների տնօրենների միության (ASCLD), «SelectScience»-ի, «MSAB»-ի, Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL), «cfre»-ի, «Practicum Directum»-ի, «LF Академия»-ի, «Waters Corporation»-ի, SoftiCo»-ի, Sinerdocs»-ի, «Россия и мир в 2021 году»-ի, BUCHI India»-ի և այլն:

Շարունակվել են գիտական գործունեություն իրականացնող անձնակազմի վերապատրաստման և կատարելագործման միջոցառումները (դասընթացներ, թրեյնինգներ, գիտաժողովներ) թե՛ հանրապետությունում, թե՛ արտերկրում:

Ստորև ներկայացվում է 2020թ. ընթացքում իրականացված դատափորձաքննությունների տեսակների և քանակի ամփոփ տվյալների աղյուսակը.

N	Տարեթիվ	Քրեադատավարական շրջանակներում կատարված դատական փորձաքննություններ	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1	2020	10357 (15.12.2020թ. դրությամբ)	27 (31 ուղղություններով)

### Գիտաուսումնական աշխատանքներ

Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության և կազմակերպության միջև կնքված պայմանագրի՝ փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների 30 աշխատակցի հետ անց են կացվել կատարելագործման և վերապատրաստման ուսուցողական դասընթացներ:

Ստորև ներկայացվում են 2020թ. դասընթացներին մասնակցած ունկնդիրների վերաբերյալ ամփոփ տվյալները.

N	Տարեթիվ	Գիտաուսումնական աշխատանքների շրջանակներում իրականացված ուսուցողական դասընթացներին մասնակցած ունկնդիրների քանակային տվյալներն ըստ մարմինների												Ընդ.	
		ՀՀ ԿԱ ՊԵԿ	ՀՀ ՊՆ	ՀՀ ոստիկանություն	ԼՂՀ ոստիկանություն	ՀՀ ՊՆ ՌՌ	ՀՀ ԱԲՆ	ԼՂՀ ՊՆ	ՀՀ քննչ. կոմիտե	ՀՀ ԱՆ քրեա-կատարողական վարչություն	ՀՀ դատախազություն	ՀՀ ԿԱ ԱԱԾ	ԼՂՀ քննչ. կոմիտե	ԼՂՀ ԱԲՆ	
5	2020	-	-	-	-	-	-	-	21	-	-	9	-	-	30

2020թ. հաստատվել են 15 ուղղությամբ (թվով 33 թեմա) նոր ծրագիր-սեղմագրեր, վերապատրաստման դասընթացների համար նախատեսված հիմնական դասախոսությունների 71 թեմա: Կազմակերպությունում դատական փորձագետի որակավորման դասընթացներ է անցել 5 մասնագետ, ԳԱԱ համակարգում դատական փորձագետի որակավորում է ստացել 16 հավակնորդ:

### Գիտափորձնական-վերլուծական աշխատանքներ

2020թ. իրականացվել են տոքսիկոլոգիական փորձաքննությունների ոլորտին առնչվող գիտական և փորձագիտական ծավալուն աշխատանքներ, հատկապես համացանցում ներ-

բեռնված տոքսիկոլոգիական թեմաների ու գիտական գրականության տվյալների ուսումնասիրություններ: Միաժամանակ վերանայվել և լրամշակման փուլում են գտնվում բաժանմունքում գործող հետազոտական մեթոդիկաների ընթացակարգերը:

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով կազմակերպության մասնագետները (հանրապետությունում համավարակային իրավիճակով պայմանավորված) առցանց ակտիվորեն համագործակցել են Առողջապահության նախարարությունում ստեղծված հանձնաժողովի, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի գրասենյակի կողմից կազմակերպված թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարի ստրատեգիաների մշակման գործընթացներին:

«55 AA» մոդելի բոցային և «200 AA» գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերի համար ուսումնասիրվել և տեղայնացվել են հողերում, հանքային ապարներում, ջրերում, սպիրտ պարունակող և այլ օբյեկտներում ծանր մետաղների հետազոտության համար նմուշառման, նմուշապատրաստման և հետազոտությունների իրականացման նոր մեթոդներ, կատարվել է դրանց մշակում և օպտիմալացում:

Ուսումնասիրվել են «Niton XL3T 980» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա տարբեր հողերի, հանքային բաղադրակազմերի, մետաղների և դրանց համաձուլվածքների, մետաղադրամների, թանկարժեք մետաղների փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները, կատարվել են նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների, ներդրված ձուլման եղանակով մետաղական խառնուրդը համասեռ համաձուլվածքի վերածելու մեթոդի կատարելագործման աշխատանքներ:

Իրականացվել են հիշողության կրիչներում (այդ թվում՝ բջջային հեռախոսների ներքին հիշողության կրիչներում) պարունակվող տեղեկատվության հետազոտություններ՝ «EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովման միջոցով, «Tableau Forensic USB 3.0 SATA/IDE Bridge (T35u)» սարքերով և բջջային սարքերի փորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովումով:

Ուսումնասիրվել են սոճիների աճի առանձնահատկությունները, դրանց տարածվածությունը ՀՀ-ում, առանձնացվել են այն տարածքները, որտեղ դրանք աճում են առավել լավ: Նմուշառումներ են իրականացվել Գեղարքունիքի մարզի «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Արտանիշի մասնաճյուղից, Վարդենիսի, Իջևանի և Դիլիջանի տարածաշրջաններից, Գեղարքունիքի մարզի «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, Իջևանից և Լոռու մարզի որոշակի տարածաշրջաններից, վերցված նմուշները հետազոտվել են, արդյունքները վերլուծվել և պահպանվել են տվյալների բազայում:

Շարունակվել են տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները՝ փամփուշտների և պարկուճների (199), ներկանյութերի, սառը զենքերի նմուշների (433), տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի (72), կեղծ մետաղադրամների բաղադրությունների (436), կեղծ թղթադրամների (ՀՀ, ՌԴ, ԱՄՆ, Եվրո, 3202), գրելագործիքների (1658), պայթուցիկ նյութերի արգասիքների (34), պարենային և ոչ պարենային ապրանքների, անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների (32), ինչպես նաև GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր SUDMED-MS\_2842 գրադարանի ներդրում (2842 անվանում նյութերի տեսականի): GC-

7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր Cayman Spectral Library.new (CSL) գրադարանի ներդրում (1832 անվանում նյութերի տեսականի) և GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար նոր SWGDRUG.3.6L գրադարանի ներդրում (3160 անվանում նյութերի տեսականի):

## Հրապարակումներ

### *Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր*

1. «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես», N 3, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2020, 152 էջ:
2. «Դատական փորձաքննություն և քրեագիտություն հայկական հանդես», N 4, Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2020, 177 էջ:
3. Ենգիբարյան Վ.Գ., Հովսեփյան Ա.Ն., Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները, Ե., ՀՀ արդարադատության ակադեմիայի հրատ., 2020, 332 էջ:

### *Հոդվածներ, զեկուցումներ*

4. Ղարիբյան Հ.Ռ., Համբարձումյան Ա.Ֆ., Ոսկանյան Պ.Ս., Թորոսյան Գ.Հ., Մերիլենային կապույտի լուսաքայքայման կինետիկան տիտանի օքսիդի առկայությամբ, Ե., ՀԱՊՀ «Լրաբեր» գիտ. հոդված. ժող., II մ., 2020, էջ 655-661:
5. Մամիկոնյան Կ.Հ., Բաբոյան Ա.Ս., Շահութաբաժնային քաղաքականությունը և ընկերության շուկայական կապիտալացման վրա դրա ազդեցությունը, Ե., «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», N 1(57), 2020, էջ 67-79:
6. Аванесов Э.С., Некоторые аспекты становления судебно-экспертных исследований передвижных культурных ценностей в Республике Армения, Одеси, «Сучасні питання криміналістики, судової експертизи та кримінального процесу: матеріали Міжнародної науково-практичної конференції», 3 грудня 2020 року, с. 7-14.
7. Арутюнян А.А., Саргсян О.Т., Восканян П.С., Некоторые особенности проведения экспертных исследований объектов интеллектуальной собственности, Харків, «Теорія та практика судової експертизи і криміналістики», вип. 21, 2020, с. 556-565.
8. Багдасарян Т.С., Тадевосян А.В., Восканян П.С., Галстян А.С., Анализ влияния горнодобывающей отрасли на сельскохозяйственные угодья, London, «International Journal of Food Science Technology», 2020, pp. 15-19.
9. Багдасарян Т.С., Тадевосян А.В., Восканян П.С., Галстян А.С., Влияние хвостохранилища Зангезурского молибденового комбината на окружающую среду, Ер., «Вестник АГИУ», сер. Химич. и природоохран. технологии, N 1, 2020, с. 53-57.
10. Варданян А.Р., Маргарова З.Р., Особенности комплексной судебно-психологической и лингвистической экспертизы видеозаписей находившихся в плену лиц, Казань, ж. «Восток-Запад: партнерство в судебной экспертизе. Психологическая и лингвистическая экспертиза: поиски, идеи, решения», 2020, с. 87-92.
11. Восканян П.С., Титанян Э.Л., Некоторые особенности трансграничной неосознаваемой передачи чувствительных технологий, К., «Эксперт: парадигмы юридических наук і державного управління», N 6 (12), 2020, с. 265-280.
12. Мхитарян С.А., Некоторые подходы социального исследования факторов способствующих распространению кражи, К., Актуальні питання судової експертології, криміналістики та кримінального процесу: мат. II міжнар. наук.-практ. конф., 2020, с. 360-364.
13. Овсепян А.Н., Национальное бюро экспертиз НАН РА, Харків, «Архів кримінології та судових наук: наук», N 2, 2020, с. 108-137.
14. Овсепян А.Н., Восканян П.С., История создания и современные задачи НБЭ РА, М., «Судебная экспертиза Беларуси», N 2(11), 2020, с. 18-21.
15. Овсепян А.Н., Ованесян Р.А., Мхитарян К.Г., Определение причинно-следственной связи между дефектами медицинской помощи и летальным исходом, Харків, «Архів кримінології та судових наук», N 1, 2020, с. 54-60.
16. Овсепян А.Н., Пресс-релиз межд. научно-практич. конф. «Актуальные вопросы судебно-экспертной

деятельности, современные проблемы, тенденции и перспективы развития криминалистики и судебной экспертизы», М., «Эксперт-криминалист», N 1, 2020, с. 39-40.

17. Титанян Э.Л., Восканян П.С., Принцип состязательности в уголовном судопроизводстве в контексте института судебной экспертизы, Одеса, «Проблеми та перспективи розвитку судової експертизи та криміналістики: матеріали Міжнародної науково-практичної конференції», 2020, с. 580-585.
18. Mazmanyan S., Sargsyan H., Papyan G., Gharibyan H., Tsovikyan D., Antiseptic dry mixtures based on calcium sulphate, «WEIMARER GIPSTAGUNG», 2020, pp. 17-21.
19. Hovsepyan A., Hovannisyan R., Mkhitarian K., Cause-effect relations between defects of medical care and lethal outcome, Poland, «Issues of forensic science», N 310(4), 2020, pp. 45-48.  
Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն» հանդեսում, N 3, Ե., «Էդիտ պրինտ» հրատ., 2020, 152 էջ:
20. Ալեքսանյան Յ.Ս., Մարգարյան Ա.Ս., Դատահոգեբանական փորձաքննությունները որպես անձի վիճարկման վարքի հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրման հարթակ, էջ 9-15:
21. Աղազարյան Օ.Ս., Մարգարովա Ջ.Ռ., Հոգեկան ուժեղ տառապանքի հետազոտման առանձնահատկությունները դատահոգեբանական փորձաքննությունների շրջանակներում, էջ 16-21:
22. Աղայան Ռ.Ս., Աղայան Ս.Ռ., Ճանապարհատրանսպորտային պատահարի մեխանիզմը ըստ մասնակիցների դիրքի և ժամանակի, էջ 22-26:
23. Բակլաջյան Ա.Վ., Անսովոր պայմաններում և անսովոր նյութի վրա կատարված ձեռագրերի կամ ստորագրությունների հետազոտման որոշ առանձնահատկություններ, էջ 27-32:
24. Գալստյան Ա.Ս., Ասլիկյան Մ.Ա., Մովսիսյան Շ.Ա., Ոչ ամբողջությամբ ոսկու համաձուլվածքից պատրաստված (կեղծված) զարդերի փորձագիտական հետազոտության առանձնահատկությունները նյութագիտական և ապրանքագիտական համալիր փորձաքննությունների իրականացման ժամանակ, էջ 33-42:
25. Դավլաթյան Դ.Ա., Տրանսպորտային միջոցների արգելակման ուղու հաշվարկը դատաավտոտեխնիկական փորձաքննություններում, էջ 43-48:
26. Մխիթարյան Կ.Գ., Կիրակոսյան Ն.Ա., Առաքելյան Ա.Գ., ՀՀ Տարացքում թմրամիջոցներ գործածած անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները և վերջին տասնամյակում փորձաքննության ենթարկված անձանց ներգրավվածությունը թմրամիջոցներ գործածածների շարքում (ըստ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի տվյալների), էջ 49-59:
27. Պետրոսյան Ա.Ա., Հայրապետյան Տ.Ա., ՀՀ տարբեր բնակլիմայական պայմաններում սոճիների աճի ինտենսիվության տարբերության որոշումը դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառմամբ, էջ 60-67:  
Հոդվածները հրատարակվել են «Դատական փորձաքննություն և քրեագիտություն» հանդեսում, N 4, Ե., «Էդիտ պրինտ» հրատ., 2020, 177 էջ:
28. Աղայան Ռ.Ս., Աղայան Ս.Ռ., Ավտոմեքենաների շարժման արագության որոշումը բախման պահին արագաչափի ցուցիչ սարքի ցուցմունքով, էջ 9-15:
29. Թովմասյան Ա.Գ., Տրամադրվ պարունակող հետազոտելի օբյեկտների դատանյութագիտական հետազոտությունը և զագ-քրոմատագրաֆիայի մեթոդի վալիդացումը՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 ստանդարտի պահանջների, էջ 36-43:
30. Հարությունյան Ա.Ա., Գաբրիելյան Հ.Բ., Հակոբյան Ա.Ե., Ապրանքի (արտադրանքի) որակ հասկացությունը, հսկողությունը և համապատասխանության ստուգումը դատաապրանքագիտական փորձաքննությունների շրջանակում, էջ 44-53:
31. Ղահրամանյան Ջ.Գ., Պետրոսյան Ա.Ա., Մաչկալյան Ք.Հ., Անտառային հրդեհները և դրանց փորձագիտական հետազոտության առանձնահատկությունները, էջ 54-61:
32. Սանթրոսյան Ա.Վ., Իշխանյան Յու.Ռ., Ներսիսյան Գ.Ս., Բնապահպանական օբեկտների մշակման ճիշտ ռազմավարությունը մթնոլորտային օդի բարելավման գործընթացում (Երևան քաղաքի օրինակով), էջ 62-69:  
Հոդվածները հրատարակվել են «Conferinta Stiintifico-practica internationala dedicata Zilei nationale a expertului judicial cu genericul», «Tendinte contemporane in dezvoltarea expertizei judiciare» ժողովածուում, Chisinau, 2020, 137 էջ:
33. Мхитарян С.А., Возможности и риски гражданского общества в условиях переходных преобразований, с. 64-67.
34. Петросян А.А., Айрапетян Т.А., Определение дендрохронологическим методом отличий интенсивности роста сосны в несхожих климатических регионах РА, с. 86-91.

Հոդվածները հրատարակվել են «Криміналістика і судова експертиза» ամսագրում, ЧҫԼ, Київський НДІ судових експерти, N 65, 2020, 800 էջ:

35. Восканян П.С., Титанян Э.Л., Некоторые особенности оценки экспертного заключения в гражданском процессе (сопоставление судебных практик РА и США), с. 144-150.
36. Гисе И.Х., Лиодорова Ю.Г., Баркаускас М.П., Маркина О.А., Мамиконян К.О., Применение аналитических методов для выявления средств физических лиц, нажитых преступным путем, с. 542-557.
37. Мамиконян К.О., Дивидендная политика в системе корпоративного управления компаний, с. 557-567.  
Հոդվածները հրատարակվել են «Судова експертиза: проблеми сьогодення та перспективи розвитку» գիտամոնіторին Երևանում, Լ., Львівський науково-дослідний інститут судових експертиз, 2020, 406 էջ:
38. Будагян М.С., Мекинян Л.Н., Эффективность проведения комплексных экспертиз при определении механизма образования механических повреждений одежды, с. 233-240.
39. Товмасян А.Г., Некоторые особенности исследования объектов, содержащих кокаин и метадон методом газовой хроматографии, с. 105-113.



ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համաճարակի տարածման պատճառով սահմանված արտակարգ իրավիճակի պայմաններում ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովն անց է կացվել հեռավար: ԳԱԱ անդամներին ներկայացվել է ԳԱԱ 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին հաշվետվությունը: Հաշվի առնելով դիտողություններն ու առաջարկությունները՝ ԳԱԱ նախագահությունը հաստատել է ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի որոշումը:

## ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում անց է կացվել նախագահության 10 նիստ, քննարկվել է շուրջ 22 հարց:

Նախագահությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի կապակցությամբ ԳԱԱ նախագահության հայտարարությունը:

Քննարկվել են Ադրբեյջանի ագրեսիայի պատճառով սկսված պատերազմական իրավիճակում ԳԱԱ ինստիտուտների անելիքները:

Նախագահությունը հաստատել է ԳԱԱ արտադրությունից կտրված, հեռակա և վճարովի ասպիրանտուրայի 2020թ. ընդունելության արդյունքները:

Նախագահության որոշմամբ հաստատվել է Գիտակրթական միջազգային կենտրոնի գիտական խորհրդի կազմը, նշանակվել է գիտական ղեկավար, կատարվել են լրացումներ ԳԱԱ ՊՈԱԿ-ների կանոնադրություններում, կատարվել են փոփոխություններ Վ.Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակի միջազգային կոմիտեի կազմում:

Նախագահության նիստերում ընտրվել են Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի, Գրականության, Մեխանիկայի, Արևելագիտության ինստիտուտների, Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեններ, «Բնական գիտություններ» էլեկտրոնային հանդեսի գլխավոր խմբագիր: Երկարաձգվել են Բյուրականի աստղադիտարանի ու Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենների պաշտոնավարման ժամկետները:

Քննարկվել են Ղևոնդ Ալիշանի 200-ամյակին նվիրված առցանց միջազգային գիտաժողովի արդյունքները:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ (ASNET-AM)

Ակադեմիական գիտահետազոտական կոմպյուտերային ցանցը (ASNET-AM) GEANT համաեվրոպական գիտակրթական ցանցային միջավայրում ներկայացնում է Հայաստանը որպես ազգային գիտակրթական ցանց և նույն ծրագրերի շրջանակում մասնակցում Արևելյան գործընկերության (EaPConnect) նախագծին, որի արդյունքում ստեղծվել է գիտության և կրթության ոլորտի համար տարածաշրջանային գերարագ ինտերնետային ցանցը: Ցանցը շարունակել է կիրառական հետազոտական աշխատանքները, բարելավել է ցանցի կապուղիների ապահովման և զարգացման, վստահության, ինքնության և անվտանգության ծա-

ռայությունների ընդլայնման, ամպային ծառայությունների ներդրման և առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնման աշխատանքներ:

Ցանցի կապուղիների սպասարկում և զարգացում: Իրականացվել է ASNET-AM ցանցի հիմնական հանգույցների և կապուղիների շուրջօրյա (24/7) անխափան աշխատանք՝ ապահովելով ցանցի ընդհանուր կապուղու թողունակությունը (10 Գբ/վրկ), ASNET-AM ցանցի մուտքը դեպի GEANT համաեվրոպական գիտակրթական ցանց և այլ միջազգային գիտակրթական ցանցեր, գումարային 2048 Մբ/վրկ երաշխավորված երկկողմանի IP կապուղի (առնվազն 2 անկախ ելքային/մուտքային IP կապուղիներով): ԵՊՀ հանգույցում rb2011uias-rm երթուղիչը փոխարինվել է ավելի հզոր և օպտիկամալուխային միացումներ ապահովող CCR1016-12S-1S+ երթուղիչով, որի շնորհիվ արագությունը 200Մբ/վ-ից մեծացել է՝ հասնելով մինչև 1Գբ/վ: ՀՀ Ազգային գրադարանում տեղի ունեցած հրդեհի հետևանքով խափանված կապը վերականգնելու համար կարգաբերվել և տեղադրվել է RB2011iLS երթուղիչը: ԻԱՊԻ հանգույցում շարքից դուրս եկած (օգտվողներին սպասարկող) հիմնական երթուղիչներից մեկը փոխարինվել է rb2011uias-rm երթուղիչով, որի կարգավորման համար կատարվել են բարդ աշխատանքներ: Բժշկական գենետիկայի կենտրոնի տվյալների փոխանցման արագությունն ավելացել է մինչև 30Մբ/վրկ, կենտրոնի օգտվողի կարիքներից ելնելով՝ վերակարգավորվել է կապը PPP թունելի միջոցով: Ելնելով COVID-19 համավարակի ստեղծած իրավիճակից՝ կարգաբերվել են BGP միացումների հայկական տիրույթում գտնվող կայքերի և ծառայությունների հասանելիության բարձրացման աշխատանքները: Հայկական ինտերնետ տրաֆիկի փոխանակման հիմնադրամի -ARMIX միացումը 1Գբ/վ-ից դարձել է 10Գբ/վ, հիմնովին վերանայվել են IPv6, OSPFv3 միացումների կարգավորումները: ASNET-AM ցանցին անդամակցելու պայմանագրեր են ստորագրել ԵՊՀ-ը, Մատենադարանը, «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամը:

Վստահության, ինքնության և անվտանգության ծառայությունների զարգացում: Շարունակվել է GEANT ցանցի eduroam (educational roaming) ծառայության զարգացումը: ASNET-AM ցանցում գործող eduroam համակարգի զարգացման հետազոտությունների և կիրառական մշակումների արդյունքում ստեղծվել է ավտոմատացված կարգավորումների լուծում multi-EAP eduroam Institutional Radius Server (IRS) մի քանի դոմենների համար: Հետազոտվել են անվճար լուծումների վրա հիմնված կառավարվող ցանցային համակարգ ստեղծելու հնարավորությունները: Մշակվել է ներքին դոմենային համակարգ՝ հիմնված X.500 ստանդարտների վրա, որպես հիմք օգտագործվել է ժամանակակից Samba v.4 համակարգը, որի հիման վրա կառուցվել են կատալոգային դոմենային համակարգ և ֆայլային սերվեր: Հետազոտվել են ժամանակակից VPN համակարգերի աշխատանքային սկզբունքները և կիրառման հնարավորությունները: Ցանցում մշակվել և կիրառվել է նոր VPN համակարգ, որում օգտագործվում են ժամանակակից արձանագրություններ L2TP և OpenVPN համապատասխան սերտիֆիկատներով: Կատարվել են GEANT հետազոտական ցանցում մշակված նոր eduVPN համակարգի հետազոտման և ASNET-AM ցանցում կիրառական լուծումներ գտնելու աշխատանքներ: Վերլուծվել է GEANT հետազոտական ցանցում մշակված WiFiMon համակարգը, որը հնարավորություն է տալիս կատարել WI-FI ցանցի արդյունավետ օգտագործման, արագագործության, զբաղվածության և այլ պարամետրերի վերլուծություն, որն առաջին հերթին կկիրառվի ASNET-AM ցանցում գործող eduroam ցանցի շրջանակներում: Ստեղծվել է LetsEncrypt SSL հավաստագրերի կենտրոնացված տարաբաշխման ավտոմատացված համակարգի թարմացված տարբերակը: Ցանցի օգտատերերի համար մշակվել է ցանցի անվտանգության քաղաքականություն:

Ամպային ծառայությունների ներդրում: Շարունակվել են ենթակառուցվածքը որպես ծառայություն (Infrastructure as a Service) ամպային ծառայության զարգացման աշխատանքները: Ծառայությունը հնարավորություն է տալիս վեբ-միջավայրում մեկ հպումով կառավա-

րել վիրտուալ մեքենաները, այդ թվում՝ ոչնչացնել կամ կապակցել վիրտուալ միջավայրերը: Մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ ԵՊՀ-ին տրամադրվել է առանձին ամպային ծառայությունների փաթեթ: ASNET-AM էլ. փոստի սպասարկման թիմը մշակել և տարածել է «Ինչպե՞ս պաշտպանվել կեղծ նամակներից» նոր ուղեցույցը, ինչպես նաև գրանցահաշիվներն (account) առավել պաշտպանված դարձնելու համար երկփուլանի նույնականացումն ակտիվացնելու ուղեցույց: Փորձարկման փուլում է Nextcloud ցանցային պահոցի հնարավոր ներդրումը ASNET-AM ցանցում:

Առցանց իրական ժամանակի ծառայությունների ընդլայնում: Հաշվի առնելով COVID-19 համավարակի կանխարգելման անհրաժեշտությամբ պայմանավորված սահմանափակումները և ստեղծված իրավիճակը ՀՀ-ում՝ ASNET-AM ցանցում գործարկվել է BigBlueButton տեսակոնֆերանս հարթակը՝ [meet.asnet.am](https://meet.asnet.am), որտեղ գրանցված է ավելի քան 70 օգտատեր կազմակերպություն, [barev.asnet.m](https://barev.asnet.m) և էլ. հեռավար ուսուցման [edu.asnet.am](https://edu.asnet.am) համակարգը: Նշված համակարգերը և հարթակներն ապահովում են տեսակոնֆերանսների և գիտական ու կրթական ոլորտների կազմակերպությունների հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպումը:

Առցանց իրական ժամանակի մշտադիտարկման ծառայությունների և log ֆայլերի կառավարման ծառայությունների բարելավում: Շարունակվել են ցանցի մշտադիտարկման ծառայության աշխատանքները: Վերակարգաբերվել, թարմացվել և գործարկվել են PerfSonar համակարգերը, կարգաբերվել և միացվել է Maddash սերվերը, որը միավորում և համակարգում է 5 PerfSonar-ների աշխատանքը: ԻԱՊԻ հանգույցում կարգաբերվել է The Dude համակարգը, որը մշտադիտարկում է բացառապես cluster և cloud տիրույթներում գտնվող սերվերների աշխատանքը: Գերմանիայի գործընկերների հետ փորձական տեղադրվել և կարգաբերվել է NEMO devel-version by DFN-CERT պաշտպանության և նախազգուշացնող համակարգը: Շարունակվել են [viewmon.asnet.am](https://viewmon.asnet.am) և [viewmon2.asnet.am](https://viewmon2.asnet.am) վիճակագրական համակարգերի զարգացման, ընթացիկ պահպանության և թարմացման աշխատանքները, մասնավորապես ավելացվել է [viewmon2.asnet.am](https://viewmon2.asnet.am) համակարգի մուտքային տվյալների հավաքագրման հոսքերի քանակը՝ հասցնելով դրանք 5-ի: Իրականացվել է TBCC հեռախոսային հաշիվների կոնվերտացիայի և հաշիվների՝ ըստ կազմակերպությունների ստեղծման համակարգի սպասարկումը:

ASNET-AM ցանցի ծառայություններից 2020թ. օգտվել են հանրապետության 5 քաղաքում տեղակայված հանգույցներից օգտվող գիտնականներ, գիտական և տեխնիկական աշխատողներ, ասպիրանտներ, ուսանողներ և այլ օգտագործողներ:

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Հաշվետու տարում ԳԱԱ-ն աշխարհում մոլեգնող COVID-19 համաճարակի պայմաններում հնարավորությունների շրջանակներում շարունակել է ակտիվ համագործակցությունը միջազգային գիտական կառույցների և գիտությունների ակադեմիաների հետ: Հաշվի առնելով համաճարակային վիճակը՝ միջազգային համագործակցությունը ծավալվել է առավելապես առցանց հարթակում: Առկա համագործակցություններն ակտիվ պահելու և նոր համագործակցություններ նախաձեռնելու նպատակով ԳԱԱ ներկայացուցիչները մասնակցել են մի շարք առցանց քննարկումների և կոնֆերանսների:

Սեպտեմբերին ԳԱԱ նախագահ ակ. Ռ.Մարտիրոսյանը մասնակցել է ԱՊՀ երկրների՝ հիմնարար գիտության ոլորտում համագործակցության խորհրդի և Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) առցանց նիստերին, որոնց ընթացքում

քննարկվել են ԳԱՄԱ գիտական տարբեր ոլորտներին վերաբերող խորհուրդների աշխատանքների համակարգման հարցեր:

Հունիսին առցանց տեղի է ունեցել ԱԼԼԵԱ գլխավոր ասամբլեան «Հետազոտական համագործակցությունը փոփոխվող ժամանակներում» խորագրով: Հանդիպմանը մասնակցել է նաև ԳԱԱ ներկայացուցիչը, քննարկվել են արդի մարտահրավերներին առնչվող հարցեր:

Հուլիսին ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռ.Հարությունյանը մասնակցել է ԳԱՄԱ Վիրուսաբանության գիտական խորհրդի առցանց նիստին (քննարկվել են կազմակերպական հարցեր և COVID-19 կլինիկական կողմերը):

Օգոստոսին ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լ.Թավադյանը, որպես ԳԱՄԱ խորհրդի հիմնադիր անդամ, մասնակցել է խորհրդի աշխատանքների համակարգման տեսակոնֆերանսին:

Սեպտեմբերին ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռ.Հարությունյանը մասնակցել է Չինաստանի գիտությունների ակադեմիայի և Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ) կողմից նախաձեռնված «COVID-19-ից քաղած դասեր և մտքեր» գիտաժողովին, որին մասնակցել են մասնագետներ գրեթե բոլոր մայրցամաքներից, քննարկվել են դեղամիջոցների և պատվաստանյութի մշակման հարցերը:

Դեկտեմբերին ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը Ռ.Կոստանյանը մասնակցել է «Ասիա-խաղաղովկիանոսյան միկրոալիքներ» համաժողովին, որը կազմակերպվել էր Էլեկտրոնիկայի և Էլեկտրատեխնիկայի միջազգային ինստիտուտի կողմից:

Շարունակվում է համագործակցությունը Չինաստանի գիտությունների ակադեմիայի հետ Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ) շրջանակներում:

ՄԳԿԴ-ի հայտարարած 2020-21թ. համատեղ հետազոտությունների նախագծին դիմած «Խաղողի բազմազանության պահպանման խթանում և հարմարվողական գծերի մոբիլիզացում» ծրագիրն արժանացել է փորձագիտական բարձր գնահատականի և ստացել հաստատում: Տարեվերջին Նորարարության զարգացման ուղեղային կենտրոնի համատեղ միջազգային ցանց ստեղծելու ՄԳԿԴ քարտուղարության մեկ այլ նախագծին ԳԱԱ նախագահությունը տվել է դրական պատասխան, աշխատանքները նախատեսվում են հաջորդ տարի:

Հաշվետու տարում ԳԱԱ ինստիտուտները կազմակերպել են մի շարք միջազգային գիտաժողովներ և կոնֆերանսներ: Հունիսին Մ.Աբեդյանի անվ. գրականության ինստիտուտը կազմակերպել է միջազգային գիտաժողով՝ նվիրված Ղ.Ալիշանի ծննդյան 200-ամյակին: Հունիսին Պատմության ինստիտուտը Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության հետ համատեղ անցկացրել է միջազգային առցանց գիտաժողով՝ «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)»՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին: Սեպտեմբերին Բյուրականի աստղադիտարանը կազմակերպել է «Աստղագիտական շրջահայություններ և մեծ տվյալներ» միջազգային գիտաժողովը: Հոկտեմբերին Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն անցկացրել է առցանց միջազգային գիտաժողով՝ «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականացում»՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի 100-ամյակին: Դեկտեմբերին Հ.Բունիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտն անցկացրել է «Նեյրոկենսաբանությունը 21-րդ դարում» միջազգային հեռավար գիտաժողով՝ նվիրված ակ. Ա.Գալոյանի 90-ամյակին: Դեկտեմբերին Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտը կազմակերպել է հայրենագիտական միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված ակ. Գ.Ջահուկյանի ծննդյան 100-ամյակին:

Միջակադեմիական համագործակցությունը շարունակվում է նաև նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Չինաստանի, Լիտվայի, Ռումինիայի, Ավստրիայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի գիտությունների ակադեմիաների, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի գիտությունների ազգային ակադեմիաների ու գիտական կառույցների հետ:

Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չեխական, հայ-չինական, հայ-եգիպտական, հայ-տաջիկական համագործակցությունները: Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական համագործակցության շրջանակներում շարունակվում է համագործակցությունը Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի և ՌԴ «Ռոսկոսմոսի», ՌԳԱ հատուկ աստղաֆիզիկական աստղադիտարանի հետ տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման ասպարեզում:

Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱԱ-ն մշտապես ապահովել է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: Համաձայն ԳԱԱ-ի, Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի և Լինդաուում Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագրի՝ յուրաքանչյուր տարի ԳԱԱ-ից ներկայացված երիտասարդ գիտնականները մասնակցում են Նոբելյան մրցանակակիրների հետ հանդիպմանը: Համաճարակի պատճառով 2020թ. ամենամյա հանդիպումը հետաձգվել է մեկ տարով, սակայն Նոբելյան մրցանակակիրների հանդիպումների Խորհրդի նախաձեռնությամբ հունիսի 28-ից հուլիսի 1-ը տեղի է ունեցել «Առցանց գիտական օրեր» միջոցառումների շարքը, լսումներին Հայաստանից մասնակցել են մի շարք երիտասարդ գիտնականներ:

ԳԱԱ-ն շարունակում է մասնակցել և իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Եվրոպական համալսարանական կրթության ՏԵՄՊՈՒՍ համաեվրոպական շարունակական (TEMPUS) այլն: ԳԱԱ կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են նաև ԱՄՆ ծրագրերին՝ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների (CRDF Global), Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF), ՆԱՏՕ-ի (NATO), Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության (BMBF) գերմանական Շտիֆտունգ Ֆոլքսվագեն հիմնադրամի (Volkswagen Stiftung Foundation) և այլ հիմնադրամների ծրագրերին:

2020թ. արտասահմանյան երկրներ գործուղման է մեկնել ԳԱԱ 29 գիտաշխատող. համատեղ աշխատանքներ է կատարել 30, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 32 գիտաշխատող: Արտասահմանից ժամանել է 11 գիտնական. համատեղ աշխատանքներ է կատարել 13, բանակցություններ է վարել և կոնսուլտացիաների մասնակցել 33 գիտաշխատող:

Վարչությունը 2020թ. աջակցել է ԳԱԱ ինստիտուտներին ու կենտրոններին՝ տրամադրելով հավելյալ տեղեկություններ:

ԳԱԱ գիտական կազմակերպությունների դրամաշնորհներ

N	Կազմակերպությունը	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը (\$, €, դր., ռուբ., GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
				սկիզբ	ավարտ	ընդհանուր	2020թ. համար	
1	Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ	Իժերի թույնի դեզինտեգրիների կարգավորիչ ակտիվությունը ինտեգրիների վրա ուռուցքային բջիջների անկանոն աճի և տրոմբոցիտների ագրեգացիայի ժամանակ	Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020		9 999 200 դրամ	6 072 000 դրամ	Ն. Այվազյան
2		Գյուրգայի թույնի A2 ֆոսֆոլիպազների և դեզինտեգրիների կառուցվածքաֆունկցիոնալ հետազոտությունները	Հայ-բելառուսական հիմնադրամ	2018-2020		10 800 000 դրամ	5 400 000 դրամ	Գ.Կիրակոսյան
3		European Venom Network	COST Action CA19144 (Horizon2020, EU)	2020-2024		520 000 €	–	Ն.Այվազյան (EU ղեկավար՝ Մ.Մոդիկա (Բտալիա))
4		Ֆունկցիոնալ մագնիսային նաոմասնիկները չարորակ ուռուցքների մագնիսային հիպերթերմիայի համար	ՌԴ կրթության նախարարություն	2018-2020		8 880 000 դրամ	1 200 000 դրամ	Ն.Այվազյան, Ա.Հովհաննիսյան, Ա.Մանուկյան
5		Բազմաբաղադրիչ ալոգեն բջիջների կենսահամատեղելիությունը լյարդի ապաբջջայնացված սքաֆոլդի հետ	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	2018-2021		8 100 000 դրամ	4 050 000 դրամ	Զ. Կարաբեկյան
6	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ	CD5 <sup>բարձր</sup> և CD5 <sup>ցածր</sup> նեոպլաստիկ կլոնները որպես քրոնիկ լիմֆոցիտային լեյկոզի կանխագուշակիչ մարկերներ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021		5000 \$	2500 \$	Գ.Մանուկյան
7		Լիմֆոմայի տարբեր տեսակների համար հիվանդության զարգացման կանխագուշակում և ռիսկի գնահատում մեքենայական ուսուցման մոտեցման միջոցով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021		5000 \$	2500 \$	Մ.Նիկողոսյան
8		Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի արգելակման մոլեկուլային մեխանիզմները	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020-2021		4951 \$	1656 \$	Վ.Առաքելով
9		Դեղամիջոցների մշակման և հայտնաբերման նոր վիրտուալ սքրինինգ մոտեցում	Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)	2020		5 799 840 դրամ	5 799 840 դրամ	Հ.Զաքարյան



10		PPARP ինհիբիտորների նկատմամբ կայունության զարգացման մեխանիզմների ուսումնասիրությունը BRCA1 մուտացիաներից կախյալ ձվարանների քաղցկեղի ժամանակ	ԿԳՄՄՆ ԳԿ, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020	8 970 000 դրամ	480 000 դրամ	Ա.Առաքելյան
11		Նուկլեոտիդային և օլիգոնուկլեոտիդային անալոգներից կազմված նանոհամալիրները որպես խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակավիրուսային նյութեր	ԿԳՄՄՆ ԳԿ, Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամ	2018-2020	8 990 000 դրամ	560 000 դրամ	Հ.Զաքարյան
12		Մշակության բարձրությունը որպես ծխախոտի միջատասպան հատկությունների վրա ազդող գործոն: Խնդրի դիտարկումն օրգանական, բարձր բարձրության խաղողագործության պահանջների համատեքստում	Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ (EIF)	2020	5 799 840 դրամ	5 799 840 դրամ	Ա.Հարությունյան
13		Kv2 և KCNQ1 լարումկախյալ կալիումական անցուղիների ֆունկցիոնալ կարգավորումը ներբջջային երկվալենտ կատիոններով	Ֆոլքսվագեն Շտիֆտունգի հիմնադրամ	2016-2020	90000 €	12430 €	Վ.Վարդանյան
14	«Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ	Նոր սերնդի օպտիկորեն ակտիվ ոչ պրոտեոգենիկ α- ամինաթթուների, պեպտիդների և կոդոնային շղթայում չհագեցած խմբեր պարունակող պոլիմերների սինթեզ և գնում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2017-2020	120000 \$	35000 \$	Ա.Սադյան
15		Մարդիկ եվրոպական բիոէներգետիկ խառնուրդների համար	Հորիզոն 2020, EU	2015-2020	153000 €	18930 €	Վ.Գոգինյան
16		Երկրորդային հումքից ավելացված արժեքի մետաղների վերականգնման կենսաբազայի տեխնոլոգիա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020	4 200 000 դրամ	4 200 000 դրամ	Ն.Վարդանյան
17		Կաթնաթթվային բակտերիաների օգտագործումը կաթնամթերքի կենսապահպանման համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020	5000 \$	5000 \$	Ա.Սարգսյան
18	Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն	Բնության հետ քաղաքների զարգացման, ինովացիան և կառավարման համար համատեղ արտադրություն	Հորիզոն 2020	2017-2022	190 000 €	-	Շ.Ասմարյան

19		Հայաստանում Սևանա լճի կառավարման գիտահեն գործիքակազմի ստեղծում	Գերմանիայի կրթության և գիտության ֆերալ նախարարություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	2020-2023	11 200 €	-	Շ.Ասմարյան
20		Հարավային Կովկասում զոոնոտիկ հիվանդությունների ատլասի ստեղծում	ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալություն	2020-2022	38 400 \$	23 400 \$	Վ.Մուրադյան
21		«Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար	MENVIPRO Էրազմուս+ CBHE	2018-2021	24 735 €	9 894 €	Լ.Սահակյան
22	Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն	Ձկնային հանրության խտության և աբիոտիկ հատկանիշների փոփոխության ազդեցությունը լիմնոհամակարգի էկոլոգիական վիճակի և սննդային ցանցերի ձևավորման վրա ՀՀ խոշոր բարձրադիր Սևանա լճի օրինակով	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական ծրագիր	2018-2020	9 901 000 դրամ	140 000 դրամ	Բ.Գաբրիելյան
23		Ասիայի խոշորագույն լճերի Բայկալի և Սևանի պլանկտոնի միկրոբային հանրության բազմազանության համեմատական վերլուծություն տրոֆիկ վիճակի և ջրի մակարդակի տարուղղված փոփոխության պայմաններում	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-ռուսական ծրագիր	2018-2020	9 000 000 դրամ	574 000 դրամ	Գ.Գևորգյան
24		Վնասատու միջատների պոպուլյացիաների գենետիկական կարգավիճակի գնահատումը և դրանց թվաքանակի կարգավորման համար նոր նյութերի մշակումը	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	2018-2020	4 500 000 դրամ	-	Գ.Կարազյան
25		Արբովիրուսային և մակարուծային վարակներ փոխանցող արյունածուծ հողվածոտանիների բազմազանությունը, տարածվածությունը և համաճարակաբանական կարգավիճակը Հայաստանում և Բելառուսում	ԿԳՄՄՆ ԳԿ, Հայ-բելառուսական ծրագիր	2019-2021	10 800 000 դրամ	5 400 000 դրամ	Ս. Աղայան

26		Դեղաբույսերի վնասատուներ. դեղագործական և կենսատեխնոլոգիական արժեքավոր նյութեր պարունակող բույսերի հետ համակցված բուսակեր միջատների և տզերի գենոմային կազմավորման և միկրոբիոմի կազմի առանձնահատկությունները	ԳԿ-ԳՀԱԵԱ-20 (եվրասիական)	2020-2023	24 000 000 դրամ	2 095 000 դրամ	Մ.Քալաշյան
27		Հայաստանի Սևանա լճի համար գիտելիքահենք կառավարման գործիքների ստեղծում	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	2020-2023	78 248 €	6 040 €	Գ.Գևորգյան
28		Georgian-Armenian-German Initiative to Establish a Joint Caucasus Biodiversity Research Platform (CaBOL)	Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն (BMBF)	2020-2023	73 530 €	18306 €	Բ.Գաբրիելյան
29		Սևանի իշխանի պաշարների վերականգնման փորձարարական մեթոդաբանության մշակում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019-2020	4 999 \$	2 499 \$	Վ.Ասատրյան
30	Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտ	Հրազդան գետի ավազանի համար գետավազանային կառավարման նախագծի մշակում. (մաս 2)	ԵՄ ջրային նախաձեռնություն + ԱլԳի համար և Ջրային միջազգային գրասենյակ	2019-2020	29 660 €	7 415 €	Ս.Մինասյան
31		Բարձր ջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի եղանակով Ti6Al4V համաձուլվածքի ստացում 3D կոմպակտավորման համար	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2019-2020	5 000 \$	1 250 \$	Հ.Կիրակոսյան
32	Երկրաբանական գիտությունների ինստիտուտ	Մեծ Կովկասի սեյսմիկ կառուցվածքը և բարձրացումը (A2334)	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2017- 48 ամիս	72000 \$, որից ինս-տի միջոցով 20 100 \$	3 073 \$	Հ.Բաբայան
33		Բարձր լեռնային լճերը որպես լուրջ միջավայրի կարևոր բաղկացուցիչ, մարդածին և բնական ազդեցություններ (G2153)	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2016 -36 ամսով, 2019թ. օգոստոսին երկարացվել է ևս 6 ամսով	127 427.7 \$, որից ինս-տի միջոցով 11 727.7 \$	7 280 \$	Հ.Բաբայան
34	Ա.Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբա-	Երկրի գլխավոր մագնիսական դաշտի և իոնոսֆերային Sq հոսանքային համակարգի դինամիկայի ուսումնասիրությունը մագնիսա-	ՌԴ ԳԱ Երկրաֆիզիկական կենտրոն	2018-2020	9 000 000 դրամ	410 000 դրամ	Ա.Սիմոնյան

	նույնականացման համակարգի փորձարկումներ	կան դիտակայանների տվյալների վերլուծության նոր մեթոդների կիրառումը					
35		Մեյսմիկ ցանցի ընդարձակում Կովկասում և Կենտրոնական Ասիայում	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2019 - 36 ամիս	754 757 \$, որից ինս-տի միջոցով 2020թ.՝ 75 900 \$	11 108 \$, անհատույց ստացված ավտոմեքենա 33 000 \$	Հ.Բաբայան
36		Սևանա լճի և դրա ջրատարածության համալիր ուսումնասիրությունների վերջին հազարամյակների կլիմայի և շրջակա միջավայրի փոփոխությունների վերակառուցման նպատակով	Կազանի ֆեդերալ համալսարան (ՌԴ)	2018-2020	8 994 800 դրամ	560 000 դրամ	Ս. Հայրոյան
37	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Վիճարկվող տարածքների հիշողությունը	Հորիզոն 2020 (MSCA-RISE)	2019-2021	77 040 €	4 019 400 դրամ	Հ.Մարության
38		Սուրբ ձեռագրեր և հնատիպ գրքեր	Գյուլբենկյան հիմնադրամ	2019-2021	26 000 \$	4 249 600 դրամ	Լ.Սիմոնյան
39	Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ	Համաեվրոպական գիտակրթական մուլտի-գիգաբիթ ցանց և հարակից ծառայություններ	Հորիզոն 2020 (GEANT)	2017-2021	107 251 €	107 251 €	Հ.Ասցատրյան
40		Արևելյան համագործակցության կապուղիներ	ԵՄ ԱԼԳ կապուղիներ	2015-2020	944 232 €	288 032 €	Հ.Ասցատրյան
41		Նպաստել գիտական և արդյունաբերական դաշինքների R&D զարգացմանը՝ համագործակցային և բաց նորարարական պատճենման միջոցով	Էրազմուս+ ALL4R&D	2018-2021	12 227 €	4 661 €	Ս.Արքահանյան
42		Եվրոպայում բաց գիտության ազգային նախաձեռնություններ	Հորիզոն 2020 (NI4OS)	2019-2021	97 100 €	5 947 €	Հ.Ասցատրյան
43	Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան	Ենթակարմիր գալակտիկաների օպտիկական հատկությունները	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020	5000 \$	5000 \$	Ա.Միքայելյան
44	Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ	Ռենտգենյան և սինքրոտրոնային ճառագայթման բնութագրիչների ժամանակակից և տարածքային կառավարման մեթոդների կատարելագործումը՝ ռենտգենյան ճառա-	ԿԳՄՄԸ ԳԿ, ՀՀՌՀ-2018	2018-2020	10 012 000 դրամ	560 000 դրամ	Վ.Քոչարյան

		գայթերի դիֆրակցիայի ուսումնասիրման հիման վրա					
45	Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ	IQOS Microwave Dielectric Heating by Circular Waveguide Structure	Philip Morris	2020	8 827 000 դրամ	8 827 000 դրամ	Ա.Հախումյան
46	Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ	Մագնիսական նանո-հիբրիդները քաղցկեղի բուժման համար	Հորիզոն-2020 (857502)	2019- 2022	364 162.5 €	56 727.9 €	Ա.Մանուկյան
47		Շրջակա միջավայրի հեռահար զննման օպտիկական համակարգ՝ ըստ շառավղի քառակուսային բացթողումով ապոդիզացնող ֆիլտրով	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ISTC)	2017-2020	201 200 \$	34 824.9 \$	Ա.Մարտիրոսյան
48		Օպտիկական մագնիսական սենսորային համակարգի մշակում անվտանգության անցակետերի համար	NATO SPS, MYP G5794	2020-2023	150 790 €	49 790 €	Ա.Պապոյան
49		Քվանտային երկվիճակ մոդելներ դիսիպացիայով	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2020	5000 \$	5000 \$	Ա.Իշխանյան
50		Ռեյաստիվիստական ալիքային հավասարումների լուծումները Հոյնի ֆունկցիաների միջոցով	EIF/PM FR	2020	4 833 200 դրամ	4 833 200 դրամ	Ա.Իշխանյան
	Ընդամենը՝				171 406 480 դրամ 379 734.7 \$ 2 923 175.5€	65 229 880 դրամ 140 090.9 \$ 585 423.9 €	

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն իրականացրել է իր կանոնակարգային գործառնությունները ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությունը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին խթանելու ուղղությամբ՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման Հորիզոն 2020 (Հ2020) ծրագրի վրա: Մասնակցության խթանման գործընթացն իրականացվել է միջազգային և եվրոպական գիտական ծրագրերի մասին տեղեկատվության լայն տարածման և իրազեկության բարձրացման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող հարցերի շուրջ խորհրդատվության տրամադրման, արտասահմանյան գործընկերների փնտրման գործում օժանդակության ցուցաբերման, տեղեկատվական միջոցառումների կազմակերպման միջոցով: Նկատի ունենալով համաճարակով պայմանավորված սահմանափակումները՝ միջոցառումները հիմնականում կազմակերպվել են առցանց տարբերակով:

Բաժնի կողմից ստեղծված շահառուների բազան համալրվել է նոր շահառուներով:

Տարվա ընթացքում գրանցված շահառուներին էլեկտրոնային ցանցով տարածվել է մոտ 250 տեղեկատվություն եվրոպական և այլ միջազգային դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերի, հայտարարված բաց մրցույթների, իրականացվող նախագծերի, կայանայիք միջոցառումների մասին: Տարածվել են նաև տարբեր աղբյուրներից (Հ2020 կոնտակտային կազմակերպությունների եվրոպական ցանցեր, ԳԱԱ մասնակցությամբ միջազգային նախագծեր) ստացված գործընկերների փնտրման տեղեկատվական թերթիկներ, որոնք ուղղված են օժանդակելու գիտնականներին գտնել գործընկերներ համատեղ նախագծերի առաջարկների համար: Տարվա ընթացքում տրամադրվել է մոտ 150 անհատական խորհրդատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասնակցությանն առնչվող տարբեր հարցերի շուրջ: Հ2020 ծրագրի տեղեկատվական կայքում (<http://h2020.sci.am/>) պարբերաբար տեղակայվել է մանրամասն տեղեկատվություն ծրագրի, կոնտակտային անձանց ցանցի, բաց մրցույթների, գործող նախագծերի, միջազգային միջոցառումների, առցանց սեմինարների և գործընկերների փնտրման առաջարկների վերաբերյալ, որը հասանելի է եղել նաև Հ2020 ծրագրի հայաստանյան ֆեյսբուքյան էջում (<https://www.facebook.com/Horizon2020 Armenia/>): Տարվա ընթացքում էջին գրանցվել է 248 մասնակից՝ ընդհանուր գրանցվածների թիվը հասցնելով 1403-ի: Ակտիվացվել է նաև Հ2020 հայաստանյան Թվիթթեր սոցիալական ցանցի էջը, որին գրացվել է 79 մասնակից (<https://twitter.com/H2020Armenia>):

Հանդիսանալով Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի (ՁԵՑ) հաղորդակցման կենտրոն՝ բաժինը մատուցել է նորարարության կառավարման և առևտրայնացման աջակցության ծառայություններ ՀՀ կազմակերպություններին: Պարբերաբար պատրաստվել և տարածվել է տեխնոլոգիաների առաջարկների և հարցումների, ինչպես նաև գիտատար փոքր և միջին ձեռնարկությունների համար Հ2020 ծրագրի գործընկերների որոնման տեղեկաթերթ, որն այս տարի ներկայացվել է նոր արդիական ձևաչափով: ՁԵՑ-ի միջազգային հիմնապաշարում տեղադրվել է հայաստանյան կազմակերպությունների տեխնոլոգիաների 2 առաջարկ, կնքվել է 1 համագործակցության պայմանագիր: Աջակցություն է ցուցաբերվել Հ2020-ի ՓՄՁ-ների համար նախատեսված մրցույթներին դիմելու համար առաջարկներ նախապատրաստելու ուղղությամբ: Այս առումով բաժնի կողմից տրամադրվող ծառայություններն ուղղված են եղել ոչ միայն ակադեմիական ինստիտուտներին, այլև բոլոր գերատեսչական գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, գիտատար գործունեությամբ զբաղվող ՓՄՁ-ին և հասարակական կազմակերպություններին:

ԳԱԱ նախագահության մասնակցությամբ Հ2020 ծրագրի *EURAXESS-AM* նախագծի շրջանակներում ստեղծվել և հասանելի է դարձել *EURAXESS* ցանցի հայաստանյան կայք-պորտալը: Այստեղ հասանելի է Հայաստանի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվություն՝ Հայաստանում գիտակրթական կարիերան շարունակել ցանկացող արտասահմանյան մասնագետների համար: ՀՀ գիտնականները կարող են գրանցվել և տեղեկատվություն ստանալ եվրոպական տարբեր հաստատություններում կարիերայի բարելավման և վերապատրաստման հնարավորությունների վերաբերյալ (<https://www.euraxess.am/>): Ստեղծվել է նաև *EURAXESS-ի* հայաստանյան կոնտակտային կազմակերպությունների ցանց, որում ընդգրկվել են Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը: Նախագծի շրջանակներում հունիսին կազմակերպվել է առցանց թրեյնինգ-սեմինար, որի ավելի քան 30 մասնակիցներին ներկայացվել են *EURAXESS* ցանցի կողմից առաջարկվող գիտակրթական մասնագետների կարիերայի բարելավմանը միտված հնարավորությունները:

Եվրոպական Հորիզոն 2020 ծրագրին ներկայացվել է ՀՀ 285 կազմակերպության մասնակցությամբ 248 հայտ, որոնցից հավանության են արժանացել 34-ը՝ մոտ 3.8 մլն. եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ: Հավանության արժանացած նախագծերից 21-ում ներկայացված է ԳԱԱ համակարգի 6 կազմակերպություն՝ շուրջ 2 միլիոն եվրո ընդհանուր ֆինան-

սավորմամբ: Այդ կազմակերպություններն են՝ ԳԱԱ նախագահությունը, Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը:

Բաժնի կողմից նախաձեռնվել է նոր առաջարկի նախապատրաստում՝ ՀՀ 2020 ծրագրի «Եվրոպական գիտնականների գիշեր» մրցույթին ներկայացնելու համար (MSCA-NIGHT-2021): Առաջարկի նպատակն է «Գիտնականների գիշեր» խորագրով միջոցառումների շարք անցկացնել Հայաստանում, որոնք նպատակ ունեն գիտության հանդեպ հետաքրքրություն արթնացնել լայն հանրության, մասնավորապես երիտասարդ սերնդի մոտ և մոտիվացնել նրանց զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ:

Մեպոտենբեր-հոկոտենբեր ամիսներին եվրոպացի գործընկերների հետ կազմակերպվել է առցանց տեղեկատվական միջոցառումների շարք՝ մոտ 1 միլիարդ եվրո ընդհանուր բյուջեով, ՀՀ 2020 ծրագրի շրջանակներում հայտարարված Green Deal ընդհանուր խորագրով մրցույթներին հայաստանյան կազմակերպությունների մասնակցությունը խթանելու նպատակով: Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հայկական կազմակերպությունների կողմից այս մրցույթներին ներկայացվող նախագծերի նախապատրաստման փուլում եվրոպական փորձագետների հնարավոր ներգրավման և լրացուցիչ խորհրդատվության իրականացման վերաբերյալ:

ՀՀ 2020 ծրագրի «Գիտությունը հանուն հասարակության» ենթածրագրի կոնտակտային անձանց ցանցի հերթական համաժողովն անցկացվել է փետրվարին, Երևանում, որին մասնակցել է 20 եվրոպացի փորձագետ:

Տարվա ընթացքում բաժնի աշխատակիցները մասնակցել են Ավստրիայում, Բելգիայում և Ֆրանսիայում տեղի ունեցած համաժողովներին, ինչպես նաև առցանց տարբերակով կազմակերպված բազում միջազգային միջաջողումներին և թրեյնինգներին: Այդ միջոցառումների շարքից է Եվրահանձնաժողովի կողմից դեկտեմբերին կազմակերպված ԵՄ-Արևելյան գործընկերության գիտության և նորարարության հանձնախմբի հերթական առցանց համաժողովը, որտեղ ներկայացվել է ԵՄ-Հայաստան գիտահետազոտական համագործակցության և զարգացումների վերաբերյալ զեկույց:

## ԿԻՐԱՌԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի գործունեության հիմնական գործառնությունները ներառել են ԳԱԱ ինստիտուտներին տեխնոլոգիաների փոխանցման և նորարարական հետազոտական արդյունքների առևտրայնացման աջակցության տրամադրումը, խորհրդատվությունը տեխնոլոգիաների և շուկայի գնահատման, գործընկերների որոնման, ֆինանսական աջակցություն գտնելու և այլ գործընթացներում: Տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն նորարարական առաջարկներ ունեցող անհատներին, ԳԱԱ ինստիտուտների գիտնականներին և հետազոտողներին:

Հավաքագրվել են ԳԱԱ ինստիտուտների՝ նախորդ տարվա ներկայացված կիրառական արդյունքները, առաջիկայում կրկին կիրականացվի միջազգային ընդհանուր շուկայի հետազոտություն, առևտրայնացման բոլոր հնարավոր եղանակների ու միջոցների ուսումնասիրություն և խթանում:

Դիտարկվել է ԳԱԱ ՔՖԻ Կապանի մետալուրգիայի և հանքահարստացման լաբորատորիայի նորարարական առաջարկը և միջնորդություն է ներկայացվել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (ԲՏԱՆ) ընդգրկելու ներդրումային ծրագրերում: Ձևավորվել է մոլիբդենի կոլեկտիվ բազմամետաղային և պիրիտային խտանյութերի

համալիր վերամշակման անթափոն նոր տեխնոլոգիաների փորձարարական կայանի ստեղծման առաջարկություն և սկսվել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ այդ առաջարկն իրագործելու բանակցություններ:

Եվրահանձնաժողովի կողմից Արևելյան գործընկերության երկրների տեխնոլոգիաների փոխանցման համակարգերի ուսումնասիրության նախաձեռնության շրջանակներում բաժնի կողմից պատրաստվել և եվրոպացի փորձագետներին է ներկայացվել ԳԱԱ-ում և Հայաստանում տեխնոլոգիաների փոխանցման և նորարարության աջակցության ոլորտում իրավիճակի և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկաշար: Նախաձեռնության արդյունքում եվրոպացի փորձագետները կնախապատրաստեն Արևելյան գործընկերության երկրների նորարարության և տեխնոլոգիաների փոխանցման համակարգերի համեմատական վերլուծություն, կներկայացվեն առաջարկություններ տվյալ ոլորտում հնարավոր բարեփոխումների վերաբերյալ ([https://knowledge4policy.ec.europa.eu/technology-transfer\\_en](https://knowledge4policy.ec.europa.eu/technology-transfer_en)): Նախապատրաստվել է նաև ԳԱԱ կարծիքը ՀՀ մտավոր սեփականության իրավունքի կառավարման ծրագրի նախագծի վերաբերյալ:

Իրականացվել է ԳԱԱ ինստիտուտների «Ռազմարդյունաբերության ոլորտին» առնչվող առաջարկների և հայտերի հավաքագրում, մշակում և ներկայացում ԲՏԱՆ Ռազմարդյունաբերության պետական կոմիտե:

Ի պատասխան ԲՏԱՆ-ն հարցմանը՝ պատրաստվել և ներկայացվել է փորձագիտական եզրակացություն ՌՈՏ-54/2.6 ռադիոսպտիկական հեռադիտակի շահագործման գիտական նպատակահարմարության վերաբերյալ:

Տարվա ընթացքում շահառուներին են փոխանցվել տարբեր աղբյուրներից ստացված տեխնոլոգիական առաջարկների և հարցումների վերաբերյալ տեղեկաթերթեր:

Բաժինը մասնակցել է տեխնոլոգիաների փոխանցման և առևտրայնացման վերաբերյալ մի շարք միջազգային առցանց սեմինարների: Նախագիծը բարելավվել է և տարվել են համապատասխան բաց մրցույթներին այն կրկին ներկայացնելու աշխատանքներ:

Որպես Հայաստանի աշխատանքային խմբի անդամ՝ ԿՕԲ-ը մասնակցել է ԱՊՀ երկրների (Նավիգացիա) 54-րդ միջպետական խորհրդի աշխատանքներին, որտեղ քննարկվել և ընդունվել է Ռադիոնավիգացիայի զարգացման հիմնական ուղղությունների ծրագրի նախագիծը:

## ՍՓՅՈՒՌՔԻ ԲԱԺԻՆ

Բաժինն արտասահմանյան անդամների հետ պահպանելով անմիջական կապ՝ համագործակցության նրանց առաջարկների մասին իրազեկում է ԳԱԱ կազմակերպություններին, իսկ արտասահմանյան անդամներին՝ ԳԱԱ կողմից կազմակերպվող միջոցառումների մասին: Հավաքագրվում և պարբերաբար ԳԱԱ կայքէջում թարմացվում են նրանց անհատական տվյալները հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, պարբերաբար թարմացվում են նաև արտասահմանյան անդամների անհատական տվյալները, կենսագրությունը, գիտական գործունեությունը շարունակաբար ներկայացվում է ԳԱԱ «Գիտություն» թերթում:

Ստորև բերվում է ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակը՝ ըստ գիտության ուղղությունների և երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և Երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	9	7	10	10	8	44
2	ԱՄՆ	10	6	9	4	6	35



3	Ֆրանսիա	1	4	2	2	5	14
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					2	2
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			2			2
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Պորտուգալիա					1	1
13	Իրան	1					1
14	Հունաստան	1					1
15	Բելառուս				1		1
16	Կորեա		1				1
17	Լիբանան					1	1
<b>Ընդամենը՝</b>		<b>26</b>	<b>25</b>	<b>28</b>	<b>19</b>	<b>23</b>	<b>121</b>

ԳԱԱ անունից արտասահմանյան անդամներին 28.09.2020թ. նամակով տեղեկացվել է, որ Ադրբեջանը Թուրքիայի բացահայտ աջակցությամբ սեպտեմբերի 27-ին, խախտելով բոլոր պայմանավորվածությունները և միջազգային համաձայնագրերը, սկսել է լայնածավալ պատերազմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Կոչ է արվել գիտական հանրությանն անտարբեր չմնալ և դատապարտել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից սանձազերծված պարերազմը: ԳԱԱ-ի կոչին առաջինն արձագանքել են ԳԱԱ մի շարք արտասահմանյան անդամներ՝ Բրիտանական գիտության ասոցիացիայի նախագահ, Դենհամի պրոֆ. լորդ Արա Դարզին, Հահնեման համալսարանի պրոֆեսոր Սիմոն Սիմոնյանը, Գերմանիայի Ռոստոկի համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ պրոֆ. Պետեր Լանգերը և պրոֆ. Ռալֆ Լյուդվիգը, Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական լսարանի Մեխանիկայի ինստիտուտի պրոֆ. Ալեքսանդր Սեյրանյանը, Սան Անտոնիոյում Տեխասի համալսարանի էներգետիկայի ֆակուլտետի պատվավոր պրոֆ. Սոս Աղայանը: Արձագանքելով կոչին՝ լորդ Արա Դարզին Լոնդոնի “The Times” պարբերականում տպագրված առաջնորդող հոդվածում կոչ է արել ՆԱՏՕ-ին շտապ գործել ու զսպել իր դաշնակից Թուրքիային՝ նախքան ականատես կլինենք արյունոտ ցեղասպանության կրկնությանը:

ԳԱԱ արտասահմանյան անդամներին ուղարկվել է նաև ԳԱԱ 16.10.2020թ. ուղերձը, նրանց ուշադրությունը հրավիրվել է արդեն առկա հումանիտար աղետին և կոչ է արվել հորդորել իրենց երկրների բարձրաստիճան պաշտոնյաներին ճանաչել Արցախի Հանրապետության անկախությունը՝ որպես Արցախի խաղաղ բնակչության դեմ իրականացվող ծանր հանցագործությունները կասեցնելու միակ միջոցի:

Արտասահմանյան անդամների կողմից ներկայացված համագործակցության առաջարկները, ԳԱԱ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ ձեռք բերված պայմանավորվածություններն ընդգրկում են մի շարք կարևոր ուղղություններ՝ համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, արտասահմանյան գիտական կենտրոնների և ԳԱԱ համակարգի կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում, համատեղ աշխատությունների պատրաստում, մասնակցություն Հայաստանում կազմակերպվող գիտակրթական և գիտակազմակերպական միջոցառումներին, համատեղ միջազգային գիտաժողովների կազմակերպում:

ԳԱԱ արտասահմանյան անդամների իրականացրած համագործակցության և աջակցության արդյունքներից կարելի է նշել.

## Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ

Արտասահմանյան անդամ Կ.Լիին (Կորեա) շարունակում է ակտիվ համագործակցությունը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ու ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի հետ միկրոալիքային սենսորների, թերմոէլաստիկ մանրադիտակի միջոցով նյութերի և մետաղական նանոմասնիկներով հեղուկների ուսումնասիրությունները: Գիտակրթական ծրագրերի շրջանակներում Սեուլի Սոգանգ համալսարանում շարունակում է սովորել և աշխատել ԵՊՀ վերոհիշյալ ամբիոնի մագիստրոս Ժ.Բադդասարյանը:

Արտասահմանյան անդամներ Ա.Բադդասարյանը և Վ.Սարյանը (ՌԴ) Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի հետ իրականացրել են որոշակի անհամասեռությունների առկայության ու բացակայության դեպքում բազմաշերտ միջավայրերում տարածվող տարբեր ալիքի երկարության ակուստիկական և էլեկտրամագնիսական ալիքների ցրման ու կուտակման երևույթների ուսումնասիրման տեսական ու փորձարարական հետազոտություններ: Իրականացվել են դաշտային փորձարարական հետազոտություններ Սևանա լճում ու նրան հարող տարածքներում, որոշվել են տարածքին բնորոշ ակուստիկական բնութագրերը, որոնք բարձր ճշտությամբ համընկել են տեսական հաշվարկների հետ:

Արտասահմանյան անդամ Ռ.Միրզոյանը (Գերմանիա) համագործակցում է ԻԿՐԱՆԵՏ կենտրոնի հետ՝ շարունակելով «MAGIC» պատկերային մթնոլորտային չերենկովյան դիտակների համակարգով տարբեր աստղաֆիզիկական աղբյուրներում տեղի ունեցող գերբարձր էներգիաների պրոցեսների ուսումնասիրությունը:

Արտասահմանյան անդամ Լ.Բուգանի (ՌԴ) համագործակցությունը Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ շարունակվում է հայ-ռուսական համատեղ «Նոր ֆունկցիոնալային նանոնյութերի ստեղծում՝ հիմնված ածխածնային պատիճով երկաթի միացությունների վրա բարձր էֆեկտիվությամբ չարորակ ուռուցքների մագնիսական գերտաքացման համար» ծրագրի շրջանակում: Ներկայումս համագործակցությունը շարունակվում է նաև հայ-ռուսական «Ֆեռոմագնիսական բարակ նանոգրաֆենային կլաստերների սինթեզը, ատոմական կառուցվածքը և կարգավորված մագնիսական բնութագրերն ածխածնային միկրո- և նանոսֆերաներում» ծրագրի շրջանակում:

Արտասահմանյան անդամ Ա.Սեդրակյանը (Գերմանիա) Բյուրականի աստղադիտարանի «Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելատիվիստական գրավիտացիա» գիտահետազոտական խմբի ղեկավարն է, աջակցում է նրա աշխատանքներին:

Արտասահմանյան անդամ Ֆ.Մկրտչյանը (ՌԴ) և ՀՊՏՀ-ի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս.Գևորգյանը մշակել են Սևանա լճի էկոհամակարգի վիճակի կանխատեսման նոր տեղեկատվական տեխնոլոգիա և մոդել, որը կնպաստի տարածաշրջանն անցանկալի փոփոխություններից պահպանելու պետական որոշումների կայացմանը: Սինթեզվել է երեք նոր օպտիկական համակարգ, որը թույլ կտա հայտնաբերել ջրի որակի անցանկալի փոփոխությունները:

Արտասահմանյան անդամ Վ.Աղաբեկովի (Բելառուս) ղեկավարած ԲԳԱ նոր նյութերի քիմիայի ինստիտուտի, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի և Սաուդյան Արաբիայի Աբդուլազիզի անվ. տեխնոլոգիական կենտրոնի հետ կնքված եռակողմ համաձայնագրով ընթացքի մեջ են «Պոլիմերային բենզիմիդազոլների սինթեզն ու կիրառման հնարավորությունները» թեմայով աշխատանքները:

Արտասահմանյան անդամ Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակում է համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: Նա ՄԳՏԿ A-2289 նախագծի արտասահմանյան կոլաբորատորն է, ակտիվորեն մասնակցում է ոչ սպիտակուցային ամինաթթուների

և պեպտիդների սինթեզին և կենսաբանական ակտիվությանը վերաբերող հետազոտություններին, ներդրել է կետային մուտագենեզի տեխնոլոգիան, խորհուրդներով աջակցում է բարձրորակ գիտական աշխատանքների կատարմանը և նոր ռեկոմբինանտ շտամ արտադրիչների ստեղծմանը: Հատկապես կարևորվում է Վ.Սաքանյանի դերը երիտասարդ գիտնականների հետ տարվող աշխատանքներում: Նրա շնորհիվ երիտասարդները տիրապետում են մոլեկուլային կենսաբանության ժամանակակից մի շարք մեթոդներին և մասնակցում նախագծերի իրականացմանը: Նա տրամադրել է թանկարժեք նյութեր՝ մուտագենեզի և ՊՇՌ մաքրման լրակազմեր, ՊՇՌ-ի ֆերմենտներ, վեկտորներ, ռեստրիկտազներ, պրայմերներ, ազարոզ, մանրէների աճի սննդամիջավայրերի համար բաղադրամասեր, աֆինային քրոմատոգրաֆիայի խեժեր և այլն: Նա համագործակցում է Կենսաքիմիայի ինստիտուտի կենսաինժեներիայի խմբի հետ (ղեկ.՝ կ.գ.թ. Գ.Գյուլխանյան): Համակարգչային մոդելավորման մեթոդով ուսումնասիրվել է nitro-benzoxadiazoly (NBD) ոչ պեպտիդային բնույթի ցածրամոլեկուլյար միացության կոմպլեքսավորումն օնկոլոգիական ռեցեպտոր EGFR-ի հետ:

Արտասահմանյան անդամ Պ.Լանգերը (Գերմանիա) «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ, հայ-գերմանական համագործակցության շրջանակներում, շարունակում է իրականացնել համատեղ գիտահետազոտական և գիտակրթական մի շարք ծրագրեր: Նա ՄԳՏԿ A-2289 ծրագրի գիտական խորհրդատուն է: Ռոստոկի համալսարանի (Գերմանիա) երիտասարդ գիտնականների վերապատրաստման ծրագրի շրջանակներում Ս.Սարգսյանը 6 ամսով մեկնել է Ռոստոկ՝ համատեղ հետազոտություններ իրականացնելու, որի արդյունքները հրատարակվել են բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրում:

Արտասահմանյան անդամ Գ.Անտրանիկյանը (Գերմանիա) ակտիվորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի մոլեկուլային կենսաբանության լաբորատորիայի հետ: Համագործակցությունը շարունակվում է «Հիպերթերմոֆիլ բնույթի կարբամոլիզի կիրառումը N-կարբամոլիլ-D-ամինաթթուների էնզիմատիկ հիդրոլիզում» թեմայի շրջանակներում. եղել են կատարողների փոխայցելություններ, որոնք մեծ նշանակություն են ունեցել թե՛ արժեքավոր գիտական արդյունքների ստացման, թե՛ փորձի փոխանակման, նոր գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և զարգացման առումով: Իրականացվել է Ջերմուկի տաք աղբյուրներից ստացված մետաղնումի անալիզ և հետաքրքրություն ներկայացնող 2 նոր ֆերմենտի կլոնավորում և բնութագրում, նշված աղբյուրների մանրէային և արքեալ կենսաբազմազանության գնահատում: Հաստատվել է Գ.Անտրանիկյանի կողմից ղեկավարվող, Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարություն կողմից ֆինանսավորվող «Եվրասիայի էքստրեմոֆիլները որպես նոր հակաբիոտիկների աղբյուր» համատեղ ծրագիրը, որին մասնակցում են հայկական և դազախստանյան կողմերը: Պրոֆ. Գ.Անտրանիկյանի նպատակը Հայաստանում նորագույն սարքավորումներով հագեցած լաբորատորիայի, ինչպես նաև համագործակցող, բաց գիտական միջավայրի ստեղծումն է, որտեղ կարող են ծնվել և իրականացվել նոր գաղափարներ:

Արտասահմանյան անդամ Ա.Դարզին (Մեծ Բրիտանիա) Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ է, “Global Health Research Unit”-ի ծրագրի շրջանակներում շարունակում է համագործակցությունը ՀՀ առողջապահական կառույցների հետ:

Արտասահմանյան անդամ Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) սերտորեն համագործակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Նա ինստիտուտի և Լիլի համալսարանի հայցորդ Վ.Մերոբյանի ատենախոսության համադեկավար է, նրա աջակցությամբ ինստիտուտի ասպիրանտ Հ. Հովակիմյանը 1 տարով հյուրընկալվել է Լիլի համալսարանում և կատարել համատեղ հետազոտական աշխատանք: Տ.Դանիելյանի աջակցությամբ համատեղ գիտական հետազոտությունները ֆինանսավորել են Երևանում Ֆրանսիայի դեսպանությունը և «Էրազմուս+» ծրագիրը: Տ.Դանիելյանի աջակցությամբ ԵՊՀ 2 մագիստրոս հյուր-

ընկալվել են համալսարանում:

Արտասահմանյան անդամ Է.Կարախանովը (ՌԴ) շարունակում է համագործակցությունը Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ «Անցումային շարքի մետաղների կարբիդներն ու բորիդները՝ որպես կատալիզատորներ հիդրոպրոցեսներում» ծրագրի շրջանակներում: Համատեղ հետազոտություններ են իրականացվում ժամանակակից եղանակներով հետերոգեն կատալիզատորների սինթեզի, դրանց կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտման և տարբեր մոդելային և կիրառական նշանակություն ունեցող ռեակցիաներում դրանց կատալիզային ակտիվության գնահատման բնագավառներում: Համագործակցության շրջանակներում իրականացվում է «Անցումային մետաղների նանոչափսի օքսիդների միկրոալիքային սինթեզը և դրանց կատալիտիկ ակտիվության ուսումնասիրությունները ծծումբօրգանական միացությունների օքսիդացման ռեակցիաներում» ծրագիրը:

Արտասահմանյան անդամ Վ.Հարությունովը (ՌԴ) շարունակում է Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ բնական գազից՝ պրոպանից արժեքավոր պրոպիլենի և բութիլենի մոնոմերների ստացման հետազոտությունները: Ցույց է տրվել, որ կվարցե երկսեկցիոն շիթային ռեակտորում պրոպանի ջերմաքայքայման էթիլեն ավելացնելիս ռեակցիոն համակարգում մեծանում է նպատակային արգասիքի՝ պրոպիլենի ելքը: Բարձր ջերմաստիճանում նկատվում է խեժանման նյութերի առաջացում: Ռեակցիայի արգասիքներում կոդմային թթվածին պարունակող արգասիքների բացակայությունը պրոպանի և էթիլենի զուգորդված ջերմաքայքայումը դարձնում է ավելի ուշագրավ պրոպանի և էթիլենի օքսիդացիոն ջերմաքայքայման նկատմամբ:

Արտասահմանյան անդամ Ս.Օրդանյանի (ՌԴ) համագործակցությունը Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ շարունակվել է Հայաստանի լեռնային սիլիկատային ապարների և քարերի (ներառյալ տուֆեր) վերամշակման բարձր մաքրությամբ նյութերի ստացման արդյունաբերական արտադրության տեխնոլոգիաների մշակման և ներդրման ուղղությամբ՝ մեքենաշինության բնագավառում կերամիկական և գերկարծր նյութեր ստանալու համար:

Արտասահմանյան անդամ Ա.Կոստանյանը (ՌԴ) համագործակցում է Մ.Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի հետ, հետազոտում են ոչ մետաղական հանքանյութերից արժեքավոր նյութերի ստացման տեխնոլոգիաները, պղնձի կորզման և մոլիբդենիտային խտանյութերից բարձր մաքրության նանոկառուցվածքի նյութերի ստացման համալիր տեխնոլոգիաները:

Արտասահմանյան անդամ Ա.Ղազարյանը (ՌԴ) շարունակում է համագործակցությունն Արվեստի ինստիտուտի հետ «Հայկական սփյուռքի կենտրոնների արվեստը. Նոր-Նախիջևանի հայկական գաղթավայր. Դոնի Ռոստով» ծրագրով, որի նպատակն է հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրել Նոր Նախիջևանի հայկական գաղութի արվեստը (կերպարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն և թատրոն), կուսումնասիրվի հայկական որևէ գաղթօջախի արվեստը:

Ստեղծված գիտական կապերի և համագործակցության խորացման արդյունքում հայ-ռուսական և այլ միջազգային հիմնարար գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի մրցույթին Հայաստանի գիտական խմբերի հետ, որպես մյուս կողմի գիտական խմբերի ղեկավարներ, համատեղ հայտեր են ներկայացնում նաև արտասահմանյան անդամները, իրականացնում մի շարք գիտական ծրագրեր:

Արտասահմանյան անդամների մի մասը շարունակում է սկսված համագործակցությունը, պարբերաբար քննարկումների արդյունքում հստակեցվում և ձևակերպվում են համատեղ նոր հետազոտությունների խնդիրները:

Շատ կարևոր է, որ գիտական կապերի և համագործակցության սերտացման շնորհիվ

կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները և հնարավորությունները միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտություններ կատարելու համար, ինչը խրախուսելի է, քանի որ ՀՀ-ում առկա սարքավորումներով հնարավոր չէ ժամանակակից բարձր մակարդակի հետազոտություններ կատարել: Նման հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը: Համատեղ հետազոտությունները նպաստում են նաև Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

### **Մասնագետների պատրաստում և վերապատրաստում**

Արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցում են ԳԱԱ և բուհական համակարգի կազմակերպությունների երիտասարդ մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը, նաև ասպիրանտների գիտական ղեկավարներ և համադեկավարներ են: Սակայն համավարակի պատճառով այդ այցելություններն էապես պակասել են:

Արտասահմանյան անդամներ Կարեն և Արմեն Քոչարյանները (ԱՄՆ) Ն.Քոչարյանի անվան ամենամյա միանվագ դրամաշնորհ են տրամադրում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Արտասահմանյան անդամ Վ.Գրեգորյանի (ԱՄՆ) անվան ամենամյա կրթաթոշակ է սահմանվել երիտասարդ արևելագետների և պատմաբանների համար «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության կողմից:

Հ.Փանոսյանի նախաձեռնությամբ ԱՐՓԱ-ն երիտասարդ մասնագետների համար կազմակերպում է նորարարության ամենամյա մրցույթ, որի նպատակն է խրախուսել նորարական միտքը և խթանել նրա զարգացումը:

Պետք է նշել, որ արտասահմանյան անդամների առաջարկները և հնարավորությունները՝ իրենց գիտական կենտրոններում կազմակերպել հայաստանաբնակ երիտասարդ մասնագետների ասպիրանտական ուսուցումն ու վերապատրաստումն ավելին են, քան ներկայացվում է:

### **Համատեղ աշխատությունների հրատարակում**

Արտասահմանյան անդամների և ՀՀ ակադեմիական ու բուհական համակարգերի գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են գրքեր, նրանց հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում: Համատեղ հետազոտությունների արդյունքների տպագրումը և զեկուցումները գիտաժողովներում նպաստում են Հայաստանի գիտության միջազգային վարկանիշի բարձրացմանը:

### **Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտագործնական միջոցառումներին**

COVID-19 համավարակով պայմանավորված՝ 2020թ. ՀՀ-ում կազմակերպված գիտական, գիտակազմակերպական միջոցառումներին արտասահմանյան անդամները մասնակցել են առցանց, աջակցել են ծրագրային և կազմկոմիտեների աշխատանքներին:

Արվեստի ինստիտուտն ու Ճարտարապետության և շինարարական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության ու պատմության գիտահետազոտական ինստիտուտը (տնօրեն՝ արտասահմանյան անդամ

Ա.Ղազարյան) Մոսկվայում անց են կացրել «Архитектура: наследие, традиции и новации» միջազգային գիտաժողովը:

Արտասահմանյան անդամներից ումանք ընդգրկված են ՀՀ գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում և գիտական հանդեսների խմբագրական կազմերում, իսկ հայազգի անդամներից մի քանիսը Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) խորհրդի անդամ են:

### Մասնակցությունը գիտական փորձաքննությանը

ԳԱԱ հայազգի արտասահմանյան անդամներն ընդգրկված են ԿԳՄՄՆ ԳԿ փորձագետների տվյալների շտեմարանում, մասնակցում են բյուջետային ֆինանսավորման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող գիտական հետազոտությունների նախագծերի (տեղական և համատեղ միջազգային) հայտերի գիտական փորձաքննությանը:

Արտասահմանյան անդամ Վ.Պետրոսյանը Վ.Համբարձումյանի անվ. միջազգային գիտական մրցանակի միջազգային հանձնաժողի անդամ է, Վ.Գրեգորյանը և Ա.Դարզին մեծ ներդրում ունեն «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության աշխատանքներում, Ա.Ղազարյանն ընդգրկվել է Արվեստի ինստիտուտում գործող Արվեստագիտության մասնագիտական խորհրդի կազմում:

Արտասահմանյան անդամներից ումանց գիտական, գիտամանկավարժական և գիտակազմակերպական գործունեությունը գնահատվել է իրենց երկրների կողմից. պարգևատրվել են պետական, կառավարական պարգևներով և մրցանակներով, ստացել են արտերկրի պետությունների գիտական կոչումներ, եվրոպական և միջազգային մրցանակներ:

## ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

### Ասպիրանտուրա

Տարեսկզբին ԳԱԱ ասպիրանտուրայում պետական պատվերով սովորել է 89 (32-ն առկա, 57-ը հեռակա), վճարովի հիմունքներով 6 (3-ն արտերկրացի) ասպիրանտ: Հայցորդների թիվը 176 է (75-ը վճարովի, 101-ն անվճար հիմունքով՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 30 ասպիրանտ (11-ն առկա, 19-ը հեռակա, որոնցից 1-ը վճարովի հիմունքներով (արտերկրացի ասպիրանտ)): 2020թ. ասպիրանտուրա է ընդունվել 47 ասպիրանտ (32-ն առկա, 5-ը հեռակա, 10-ը վճարովի հիմունքներով):

Առ 01.01.2021թ. պետպատվերով սովորող ասպիրանտների ընդհանուր թիվը 98 է (55-ն առկա, 43-ը հեռակա, 15-ը վճարովի հիմունքներով, որոնցից 2-ն արտերկրի քաղաքացի): Հայցորդների թիվը 168 է (78-ը վճարովի, 90-ն անվճար հիմունքներով՝ ԳԱԱ համակարգի աշխատակիցներ):

2020թ. ԳԱԱ-ում պաշտպանվել է 20 թեկնածուական ատենախոսություն (6 ասպիրանտ, 14 հայցորդ):

Ասպիրանտների բաշխումն ըստ բաժանմունքների

ԳԱԱ բաժանմունքները և գիտական կազմակերպությունները	2020թ. ընդունվել են ասպիրանտուրա			Ասպիրանտների թվաքանակն առ 01.01.21թ.		
	առկա	հեռ.	վճար.	առկա	հեռ.	վճար.
Մաթեմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունք	5	0	1	10	4	1
Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք	6	0	1	11	2	2

Բնական գիտությունների բաժանմունք	8	1	1	12	9	1
Քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք	3	1	0	5	2	0
Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք	9	3	6	16	26	8/2*
Գիտակրթական միջազգային կենտրոն	1	0	1	1		3
<b>Ընդամենը՝</b>	<b>32</b>	<b>5</b>	<b>10</b>	<b>55</b>	<b>43</b>	15/2*

\* Այդ թվում՝ արտերկրից

### Մագիստրատուրա

Տարեկգգին մագիստրատուրայում սովորել է 719 մագիստրանտ (1-ին կուրսում 357, որոնցից 9-ը պետպատվերով, 2-րդ կուրսում 325, որոնցից 8-ը պետպատվերով, հեռավար ուսուցմամբ 37): Միյուրքահայ և արտերկրացի մագիստրանտների թիվը 1-ին կուրսում 3 է, 2-րդ կուրսում՝ 9:

Մագիստրանտների բաշխումն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Մագիստրանտների թվաքանակն առ 01.01.21թ.			
	1-ին կուրս		2-րդ կուրս	
	վճարովի	պետպատվեր	վճարովի	պետպատվեր
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	14(2*)	2	10	-
Կառավարում (առկա/հեռակա)	7(1*)/11	1	17/13	3
Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ (առկա/հեռակա)	11	1	8	-
Իրավագիտություն (առկա/հեռակա)	28(1*)/71	2	33/67(1*)	2
Դեղագիտություն	6	-	7	1
Սոցիալական և քաղաքական հոգեբանություն (առկա/հեռակա)	13/9(1*)	-	8/27	-
Արևելագիտություն	7	-	6	1
Միջազգային հարաբերություններ	12	1	-	-
Գործարար վարչարարություն (առկա/հեռակա)	11/10	-	18/16	1
Շուկայագիտություն	9	-	12	1
Բնապահպանություն և բնօգտագործում	4	2	4(1*)	-
Սոցիալական մանկավարժություն (հեռակա)	19	-	15	-
Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ (հեռակա)	6	-	8	-
Ընդհանուր և հայ լեզվաբանություն	-	-	-	-
Զրոսաշրջության կառավարում (հեռակա)	7(1*)	-	10	-
Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն (հեռակա)	9	-	20	-
Մոլեկուլային և բջջային կենսաբանություն	5(1*)	1	-	-
Հոգեբանություն, կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա	9/16	-	-	-
<b>Ընդամենը՝</b>	<b>125(5*)/169(2*)</b>	<b>10</b>	<b>115(1*)/184(1*)</b>	<b>9</b>

\* Այդ թվում՝ արտերկրից

2019-20 ուստարվա առկա ուսուցմամբ շրջանավարտները 116-ն են (14-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ), հեռակա ուսուցմամբ՝ 123-ը (3-ը մագիստրատուրան ավարտել է գերազանցությամբ):

Հաշվետու տարում մագիստրատուրա ընդունվածների թիվը 304 է (10-ը պետպատվերով): Տարեվերջին մագիստրանտների ընդհանուր թիվը 644 էր (63-ը հեռակա ուսուցման 3-րդ ավարտական կուրսում):

2020թ. ԳԱԱ ԳԿՄԿ-ն պատրաստել և ԿԳՄՍ նախարարություն է ներկայացրել և ստացել «Ֆինանսների կառավարում» և «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթական ծրագրով գործունեություն իրականացնելու թույլտվություն (կրթության ձևը՝ հեռավար):

ԳԿՄՍ նախարարություն է ներկայացվել և թույլտվություն է ստացվել շարունակել «Գործարար վարչարարություն» մասնագիտությամբ (հեռավար ուսուցում) մագիստրոսական կրթական ծրագրով գործունեության իրականացումը (նախկինում տրված թույլատվության 3 տարի ժամկետը ավարտվել է 2020թ.):

ԳԿՄԿ-ն շարունակվում է հրատարակել «Կաճառ» գիտական պարբերականը:

Կենտրոնն ինտենսիվորեն զարգացնում է միջազգային կապերը և ընդլայնում ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը: Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերում ստորագրվել են միջազգային համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր, համագործակցում ենք մի շարք միջազգային ուսումնական հաստատությունների և համալսարանների հետ, որոնցից են Տուշայի և Բոլոնիայի (Իտալիա), Դոմբովա-Գուրնիչայի, Կրակովի (Լեհաստան) գյուղատնտեսական և մանկավարժական համալսարանները և այլն: Կենտրոնը մասնակցում է նաև «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» և «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրերին, որոնց շրջանակներում ձեռք է բերվել համակարգչային և այլ տեխնիկա, իրականացվել են բովանդակության բարելավմանն ուղղված գործողություններ:

### *Գիտական խմբեր*

Գերհաղորդականության խումբ: Ուսումնասիրվել է ջերմամշակված բազմաբյուրեղային  $YBa_2Cu_3O_x$  բարձր ջերմաստիճանային գերհաղորդիչների էլեկտրատրանսպորտային և գերհաղորդչային հատկությունների ժամանակային էվոլյուցիան՝ օգտագործելով հեղուկ ազոտի ջերմաստիճանում տեսակարար դիմադրության  $r(78K)$  կախվածությունը տրանսպորտային հոսանքից (0.1-300) mA միջակայքում: Հաստատվել է, որ ինչպես գերհաղորդիչ վիճակի անցման սկզբի  $T_c^{on}$  ջերմաստիճանը, այնպես էլ  $r(78K)$ -ը, ջերմամշակումից հետո անցած 2 տարվա ընթացքում, ժամանակից կախված փոփոխվում են ոչ մոնոտոն ձևով և ոչ միշտ են դրսևորում համափուլ վարքագիծ: Պարզվել է, որ այդ ընթացքում նմուշներում դիտվել է տրանսպորտային հոսանքի՝ մագնիսական դաշտով պայմանավորված դրական մագնիսադիմադրություն: Սակայն ջերմամշակումից մեկ տարի անց, հոսանքների  $22mA < I < 25mA$  միջանկյալ տիրույթում, դիտվել է նաև բացասական մագնիսադիմադրություն: Ստացված արդյունքները մեկնաբանվում են էլակետային նմուշներում միկրոսկոպիկ մակարդակով առկա և ջերմամշակումից հետո առաջացած անհամասեռ բաշխված գերհաղորդչային և ոչ գերհաղորդչային գոյացությունների վերաբաշխման մոդելի սահմաններում:

Կենսաինֆորմատիկայի խումբ: Շարունակվել են պոլիմերային միացությունների կլանման առանձնահատկությունների ուսումնասիրությունները մետաղական նանոթաղանթների մակերեսին: Որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է մոլեկուլային դինամիկայի մեթոդը, իսկ համակարգչային փորձերն իրականացվել են GROMACS ծրագրային փաթեթի օգնությամբ: Որպես համակարգչային ռեսուրս օգտագործվել են մեր լաբորատորիայում առկա աշխատանքային կլաստեր մեքենաները: Մշակման փուլում է նաև առցանց գործիքների միջավայրը, որը գործելու է հետևյալ հասցեով՝ <http://mdesigner.bioinformatics.am>:

Հաշվետու տարում տպագրվել է 3 գիտական հոդված:

ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 123 գիտական հոդված, լույս է տեսել 4 ուսումնամեթոդական ձեռնարկ:



## ԳԱԱ ԳԻՏԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2020թ. ԳԱԱ գիտահրատարակչական խորհուրդը գումարել է 3 նիստ:

Քննարկվել և հրատարակության են երաշխավորվել ԳԱԱ բաժանմունքների կողմից ներկայացված մի շարք աշխատություններ: Մասնավորապես խորհրդի հուլիսի 17-ի նիստում քննարկվել և հրատարակության է երաշխավորվել 7 աշխատություն, սեպտեմբերի 17-ի նիստում՝ 15 աշխատություն, դեկտեմբերի 25-ի նիստում՝ 20 աշխատություն:

### «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2020թ. իրադարձություններն (համավարակ, արտակարգ դրություն, հեռավար աշխատանք) իրենց բացասական ազդեցությունը թողեցին հրատարակչության բնականոն գործունեության վրա: Ընթացիկ տարում, նախորդ տարիների համեմատ, շուրջ 25%-ով պակասել են հրատարակված գրքերի ծավալները: Հրատարակչությունը կարողացել է պահպանել ԳԱԱ պարբերականների հրատարակության նախորդ տարիների ծավալները:

Հրատարակչությունը 2020թ. հրատարակել է 97 անուն գիրք և հանդես, որոնցից 43-ը գիտական աշխատություններ են (952 տպագրական մամուլ ծավալով), 55-ը՝ 14 ակադեմիական հանդեսների համարներ (478 տպագրական մամուլ ծավալով):

Ինչպես նախորդ տարիներին, ընթացիկ տարում ևս գիտական աշխատությունների և հանդեսների հրատարակմանը մեծապես աջակցել է ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը:

ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի որոշմամբ լույս տեսած գրքերի և հանդեսների ընդհանուր ծավալը կազմել է 1430 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 29.300 օրինակ: Ակադեմիական գրքերից բացի պատվերային կարգով իրականացվել են նաև այլ հրատարակություններ:

#### 2020թ. գրահրատարակչական ցուցանիշները\*

Անվանումները	Քանակը	Տպագրական մամուլը	Տպագրական թերթ-տպվածքը (հազ. օրինակ)	Տպաքանակը
Գրքեր	42	952	290	17600
Հանդեսներ (14 անուն)	55 համար	478	104	11700
<b>Ընդամենը՝</b>	<b>97</b>	<b>1430</b>	<b>394</b>	<b>29300</b>

\* Տվյալները վերաբերում են «Գիտություն» հրատարակչության մակնիշով լույս ընծայված գրականությանը:

#### «Գիտություն» հրատարակչության 2020թ. հրատարակությունները Գրքեր

- Վ. Աբրահամյան - Ընտրանի
- Ավ. Բսահակյան - Երկերի լիակատար ժողովածու, հ.XI
- Հեղ. խումբ - Նոր բառեր, պրակ Ե
- Ա. Դոլուխանյան - Ժան Պիեռ Մահեն հայագետ
- Լ.Խաչատրյան, Մ.Միրումյան - Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան
- Վ.Գրիչենց - Եկեղեցի, պետություն, հայություն
- «Բանբեր հայագիտության», 2019թ., N 3
- Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, հ.22, N1-2

9. ՀՀ ԳԱԱ 2019թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքներ. հաշվետվություն
10. Основные результаты научных исследований за 2019г. Отчёт
11. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների 2019թ. գործունեության համառոտ հաշվետվություն
12. Իրինա Դրամբյան. կենսամատենագիտություն
13. «Բանբեր հայագիտության», N1
14. «Գրականագիտական հանդես», N1
15. Մ.Բարսեղյան - Հուշերիս խաչմերուկներում
16. Ա.Հակոբյան - Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Ադուանքում եւ Հայոց Արեւելից Կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար (Պատմա - աղբիւրագիտական քննություն)
17. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, հ.23, N1
18. «Հովհաննես Չեքիջյան 90» (գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու)
19. «Հայկական տնտեսագիտական հանդես», N1
20. H. Harutyunyan - The County of Nor Bayazet 1828-1913
21. Ն.Սարգսյան - Ֆինանսական վերահսկողությունը Հայաստանի Հանրապետությունում
22. Վ.Պետրոսյան - Սևրի դաշնագիրը և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի վճռի խաբկանքը
23. Է.Խեմչյան - Տավուշի բանահյուսական ժառանգությունը
24. Յու.Սուվարյան - Կառավարման տեսության արդի հիմնախնդիրներ
25. Արմենակ Սարիբեկի Մանուկյան. կենսամատենագիտություն
26. Հ.Անասյան - Արևի հոտը (պատմվածքների և հոդվածների ընտրանի)
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XXXIII(1)
28. «Բանբեր հայագիտության», N2
29. Ս.Հանեսյան - Կյանքիս պատմության խորքերով
30. А.Аревшатын - Учение о гласах в средневековой Армении
31. И.Заславский, А. Мадоян - Философские вопросы оснований математики
32. Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1920-1923)
33. Ա.Յահյամասիհի - Սադեղ Հեղայաթ. կյանքը և գիտագրական ժառանգությունը
34. Ն.Հովհաննիսյան - Հայոց պատմության անընդմեջ շղթան դարերի խորքից մինչև XXI դարի սկիզբ
35. Գևորգ Արամի Պողոսյան. կենսամատենագիտություն
36. «Արևելյան աղբյուրագիտություն», հ.2
37. «Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության», հ3, Ա.Զթյան - Հայ թատրոնը Եգիպտոսում
38. «Օտար աղբյուրները Հայաստանի և հարակից երկրների մասին», հ.19, Ստեպան Բուռնաշև (կազմող՝ Գ.Մխիթարյան)
39. М.Рухкян - Время Эдурда Айрапетяна
40. Դ.Քերթմենջյան - Հայկական ճարտարապետությունը անտիկ ժամանակաշրջանում (Ք.ա. 6-րդ դար - մ.թ. 4-րդ դարի սկիզբ)
41. Ջահուկյանական ընթերցումներ - 2020
42. «Գրականագիտական հանդես», N2

#### ԳԱԱ հանդեսներ

1. «ՀՀ ԳԱԱ գեկույցներ» - NN 1,2, 3, 4
2. «Աստղաֆիզիկա» - NN 1, 2, 3, 4

3. «Պատմաբանասիրական հանդես» - NN 1, 2, 3
4. «Լրաբեր հասարակական գիտությունների» - NN 1, 2, 3
5. «Հայաստանի բժշկագիտություն» - NN 1, 2, 3, 4
6. «Հայաստանի քիմիական հանդես» - NN 1, 2, 3, 4
7. « ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա» - NN 1, 2, 3, 4
8. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մաթեմատիկա» - NN 1, 2, 3, 4, 5, 6
9. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա» - NN 1, 2, 3, 4
10. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Գիտություններ Երկրի մասին» - NN 1, 2, 3
11. «ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Տեխնիկական գիտություններ» - NN 1, 2, 3, 4
12. «Հայաստանի կենսաբանական հանդես» - NN 1, 2, 3, 4
13. «Նեյրոքիմիա» - NN 1, 2, 3, 4
14. «Գիտության աշխարհում» - NN 1, 2, 3, 4

Հաշվետու տարում լույս են ընծայվել նաև «Բանբեր հայագիտության» հանդեսը և «Հայկական տնտեսագիտական հանդեսը»: Տպագրվող գիտական հանդեսներից բացի ԳԱԱ մակնիշով գիտական հանրությանն են ներկայացվել «Ֆիզիկա», «Մաթեմատիկա», «Բնական գիտություններ» և «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային հանդեսները: Լույս է տեսել «Գիտություն» թերթի 12 համար՝ 6000 օրինակ ընդհանուր տպաքանակով:

## ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԳԱԱ համակարգում գործում է 29 ակադեմիական գրադարան՝ Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) և ակադեմիական ինստիտուտների 28 ճյուղային-մասնագիտական գրադարանները:

COVID-19 համավարակով և արտակարգ դրությամբ պայմանավորված՝ որոշ ժամանակ ՀԳԳ-ի աշխատանքները կազմակերպվել են հեռավար: Մարտի 16-ից մայիսի 25-ը դադարեցվել են սպասարկման աշխատանքներն ընթերցասրահներում, սակայն գրադարանի առաջին հարկում բացվել է «Տեղեկատու գրադարանավար» ծառայությունը, կազմակերպվել է նաև պատվիրված գրականության առաքման և հետ ընդունման գործընթաց:

Պատրաստվել և ներկայացվել են ԳԱԱ ակադեմիկոսների, թղթակից անդամների, գիտության այլ երախտավորների հոբելյաններին նվիրված տեսանյութեր, որոնք տեղադրվել են «Վաստակաշատ գիտնականներ» և «ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի բարեկամներ» շարքերում, գրադարանի կայքէջում և դիմագրքում: Թողարկվել է 11 տեսանյութ, որոնցից 7-ը՝ արտակարգ դրության շրջանում:

2020թ. ԳԱԱ համակարգի գրադարաններից օգտվել է 13610 ընթերցող, սպասարկվել է 37653 գրադարանային միավոր: Ակադեմիական ինստիտուտների բոլոր գրադարանների հավաքածուներում կա 1142068 գրադարանային միավոր: Համալրման բոլոր աղբյուրներով գրադարաններն այս տարի ձեռք են բերել 8929 գրադարանային միավոր: Այսպիսով, ակադեմիական ինստիտուտների և ՀԳԳ-ի ընդհանուր ֆոնդը կազմում է 4204889 գրադարանային միավոր:

ՀԳԳ-ն իր հավաքածուներում ունի 3062821 գրադարանային միավոր (1673498 գիրք, 1365296 պարբերական և այլ նյութեր), որից 870381-ը՝ եվրոպական լեզուներով: Համալրման բոլոր աղբյուրներով գրադարանն այս տարի ձեռք է բերել 3734 գրադարանային միավոր (այդ թվում՝ 2587 միավոր գիրք, 1000 միավոր պարբերական և 147 այլ նյութեր), ստացվել և ֆոնդ է հանձնվել թերթերի 10 լրակազմ: 2020թ. ՀԳԳ-ն ունեցել է 17178 օգտվող:

ՀԳԳ-ը միջազգային գրքափոխանակության գծով հաստատված կապեր ունի արտասահմանյան և ԱՊՀ երկրների 155 կազմակերպության հետ, որոնցից ստացել է 87 գրադարանային միավոր (69 միավոր գիրք, 18 միավոր ամսագիր): Քանի որ գործընկերներին տրամադրվող գրականությունը հիմնականում ԳԱԱ գիտական ամսագրեր են, որոնք արդեն թվայնացված տարբերակով տեղադրված են գրադարանի կայքէջում, 2018թ. մեր գործընկերներին առաջարկում ենք օգտվել ամսագրերի առցանց տարբերակից:

Օգտվողների տեղեկատվական սպասարկման ուղղությամբ ՀԳԳ-ը կազմակերպել է նորությունների 15 և թեմատիկ 3 ցուցահանդես, որտեղ ցուցադրվել է 1100 գրադարանային միավոր: Թեմատիկ ցուցահանդեսները նվիրված են եղել գիտության նշանավոր գործիչներին, այդ թվում՝ «Ադալովյան Լենսեր-80», «Աբեդյան Մանուկ-110», «Աբրահամյան Սերգեյ-95»:

Գիտաշխատողների, ուսանողների և հայցորդների տեղեկատվական հարցումներն առավել լիարժեք բավարարելու նպատակով ՀԳԳ-ը շարունակում է օգտվողներին տրամադրել մի շարք բարձրարժեք էլեկտրոնային ամսագրային հավաքածուներ բաց մատչելիության այնպիսի շտեմարաններից, ինչպիսիք են “Directory of Open Access Journals”, “Directory of Open Access Books”, “International Atomic Energy Agency –International Nuclear Information System”: Ընթացիկ տարում շարունակվել են ընթերցողների էլեկտրոնային գրանցման, հաշվառման և էլեկտրոնային սպասարկման աշխատանքները, ինչի արդյունքում գրադարանից օգտվողները, չայցելելով գրադարան, կարող են կատարել նյութերի նախնական պատվեր, ապա իրենց համար հարմար ժամանակ գալ և ստանալ պատվիրված գրականությունը: Հաշվետու տարում ՀԳԳ-ի սպասարկման բաժնի համակարգչային ցանցից օգտվել է 1179 այցելու, իրականացվել է 1365 էլեկտրոնային պատվերի սպասարկում:

Շարունակվել են ՀԳԳ-ի էլեկտրոնային քարտարանի ձևավորման աշխատանքները: 2020թ. քարտարան են մուտքագրվել 21962 գիրք, պարբերական հրատարակություններ և սեղմագրեր, որոնցից 2969 միավորը նոր ստացված գրականություն է: Ներկայումս ՀԳԳ-ի մատենագիտական տվյալների շտեմարանում մուտքագրված է 786515 գրադարանային միավոր:

Կոմիտասի ծննդյան 150-ամյակի առթիվ ՀԳԳ-ը ձեռնամուխ է եղել «Կոմիտաս Վարդապետ 1869-1935» շտեմարանի ստեղծման աշխատանքներին, որտեղ տեղ են գտել նրա հեղինակած և իր մասին գրված գրքերը, նոտագրությունները (տեղադրվել է 31 գիրք, 28 նոտագրություն):

ՀԳԳ-ն, որպես մեթոդական կենտրոն, աջակցել է ակադեմիական ինստիտուտների գրադարաններին արդիականացման և նորովի աշխատելու հարցերում: Արդյունքում՝ 15 գրադարան ակտիվորեն ներգրավված է համահավաք էլեկտրոնային քարտարանի ձևավորման աշխատանքներում, նրանք հաշվետու տարում մուտքագրել են 4827 գիրք: ՀԳԳ-ն մեթոդական և ծրագրային աջակցություն է ցուցաբերում Արևելագիտության ինստիտուտի «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարանի» ձևավորման աշխատանքներին:

Պարբերաբար լրացվում են ՀԳԳ հավաքածուներում առկա 1512-1920թթ. հայերեն գրքերի թվային պատճենների ստեղծման, ինչպես նաև ԳԱԱ-ի հրատարակած ամսագրերի թվային համարժեքների՝ գրադարանի կայքէջում տեղադրելու և ազատ դիտման կարգավիճակով հանրությանը տրամադրելու աշխատանքները: Այժմ ՀԳԳ հնատիպ գրքի հավաքածուն պարունակում է 477 միավոր գիրք: 2020թ. ՀԳԳ-ը նվեր է ստացել 1795թ. Մադրասում տպագրված «Ազդարար. Ղամար ամսոյ» հայերեն առաջին պարբերականի արժեքավոր հրատարակությունը:

Ներկայումս ՀԳԳ կայքէջը ներառում է հետևյալ շտեմարանները՝ «Հայ գիրքը 1512-1800թթ.», «Հայ գիրքը 1801-1850թթ.», «Հայ գիրքը 1851-1900թթ.», «Հայ գիրքը 1900-1920թթ.»,

«Անթվակիր գրքեր», «Եզակի հրատարակություններ և հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր», «Հայկական տպագրություն 400», «Մասնա ծոեր», «Մատենագիտական ցանկեր», «Հիմնադիր ակադեմիկոսներ», «Մամուլը գիտության մասին», «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ», ԳԱԱ մատենաշարային հրատարակություններ, ԳԱԱ շարունակական հրատարակություններ, ԳԱԱ նախագահներ, որոնք պարունակում են 8 637 անուն և 31613 միավոր գրականություն, 140559 հոդված և 3 023 922 էջ:

Համացանցում հայագիտական նյութերի էլեկտրոնային տարբերակների տարածման ապահովման, հայագիտական բովանդակությամբ բազմալեզու կայքերի ստեղծման և շահագործման ծրագրի շրջանակում ՀԳԳ-ը թվայնացրել է ակադեմիական գիտահետազոտական հաստատությունների՝ Պատմության, Արևելագիտության, Արվեստի, Հնագիտության և ազգագրության, Լեզվի և Գրականության ինստիտուտների կողմից հրատարակվող 19 անուն մատենաշարային հրատարակություն:

«Հայ գիրք» շտեմարանը շարունակաբար համալրվում է նորանոր նյութերով, նույնիսկ այնպիսի նյութերով, որոնք Հայաստանի գրադարաններում չկան և ձեռք են բերվել եվրոպական տարբեր գրադարանների հետ համագործակցության ծրագրերի շրջանակում:

«Հայկական շարունակական հրատարակություններ» համահավաք գրացուցակում 2020թ. նկարվել, մշակվել և տեղադրվել է պարբերականների 43 լրակազմ (10748 էջ):

